ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա նման տարբերությունները կարող են լինել մարդահամարի արդյունքների հետագա ճշգրտումների հետևանք՝ պայմանավորված վերջինիս և հարևան վարչամիավորների սահմանների վերջնական հաստատման հետ: Հայտնի է, որ մարդահամարի տվյալները դրա իրականացումից հետո Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության կողմից ենթարկվել են ճշգրտումների, հաշվառվել են վիճակագրության ընթացքում բաց թողնված բնակավայրերը, դրանց բնակչության թվաքանակը, արդյունքները համապատասխանեցվել են երկրի նոր վարչատարածքային բաժանումներին¹⁰: Հաշվի առնելով Ադրբեջանում մարդահամարի իրականացման կազմակերպչական ու բովանդակային թերությունները՝ տվյալների նման տարբերությունները, իհարկե, հնարավոր են: Ընդ որում, ԼՂԻՄ-ի բնակչության թվաքանակի դեպքում շեղումը ավելի վաղ հրապարակված արդյունքներից կազմում է 1.8%, ինչը ժամանակի վիճակագրական գործի կազմակերպման պայմաններում միանգամայն հնարավոր էր և համարվում է

⁶ Տե՛ս **Карапетян М.** Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельско-хозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, С. 3:

⁷ Տե՛ս **Кочарян Г.** Աղվ. աշխ., էջ 54-55, տե՛ս նաև **Карапетян М.**, Աղվ. աշխ., էջ 20:

⁸ Տե՛ս Бюллетень Закавказского Центрального Статистического Управления, N 1, Тифлис, 1924, С. 7:

⁹ Տե՛ս **Сулькевич С.** Административно-политическое строение Союза ССР (Материалы о территориальных преобразованиях с 1917 г. по 1 июня 1925 г.), Ленинград, 1926, С. 184, տե՛ս նաև **Худадов В.**, Закавказье (Историко-экономическое очерк), Москва-Ленинград, 1926, С. 66:

¹⁰ Տե՛ս **Կորկոսյան Զ.** Աղվ. աշխ., էջ 63:

բնականոնի սահմաններում ժողովրդագրական բնույթի ուսումնասիրությունների համար:

Ինչ վերաբերում է ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության ազգային կազմին, ապա այն գրեթե ամբողջապես միատարր հայկական էր: Բնակչության 94.73%-ը կամ 122426 մարդ հայեր էին, երկրորդ էթնիկ հանրույթը ադրբեջանցի թյուրքերն էին՝ 6550 մարդ կամ բնակչության 5.07%-ը: Այլ էթնիկ հանրույթները (քորեր, հույներ, ռուսներ) կազմում էին ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության ընդամենը 0.20%-ը կամ 267 մարդ (տես աղյուսակ 1)¹¹: Հատկանշական է, որ ազգային փոքրամասնություններից նախկինում մեծաթիվ ռուս բնակչության թվաքանակը 1917թ.-ի հեղափոխությունից և տարածաշրջանում իրադրության ապակայունացումից հետո զգալիորեն նվազել էր վերջիններիս Ռուսաստան հեռանալու հետևանքով (նախկինում ցարական վարչական բաժանամաժր ռուսաբնակ էին Շուշիի գավառի Սուժինսկոյե, Սկորլևկա, Ջևանշիրի գավառի Լևոն-Արիս, Մինգրեյսկոյե, Օրլով-Դենիսովկա գյուղերը)¹²:

Աղյուսակ 1. ԼՂԻՄ-ի գյուղական բնակչության ազգային կազմը ըստ 1921 թ.-ի գյուղատնտեսական վիճակագրության

Վարչ. միավորներ	Հայեր		Թյուրք-ադրբեջ.		Այլ էթնիկ հանրույթներ		Ընդհանուր
	թիվ	%	թիվ	%	թիվ	%	
Դիզակի շրջան	29806	99.6	120	0.4	-	-	29926
Խաչենի շրջան	33036	96.2	1285	3.7	34	0.1	34335
Շուշիի շրջան	-	-	3266	100	-	-	3266
Ջրաբերդի շրջան	29480	94.2	1570	5.1	233	0.7	31283
Վարանդայի շրջան	30104	98.9	309	1.01	-	-	30413
Ընդհանուր	122426	94.73	6550	5.07	267	0.20	129243

Ինչ վերաբերում է ԼՂԻՄ-ի քաղաքներին, ապա Վարարակն բնակավայրը քաղաքային կարգավիճակ ստացել է միայն 1923թ.-ին, հետևաբար այն վիճակագրվել է նախ 1921 թվականին՝ գյուղատնտեսական մարդահամարի ժամանակ, այնուհետ ԼՂԻՄ-ի մարզկենտրոն դառնալուց հետո՝ 1924 թ.-ի դեկտեմբերին: Շուշի քաղաքը վիճակագրման է ենթարկվել է ինչպես 1921, այնպես էլ 1923 թվականին: Ըստ 1921 թ.-ի վիճակագրության՝ Շուշիի բնակչության թիվը (առկա բնակչություն) կազմում էր 9223 մարդ¹³, իսկ 1923 թ.-ի վիճակագրությամբ՝ 6976 մարդ¹⁴: 1921 թ.-ի քաղաքային մարդահամարի արդյունքներով՝ Շուշիի բնակչության 96.4 %-ը կամ 8894 մարդ թյուրք-ադրբեջանցիներ էին: Շուշիի երբեմնի հայահոծ բնակչությունից հիշյալ ժամանակաշրջանում այստեղ բնակվում էր ընդամենը 289 մարդ¹⁵: Սա, իհարկե, 1920 թ.-ի մարտին Շուշի քաղաքի հայկական հատվածի ամբողջական ավերման, հայ բնակչության կոտորածի և քաղաքի հայազրկման հետևանք էր: Ինչ վերաբերում է 1921-1923 թթ.-ին Շուշիի բնակչության նվազմանը, ապա այս առումով կարևոր նշանակություն ունի մարդահամարի իրականացման ժամանակշրջանը: 1921 թ.-ին թյուրք-ադրբեջանցիների մեծաթիվ լինելը պայմանավորված էր այն հանգամանքով, որ քաղաքում բնակչության հաշվառումը տեղի էր ունեցել հուլիսին, երբ քոչվոր թյուրքերը հաստատվել էին քաղաքում՝ այնտեղից արոտավայրեր բարձրանալու նպատակով:

¹¹ Տե՛ս **Карапетян М.**, նշվ. աշխ., էջ 11-20, տե՛ս նաև **Кочарян Г.**, նշվ. աշխ., էջ 54-55:

¹² Տե՛ս **Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականկերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 177:

¹³ Տե՛ս Закавказье: Статистико-экономический сборник, Тифлис, 1925, С. 152-153:

¹⁴ Տե՛ս Бюллетень Закавказского Центрального Статистического Управления, N 1, С. 8:

¹⁵ Տե՛ս Закавказье: Статистико-экономическое сборник, С. 152-153:

Մինչդեռ 1923 թ.-ի մարդահամարը իրականացվել էր մայիսին, երբ դեռևս չէին ծավալվել քոչվոր թյուրքերի տեղաշարժերը¹⁶: Անդրադառնալով Ստեփանակերտին՝ նշենք, որ հնագույն հայկական այս բնակավայրում 1921 թ.-ի մարդահամարը հաշվառել էր 1379 մարդ (981 հայ, 398 թյուրք-ադրբեջանցի): Վիճակագրության իրականացման ժամանակ այստեղ են գտնվել նաև 1919 թ.-ի հունիսին ավերված հայկական Ղայթալիչեն և Փահլուլ գյուղերի բնակիչները: ԼՂԻՄ-ի կենտրոն դառնալուց հետո քաղաքում կառուցվեցին հասարակական, պետական նշանակության մի շարք կառույցներ, իսկ բնակչության թիվը շարունակաբար աճում էր ինչպես բնական, այնպես էլ մեխանիկական աճի շնորհիվ: Արդեն 1924 թ.-ի դեկտեմբերին իրականացված մարդահամարի ժամանակ բնակչության թիվը այդտեղ կազմում էր 2467 մարդ¹⁷:

Ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները ԼՂԻՄ-ում

Ինչպես ցույց է տալիս բնակչության տեղաբաշխումը, ԼՂԻՄ-ի տարածքում թյուրք-ադրբեջանցիները գերազանցապես բնակվում էին Շուշիի շրջանում և համանուն քաղաքում: Շուշիի շրջանը բաղկացած էր միայն մեկ՝ Մալիբեկլուի ոլոստից, որը ներառում էր 12 գյուղական բնակավայր, իսկ մեկը (Կերպա Ափաթին) էր քոչվորների բնակատեղի էր: ԼՂԻՄ-ի ձևավորումից հետո ոլոստը սկզբնապես եղել է հաչենի շրջանի կազմում: Սակայն ադրբեջանական իշխանությունների որոշմամբ մարզային կենտրոնը շուտով տեղափոխվում է Ստեփանակերտ, իսկ Շուշի քաղաքը Մալիբեկլուի ոլոստի հետ ձևավորում է առանձին վարչական միավոր: Այս քայլը, իհարկե, ուներ հատուկ նպատակադրում. նման համախումբ թյուրքաբնակ տարածք ստեղծելով՝ ադրբեջանական կենտրոնական իշխանությունները վերահսկողություն էին հաստատում բարձրադիր կետում գտնվող և ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր հատվածում: Հատկանշական է, որ թեև ՌԿ(Բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ.-ի հուլիսի 5-ի որոշմամբ ինքնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոնը պետք է դառնար Շուշի քաղաքը, սակայն ադրբեջանական իշխանությունների որոշմամբ այդպես չեղավ: 1920 թ.-ի մարտին Շուշիի հայկական մասի ավերումից հետո այն գրկվել էր պետական, հասարակական, բժշկական ու մշակութային հաստատություններից, ինչը դժվարեցնում էր նրա գոյությունը որպես մարզային կենտրոն: Սակայն այս առումով Ստեփանակերտը ամենաին էլ բարվոք վիճակում չէր: Լեռնային Ղարաբաղում հետազոտական աշխատանքներ իրականացրած Գ. Քոչարյանի վկայությամբ՝ այն «...ինքնավարության հռչակման պահին կիսավեր գյուղ էր՝ հազիվ 10-15 պահպանված շինություններով»¹⁸: Հաստատությունների մի մասը ամբողջովին ավերված էր, մյուսները կիսավեր վիճակում էին: Մարզկենտրոն հռչակվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, քաղաքը «անճանաչելիորեն փոխվեց». վերականգնվեցին կիսավեր շինությունները, կառուցվեցին բազմաթիվ նոր հաստատություններ, անցկացվեց էլեկտրականություն, իրականացվեցին բարեկարգման աշխատանքներ¹⁹: Վերականգման նման գործընթաց կարող էր իրականացվել նաև Շուշիում: Սակայն Շուշին ԼՂԻՄ-ի կենտրոն դարձնելը կհանգեցներ հայ բնակչության վերադարձին իրենց նախկին բնակության վայր, ինչը ցանկալի չէր ադրբեջանական կողմի համար: Իսկ այն, որ ադրբեջանական իշխանությունները մեծապես շահագրգռված էին Շուշիի թյուրքականացման խնդրով, երևում է ԼՂԻՄ ժողովախորհի փոքր նստաշրջանի 1925 թ.-ի հունիսի 12-ի արձանագրությունից, որում ամրագրված էր շրջանի «թյուրքականացման» գործընթացի արագացման կարևորությունը և նախատեսվող քայլերն այդ ուղղությամբ²⁰:

¹⁶ Տե՛ս Կոչարյան Գ., նշվ. աշխ., էջ 46:

¹⁷ Տե՛ս Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Նույն տեղում:

²⁰ Տե՛ս Мелик-Шахназаров А., Нагорный Карабах: факты против лжи, Москва, 2009, С. 88:

Հատկանշական էին նաև ադրբեջանական իշխանությունների կողմից թյուրք բնակչությանը տրվող տնտեսական առանձնաշնորհումները: 1925 թ.-ի նոյեմբերին Ադրբեջանի ժողովուրդի նախագահի նամակով անհրաժեշտ էին համարվում իրականացնել Շուշիի շրջանի զարգացման մի շարք միջոցառումներ: Մասնավորապես նախատեսվում էր շրջանի եկամուտները օգտագործել միայն տեղական կարիքների համար, ամբողջ շրջանի տարածքում նվազեցնել հարկերը, կատարել քաղաքի բարեկարգման աշխատանքներ՝ առաջնահերթությունը տալով ջրատարների վերականգմանը, զարգացնել մետաքսագործությունը և գորգագործությունը²¹: Նման խտրական քաղաքականության արդյունքները իրենց երկար սպասեցնել չտվեցին. արդեն 1926 թ.-ին ԼՂԻՄ-ի հայ բնակչության մեկ շնչի հաշվով տեղական բյուջեից կատարված ծախսերը կազմում էին 4 ռուբլի 22 կոպեկ, մինչդեռ թյուրքական բնակչության (որի մեծագույն հատվածը ապրում էր Շուշիի շրջանում) մեկ շնչի հաշվով՝ կրկնակի շատ՝ 8 ռուբլի 23 կոպեկ²²: Հավելենք նաև, որ ըստ ֆինանսների ժողովի հաշվարկների՝ քննարկվող ժամանակահատվածում Շուշիում գործում էր 212 առևտրաարդյունաբերական ձեռնարկություն այն դեպքում, երբ ամբողջ մարզի մնացած տարածքում հաշվվում էր նման 84 ձեռնարկություն²³:

Ի հակադրություն Շուշիի շրջանի՝ մարզի գերազանցապես հայաբնակ շրջանները աչքի էին ընկնում տնտեսական թույլ զարգացվածությամբ, տնտեսության տարբեր ճյուղերի բազմաթիվ խնդիրներով, զարգացման հեռանկարների բացակայությամբ²⁴: ԼՂԻՄ-ի բնակչության խտության բարձր մակարդակը, տարածքի սակավահողությունը, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողատարածությունների, ոռոգման և այլ խնդիրների առկայությունը, առևտրական ու հաղորդակցության ճանապարհների բացակայությունը, գործարանային արտադրության կազմակերպման դժվարությունները հանգեցնում էին չափահաս բնակչության մեծածավալ արտագաղթի (հիմնականում սեզոնային) հայաբնակ մարզերից: 1920-ական թթ.-ի կեսերին ԼՂԻՄ-ից արտագաղթի զանգվածային բնույթի մասին պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ²⁵: Ժամանակակից հեղինակներից մեկի վկայությամբ՝ Ղարաբաղի կենտրոնական 1925 թ.-ի օգոստոսի նստաշրջանում Դիզակի գավառային գործկոմի նախագահի զեկուցման համաձայն՝ Դիզակից այդ տարի արտագաղթել էին 4895 հոգի²⁶: Նույն աղբյուրի հավաստմամբ՝ արտագաղթի նման ծավալներ ավել կամ պակաս չափով կարելի էր պնդել նաև հայաբնակ Վարանդայի և Խաչենի մասին²⁷: Աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ամեն տարի ԼՂԻՄ-ից սեզոնային աշխատանքի մեկնողների թիվը տատանվում էր 10-15 հազարի սահմաններում:

²¹ Տե՛ս К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918-1925: Документы и материалы, Баку, 1989, С. 190:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 191:

²³ Տե՛ս **Կочарян Г.**, նշվ. աշխ., էջ 30:

²⁴ ԼՂԻՄ տնտեսական դրության մասին մանրամասն տե՛ս **Սեյրան Գ.**, Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 8, **Կորկոտյան Չ.**, նշվ. աշխ., էջ 73-74, **Կочарян Г.**, նշվ. աշխ., էջ 36, **Լիսիսցյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ) // Հայ ազգագրություն և բանահյուսություն (կյութեր և ուսումնասիրություններ), հատոր 12, Երևան, 1981, էջ 31, Խորհրդային Ղարաբաղ, N 2, 1925, թ.2:

²⁶ Տե՛ս **Սեյրան Գ.**, նշվ. աշխ., էջ 11:

²⁷ Տե՛ս նույն տեղում:

Եզրակացություն

Ամփոփելով կարող ենք նշել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ.-ի սկզբին գրեթե ամբողջապես միատարր հայկական էր: Լավ գիտակցելով մարզի ժողովրդագրական կազմի փոփոխության կարևորությունը՝ ԼՂԻՄ-ի ձևավորման հենց սկզբից ադրբեջանական իշխանությունների կողմից նկատելի էին անուղղակի ժողովրդագրական քաղաքականության որոշակի տարրեր, որոնք դրսևորվեցին հետևյալ ձեռնարկումներում.

- Վարչատարածքային տարրեր փոփոխությունների միջոցով Խորհրդային Չայաստանի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական սահմանակցության բացառում կատեցնելու համար բնակչության հնարավոր տեղաշարժերը այդ երկու տարածքների միջև,
- Շուշիի շրջանի ստեղծումը համախումբ թյուրքական տարրի առանձնացմամբ, կենտրոնական բարձրադիր շրջանի թյուրքականացում,
- Շուշի քաղաքից ինքնավար մարզի կենտրոնի տեղափոխումը կանխելու համար հայ բնակչության հնարավոր վերադարձը Շուշիի ավերված հայկական հատված,
- Ադրբեջանական կողմի տնտեսական խտրական քաղաքականության դրսևորում ԼՂԻՄ-ի տարածքում:

DEMOGRAPHIC PICTURE OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE EARLY 1920S

GAYANE HOVHANNISYAN

*Yerevan State University, Chair of the History of Armenia, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to present the demographic picture of the NKAR and the factors that determined it in the early 1920s. To achieve this goal, the following tasks were set: to explore the territory and administrative transformations of the Nagorno Karabakh Autonomous Region after its formation, to explore its population size, ethnic composition, as well as to reveal the national discriminatory policy of the Azerbaijani authorities and its impact on demographic processes.

During the research process various methods were used, such as analysis, synthesis, the principle of history, comparison and juxtapose of various statistical documents, sources and other materials.

Exploring the subject-matter theme, we came to the conclusion that in the early 1920s the ethnic composition of the NKAR was almost entirely homogeneous Armenian. From the very beginning of the formation of the NKAR, some elements of indirect demographic policy were noticed by the Azerbaijani authorities, such as the exclusion of the border between Soviet Armenia and the NKAR, the creation of the Shushi region with the Turkic population, the relocation of the center of the autonomous region from the city of Shushi to prevent the possible return of the Armenian population to the destroyed Armenian part of the city, the discriminatory economic policy in the territory of NKAR.

Keywords: *NKAR formation, demographic picture, population size, national composition, socio-economic situation, national policy, demographic policy.*

ГАЯНЕ ОГАННИСЯН

*аспирантка кафедры армянской истории
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – представить демографическую картину НКАО и факторы, которые определили ее в начале 1920-х годов. Для достижения этой цели мы поставили перед собой задачу изучить территориальные и административные преобразования Нагорно-Карабахской автономной области после ее формирования, численность населения, этнический состав, а также показать национальную дискриминационную политику властей Азербайджана и ее влияние на демографические процессы.

В ходе исследования мы применили следующие методы: анализ, обобщение, принцип историчности, сравнение и сопоставление различных статистических документов, источников и других материалов.

Исследуя тему, мы пришли к выводу о том, что в начале 1920-х годов этнический состав НКАО был почти полностью однородным, а именно - армянским. С самого начала формирования НКАО некоторые элементы косвенной демографической политики были применены азербайджанскими властями, такие, например, как отделение границы между Советской Арменией и НКАО, создание Шушинского района с тюркским населением, перемещение центра автономного округа из города Шуши для предотвращения возможного возвращения армянского населения в разрушенную армянскую часть города и дискриминационная экономическая политика на всей территории НКАО.

Ключевые слова: *формирование НКАО, демографическая картина, численность населения, национальный состав, социально-экономический ситуация, национальная политика, демографическая политика.*

ԶԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԶԱՐՑԸ

**ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ
(ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ)
(ՄԱՍ 2)***

ՀՏԴ 93(479.22)

ՎԱՐՅԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱՄ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vsarqsyvan83@gmail.com

Հոդվածի նպատակն է շուրջ տասնամյա ժամանակահատվածի (1999-2009 թթ.) վրաց տպագիր մամուլի նյութերի միջոցով ներկայացնել Զավախքի հիմնահարցը՝ վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ: Հոդվածի առաջին մասի խնդիրն է եղել համակարգված կերպով ցույց տալ, մատնանշել ներքին և արտաքին բոլոր այն գործոնները, որոնք ապդել են Զավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա: Աշխատանքի երկրորդ (սույն) մասում ներկայացված են Զավախքի հիմնահարցի վրացական ընկալումները մատնանշող վրացական տպագիր մամուլի հիմնական հրապարակումները:

Ուսումնասիրությունն ամփոփվում է համապատասխան ելրահանգումներով:

Հետազոտության տեքստը շարադրվել է 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլում հրապարակված, ինչպես նաև թեմային առնչվող այլևայլ նյութերը և՛ առանձնաբար, և՛ համադրմամբ ուսումնասիրելու հենքի վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և գերակշիռ մասով մերժել է Զավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կապակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արծարծել են Զավախքի հիմնահարցը: Ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող տեղաբնիկ ժողովուրդը հանդիսացող, միևնույն ժամանակ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի և ՌԴ-ի կողմից ուղղորդվող սադրանք Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Հիմնաբառեր՝ Զավախքի հիմնահարց, վրաց հասարակական-քաղաքական միտք, վրաց տպագիր մամուլ, վրացական միջավայր, ընկալումներ, վերաբնակեցում, տարանցիկ ուղիներ, Ռուսաստան, Թուրքիա, Հայաստանի Հանրապետություն:

Շարունակենք ներկայացնել վրաց տպագիր մամուլի 1999-2009 թթ. ժամանակահատվածի այն կարևորագույն հրապարակումները, որոնցում արտացոլված են վրաց հասարակական-քաղաքական, քաղաքագիտական, որոշ չափով նաև

* Հոդվածը ներկայացվել է 08.07.2020թ., գրախոսվել՝ 13.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գիտական-ակադեմիական ոլորտների ներկայացուցիչների մտքերը, կարծիքներն ու տեսակետները: Նյութերը ներկայացնում ենք ըստ հրապարակումների ժամանակագրության:

«Ռեզոնանսի» թերթի հոդվածագիր Թինաթին Մոսիաշվիլին ծավալուն անդրադարձ է հրապարակել Չավախբում վրացերենի չիմացության և դրանից բխող հետևանքների վերաբերյալ: «Ինչների՞ս է պետք վրացերենը. Չավախբում Վրաստանի նախագահն էլ չի խոսում վրացերենով» վերտառությամբ հրապարակման մեջ նշվում է, որ Ախալքալաքի բնակչության 97 %-ը հայեր են, և շատերին իրոք որ պետք չէ վրացերենը: «Երկրամասում չեն հեռարձակվում Վրաստանի հեռուստահաղորդումները, չի հասնում վրացական մամուլը, իսկ, ընդհանրապես, Ախալքալաք այցելողները չեն զգում, որ իրենք գտնվում են Վրաստանում, այստեղ բացակայում են վրացերեն գրությամբ գովազդները»²⁸. այսպես ներկայացնելով իր դժգոհությունները՝ Թ. Մոսիաշվիլին հիշատակում է վրաց լեզվի ուսուցման պետական ծրագրի, այլ միջոցառումների ու քննարկումների մասին, ցիտելով նահանգային կրթության վարչությանը՝ վիճակագրական որոշ տվյալներ է ներկայացնում ուսուցչության և դպրոցների քանակի մասին և այլն: Հեղինակն այս շրջանակներում մեղադրանքներ է ներկայացնում Սամցխե-Չավախբում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ (նահանգապետ), ազգագրագետ – հայագետ Գիզա Բարամիձեին²⁹ և փաստում, որ վերջինիս բացարձակապես չի հուզում վրաց լեզվի ուսուցման հարցը: Նահանգապետն էլ մեղադրել է պետությանը՝ պետական լեզվի ուսուցման ծրագրի համար միջոցների խնայման մեջ: Հոդվածագիրը նաև մտահոգություն է հայտնում և մեծ հիմնախնդիր համարում այն իրողությունը, որ պատմության ու աշխարհագրության ուսուցիչների մեծամասնությունն ավարտել են ՀՀ-ի բուհերը, իսկ ֆակուլտատիվ դասաժամերի շրջանակներում դասավանդվող այդ առարկաների դասագրքերը մատակարարվում են Հայաստանի (արդրեջանցիների պարագայում՝ Արդրեջանի) կողմից³⁰: Հրապարակագիրն այդ տենդենցների մեջ անջատողականության վտանգ է տեսնում և հիշեցնում, որ նման կերպ շարունակվելու դեպքում Չավախբում առավել վատթար իրավիճակ կստեղծվի, քան Աբխազիայում: Բնականաբար, հոդվածագիրն ամենևին չի հիշատակում միջազգային տասնյակ հանրագրերն ու այլևայլ փաստաթղթեր, որոնցով նախատեսված են հասարակական – քաղաքական, լեզվական, կրթամշակութային հողի վրա բազմաթիվ արտոնություններ ջավախահայության՝ որպես տեղաբնիկ ժողովրդի կամ ազգային փոքրամասնության համար³¹: Չավախահայության՝ Սամցխե-Չավախբի

²⁸ «ՐԵԶՈՆԱՆՍԻ» («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 163, 2001.

²⁹ Վրաստանի ղեկավար Է. Շևարձևաձեի՝ 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրով ստեղծված Սամցխե-Չավախբի նահանգապետների, այդ թվում՝ հայաստաց հայացքներով ու քայլերով հայտնի Գիզա Բարամիձեի մասին, ով եղել է Վրաստանի նախագահի առաջին լիազոր ներկայացուցիչը (նահանգապետը) Չավախբում (1994-2002 թթ.), մինչև 1998 թվականը համատեղությամբ նաև ՀՀ-ում Վրաստանի առաջին արտակարգ և լիազոր դեսպանը, հանգամանորեն տե՛ս Սարգսյան Վ., «Մեռավ թագավորը, կեցցե՛ թագավորը»: Ովքե՛ր են իրականում Սամցխե-Չավախբի «նահանգապետ» կոչված մարդիկ, *Չավախբը 1988-2008 թթ. (հոդվածների ժողովածու)*, Երևան, 2009, էջ 267-273:

³⁰ «ՐԵԶՈՆԱՆՍԻ» («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 163, 2001. Պետք է փաստել, որ մեկուկես-երկու տասնամյակ անց՝ այդ «հիմնահարցը» գրեթե «լուծվել է» Վրաստանի (այդ թվում՝ Չավախբի) հայկական դպրոցներում. մոնոթեթիզացման քաղաքականության արդյունքում ծրագրերում բացառված են «Հայոց պատմություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաները, նույնվերայ գրեթե արգելված են ՀՀ-ից Վրաստանի հայկական դպրոցներ առաքվող դասագրքերը:

³¹ Տե՛ս Չավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում, հեղինակ-կազմող՝ Վահե Սարգսյան, *Հայոց Յուրսիսային դարպասները. Չավախբ, Լոռի, հ. 3, Երևան, 2009*:

Նահանգապետ Գիզա Բարամիձեից ունեցած բազմապիսի դժգոհությունների և ոչ հայանպաստ քայլերի մասին է վկայում «Ախալի թառբա» թերթի մի հրապարակումը, որում հողվածագիր-պատմաբան Գերոզի Ուժիլաուրին մեղադրում է ջավախահայ գործիչներին, 2. Ժվանիայի՝ տվյալ շրջանի թիմակիցներից Մելիք Ռախյանին և այլոց, որոնք հրապարակավ սուր քննադատության են ենթարկել նահանգապետի վարած քաղաքականությունը³²:

Ջավախքի խնորին այլ տեսանկյունից է մոտենում «Դիլիս գազեթի» հողվածագիր Մ. Չաչվան՝ անդրադառնալով Եդ. Շևարդնաձեի՝ 2001 թ.-ի հոկտեմբերին Երևան կատարած այցին: Վերլուծելով տարածաշրջանային զարգացումները՝ հեղինակը փաստում է, որ ՀՀ-ին պետք է ոչ թե Կրաստանից խել Ջավախքը, այլ վերջինիս միջոցով ազդել Կրաստանի վրա և թույլ չտալ Կրաստան – Թուրքիա հարաբերությունների կտրուկ խորացումներ³³: Նույն թերթի մեկ այլ հրապարակագիր Գ. Կվիտաշվիլին, անդրադառնալով ՀՀ Ազգայի ժողովի ՀՀԴ խմբակցության պատգամավոր Ա. Ռուստամյանի՝ եվրոպական կառույցներում ջավախահայության իրավունքների ոտնահարման վերաբերյալ ունեցած ելույթին, քննադատում է ՀՀ ԱԺ պատգամավորին, վերջինիս կողմից Կրաստանին ներկայացված մեղադրանքները համարում անտեղի, Ռուսաստանի թելադրանքով արված քայլ և այլն³⁴:

Հետխորհրդային շրջանում Կրաց Ուղղափառ եկեղեցու՝ Ջավախքում հաստատման գործընթացի մասին խիստ ուշագրավ հարցազրույց է գետեղվել «Ռեզոնանսի» թերթի համարներից մեկում, որում ՎՈՒԵ-ի Բորժոմ – Ախալքալաք տարածաշրջանի հոգևոր առաջնորդ վերապատվելի Սերաֆիմ Եպիսկոպոսն (Ջավախքում ծառայության է նշանակվել 1995 թվականից) մանրամասն ներկայացրել է առկա բոլոր դժվարությունները, որոնց հանդիպել են Ջավախքի տարբեր շրջաններում հաստատվող և իրենց ազդեցությունը տարածող ՎՈՒԵ-ի ներկայացուցիչները³⁵: Եպիսկոպոսը դժգոհում է, որ վրացիները Ջավախք քիչ են այցելում, հատկապես երիտասարդությունը, որն անտարբեր է, այնտեղ բացակայում են վրացական եկեղեցիները, կրթամշակութային, կրոնական միջոցառումները, պետական և այլ ծրագրերը, փոխարենը ջավախահայության հայացքն ուղղված է Երևան³⁶: Ըստ նրա՝ ՎՈՒԵ-ի գլխավոր խնդիրն է Ջավախքի տարբեր շրջաններում հիմնել եկեղեցիներ, մեծացնել հոգևորականների թիվը, տարաբնույթ ծրագրերով մեծացնել այնտեղ վրաց հոգևոր-մշակութային ազդեցությունը և այլն: Վերապատվելի Սերաֆիմ Եպիսկոպոսն ուրախությամբ է փաստում, որ իրենք ՎՈՒԵ-ի ծիսակարգով մկրտում են ոչ միան վրացիներին, որոնք հատկապես Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում չնչին թիվ էին կազմում (Ախալքալաք քաղաքում, ըստ նրա, տվյալ ժամանակահատվածում (2001 թ.) ապրել են 30 վրացի ընտանիքներ, ևս 40՝ խառնամուսնական ընտանիքներ), այլև

³² “ახალი თაობა” («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 219, 2001.

³³ “დღის გაზეთი” («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 235, 2001.

³⁴ “დღის გაზეთი” («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 268, 2001.

³⁵ “რეზონანსი” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 159, 2001. Կրացի Եպիսկոպոսի հայտնած տեղեկություններից պարզվում է, որ ՎՈՒԵ-ի՝ Ախալքալաքում գտնվող ներկայիս կրոնական կենտրոնի շենքը, որը խորհրդային շրջանում պատկանում էր ՎԽՍՀ Կոմկուսի Ախալքալաքի շրջկոմին, այնուհետև ծառայում էր որպես վրացական մանկամսուր, իսկ 1995 թվականից այնտեղ հաճախող վրացի երեխաների բացակայության պատճառով հանվել էր վաճառքի, ՎՈՒԵ-ի Ախալքալաք-Բորժոմի Եպիսկոպոսությանն է տրամադրվել վիրահայ հասարակական-քաղաքական գործիչ Հենրիխի (Գենա Մուրադյանի) շնորհիվ:

³⁶ Կրացի Եպիսկոպոսը դժգոհությամբ է փաստում, որ հայոց պատմության դասագրքերի մեջ և այլևայլ հրատարակություններում Ջավախքը հայկական հիմնավորց հող է հիշատակվում, ավելին, այդ տեսակետին են նաև ջավախահայերը, ինչն էլ խիստ անհանգստացնող է վրացական կողմի համար:

բազմաթիվ հայ ընտանիքների: Այս փաստի մասին է խոսում նաև ՎՈՒԵ-ի կողմից Ջավախքի այնպիսի բնակավայրերում եկեղեցիների հիմնումը, որտեղ բացակայում է վրացի ազգաբնակչությունը: Եպիսկոպոս Սերաֆիմը այդպիսի օրինակների թվում հիշատակում է Փարվանա լճի ափին գտնվող հանրահայտ Փոկա գյուղը:

Ախալքալաքում ռուսական ռազմաբազայի գոյության, վերջինիս դուրսբերման և ջավախահայության՝ այս հարցում ցուցաբերած դիրքորոշումները ևս լայնորեն դարձել են վրաց հասարակական-քաղաքական մտքի քննարկման առարկա: Վրաստանի «Ավանդականների միության» ղեկավար Ակակի Ասաթիանին, օրինակ, քննարկել է խնդիրը և այն կարծիքը հայտնել, որ Սամցխե-Ջավախքի հայ բնակչությունը կտրուկ կերպով դեմ է արտահատվում ռուսական ռազմաբազաների դուրսբերմանը: Եվ չնայած Ռուսաստանը կձգտի ջավախահայության միջոցով ապակայունացնել տարածաշրջանը, որպեսզի ռազմակայանը շարունակի թողնել այնտեղ, սակայն Հայաստանը չի գնա իրավիճակի սրման ճանապարհով, քանի որ նրա համար կփակվեն կենսական ճանապարհները³⁷: Նույն խնդիրն է քննարկվել «Նոր 7 օր» թերթի էջերում, որտեղ նմանատիպ տեսակետներ են հայտնել քաղաքագետներ Չվիադ Չխաիձեն և Գիորգի Խելաշվիլին³⁸: Քաղաքագետներն այն թյուր կարծիքն են հայտնել, որ ջավախահայության շրջանում գործող ազգային-քաղաքական կազմակերպությունները, հատկապես «Ջավախք» ժողովրդական Շարժումը, «Վիրք» չգրանցված կուսակցությունը, «Փարվանա» կազմակերպությունը մեծ վտանգ են ներկայացնում Վրաստանի համար և ծառայում են օտար (ռուսական) ուժերին: Իրենց հրապարակային մտահոգությունն են հայտնել և ջավախահայությանը որպես վտանգ են դիտարկել Քուլայիսի պետհամալսարանի դոցենտներ Գվի Գուրեշիձեն, Դավիթ Նեմսիձվերիձեն և ինժեներ-մանկավարժ Ռոման Չուչուռնաշվիլին: «Հայկական անջատողականության» արհեստածին խնդիրը բարձրաձայնելով՝ վերջիններս առաջարկել են «վիճակը փրկելու համար» Վրաստանի մայրաքաղաքը շուտափույթ կերպով տեղափոխել Ախալքալաք³⁹: Գրեթե նույն միտքն է զարգացնում մեկ այլ վերլուծաբան՝ «Մթավառի գագեթի» պարբերականի հոդվածագիր Իրակլի Ջոխաձեն, որ «Դանդաղ գործող ական՝ 5-րդ շարայուն» վերտառությամբ հոդվածում ծավալուն անդրադարձ է կատարում Ջավախքում ստեղծված իրարդությանը, այնտեղ գործող կազմակերպություններին, հայության շրջանում առկա տրամադրություններին և այլն: Բավականին մանրակրկիտ կերպով անդրադառնալով Վրաստանում և, մասնավորապես, Ջավախքում հայերի թվի տոկոսային հարաբերակցությանը, տարբեր տարիների ժողովրդագրական ցուցանիշներին՝ հոդվածագիրը ջավախահայության՝ հանուն սեփական իրավունքների պայքարը որակում է Ռուսաստանի կողմից աջակցություն ստացող անջատողական կամ զավթողական ձգտումներ⁴⁰: Շարունակելով զարգացնել «ջավախքյան անջատողականության» թեման և խոսելով ջավախքյան կազմակերպությունների («Ջավախք», «Փարվանա») մասին՝ Ի. Ջոխաձեն տարօրինակ կերպով մեղադրում է վերջիններին՝ իրենց ծրագրերում հայկական մշակութային հուշարձանների պահպանության, տարածաշրջանի զարգացման և դպրոցներում հայոց պատմության ուսումնասիրման պահանջների մասին դրույթներ ունենալու համար: «Հայ անջատողականների (ջավախահայության՝ Վ.Ս.) ամբոխավար գործողությունների» մասին հիշատակմամբ «Չվենի էրթօբա» շաբաթաթերթի ծավալուն առաջնորդող անդրադարձել է թուրքական բարձրագույն ռազմական ղեկավարության՝ 2002 թ.-ի մարտին Վրաստան կատարած այցին և, ընդհանրապես, ռազմական ոլորտում

³⁷ «Չրջես քյրոջեր» («Պոես կուրիեր»), N 129, 2001.

³⁸ «Նճալո 7 ճճջ» («Ախալի 7 դրե» («Նոր 7 օր»)), N 25, 2001.

³⁹ «Նճաջալ-ճանճալո» («Ասավալ-դասավալի»), N 27, 2001.

⁴⁰ «Մտաջարի ցաճջոտ» («Մթավառի գագեթի» («Գլխավոր թերթ»)), N 4, 2002.

Թուրքիայի հարաճուն ներկայությանն ու ազդեցության խորացմանը: Հողվածագիրը, ներկայացնելով Վրաստանում թուրքական ռազմական ներկայության և ռազմական ուղորտում վրաց-թուրքական համագործակցության վերաբերյալ մի շարք փաստական ու վիճակագրական տվյալներ⁴¹, հանգամանորեն անդրադառնում է թուրքական հրապարակային ու թաքնված նկրտումներին, ըստ որոնց՝ ռուսական ազդեցության լծակներն արագորեն իր ձեռքը վերցնող այդ երկիրը ցանկանում է Չավախբում Վրաստան-ՀՀ սահմանի երկայնքով, տեղակայել իր զորամիավորումները. դրանք, թերթի աղբյուրների համաձայն, հնարավոր է տեղակայվեն նաև Ախալցխային հարակից Վալե ավանում, Ծավկայի մերձակայքում և Քուռ գետի հովտի երկայքով՝ թուրք-ադրբեջանական տարանցիկ գոտիների (Նավթամուղ, գազամուղ, երկաթուղի) վերահսկման նպատակով: Հրապարակման մեջ տեղ է գտել չափազանց հետաքրքրական մի փաստ ևս, ըստ որի՝ Թուրքիան կիսապաշտոնական կերպով հայտարարել է, որ պատրաստ է Չավախբի հայ բնակչությանը սեփական ֆինանսական միջոցներով տեղափոխել ՌԴ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասեր և նրանց բնակատեղեցում վերաբնակեցնել թուրք-մեսխեթցիներին⁴²: Փաստե՞ք նաև, որ թերթը թուրքական այսպիսի նկրտումները համարում է չափազանց վտանգավոր ինչպես Վրաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար:

Հայ-վրացական միջխորհրդարանական հանձնաժողովի 4-րդ նիստում (2002 թ. հունիս, Երևան)⁴³ ՀՀ խորհրդարանականների կողմից ջավախահայության սոցիալ-տնտեսական, կրթական և այլ հիմնահարցերի վերհանման փաստը խիստ քննադատության է ենթարկում «24 սաաթի» թերթը: Հանձնաժողովի քարտուղար Դավիթ Լացուզբայայի՝ հրապարակման մեջ տեղ գտած մեկնաբանություններից երևում է, որ հայ պատվիրակության կողմից Չավախբի հարցը նիստի օրակարգ մտցնելու փաստը հանկարծակի է բերել վրացական պատվիրակությանը և առաջացրել մեծ դժգոհություն: Հավելե՞ք, որ հայկական կողմը (փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի գլխավորությամբ) առաջարկել է քննարկել ՀՀ մասնակցությունը Սամցխե-Չավախբի սոցիալ-տնտեսական վերականգնման ծրագրերում: Պատվիրակության անդամ մեկ այլ խորհրդարանական Հենրիկ Գրիգորյանն էլ առաջ է քաշել Չավախբի դպրոցներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված դասագրքերով ուսուցանելու հարցը, ինչը ևս հատուկ ուշադրության չի արժանացել վրացական պատվիրակության կողմից: Դիպվածը փաստում է, որ պաշտոնական Վրաստանը Եդ. Շևարձնաձեի օրոք ևս կասկածանքով է վերաբերվել Չավախբի հիմնահարցերի լուծման վերաբերյալ ՀՀ պաշտոնական առաջարկներին ու քննարկումներին, իսկ հասարակական-քաղաքական մտքի քննարկումներում այդ փաստն ընդունվել է սվիններով՝ տեղիք տալով այդ առաջարկներում ինչ-ինչ «դավադրությունների» կամ

⁴¹ “Իջցնո յթտծծ” («Չվենի Էռթրբա» («Մեր միասնությունը»)), N 6, 2002. Ըստ հրապարակման՝ Թուրքիան վերջին 5 տարվա ընթացքում Վրաստանին է տրամադրել 35 միլիոն դոլարի ռազմական հանդերձանք և այլ պարագաներ: Անկարան իր միջոցներով արդիականացրել է Մառնեուլի ռազմական օդանավակայանը, որի կառավարումը, փաստորեն, արդեն Թուրքիայի ձեռքում է, վրացական խաղաղարար գումարտակը Կոսովոյում իր առաքելությունն իրագործում է թուրքական ռազմական խմբավորումների կազմում և այլն:

⁴² “Իջցնո յթտծծ” («Չվենի Էռթրբա» («Մեր միասնությունը»)), N 6, 2002. Թերթի խմբագրությունը «Չավախբի» փոխարեն օգտագործել է «Չավախբ» հայերեն անվանաձևը, այդուհանդերձ, այն վերցնելով չակետների մեջ:

⁴³ “24 ՆՏՏԹ” («24 սաաթի» («24 ժամ»)), N 24, 2002. Հայ-վրացական միջխորհրդարանական հանձնաժողովի հայկական և վրացական պատվիրակությունները գլխավորել են երկու երկրների խորհրդարանների փոխխոսնակներ Տիգրան Թորոսյանը և Վախթանգ Կոլբայանը: Հանձնաժողովի նախորդ (3-րդ) նիստը տեղի էր ունեցել դրանից 3 տարի առաջ՝ 1999 թ. մարտին:

«թաքնված ականների» որոնման: Գրեթե նմանատիպ մոտեցումների է արժանացել նաև 1999 թ. հիմնադրված և իրավական գրանցում չստացած «Վիրք» կուսակցության գոյությունն ու վերջինիս ղեկավար Դավիթ Ռստայանի՝ հասարակական-քաղաքական ոլորտում ծավալած գործունեությունը «Մթավարի գազերի» թերթի ծավալուն հրապարակման մեջ⁴⁴: Թերթը հրապարակել է նաև անվտանգության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Նիկա Լալիաշվիլու մեկնաբանությունը, որում վերջինս, թեև խուսափել է ուղղակի դիրքորոշում հայտնել «Վիրքի» գործունեության վերաբերյալ, այդուհանդերձ հայտարարել է, որ պետությունը պետք է ամեն ինչ անի, որպեսզի վերջ դնի քրեական, անջատողական ու ահաբեկչական շարժումների ուժեղացմանը: «Վիրքի» և նրա ղեկավար Դավիթ Ռստայանի մասին խոսելիս գույներն ավելի է խտացնում «Ախալի եռա» թերթը՝ նրա գործունեությունը համարելով արկածախնդրություն: Հոդվածագիր – պատմաբան Լուկա Աբուսերիձեն Դ. Ռստայանի գործունեությունը համեմատում է 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների «արկածախնդրությունների» հետ, ինչին ի պատասխան՝ ըստ նրա՝ Օսմանյան կայսրությունը 1915 թ.-ին իրագործեց ցեղասպանություն, և կշեռքի նժարին դրվեց փոթորաթիվ հայ ազգի լինելիության հարցը⁴⁵: Հոդվածում ոչ միայն բացակայում է հարևան – բարեկամ հայ ժողովրդի և նրա պատմության ողբերգական էջերի հանդեպ հարգանքը, այլև այն ծայրից-ծայր լցված է թույլով ու սպառնալիքներով, տեղ-տեղ՝ վիրավորական ու հեզնական որակումներով, ինչը խոսում է վրացական միջավայրում ջավախահայության և այնտեղ գործող հասարակական-քաղաքական ուժերի հանդեպ ծայրահղ անհանդուրժող տրամադրությունների, կասկածանքի ամպայության և փոխվստահության բացակայության մասին: Այդ ցավալի իրողության արտացոլանքն է «Ասավալ-դասավալի» թերթի՝ Ախալքալաքի դատավոր Սուսաննա Մանուկյանի մասին հրապարակած վերլուծականը: Սուսաննա Մանուկյանն իր հարցազրույցերից մեկում դժգոհել է դատավորների որակավորման քննությունները վրացերենով հանձնելու փաստի առիթով: «Բարի եղեք նկատի ունենալ, որ Ջավախքը Վրաստանի հայալեզու տարածաշրջան է»: Ս. Մանուկյանի՝ Վրաստանի իշխանություններին ուղղված այս հայտարարությունը, բնականաբար, հիշեցնում էր այն մասին, որ պետությունը պարտավոր էր հաշվի նստել ջավախահայության՝ միջազգային օրենսդրությամբ նախատեսված լեզվական իրավունքների հետ և հայերենին՝ որպես տեղաշրջանային լեզվի, շնորհիվ իրավական կարգավիճակ⁴⁶: Ինչպես նախորդ դեպքում «Ասավալ-դասավալիի» հոդվածագիրը ևս քաղաքակիրթ քննարկման փոխարեն սպառնալիքներ է տեղում Ախալքալաքի հայազգի դատավոր Սուսաննա Մանուկյանի հասցեին և Վրաստանի Գերագույն դատարանի ղեկավարից պահանջում վտարել նրան դատական համակարգից⁴⁷:

⁴⁴ «Մտազարի Գաջոտի» («Մթավարի գազերի» («Գլխավոր թերթ»)), N 124, 2003.

⁴⁵ «Նաջլո Երա» («Ախալի եռա» («Նոր դարաշրջան»)), N 41, 2003.

⁴⁶ Ս. Մանուկյանն անուղղակիորեն մատնանշել է Եվրոպայի խորհրդի կողմից 1995 թ. ընդունված Ազգային փոթորամասնությունների շրջանակային կոնվենցիան (Վրաստանն այն վավերացրել է բավականին ուշացումով՝ 2005 թ. դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ մտցրել 2006 թ. ապրիլի 1-ին), 1992 թ. ընդունված ԵՄ Տեղաշրջանային կամ փոթորամասնությունների լեզուների Եվրոպական խարտիան (Վրաստանը, ցավոք, մինչ օրս չի վավերացրել այն), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)՝ ազգային փոթորամասնություններին վերաբերող Հաագայի (1996 թ.), Օսլոյի (1998 թ.), Լոնդոնի (1999 թ.) հանձնարարականները և այլ միջազգային փաստաթղթեր: Առավել հանգամանորեն տես **Ջավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում**, հեղինակ-կազմող՝ Վահե Սարգսյան, *Հայոց Հյուսիսային դարպասները. Չավախք, Լոռի, հ. 3, Երևան, 2009*:

⁴⁷ «Նաջալ-ճանաջալո» («Ասավալ-դասավալի» («Վերելք-վայրէջք»)), N 30, 2003.

Կրկին «Ձավախքում առկա անջատողականության» խնդիրն է շրջափել պատմաբան-հրապարակագիր Բորիս Բոխուան՝ «Ռեզոնանսի» թերթի էջերում պատմական ընդարձակ էքսկուրս կատարելով և ներկայացնելով 1918 թ.-ի դեկտեմբերի 2-րդ կեսին տեղի ունեցած վրաց-հայկական պատերազմին, Վրաստանի խորհրդայնացմանն ու վիճելի տարածքների ճակատագրին առնչվող մի շարք մանրամասներ: Շարադրանքում միակողմանի լույսի ներքո քննելով իրերի ընթացքը՝ հեղինակն անխնա քննադատության է ենթարկում Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀԶԴ)՝ Վրաստանի դեմ պատերազմ սկսելու, տարածքներ զավթելու, իսկ արդի փուլում էլ Ձավախքի Ծավկայի, Նինոծմինդայի և Ախալքալաքի շրջանների հայ ազգաբնակչության շրջանում այն ազդեցություն ունենալու, նրանցից ոմանց Արցախյան պատերազմին մասնակցության տանելու և այլնի համար⁴⁸: Վրացի այլ հեղինակների կարծրացած դիրքորոշումների օրինակով՝ Բ. Բոխուան ևս Ձավախքում տեղի ունեցող այս կամ այն գործընթացը կամ իրադարձությունը քննում է ոչ թե համակողմանիորեն, անաչառ լույսի ներքո, այլ հետևելով ավանդույթին՝ այդ ամենի հետևում անպայմանորեն տեսնում է մութ, դավադիր ուժեր, որոնց շարքում, բնականաբար, առաջնահերթորեն հիշատակվում է ՀԶԴ-ն: Այսպես, հեղինակը, առանց այդ առթիվ փաստեր ներկայացնելու, ՀԶԴ-ին է վերագրում 1998 թ.-ի զորավարժությունների (ենթադրվում է՝ հետագայում նաև այնտեղ մշտական տեղակայման) նպատակով վրացական ռազմական շարասյան մուտքը Ախալքալաքի շրջան՝ արգելելու գործողությունը: Այնինչ ռազմական շարասյան մուտքի արգելքը կազմակերպել են մի խումբ ջավախահայ ղեկավար գործիչներ՝ բերելով իրենց գործողության համար իրավական հստակ հիմնավորումներ⁴⁹: Ձավախահայ գործիչների կողմից վրացական ռազմական շարասյան մուտքը Ախալքալաքի շրջան արգելելու փաստն իր հողվածներում խստորեն դատապարտել է նաև պատմաբան-հայագետ Բոնդո Արվելաձեն⁵⁰:

2004 թ.-ի հուլիսին հայության և հայ-վրացական հարաբերությունների մասին իրարից անկախ երկու ծավալուն հոդվածներ են հրապարակվում «Պրես-պրեմիերի»⁵¹ և «Զորջիան թայմս»⁵² թերթերում: Առաջինում Վրաստանի Ծղալտուբո քաղաքի բնակիչ, հավանաբար պատմաբան Ինդիկո Փխակաձեն բավական խառնիճաղանջ կերպով, առանց ժամանակագրության պահպանման ներկայացնում է պատմական մի շարք անցքեր ու իրադարձություններ՝ հայությանը մեղադրելով «վրացական տարածքների պարբերաբար զավթման» և «բնակավայրերի յուրացման» մեջ: Մեկ թափանցելով միջևադար, մեկ՝ հին դարեր, այնուհետև միանգամից գալով 20-21-րդ դարեր՝ հեղինակը նշում է, թե իբր Մեսխեթ (Սամցխե)-Ձավախքում հայերն այսօր էլ ատելությամբ են լցված վրացիների նկատմամբ և չեն ընդունում վրացիների առկայությունը վրացական այդ հիմնավորց հողում՝ Ռուսթավելու ծննդավայրում⁵³: Մեղադրելով Էդ. Շևարձնաձենին Վրաստանի դեմ ուղղված քայլերի, Աբխազիան ու Հարավային Օսեթիան դավաճանաբար օտարելու մեջ՝ Ի. Փխակաձեն այն միտքն է զարգացնում, որ իշխանությունների թույլ տված սխալների պատճառով մեր օրերում ինչպես հայերը, այնպես էլ ադրբեջանցիները Վրաստանի կազմում ինքնավար հանրապետություն

⁴⁸ «Տրեֆոնանս» («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 95, 2004.

⁴⁹ Հիշյալ դեպքի մասին առավել հանգամանորեն տե՛ս **Սարգսյան Վ.**, 1998 թ. օգոստոսի 12: Ձավախքի վերջին համարձակ քայլը, *Հայոց հյուսիսային դարպասները. Ձավախք, Լոռի (հողվածների ժողովածու), Երևան, 2009, էջ 32-40:*

⁵⁰ «Զալոթա» («Գալոթա» - «Դայլալ, երգեցողություն»), N 4, 2005.

⁵¹ «Յրես-Յրեմոյր» («Պրես-պրեմիերի»), N 39, 2004.

⁵² «Ջորջիան Թայմս» («Զորջիան թայմս»), N 27, 2004.

⁵³ «Յրես-Յրեմոյր» («Պրես-պրեմիերի»), N 39, 2004. Ըստ որոշ վկայությունների՝ մեծանուն պոետ Շոթա Ռուսթավելին ծնվել է Ձավախքում՝ ներկայիս Ասպինձայի շրջանի Ռուսթավելի գյուղում:

ստեղծելու պահանջներ են ներկայացնում: Հայրությանը դարձյալ ոչ բարյացակամ վերաբերմունքի է արժանացնում «Ջորջիան թայմսի» հոդվածագիրը: Անդրադառնալով Ջավախքի Չունչխա, Պրտենա վրացաբնակ և Խոսպիա մասամբ վրացաբնակ (Նախկինում հունաբնակ) գյուղերի սոցիալ-տնտեսական, կրթական ու հոգևոր կյանքին՝ թերթը մեղադրանքներ է հասցեագրում ջավախահայությանը՝ նշված գյուղերի վրացիների հանդեպ իբր անհանդուրժող կեցվածք ունենալու համար: Փաստենք, որ սույն հեղինակի շարադրանքը ևս խիստ կողմնակալ է, զգացական բնույթի և չի արտացոլում իրերի իրական պատկերը:

Նույն 2004 թ.-ին հրապարակած իր մի քանի հոդվածներով ջավախահայությանն ու գիտական հանրությանը զարմացրեց պ.գ.դ., պրոֆեսոր Թինա Իվելաշվիլին: «Լիտերատուրա դա խելովներա» ամսագրի մի արտառոց հոդվածում նա հրապարակել էր «գաղտնի աղբյուրներից իրեն հասանելի դարձած» ահագանգը, թե ջավախահայերը, «Ջավախք» կազմակերպության միջոցով և Երևանի անմիջական ցուցումով, Ախալցխա քաղաքի Մարդա թաղամասում գտնվող եկեղեցու արևելյան ճակատին 2002 թ. փորագրել են մեծ չափի 9 տողանոց արձանագրություն⁵⁴: Պրոֆեսոր Թ. Իվելաշվիլին հիշյալ արձանագրությունը վերծանել է ակադեմիկոս Գ. Քուրդիանսիի և պրոֆ. Լ. Դավլիանիձեի հետ, որոնք ևս անուղղակիորեն հաստատում են Թ. Իվելաշվիլու մեղադրանքները: Չավեշտ է, բայց փաստ, որ Թ. Իվելաշվիլին նման կարգի մեղադրանքներ, որակումներ (կատարվածը համարում է բարբարոսություն, սրբապղծություն և այլն) տալուց առաջ անգամ պարզ հարցում չի արել տեղացիների շրջանում, թե Ախալցխայի Սբ. Վարդանանց հռչակավոր եկեղեցու պատի արձանագրությունը արդյո՞ք Մարդա կոչվող թաղամասում, միջնադարյան Սբ. Նշան եկեղեցու տեղում (այստեղից էլ՝ Սբ. Նշան բլրի անունը) Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցի⁵⁵ կողմից 1861 թ.-ին հիմնադրված Սբ. Վարդանանց (Սբ. Նշան) եկեղեցու պատին 2002 թ.-ից առաջ նման մեծ չափի արձանագրություն եղե՞լ է, թե՞ ոչ: Պրոֆեսորի հոդվածում տեղ են գտել նաև Ախալցխայի ինչպես հիշատակված, այնպես էլ այլ եկեղեցի-հուշարձանների տեղում վրացական հետքերի որոնմանն առնչվող դրույթներ, այդ առիթով վրացի հեղինակներից մեջբերումներ և այլն: Մեր խնդրի շրջանակներից դուրս համարելով դրանց քննությունը՝ փաստենք միայն, որ «ջավախահայության բարբարոս վարքի արդյունքում 2002 թ.-ին Սբ. Վարդանանց եկեղեցու պատին հայտնված» մեծածավալ արձանագրությունն իրականում փորագրվել է եկեղեցու շինարարության ավարտական տարում՝ 1868 թ.-ին, հրատարակվել 1990 թ.-ին⁵⁶: Վրացի պրոֆեսոր Թ. Իվելաշվիլին բազմիցս ահագանգել է նաև, թե իբր ջավախահայերը դիտավորյալ ոչնչացնում են տեղի վրացերեն արձանագրությունները և տեղը դաջում հայերեն «հնաոճ» արձանագրություններ⁵⁷:

⁵⁴ “**ლოტვრატურა და ხელოვნება**” («Լիտերատուրա դա խելովներա» («Գրականություն և արվեստ»)), N 2, 2004, გვ. 22-23.

⁵⁵ Նահատական Ռ., Ախալցխայի պատվավոր քաղաքացին, «Գարուն», 1988, N 9, էջ 19-20:

⁵⁶ **Карапетян С., Марутян А., Наатакян Р.** Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалцха, Еրաբեր հասարակական գիտությունների, 1990, N 5, С. 75-85:

⁵⁷ Վրացական մամուլի միջոցով նա ահագանգել է, օրինակ, թե իբր ջավախահայերը քերում ու ոչնչացնում են Ասպինձայի շրջանի ներկայումս վրացաբնակ Թոք գյուղի եկեղեցու վրացերեն արձանագրությունները, որոնց փոխարեն հայտնվում են հին հայերեն արձանագրություններ, տե՛ս “**კრიზინალი**”(«Կրիմինալ»), N 44, 2004, “**გვირის პალიტრა**” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայականը»)), N 44, 2004 և այլն: Ուշ միջնադարում թրքաբնակ, 1829-1830 թթ. Կարինից այստեղ տեղափոխված հայությանը համայնված, հետագայում վերստին հայաթափված (հայությունը տեղափոխվել է Ջավախքի Սամսար լեռան ստորոտ և հիմնել համանուն գյուղը) և զուտ թուրքաբնակ դարձած, 1944 թվականից թուրքերի՝ Միջին Ասիա տեղափոխվելուց հետո մի

Չավախքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներին, հայվրացական պատմական վեճերին, ինչպես նաև Վրաստանի հայկական եկեղեցիների և այլ պատմաճարտարապետական հուշարձանների պատկանելության խնդրին «Գալոբա» թերթում անդրադառնում է վրաց շրջանակներում հայտնի հայագետ Բոնդո Արվելաձեն⁵⁸։ Յեղիակն իր հոդվածում խստորեն քննադատում է ջավախահայերին՝ մեղադրելով նրանց ինքնավարություն պահանջելու մեջ։ Նա այդ առիթով հիշատակում է կրկին «Վիրք» չգրանցված կուսակցությանն ու նրա համանախագահներից Դավիթ Ռստակյանին՝ հավելելով, որ այս ողջ գործընթացների հիմնական մեղավորները հայ գիտնականներն են, որոնք տևական շրջան նպատակասլաց կերպով հաստատել են, որ Չավախքը հայկական հող է։ Բ. Արվելաձեն հիշատակում և անխնա քննադատում է հուշարձանագետ Սամվել Կարապետյանին, որը շրջանառության մեջ է դրել Վրաստանի (այդ թվում Չավախքի) հայկական հուշարձանների վերաբերյալ գրքեր ու քարտեզներ⁵⁹, մեծանուն ճարտարապետ, հայ ճարտարապետության պատմության և տեսության լավագույն գիտակ Տիրան Մարությանին⁶⁰, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, համբավավոր հայագետ Նիկոլայ Տոկարսկուն⁶¹ և այլոց։ Բ.Արվելաձեն ևս հավատարիմ է մնացել վրացական հասարակական-քաղաքական և գիտական-ակադեմիական շրջանակներում տիրող կարծրատիպերին և այդ ամենի համար մեղադրել է հայ քաղաքական կուսակցություններից մեկին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀԶԴ)։ Իր հրապարակման մեջ կարմիր թելի նման տանելով ՀԶԴ գործունը՝ հեղինակը նշված քաղաքական կուսակցության՝ իր տեսանկյունից հակավրացական համարվող դերակատարումը տեսնում է գրեթե ամենուր՝ սկսած 20-րդ դարասկզբի իրադարձություններից, ջավախքյան ներկայիս զարգացումներից մինչև հուշարձանագետ Ս. Կարապետյանի կողմից Վրաստանի հայկական հուշարձանների մասին քարտեզների ու գիտական աշխատանքների հրատարակումը։

«Մեծ Հայաստան», «Արևմտյան Հայաստան», «Թուրքահայաստան», «Հայկական բարձրավանդակ», «Հայկական հարց» եզրույթների ու հասկացությունների «դիտավորյալ ստեղծման» և «դրանց միջոցով հարևանների (մասնավորապես՝ Վրաստանի) տարածքների նկատմամբ հավակնությունների համար» հայ հասարակական-քաղաքական հոսանքներին և վերջիններիս ներկայացուցիչներին ներկայացրած մեղադրանքներով է հանդես եկել «Ձորջիան թայմսի» հրապարակագիր Իրակլի Մանագաձեն։ Նա այդ շրջանակներում խիստ քննադատության է ենթարկել ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Վահան Հովհաննիսյանին, որ թերթին տված մեկնաբանության մեջ նշել է, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը խիստ կարևորում է, և դրա շրջանակներում հարկ է, որ գերազանցապես հայաբնակ Սամցխե-Չավախքին տրվի ինքնավար կարգավիճակ⁶²։ Վահան Հովհաննիսյանի՝

քանի ընտանիք վրացիներով, ավելի ուշ վերստին հայերով բնակեցված Թոք գյուղի մասին առավել հանգամանորեն տե՛ս **Կարապետյան Ս.**, Չավախք, Երևան, 2006, էջ 209-210:

⁵⁸ “galoba” («Գալոբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005.

⁵⁹ Տե՛ս **Կարապետյան Ս.**, Չավախքի խաչքարերը, Երևան, 1995, **Կարապետյան Ս.**, Հայկական եկեղեցիները Վրաստանում, ցուցակ և քարտեզ, Երևան, 1995 և այլն: Սամվել Կարապետյանի՝ դաշտային հետազոտությունների և գրավոր աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ հիշյալ ցուցակ-քարտեզում հաշվառած և ներկայիս Վրաստանի տարածքում գտնվող շուրջ 650 եկեղեցիների շուրջ կեսը Բոնդո Արվելաձեն համարում է վրացական (տե՛ս “Գալոբա” («Գալոբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005):

⁶⁰ Նկատի է առնվում Ս. Մարությանի կողմից հրատարակված «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (Ե., 1972) և «Հայ ճարտարապետության հուշարձաններ. խորագույն Հայք» (Ե., 1978) աշխատությունները:

⁶¹ Յեղիակը մատնացույց է անում Ն. Տոկարսկու հրատարակած «Архитектура Древней Армении» (Ե., 1946) աշխատությունը:

⁶² “Ջորճիան տայմսի” («Ձորջիան թայմս»), N 44, 2005.

ջավախահայության քաղաքացիական ու սոցիալական իրավունքների անպաշտպան լինելու մասին մեկ այլ հայտարարությանն արձագանքելով՝ պատմաբան – հրապարակագիր Գերոզի Ուձիլաուրիին վերստին քննադատում է և՛ Հայաստանին (Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը)՝ «Մեծ Հայաստանի» վերականգնման ծրագրերով առաջնորդվելու համար, և՛ ջավախահայության շրջանում գործող կազմակերպություններին՝ ջավախահայության շրջանում տարվող խտրական քաղաքականության դեմ բողոքի այլ քաղաքացիական շարժումները համար, և՛ Կրաստանի իշխանություններին (Նախագահ Մ. Սահակաշվիլուն)՝ ջավախահայերին խաբելու, տված խոստումները չկատարելու պատճառով «անջատողականների գործունեության համար պարարտ հող ստեղծելու» համար: Պատմաբանը, որպես վրաց հեղինակների շրջանում կարծրացած օրինաչափություն, ամենևին նպատակ չունենալով իրերը քննել համակողմանի և անաչառ լույսի ներքո, ձգտելով ամեն կերպ խտացնել գույները՝ գրում է, որ տվյալ ժամանակաշրջանում Ջավախքում գրեթե չի գործել Կրաստանի իրավասությունը, Սահմանադրությունը, ոստիկանությունը, հայերը վրացերենով չեն խոսում, դեմ են դուրս գալիս փաստաթղթերը վրացերենով կազմելուն, պետական հիմնարկների շենքերին ամրացնում են ՀՀ պետական դրոշմը, բնակչությունը զինված է, Կրաստանի քաղաքացին իբրև թե ազատ չի կարող շրջել Ջավախքով, ինչպես Աբխազիայում և այլն⁶³: Գրեթե նույն տեսանկյունից է Ջավախքի հիմնահարցին մոտեցել և մեղադրանքների նույնական վեկտորներ ընտրել Կրաստանի Ավանդականների կուսակցության անդամ, պատմաբան Գուբազ Սանիկիձեն «Ռա՞ո-ռա՞ո» թերթին տված հարցազրույցում: Թերթն ամբողջությամբ արտատպել է ջավախահայ հասարակական գործիչներ Ե. Շիրիյանի և Ա. Վարդապետյանի կողմից «Ջավախք» թերթում 1998 թ.-ին հրապարակված «*Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (Նախագիծ)*» վերտառությամբ փաստաթուղթը⁶⁴ և Գ. Սանիկիձեի մեկնաբանությունները, որտեղ պատմաբան-քաղաքական գործիչը դատապարտում է հայերի՝ «Մեծ Հայաստան» կերտելու երազանքը և հիշեցնում, որ ՀՀ-ի՝ Կրաստանի հետ ընդհարումն առիթ կձառայի Ադրբեջան-Կրաստան-Թուրքիա այլաբանական ծնադրումանը, ինչը կործանարար կարող է լինել Հայաստանի համար⁶⁵: «Արգումենտի» թերթին տված ծավալուն հարցազրույցում էլ Ավանդականների կուսակցության անդամը, վերստին քննադատելով Կրաստանի իշխանություններին՝ երկիրը ոչ ճիշտ ուղիով տանելու, ազգային արժեքներով չառաջնորդվելու և օտարերկյա կազմաբանողիչ ուժերի առջև երկրի դարպասները բացելու համար, փաստում է, որ եթե Ջավախքում հայերին, իսկ Զվեմո Զարթիում ադրբեջանցիներին տրվի ինքնավարություն, վերաբնակեցվեն թուրք-մեսիտեթիները, վերջնականապես կկորսվեն Աբխազիան ու Հարավային Օսեթիան (վրացական եզրույթով՝ Սամաչաբլուն), ապա իրենք որպես ազգ, որպես երկիր կվերանան⁶⁶:

⁶³ “ახალი თაობა” («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 353, 2005.

⁶⁴ Հայտնի հասարակական գործիչներ, մտավորականներ Երվանդ Շիրիյանը և Արտաշես Վարդապետյանը ժամանակին հանրային քննարկման են ներկայացրել «*Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (Նախագիծ)*» վերտառությամբ փաստաթուղթը (տե՛ս «Ջավախք», թիվ 2, 1998), որտեղ մանրակրկիտորեն մշակել և 35 ամփոփ կետերի մեջ ներկայացրել են Ջավախքի ապագա ինքնավար հանրապետության սահմանադրության դրույթները: Թերթի նույն համարում տպագրվել է նաև «*Ջավախքի կարգավիճակը (Նախագիծ): Ջավախքի տարածքային ինքնավարության ստեղծման հիմնավորումը*» վերտառությամբ հրապարակումը, որում ներկայացվում են Ջավախքի ինքնավարության անհրաժեշտության մասին պատմական ու իրավական մի շարք հիմնավորումներ:

⁶⁵ «რად-რად ?» («Ռա՞ո-ռա՞ո» - «Ի՞նչ-ի՞նչ»), N 18, 2005.

⁶⁶ “არგუმენტი” («Արգումենտի»), N 3, 2005.

Թեև Հայաստանին, հայությանը կամ ջավախահայությանը չի հիշատակում, այդուհանդերձ Ջավախքի հնարավոր կորստյան հարցն է բարձրացնում հասարակական գործիչ, պրոֆեսոր Գոգի Դոլիձեն: Խոսելով Ջավախքում վերաբնակված աջարացիների հիմնախնդիրների⁶⁷ և վերջիններիս անհապաղ սոցիալական օժանդակության հատկացման կարևորության մասին՝ Գ. Դոլիձեն փաստում է, որ եթե ժամանակին չգբաղվեն Նինոծմինդայի շրջանի այդ մեկ-երկու փոքրիկ, բայց Կրաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող վրացաբնակ գյուղերի ամրացման աշխատանքներով, ապա առանց պայթարի ու արյունահեղության կկորցնեն «Կրաստանի այդ օրինյալ հարավը»⁶⁸: Պրոֆեսորը կոչ է անում ամեն կերպ լծվել «Ջավախքը փրկելու ծրագրերին»: Նա հատկապես շեշտում է Աջարիայի բնական աղետներից տուժածներին մեծ թափով Ջավախքում (ռուս-դուխոբորների լքած գյուղերում) վերաբնակեցնելու կարևորությունը՝ նշելով, որ իրենք առաջարկություն են ներկայացրել պատրիարքարանին՝ «Ջավախքը վերադարձնելու համար սկսել ժողովրդական մեծ շարժում»:

Թեև ջավախահայությանը ծայրահեղ մեղադրանքներ չի ներկայացրել և համեմատաբար քաղաքավարի է արտահայտվել Ջավախքում առկա հիմնախնդիրների, ջավախահայության պահանջների վերաբերյալ, Կրաստանի հորհրդարանի պատգամավոր Ալեկո Շալաբերիձեն, այդուհանդերձ, Ջավախքի տարբեր շրջաններում իրականացվելիք մի շարք ներդրումային, սոցիալ-տնտեսական ու կրթական ծրագրերի թվարկման համատեքստում չի ժխտում «անջատողականության» առկայությունը: Ավելին՝ հենց այդպիսի ենթադրյալ տրամադրությունների չեզոքացման համար հասարակական-քաղաքական գործիչն առաջարկում է Ջավախքում իրականացնել թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ վրացերենի ուսուցմանն ու կիրարկմանն ուղղված հատուկ քաղաքականություն⁶⁹: Խորհրդարանի մեկ այլ պատգամավոր Դավիթ Սագանելիձեն, թեև ուղղակի չի քննարկում Ջավախքի խնդիրը, այդուհանդերձ կտրուկ կերպով հակադրվում է տարանցիկ ուղիների և տրանսպորտային միջանցքների տարածաշրջանային նախագծերին ՀՀ-ի ներգրավվածության մասին ՀՀ-ի պաշտոնական առաջարկներին: «Ալիա» թերթին տված հարցազրույցում պատգամավորը ներկայացնում է, թե ինչպես 2005 թ.-ին Տիրանայում կայացած ՄՕՏՀԿ ԽՎ Գլխավոր Ասամբլեայի նիստի ժամանակ դեմ է դուրս եկել ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու երկաթգծային նախագծում Ախալքալաքը Գյումրիով փոխարինելու, արխագական երկաթուղու վերագործարկման և այլ առաջարկներին, որոնք կենթադրեին ՀՀ-ի մասնակցությունը տարածաշրջանային նախագծերին⁷⁰: Ներկայացնելով Թուրքիայի և Ադրբեջանի՝ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու երկաթուղին ՀՀ-ով անցկացնելու հարցում մերժողական դիրքորոշումները՝ վրացի պատգամավորի կարծիքով հայկական կողմի նպատակն է եղել տապալել այդ կարևոր նախագիծը: Ինչպես Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու, այնպես էլ Բաթում-Գյումրի երկաթուղային նախագծերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումներն անհիմն կամ անիրականանալի են համարել նաև քաղաքագետներ Գիա Խուխաշվիլին և Ռամազ Սաղվարելիձեն: Առաջինն անիրականանալի է համարում Բաթում-Գյումրի նախագիծը, իսկ Ռ. Սաղվարելիձեն այն կարծիքին է, որ հայկական կողմը փորձում է Ջավախքի

⁶⁷ Պրոֆեսորը հարցազրույցում ներկայացնում է Ջավախքի ռուս-դուխոբորների լքած գյուղերից մեկում Նինոծմինդայի շրջանի Սպասովկա գյուղում հաստատված աջարացիների խնդիրները և ինչպես այդ, այնպես էլ Սամբա (Ջավախքի փոքր գյուղերից է, խորհրդային շրջանում կոչվել է Կալինինո, ավելի վաղ՝ Տրոիցկոյե) գյուղում իրականացված իրենց բարեգործական ծրագրերը:

⁶⁸ «Թեթեման» («Ռեզոնանս») («Ռեզոնանս»), N 321, 2005.

⁶⁹ «Նեալո տաթ» («Ախալի թաթա») («Նոր սերունդ»), N 357, 2005.

⁷⁰ «Նեալ» («Ալիա») («Վերադարձ»), N 144, 2005.

միջոցով շանտաժի ենթարկել և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաբու Նախագծի հարցում իր շահերը թելադրել, ինչը ցավալի է, բայց բնական⁷¹: Կարս-Ախալքալաք-Բաբու Նախագծի իրականացման դեմ պայքարելու, այդ հարցում ԱՄՆ հայկական լոբբի շահերը պաշտպանելու հայամետ դիրքորոշումների համար «Ասավալ-դասավալի» թերթի հրապարակագիրը ծանր մեղադրանքներ է ներկայացնում Կրաստանի վարչապետ Չուրաբ ժվանիային՝ փաստելով, որ ԱՄՆ-ի հայկական լոբբիստական շրջանակները մինչև 2003 թ.-ի նոյեմբերի «Կարդերի հեղաշրջումը» աջակցել են Չ. ժվանիային, որպեսզի վերջինս դառնա Կրաստանի Նախագահ⁷²: Կարս-Ախալքալաք-Բաբու երկաթգծային Նախագծի իրականացումը Չավախբում ծնելու է լարվածություն և բերելու է անջատողականության. այս կարծիքն է հայտնել Կովկասի հարցերով փորձագետ Մամուկա Արեշիձեն՝ փաստելով, որ Չավախբում բախումներն անխուսափելի կլինեն: Կերլուծելով ստեղծվելիք իրավիճակը՝ քաղաքագետը չափազանց մեծ կարևորություն է տվել Նախագծին՝ ոչ միայն Եվրոպայի հետ միանալու, այլև տարածաշրջանում (Չավախբում) անջատողական տրամադրությունների զսպման առումով⁷³: Կարս-Ախալքալաք-Բաբու երկաթուղու կառուցման մասին պայմանագրերի կնքմանը մեծ կարևորություն է տալիս քաղաքագետ Սոսո Ցիսկարիշվիլին և մեղադրում Հայաստանին՝ ՌԴ-ի ազդեցության տակ գտնվելու, սեփական ռազմական հաջողություններով տարվելու և Ադրբեջանի հետ լարված հարաբերությունների պահպանման համար: Ըստ քաղաքագետի՝ Կրաստանը շահագրգռված է կայուն և իրավահավասար հարաբերություններ հաստատելու ինչպես Ադրբեջանի, այնպես էլ ՀՀ-ի հետ, սակայն ՀՀ-ն, ըստ Ս. Ցիսկարիշվիլու, վերոհիշյալ իրողությունների պատճառով դուրս է մտնում մեծ Նախագծերից⁷⁴:

Անդրադառնալով տարածված լուրերին, թե ՀՀ-Կրաստան սահմանը ևս հսկվելու է ՀՀ-ում տեղակայված ռուսական սահմանապահ զորքերի կողմից, «Կվիրիս պալիտրա» թերթի հրապարակագիրը, կրկին տուրք տալով երևակայությանը, կարծիք է հայտնել, որ ռուսական զորքերի կողմից վերահսկվող ՀՀ-Կրաստան անցակետերից թույլատրվելու է Չավախբ անցնել «անջատողականների աջակիցներին»⁷⁵: Չավախբում հնարավոր լարվածության խորացում է կանխատեսել հայտնի քաղաքագետ Ռամազ Սաղվարեիձեն: Խոսելով չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի ու Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածաշրջանում ընթացող գործընթացների և այդ ամենի համատեքստում ՌԴ շահերի մասին՝ քաղաքագետը Չավախբում լարվածության հնարավոր խորացումը կապում է Կրաստանի՝ ԱՊՀ-ից դուրս գալու ցանկությունների իրագործման և ՌԴ-ի՝ այդ առիթով ձևավորվելիք Նոր սպառնալիքների հետ⁷⁶: Չավախբում 2000-ական թթ. սկզբից գործող «Ա-ինֆո» լրատվական գործակալության ղեկավարին անջատողական է անվանել պատմաբան-հրապարակագիր Գեորգի Ուժիլուրին: Անդրադառնալով Զվեմո Զարթլի Նահանգում բնակվող ադրբեջանցիների պահանջներին, այնտեղ գործող ադրբեջանական կազմակերպությունների և այդ կազմակերպությունների ղեկավարներից ոմանց, իր

⁷¹ “**Րեֆորմանո**” («Ռեգոնասսի» («Ռեգոնասս»)), N 290, 2005. Նույն խնդրի մասին Ռ. Սաղվարեիձենի մեկ այլ հարցազրույցը տե՛ս “**Կրեյլա Նոսեղ**” («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»)), N 35, 2009. ՀՀ-Թուրքիա հարաբերությունները վերլուծելով՝ քաղաքագետն այստեղ այն կարծիքին է, որ Կարս-Ախալքալաք-Բաբու Նախագծի բարեհաջող իրականացման դեպքում ՀՀ-ն հայտնվում է խաղից դուրս վիճակում:

⁷² “**Անջաղ-ճանջաղ**” («Ասավալ-դասավալի» («Կերելք-վայրեք»)), N 3, 2007.

⁷³ “**Կրեյլա Նոսեղ**” («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»)), N 3, 2007.

⁷⁴ “**Կեյրոն Քալոցրա**” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա Ներկայակակը»)), N 3, 2007.

⁷⁵ “**Կեյրոն Քալոցրա**” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա Ներկայակակը»)), N 13, 2006.

⁷⁶ “**Րեֆորմանո**” («Ռեգոնասսի» («Ռեգոնասս»)), N 31, 2006.

որակմամբ՝ անջատողական ու հակապետական գործունեությանը⁷⁷ Գ. Ուծիլաուրին զուգահեռներ է տանում դրանց և Ջավախքում գործող որոշ կազմակերպությունների միջև⁷⁸:

Ջավախքի առանձին շրջանների ժողովրդագրական պատկերի, հասարակական-քաղաքական իրադրության և վրացաբնակ որոշ բնակավայրերի խնդիրների ներկայացման համատեքստում կրկին ազգային նուրբ հիմնահարցերն են շոշափել «Ախալի 7 դղե» թերթի հրապարակագիրներ Գերոգի Սաբանաձեն և Իյա Ջանաշիան: Վերջիններս նույնպես ջավախահայության արդարացի պահանջներն ուղղակի կամ նուրբ ենթատեքստերի միջոցով ներկայացնում են բոլորովին այլ լույսի ներքո՝ տեղի հայկական կազմակերպությունների ղեկավարներից ոմանց («Վիրք» կուսակցություն, Ջավախքի ընտանացական մարզամշակութային միություն ևն) անուղղակիորեն ներկայացնելով որպես ծայրահեղականների⁷⁹: Ջավախքը Ռուսաստանի պլացդարմ և գրեթե Աբխազիային և Հարավային Օսեթիային (վրաց.՝ Սամաչաբլոյին) հավասար անջատողական տարածք է դիտարկում նաև Վրաստանի ժողովրդական ֆորումի առաջնորդներից մեկը՝ Գուբազ Սանիկիձեն, որ, խոսելով Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությամբ պայմանավորված հնարավոր զարգացումների մասին, կարծիք է հայտնում, որ ՆԱՏՕ-ն ոչ թե կամբողջացնի Վրաստանը, այլ մի շարք տարածքներ կհանձնվեն Ռուսաստանին: Քաղաքական գործիչը, որպես այդ գործընթացի բերմամբ հնարավոր կորսնցվելիք երկրամասեր, դիտարկում է Աբխազիան, Հարավային Օսեթիան և Ջավախքը⁸⁰: Այդպիսի տրամադրություններով է լցված նաև պատմաբան-հրապարակագիր Գերոգի Ուծիլաուրիի հոդվածը, որում հեղինակը համապատասխանաբար գերազանցապես հայաբնակ ու ադրբեջանաբնակ Սամցխե-Ջավախքի և Զվեմո Քարթլի նահանգները դիտարկում է որպես անջատողական տարածաշրջաններ: Վերլուծելով աշխարհաքաղաքական զարգացումները, ընդհանուր գծերով ներկայացնելով ՀՀ-Վրաստան, Ադրբեջան-Վրաստան հարաբերությունները և Ռուսաստանի ու Թուրքիայի տարածաշրջանային շահերը՝ Գ. Ուծիլաուրին Այսրկովկասում անջատողականության հրահրման մեջ գլխավորապես մեղադրում է Ռուսաստանին, իսկ կոնկրետ Սամցխե-Ջավախքում և Զվեմո Քարթլիում, ըստ պատմաբանի, անջատողական տրամադրությունների հրահրմամբ շահագրգռված են համապատասխանաբար պաշտոնական Երևանն ու Բաթումը⁸¹: Գ. Ուծիլաուրին նույն թերթի այլ համարներում ևս խոսում է Վրաստանի հայաբնակ ու ադրբեջանաբնակ տարածաշրջաններում հնարավոր լարվածության օջախների առաջացման վտանգի մասին: Նա գրեթե առանց բացառության անջատողական է համարում բոլոր այն հայազգի գործիչներին, որոնք բարձրացրել են ջավախահայությանը հուզող հիմնահարցերը կամ առնչվել Ջավախքի այս կամ այն խնդրի հետ⁸²: Գ. Ուծիլաուրին մերթ մեղադրում է Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան Սոզար Սուբարին՝ Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների (իր

⁷⁷ Վրաստանի՝ մեծամասամբ ադրբեջանաբնակ Զվեմո Քարթլի նահանգում գործող հայտնի կազմակերպությունների և դրանց ղեկավարների գործունեության մասին առավել հանգամանալից տե՛ս **Սարգսյան Վ.**, Հյուսիսային Լոռի, Հայոց Հյուսիսային դարպասները. *Ջավախք, Լոռի, հ. 2, Երևան, 2009, էջ 24-78*:

⁷⁸ «ՆՅՁԼԻ ՏՁԹՅ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 182, 2006.

⁷⁹ «ՆՅՁԼԻ 7 ԸԸԵ» («Ախալի 7 դղե» («Նոր 7 օր»)), N 40, 2005.

⁸⁰ «ՆՅՁԼԻ ՏՁԹՅ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 331, 2005.

⁸¹ «ՆՅՁԼԻ ՏՁԹՅ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 116, 2005.

⁸² Հոդվածներից մեկում Գ. Ուծիլաուրին «անջատողական» է անվանում «Ա-ինֆո» լրատվական գործակալության տնօրեն, պ.գ.թ. Խ. Ստեփանյանին, Ռախայանների տոհմին և նրա ներկայացուցիչ, Խորհրդարանի պատգամավոր Մ. Ռախայանին և այլոց («ՆՅՁԼԻ ՏՁԹՅ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 46, 2006).

բնորոշմամբ՝ անջատողական արմատականների կամ «դաշնակցականների» շրջանակներում հարգանք վայելելու, առկա խնդիրները վերջիններիս հետ քննարկելու⁸³, մերթ Կրաստանի Նոր ղեկավարությանը՝ սեփական անջատողականության նվազեցման կամ չեզոքացման ուղղությամբ ծրագրեր չունենալու համար⁸⁴: Չնայած ընդգծված ադրբեջանաստ տրամադրություններին և Ի. Ալիևի ռեժիմի հետ հարաբերությունների Էլ առավել ջերմացման կողմնակից լինելուն՝ հեղինակը, այդուհանդերձ, դեմ է թուրք-մեսխեթցիների՝ Չավախբում վերաբնակվելուն և դրանով իսկ Թուրքիայի ազդեցության խորացմանը Կրաստանի հարավում⁸⁵:

Չավախբի հիմնահարցին վրաց հասարակական-քաղաքական տիրույթում այս կամ այն կերպ անդրադարձ է եղել նաև թուրք-մեսխեթցիների վերադարձի կամ հայրենադարձման գործընթացը քննարկելիս: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ դավանանքի մատնանշման (թուրք-մուսուլման) և աշխարհագրական տեղանվան (Մեսխեթ-Մեսխունիք) զուգակցմամբ իր անվանումը ստացած և ծագումնաբանության խնդրում միևնույն օրս բազմաթիվ գիտական վեճերի ու քննարկումների տեղիք տված թուրք-մեսխեթցիների՝ Չավախբի տարբեր շրջաններ վերադարձի հիմնահարցն ինքնին դարձել է Չավախբի հիմնահարցի բաղկացուցիչ մասը: Կրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում կողմ է թուրք-մեսխեթցիների հայրենադարձմանը⁸⁶ և Կրաստանի՝ Եվրասիայի առջև ստանձնած պարտավորությունների կատարմանը միայն այն դեպքում, երբ վերջիններս կընդունեն, որ իրենք ծագումով վրացի են, կկրեն (ըստ վրացական տեսակետի՝ կվերականգնեն) վրացական ազգանուններ, կսովորեն վրացերենն ու կինտեգրվեն վրացական միջավայրին: Կրաց հասարակական-քաղաքական շրջանակները համակարծիք են այն տեսակետին, որ թուրք-մեսխեթցիների՝ Չավախբում հոծ խմբերով վերաբնակեցումը ծնելու է պայթյունավտանգ իրադրություն⁸⁷, Էթնոբախումներ հայ ազգաբնակչության հետ⁸⁸, Կրաստանի դեմ ԶԶ-ի և

⁸³ «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 25, 2006.

⁸⁴ Հոդվածներից մեկում, օրինակ, մեղադրանքներ են ներկայացվում Նախագահ Ս. Սահակաշվիլուն առ այն, որ նա չի կարողանում նվազեցնել լարվածությունը Ախալբալքի Գումրուրդո գյուղում, որտեղ, ըստ Նրա, գործում են հայ «անջատողականները»: Խոսքը վերաբերում է գյուղում վեր խոյացող հոյակերտ եկեղեցու շուրջ առկա վեճին: Եկեղեցին հայտարարված է վրացական, և գյուղացիները գրկված են այն տնօրինելու իրավունքից, ինչն էլ հանդիսանում է գյուղում մերթնդմերթ սաստկացող լարվածության պատճառ («ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 14, 2006):

⁸⁵ «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 152, 2005, «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 6, 2006. Հոդվածագիր Թեա Մարխվախձեն թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը համարում է Կրաստանի առջև ծառայած ծանր մարտահրավեր և այդ շրջանակներում քննադատության ենթարկում Կրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեայի առաջնորդ Դաշգին Գյուլամեդովին, ով պահանջել է անհապաղ վերաբնակեցնել թուրք-մեսխեթցիներին Չավախբի այն բնակավայրերում, որոնցից Նրանց աքսորել են 1944 թ.-ին: Կրացի հրապարակագիրը Դ. Գյուլամեդովի, իր բնորոշմամբ, հակավրացական գործունեությունը նմանեցնում է Չավախբում գործող «Չավախբ ժողովրդավարական շարժման» և «Կիրք» չգրանցված կուսակցության գործունեությանը:

⁸⁶ Այդուհանդերձ, զգալի է նաև այն գործիչների կամ հասարակական-քաղաքական շրջանակների թիվը, որոնք թուրք-մեսխեթցիներին համարում են թուրք և կտրուկ դեմ են Նրանց վերադարձին (տե՛ս, օրինակ, «21-րդ դար» քաղաքական միավորման առաջնորդ Էլիզբար Չանելիձեի տեսակետն այդ մասին («ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 26, 2006)):

⁸⁷ Տե՛ս այդ մասին Գուբազ Մեգրելիձեի ծավալուն հոդվածը («ՅՈՏՈ» («Ախի» («Արշալույս»)), N 6, 2005):

⁸⁸ Պատմաբան-հրապարակագիր Գեորգի Ուժիլաուրին անդրադառնում է թուրք-մեսխեթցիների՝ Կրաստանում վերաբնակեցման և տեղաբաշխման խնդրին: «Որտե՞ղ պետք է բնակվեն շուրջ կես միլիոն թուրքերը». սույն հարցադրմանն ի պատասխան՝ հոդվածագիրը

ՌԴ-ի կողմից իրականացվելիք սադրանքներ⁸⁹ և այլն: Վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում կա նաև այն կարծիքը, որ թուրք-մեսխեթցիներին աքսորել է ԽՍՀՄ-ը, և այժմ նրանց առջև իրավական, նյութական, բարոյական և այլ տիպի պարտավորություններ ունի ոչ թե Վրաստանը, այլ Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ իրավաժառանգորդ պետություն⁹⁰: Վրացական հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ էլ պահանջում են, որպեսզի Վրաստանի Խորհրդարանը համապատասխան օրենքի ընդունման միջոցով իրավաքաղաքական գնահատական տա 1918-1919 թվականներին Մեսխեթում (Սամցխե-Ախալցխայի գավառ) տեղի ունեցած իրադարձություններին: Ըստ հասարակական-քաղաքական գործիչ և նշված խնդրի հենքի վրա պատրաստված օրենքի նախագծի հեղինակ Դավիթ Արաբիձեի՝ տեղի մահմեդականների (իմա՝ թուրք-մեսխեթցիների) կողմից «դրսի կայսերական ուժերի ռազմաքաղաքական աջակցմամբ» (նկատի է առնվում Թուրքիային - Վ.Ս.) իրականացվել է Մեսխեթում ապրող քրիստոնյա վրացիների եթնիկ զտում և բռնազաղթ⁹¹:

ՀՀ-Վրաստան-Ռուսաստան բազմակողմ հարաբերությունների քննարկման համատեքստում Ջավախքի հիմնահարցին լայնորեն անդրադարձել է քաղաքագետ Սոսո Ցինցաձեն: Միակողմանի լույսի ներքո ներկայացնելով խնդիրները՝ քաղաքագետը քննադատում է հայկական կողմին և՛ Վրաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիները պահանջելու, և՛ վրաց-աբխազական երկաթուղու վերագործարկման

քննարկում և մատնանշում մի շարք նահանգներ ու շրջաններ և հանգում այն եզրակացության, որ և՛ կոմպակտ բնակեցման դեպքում, և՛ բոլոր շրջաններում հավասարաչափ տեղաբաշխման պարագայում առաջանալու են անհարթահարեի խոչընդոտներ՝ տեղիք տալով բախումների և ծանր հետևանքների: Գ. Ուծիլաուրին նույնպես բացառում է թուրք-մեսխեթցիների՝ Սամցխե-Ջավախքում վերաբնակեցման տարբերակը՝ փաստելով, որ այն տեղի քրիստոնյաների և հատկապես հայերի հետ անխուսափելի բախումների առիթ կծառայի: Հետաքրքրական է, որ վրացի հեղինակը թուրք մեսխեթցիների՝ Սամցխե-Ջավախք վերաբնակեցվելու՝ իր կողմից մերժելի տարբերակի քննարկման համատեքստում մատնանշում է «պատմական արդարության սկզբունքը», այն է՝ ջավախահայության՝ իրենց պատմական հայրենիք տեղափոխվելու անհրաժեշտությունը («**ახალი თაობა**» («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»), N 30, 2006)):

⁸⁹ Հասարակական-քաղաքական գործիչ Գիա Ամաշուկելու կարծիքով՝ թուրք-մեսխեթցիներին Ջավախքում վերաբնակեցման պարագայում ՌԴ-ն և ՀՀ-ն կիրականացնեն սադրանքներ, բախումներ, ինչի արդյունքում Հայաստանը կարող է իրականացնել դեպի ծով ճանապարհի ձեռք բերելու իր վաղեմի երազանքը («**yvela siagle**» («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»), N 3, 2007):

⁹⁰ Տե՛ս այդ մասին «Արգունենտի» թերթի հրապարակումը («**არგუმენტი**» («Արգունենտի» («Արգունենտ»), N 13, 2005):

⁹¹ «**ახალი თაობა**» («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»), N 2, 2006. Խոսքը վերաբերում է 1918 թ.-ի առաջին կեսին թուրքական կանոնավոր զորքերի՝ Ախալցխայի գավառ ներխուժմանը, Ախալցխայի գավառի հայության շուրջ 6-ամսյա (1918 թ. առաջին կես) հերոսական ինքնապաշտպանությանը և դրան հաջորդող թուրքական տիրապետության շրջանին, երբ թուրքական կանոնավոր զորքերի անմիջական դրոմամբ և հովանավորությամբ ակտիվացել էր տեղի մահմեդական տարրը և ստանձնել էր այսպես կոչված 5-րդ շարասյան դեր: Վրացի գործիչը, ցավոք, չի հիշատակում ախալցխահայության մղած հերոսամարտը, Ախալցխայի հռչակավոր քաղաքագլուխ Չորի Չորյանի վճռորոշ դերակատարությունը՝ տեղի ազգաբնակչության ինքնապաշտպանության կազմակերպման և արյունալի կոտորածներից փրկելու գործում: Հենց Ախալցխացի նշանավոր հայդուկապետների գլխավորած զինյալ ջոկատների, տեղ-տեղ նաև հայ-վրացական զինակցության շնորհիվ էր, որ կոտորածներից փրկվեցին նաև առանձին վրացաբնակ գյուղեր և թուրքերի կողմից գերեվարված վրացի կանայք ու երեխաներ: Առավել հանգամանալից տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, **Սիմոնյան Ե.**, Ախալցխան կրակ է օդակում, Երևան, 2000, **Սանտոյան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Երևան, 1992 և այլն:

առաջարկների (քաղաքագետը դրանում Աբխազիայի առանձնացման և որպես կողմ հանդես գալու վտանգ է տեսնում), և՛ Վրաստանի հանդեպ, իր որակմամբ, թշնամական տրամադրություններ հրահրելու, և՛ վրաց-ադրբեջանական հարաբերություններում տիպիկ միջադեպերի պատճառ հանդիսանալու համար: Քաղաքագետն առանձնակի մեղադրանքներ է ներկայացնում պաշտոնական Երևանին՝ ՌԴ-ի՝ տարածաշրջանային ակտիվացման պայմաններում Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ գործելու և Չավախբում ինքնավարության պահանջների առաջադրման համար⁹²: Ամենակի հաշվի չառնելով տեղանունների՝ տվյալ լեզվով գործածման կանոններն ու առանձնահատկությունները՝ քաղաքագետը Երևանին, տվյալ շրջանում ՀՀ իշխանության մաս կազմող ՀՀ Դաշնակցություն կուսակցությանը և բարձրաստիճան որոշ պաշտոնյաների մեղադրում է անգամ «Չավախեթին բոլոր փաստաթղթերում «Չավախբ» նշելու», ինչպես նաև բացահայտորեն ինքնավարություն պահանջելու համար⁹³: Քաղաքագետը խորհրդային քաղաքականության արդյունք է համարում նաև այն իրողությունը, որ ջավախահայությունը չի տիրապետում վրացերենին⁹⁴: Մերժելով ջավախահայության տեղաբնիկության իրողությունը՝ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո (արդյունքում) Չավախբի շրջաններն առաջին անգամ հայերով բնակեցնելու թեզն է կրկին թմբկահարում պատմաբան-հրապարակագիր Գոգա Գոգիելին: Խեղելով պատմական իրողություններն ու փաստերը՝ հեղինակը եզրակացնում է, որ իբր պատմական բոլոր ժամանակաշրջաններում հայերը դավաճանել են Վրաստանին, Հայոց ցեղասպանությունից հետո և այլ ժամանակահատվածներում պատսպարվելով Վրաստանում՝ իբր միշտ (խորհրդային, հետխորհրդային և այլ շրջաններում) գործել են Վրաստանի դեմ: Բնականաբար, հողվածագիրն առիթը բաց չի թողել և պարսավանքի նիզակներն ուղղել է նաև ջավախահայությանը և այնտեղ գործող կազմակերպությունների դեմ՝ մեղադրելով վերջիններիս ինքնավարության պահանջների առաջադրման և այլնի համար⁹⁵: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Չավախբում հայերի՝ առաջին անգամ «հայտնվելու» մասին Գ. Գոգիելիի կարծիքն է կրկնում պատմաբան, խորհրդարանի պատգամավոր Գուբազ Սանիկիժեն: Պատգամավորը ևս բացառել է Վրաստանի տարածքում հայկական ինքնավարության ստեղծումը, իսկ ջավախահայության կողմից բարձրացված մի շարք ազգային խնդիրների պատճառը համարել է առկա և Վրաստանի իշխանությունների կողմից տարիներով չլուծված սոցիալ տնտեսական խնդիրները (մայրաքաղաքի հետ կապող բարեկարգ ճանապարհների, տնտեսական, մշակութային սերտ շփումների բացակայություն ևն)⁹⁶: Գ. Գոգիելու և Գ. Սանիկիժեի միտքն է զարգացնում նաև ազգային անվտանգության հարցերի փորձագետ, անվտանգության գնդապետ Բեհիկ

⁹² «Նեաջո տաթձ» («Ախալի թաթա») («Նոր սերունդ»), N 190, 2006.

⁹³ Չավախբի հասարակական-քաղաքական կազմակերպությունների՝ տվյալ շրջանում ներկայացրած մի շարք պահանջներին (հայերենին իրավական կարգավիճակի շնորհում, Չավախբում հայ-վրացական պետական բուհի հիմնում և այլն) անդրադարձել և դրանք հակապետական, անջատողական է որակել «Ախալի թաթա» թերթն իր մի քանի անդրադարձներում (տե՛ս «Նեաջո տաթձ» («Ախալի թաթա») («Նոր սերունդ»), N 63, N 76, 2006):

⁹⁴ Վրաստանի ոչ վրացաբնակ շրջաններում (Սամցխե-Չավախբ, Զվեմո Զարթի) և մայրաքաղաքի հայկական դպրոցներում վրացերենի ուսուցման անհրաժեշտությանը և այդ ուղղությամբ իրականացվող պետական մի շարք ծրագրերին է անդրադառնում «Մեոթխե» թերթի հրապարակագիր Նաթիա Մարուսիժեն (տե՛ս «Ձյոթոնջ» («Մեոթխե») («Չորրորդ»), N 5, 2006). Ըստ «Ալիա» թերթի տեղեկությունների՝ 2006 թ. դրությամբ Վրաստանում գործել է 456 ոչ վրացական դպրոց, որոնց 70 %-ը գտնվել են Սամցխե-Չավախբ և Զվեմո Զարթի նահանգներում (տե՛ս «Նեաջո» («Ալիա») («Վերադարձ»), N 19, 2006)

⁹⁵ «Տոնո» («Ախի») («Արշալույս»), N 11, 2006.

⁹⁶ «Ձյոթոնջ» («Մեոթխե») («Չորրորդ»), N 10, 2006.

Ալադաշվիլին: «Ղվելա սիախլե» թերթի էջերում ևա լայն անդրադարձ է կատարում Ռուսաստանի նվաճողական քաղաքականությանը, Ցարական Ռուսաստանի՝ այսրկովկասյան նահանգներում հայության վերաբնակեցման գործընթացներին և Նշում, որ 18-րդ դարի վերջերից սկիզբ առած այդ գործընթացը հայերի համար հավասարազոր էր ֆիզիկական փրկության և բերրի հողերում բնակություն հաստատելուն: Բ. Ալադաշվիլին քննախույզ հայացք է նետում ՀՀ-ՌԴ և ՀՀ-Վրաստան ներկա հարաբերություններին՝ եզրակացնելով, որ հայկական կողմը, գործի դնելով հատուկ ծառայությունների իր ողջ ներուժը և լայնորեն համագործակցելով ռուսական ուժային մարմինների հետ, մշտապես գործել և գործում է ընդդեմ Վրաստանի շահերի⁹⁷:

Ձավախահայության՝ հայերենին իրավական կարգավիճակ տալու պահանջներն անհիմն է համարել ևաև հայտնի իրավաբան Վախթանգ Խմալաձեն: Ըստ նրա՝ Վրաստանում միակ պետական լեզուն վրացերենն է, Աբխազիայում ևաև աբխազերենը: Նոր օրենսդրական նախաձեռնության համար հարկավոր է կամ մեկ պատգամավորի, կամ 30.000 քաղաքացիների ստորագրությամբ դիմումը, իսկ Խորհրդարանում նման օրենքի ընդունման համար հարկավոր է կամ պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելի, կամ 200.000 քաղաքացիների ստորագրությունը: Իրավաբան Վ. Խմալաձեն բոլոր տարբերակները համարել է անիրատեսական⁹⁸: Ձավախքում երկլեզվյա (հայերեն, վրացերեն) վարչարարություն իրականացնելուն, այն է՝ հայերենին իրավական կարգավիճակ տրամադրելուն դեմ է հանդես եկել Կովկասի հարցերով փորձագետ, քաղաքագետ Մամուկա Արեշիձեն՝ Ձավախքը համեմատելով, օրինակ, ՌԴ Արմավիր և Նոր Նախիջևան հայահոծ շրջանների հետ⁹⁹: Որպես Ձավախքի խնդրի լուծում՝ քաղաքագետն առաջարկում է դատարկել Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմակայանը (ևաև ՌԴ հատուկ ծառայությունների միջամտությունը բացառելու համար)¹⁰⁰, իրագործել Կարս-Ախալքալաք երկաթգծային նախագիծը և մշակել բախման գոտիներին հատուկ պետական ծրագիր:

2006 թ.-ի մարտի 9-ին Ձավախքի՝ գերազանցապես հայաբնակ Ծալկայի շրջանում վերաբնակ աջարների (որոշ տվյալներով՝ սվանների) և հայերի միջև տեղի ունեցած բախման հետևանքով Ղուշչի գյուղի 23-ամյա Գևորգ Գևորգյանի սպանությամբ պայմանավորված՝ հայության զագվածային հուզումները լայնորեն շահարկվեցին վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում: Ձավախահայության արդարացի պահանջները վրաց մամուլում ներկայացվեցին կրկին որպես անջատողականների, զինված քրեական խմբավորումների իրահրումներ և այլն: «Արգումենտի» թերթի հոդվածագիր Ջաբա Կվիրիկաշվիլին այդ առիթով առավել ծայրահեղացրել է իրադրությունը և Նշել, որ Վրաստանի իրավասությունները պարզապես չեն տարածվում Ձավախքում¹⁰¹:

Ձավախքին ինքնավարություն տրամադրելու անթույլատրելիության, հայերի՝ Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ պահանջների և Ձավախքի հանդեպ հավակնությունների, Վրաստանի աստիճանական մասնատման մասին խոսել է ևաև հայտնի գրող Ռևազ Միշվելաձեն: Չնայած իր խոստովանությամբ՝ հայ գործընկերների հետ ջերմ հարաբերություններին, գրողը, այդուհանդերձ, հայության մասին խոսելիս

⁹⁷ “ყველა სიახლე” («Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)), N 34, 2009.

⁹⁸ “რეზონანსი” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 76, 2006.

⁹⁹ “ახალი აზრი” («Ախալի ազրի» («Նոր կարծիք»)), N 11, 2006.

¹⁰⁰ Ախալքալաքից ռուսական ռազմաբազայի դուրս բերման հետևանքներին ու որոշ ազդեցություններին է անդրադարձել «Կվիրիս պալիտորան» (“კვირის პალიტრა” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայակեր»))), N 52, 2006.

¹⁰¹ Ըստ հրապարակագրի՝ Ախալքալաքն ու Ծալկան անկախ շրջաններ են և մեծ կապեր ունեն ավելի շատ ՀՀ-ի, քան Վրաստանի հետ (“არგუმენტი” («Արգումենտի» («Արգումենտ»))), N 10, 2006).

հետևում է վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում կարծրացած վատ ավանդույթներին¹⁰²:

ՀՀ պաշտպանության նախարարի՝ երկրի նախագահին ներկայացրած զեկույցում Կրաստանի և ջավախահայության մասին տեղ գտած դրույթները մեկնաբանելիս քաղաքագետներ Սոսո Ցինցաձեն և Ռամազ Սաքվարելիձեն հակադրվում են այն տեսակետին, թե ջավախահայության հասարակական դերի նվազումը ներկայացնում է իրական վտանգ, իսկ Կրաստանում առկա ազգային անհանդուրժողականությունը դառնում է ջավախահայության արտագաղթի պատճառ: Քաղաքագետները Կրաստանում չեն տեսնում հակահայ տրամադրություններ, իսկ Ջավախքում, ըստ նրանց, առկա է սոցիալական ծանր դրություն, ինչպես Կրաստանի մյուս նահանգներում: «Եթե Կրաստանում լիներ ազգային անհանդուրժողականություն, ապա այսօր Կրաստանում հայեր չէին լինի», - նշում է Ռ. Սաքվարելիձեն՝ չմատնասելով և չհիշատակելով ջավախահայության կողմից բարձրացված բազմաթիվ ազգային-քաղաքական հիմնահարցերը և կրկին փաստելով, որ Ջավախքում առկա սոցիալական խնդիրները չեն առաջացրել ազգային խնդիրներ¹⁰³: Որպես ջավախահայության՝ ինքնավարության պահանջների չեզոքացման կարևոր պայման՝ «Խիխանի-Ուշբա» ոչկառավարական կազմակերպության նախագահ Սիմոն Շարաձեն առաջարկում է հրատապ կարգով իրականացնել Աջարիայի և Սվանեթիայի տարերային աղետներից տուժածների վերաբնակեցում Ջավախքում¹⁰⁴:

2009թ.-ի սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը բովանդակային առումով պետք է բխի «Ինտեգրում առանց ծուլման» սկզբունքից: Ինտեգրումը այս դեպքում պետք է ենթադրի վիրահայերի՝ Կրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Կրաստանում մարզային լեզու ճանաչելու (ընդգծումը մերն է՝ Վ.Ս.) Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Կրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Կրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»¹⁰⁵: Ջավախահայությունը, բնականաբար, ողջունեց նախագահ Սարգսյանի այս քայլը, վրացական մամուլը և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն: Քանի որ վրացական մամուլում հայերենին իրավական կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկմանը համապարփակ կերպով անդրադարձել ենք մեր նախորդ աշխատանքներից մեկում¹⁰⁶, ապա այստեղ նշված խնդիրը կքննարկենք Ջավախքի հիմնահարցի շրջանակներում: ՀՀ նախագահի վերոհիշյալ աննախադեպ հայտարարությունը հիմք ծառայեց, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը և՛ ՀՀ-ին, և՛ ջավախահայությանը հիշի ավելի հուժկու քննադատությունների, երբեմն նաև ծաղրավիրավորական արտահայտությունների

¹⁰² «Պժողովները» («Թբիլիսիցի») («Թբիլիսցիներ»), N 12, 2006.

¹⁰³ «Պժողովներ» («Ռեզոնանս») («Ռեզոնանս»), N 62, 2006.

¹⁰⁴ Տվյալ պարագայում նա խոսում է Ճակայի և վերջինիս հարևան Թեթրիծղարոյի շրջաններում իրականացվող վերաբնակեցման ծրագրերի կարևորության մասին («ՆՆՆՆ Պժողովներ» («Նոր սերունդ»), N 41, 2007):

¹⁰⁵ «Հայաստանի Հանրապետություն», N 168, 2009:

¹⁰⁶ Սարգսյան Վ., Հայերենին կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկումը վրացական մամուլում, «21-րդ դար», N 5, Երևան, 2018, էջ 68-81:

միջոցով: Սամցխե-Ջավախքն անվիճելիորեն մտում է հնարավոր բախման գոտի՝ պատմաբան – հրապարակագիր Գերոզի Ուծիլաուրու որակումն է այդ առիթով¹⁰⁷: Սուր քննադատությամբ հանդես եկան և Ս. Սարգսյանի պահանջները անհիմն ու անհեթեթ համարեցին կամ Ջավախքում անկայունացման վտանգներ տեսան նաև քաղաքագետ Մամուկա Արեշիձեն¹⁰⁸, հրապարակագիր Մամուկա Վաշակիձեն (Ս. Սարգսյանի պահանջները համարելով «դաշնակցական նկրտումներ»)՝ հիշեցնում է հայերի՝ «Վրաստանում հյուր լինելու» և վերջիններիս «դավաճանական» պահվածքի, աբխազահայերից կազմված Մ. Բաղրամյան գումարտակի և այլնի մասին¹⁰⁹, փորձագետ Գիա Խուխաշվիլին¹¹⁰, քաղաքագետ-հրապարակագիր Գերոզի Գիգաուրին (Սերժ Սարգսյանի հիշյալ հայտարարություն-պահանջները համարել է Միխեիլ Սահակաշվիլու՝ 2009 թ.-ի հունիսին Երևանում ստացած Պատվո շքանշանի և ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման (իր որակմամբ՝ կաշառքի), արդյունք)¹¹¹, հայագետ Բոնդո Արվելաձեն (համարում է, որ ՀՀ նախագահի պահանջը եղել է Վ. Պուտինի թելադրանքով, և որին հետևելու են Ջավախքի ինքնավարության, ապա ՀՀ-ի հետ միավորման պահանջները)¹¹², քաղաքագետ Սոսո Ֆինցաձեն (ըստ նրա՝ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման պատրանքներով տարվելով՝ ՀՀ-ն անմիտ քաղաքականություն է վարում Վրաստանի հանդեպ)¹¹³, Լեյբորիստների կուսակցության առաջնորդ Շավլա Նաթելաշվիլին (կոչ է անում Սերժ Սարգսյանին՝ դիմել այն բոլոր երկրներին, որտեղ կան հայկական համայնքներ՝ պահանջելով նույնը)¹¹⁴:

Եզրակացություն

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և գերակշիռ մասով մերժել է Ջավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կազմակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արժարծել են Ջավախքի հիմնահարցը: Ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող տեղաբնիկ ժողովուրդը հանդիսացող, միևնույն ժամանակ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի

¹⁰⁷ “Նեալո տառն” («Ախալի թառա» («Նոր սերունդ»), N 233, 2009.

¹⁰⁸ “Րեթոնանս” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 186, 2009. Վերլուծելով տարածաշրջանային իրողությունները՝ Մ. Արեշիձեն Ս. Սարգսյանի պահանջները համարել է ՌԴ-ի նշման պատճառով իրականացված քայլ (տե՛ս “Երոզի Զալոցրա” («Կվիրիս պալիտրա» («Շաբարթվա ներկապակը»)), N 31, 2009).

¹⁰⁹ “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 175, 2009.

¹¹⁰ “Նեալո տառն” («Ախալի թառա» («Նոր սերունդ»), N 238, 2009.

¹¹¹ “Նսաթալ-ճասաթալի” («Ասաթալ-դասաթալի» («Վերելք-վայրէջք»)), N 36, 2009. Գ. Գիգաուրու՝ Նույն թեմայով հարցազրույցը տե՛ս “Նսաթալ-ճասաթալի” («Վերելք-վայրէջք»)), N 39, 2009.

¹¹² “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 179, 2009.

¹¹³ “ՋորՋիան տառն” («Ջորջիան թայմս»), N 31, 2009. Նույն առիթով տրված իր մեկ այլ հարցազրույցում ևս դատապարտելով ՀՀ նախագահի վերոհիշյալ պահանջը՝ Սոսո Ֆինցաձեն լայնորեն քննարկում է Ջավախքի շուրջ ստեղծված իրողությունը՝ հայկական կողմի բոլոր պահանջները համարելով արկածախնդրություն, Ջավախքի անեթախ, ՌԴ-ի օգնությամբ Վրաստանի քայքայմանն ուղղված գործողություններ և այլն (տե՛ս “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 188, 2009):

¹¹⁴ “ՋորՋիան տառն” («Ջորջիան թայմս»), N 31, 2009.

և ՌԴ-ի կողմից ուղղորդվող սադրանք՝ ուղղված Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Ինչպես Չավախբում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների, անհատ գործիչների, այնպես էլ ՀՀ իշխանությունների և հասարակական-քաղաքական շրջանակների՝ Չավախբի հիմնահարցի վերաբերյալ գրեթե բոլոր մտահոգությունները, քննարկումներն ու առաջարկությունները վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է որպես Վրաստանի տարածքային ամբողջականության ու պետական շահերի դեմ ուղղված քայլեր:

Չավախբի հիմնահարցի ցանկացած արծարծում, քննարկում կամ լուծման առաջարկ վրաց հասարակական-քաղաքական շրջանակները համարել են Հայաստանի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության կողմից նախագծված և իրականացվող սադրանք՝ ուղղված Վրաստանի պետական շահերի դեմ:

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում դեմ է հանդես եկել թուրք-մետսեթեցիներին Չավախբի տարբեր շրջաններում վերաբնակեցնելու գաղափարին, ծրագրերին ու գործընթացին՝ հստակ նշելով, որ վերաբնակեցումը էթնիկ բախումների տեղիք կտա Չավախբում:

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում ողջունել է թուրք-ադրբեջանական տարանցիկ ուղիների՝ Վրաստանի տարածքով անցնելու գործընթացը: Վրացական շրջանակները քննարկել են ՀՀ-ի՝ նշյալ նախագծերին մասնակցելու հարցը, այդուհանդերձ հաշվի առնելով ՀՀ-Թուրքիա և ՀՀ-Ադրբեջան լարված հարաբերությունները՝ ՀՀ-ի մասնակցությունը տարածաշրջանային «հորիզոնական» նախագծերին համարել են անիրատեսական: Վրաց հասարակական-քաղաքական միտքը ՀՀ-ի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների լարված լինելու պատճառ է համարել ոչ թե Թուրքիայի և Ադրբեջանի ցեղասպան վարքագիծը, այլ ՀՀ-ի ռուսամետ քաղաքականությունը և Ռուսաստանի շահերի առկայությունը Այսրկովկասում:

THE MAIN PROBLEM OF JAVAKHK IN THE PERCEPTION OF GEORGIAN SOCIO-POLITICAL THOUGHT (BASED ON GEORGIAN PRINT MEDIA IN 1999-2009) (PART 2)

VAHE SARKISYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of History, Department of Diaspora and History of Armenian Colonies,
Researcher, Ph.D. in Historical Sciences,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to present the Javakhk problem in the Georgian print media for about ten years (1999-2009) with an understanding of Georgian socio-political thought. The purpose of the first part of the article was to systematically show, indicate all internal and external factors that influenced the Georgian side's perception of the Javakhka question. The second (this) part of the article presents the main publications of the Georgian print media, which indicate the Georgian perception of the Javakhk problem. The corresponding conclusions are also placed at the end. The text of the study was written in 1999-2009. Based on a "special" study of other "materials" published in the Georgian print media, as well as other related materials. As a result of the study, we came to the conclusion that the Georgian socio-political thought largely rejected the existence of the Javakhk issue, negatively related to the existence and activities of all organizations

and figures who in one way or another raised the Javakhk issue. The demands of the Armenians of Javakhka, who are indigenous people living in the territory of present-day Georgia and at the same time a national minority, consistent with the letter and spirit of international law, were described by Georgian socio-political thought as being outside separatism. Against the territorial integrity of Georgia.

Key words: *Javakhk problem, Georgian socio-political thought, Georgian print media, Georgian environment, transit routes, perception, Russia, Turkey, Republic of Armenia.*

**ПРОБЛЕМА ДЖАВАХКА В ВОСПРИЯТИИ ГРУЗИНСКОЙ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
(ПО МАТЕРИАЛАМ ГРУЗИНСКИХ ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ 1999-2009 гг.)
(ЧАСТЬ 2)**

ՎԱՅ ՏԱՐԿԻՏՅԱՆ

*научный сотрудник отдела истории диаспоры и
армянских колоний Института истории НАН РА,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - на основе материалов грузинских печатных изданий отдельно взятого десятилетия (1999-2009 гг.) представить восприятие проблемы Джавахка грузинской общественно-политической мыслью. Первая часть статьи решала задачу систематизированного выявления и представления всех внутренних и внешних факторов, влияющих на восприятие проблемы Джавахка грузинской стороной. В данной, второй части работы, представлены основные публикации грузинской прессы, выявляющие грузинское восприятие проблемы Джавахка. В конце статьи представлены соответствующие выводы.

Текст исследования был составлен вследствие как отдельного изучения, так и сопоставления грузинских печатных изданий, опубликованных 1999-2009 гг., а также других источников, связанных с данной темой.

В результате исследования мы пришли к выводу о том, что грузинская общественно-политическая мысль в большинстве случаев отрицала существование проблемы Джавахка, формировала отрицательное отношение к тем организациям и деятелям, которые так или иначе поднимали проблему Джавахка. Требования армян Джавахка, являющихся коренным народом, проживающим на территории современной Грузии и позиционирующим себя как национальное меньшинство, соответствуют букве и духу международного права, но грузинская общественно-политическая мысль квалифицирует эти требования как проявление сепаратизма, провокацию, инициированную Республикой Армения и Российской Федерацией и направленную против территориальной целостности Грузии.

Ключевые слова: *проблема Джавахка, грузинская общественно-политическая мысль, грузинские печатные издания, грузинская среда, восприятия, переселение, транзитные пути, Россия, Турция, Республика Армения.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԵԿՈՆՈԳԻԱԿԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ
ՂԱՐԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ***

ՀՏԴ 327.8

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

*Փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս, ՊԱՀՀ-ի հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
shahverdyan.arlen@gmail.com*

Սույն հետազոտության նպատակն է վեր հանել Ղարաբաղյան հակամարտության համատեքստում հակառակորդի կողմից Էկոլոգիական բնույթի քաղաքական շահարկումների կարևորությունը՝ հայկական կողմի համար շահեկան դիրք գրավելու և բանակցային գործընթացում բարենպաստ ընթացք ապահովելու նպատակով:

Հետազոտության նպատակն է ներկայացնելու ադրբեջանական քարուչական քաղաքականության քայլերը Էկոլոգիական անվտանգության բնագավառում, որոնք ուղղված են հայկական կողմի դեմ: Այդ նպատակին հասնելու համար առաջադրված խնդիրն է ներկայացնել սվյալ թեմայով իրադարձային պատկերն ու որոշ վարձագումներ, հատկապես վերջի շրջանի վարձագումները: Օգտագործվել են համալիր և համակարգային ուսումնասիրության մեթոդը, համեմատական վերլուծությունը, քննադատական մոտեցումը, գործընթացային հետազոտության մեթոդը, փաստաթղթերի վերլուծության մեթոդը:

Հոդվածի հիմնական ելրահանգումն այն է, որ անհրաժեշտ է իրականացնել Էկոլոգիական անվտանգության բնագավառին առնչվող նախահարձակ քաղաքականություն՝ ներգրավելով միջազգային դերակատարների:

Հիմնաբառեր՝ բնահամակարգ, Էկոլոգիական վնաս, Էկոլոգիական խնդիրներ, միջազգային հանրություն, քաղաքական մեղադրանքներ, հիբրիդային պատերազմ, Էկոլոգիա, Էկոլոգիական աղետ, հակապայքար, տեղեկատվական-քարուչական պատերազմ, Ղարաբաղյան հակամարտություն:

Ներածություն

Տեղեկատվական-քարոզչական պատերազմի ընթացքում ընդդիմամարտող կողմերի միջև ծավալվում է որակապես նոր պայքարի ձև, տեղեկատվական-հոգեբանական ոլորտում պետական ու սոցիալական համակարգերի ուրույն

* Հոդվածը ներկայացվել է 03.08.2020թ., գրախոսվել՝ 18.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

մրցակցություն, որը հատուկ՝ քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական, տեղեկատվական և այլ մեթոդների, եղանակների ու միջոցների օգտագործումն է՝ դիմակայող (ընդդիմակա) կողմի տեղեկատվական միջավայրի ու սոցիալական հարաբերությունների այս կամ այն ոլորտի վրա ներգործելու նպատակով և սեփական տեղեկատվական միջավայրը պաշտպանելու համար՝ հասնելով առաջադրված նպատակներին:

Տեղեկատվական հասարակության դարաշրջանում, երբ տեղեկատվական ռեսուրսը դառնում է պետության ընդհանուր ներուժի ավելի ու ավելի էական մաս, պետության ռազմական անվտանգության ապահովման գործում զգալիորեն աճել է ոչ զինված պայքարի դերը: Տեղեկատվական-քարոզչական ընդդիմամարտությունը, որը հաճախ վերածում է առանց ռազմական ուժի պատերազմի, հատուկ ուշադրության է արժանի, որովհետև այն բարդ ու ինքնատիպ կերպով համատեղվում է զինված պայքարի և քաղաքական-դիվանագիտական ընդդիմամարտության ոլորտների, ինչպես նաև տնտեսական ու միջպետական գիտատեխնիկական մրցակցությունների հետ¹¹⁵:

Ժամանակակից պատերազմների բնույթից ելնելով՝ հատկապես տեղեկատվական-քարոզչական, ինչպես նաև հիբրիդային պատերազմների համատեքստում, ի թիվս անվտանգային բազմաթիվ նոր մարտահրավերների¹¹⁶, ներկայումս թիրախավորվում է նաև հակառակորդի բնահամակարգը, որին տնօրինելը կամ դրան վնասելը ավելի քան իմաստավորված է հակամարտության գոտիներում¹¹⁷: Հակամարտող կողմերը բնապահպանական խնդիրները հաճախ օգտագործում են որպես մեղադրական խաղաթուղթ և դրանով երբեմն միջազգային ասպարեզում շահում են քաղաքական օգուտներ, զբաղեցնում քաղաքականորեն շահեկան դիրքեր:

Ըստ էության, ընթանում է ուրույն պատերազմ էկոլոգիական ընդգրկում ունեցող հարցերի վերաբերյալ, և քարոզչական այդ պատերազմում շահում է այն կողմը, որն առաջինը և առավել հավաստի կերպով է մեղադրում ընդդիմամարտող մյուս կողմին բնահամակարգին հասցրած վնասների մեջ:

Քաղաքական նպատակներով բնապահպանական խնդիրների օգտագործումն ու շահարկումը երբեմն լուրջ գործիք են դառնում նաև բանակցային գործընթացներում հանդես գալով կամ որպես հակառակորդի զսպման միջոց, կամ տարածաշրջանի բնահամակարգերին հասցված վնասի համար նրան միջազգայնորեն դատապարտելու բավականին արդյունավետ գործիք: Այստեղ է, որ երևան է գալիս էկոլոգիական անվտանգության ապահովման խնդիրների՝ քաղաքական նպատակով շահարկումների ակնհայտ միտումը:

Հակառակորդի բնահամակարգի միտումնավոր ոչնչացումը նոր երևույթ չէ¹¹⁸, սակայն այն նորովի դրսևորումներ է ստանում ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխությանը զուգահեռ: Այնուամենայնիվ, ժամանակակից պատերազմներում հակառակորդի՝ բնաշխարհի վնասման նպատակը ըստ էության նույնն է՝ ավերիչ ազդեցություն ունենալ կենսոլորտի կարևորագույն տարրերի՝ բուսական ու կենդանական աշխարհի, մթնոլորտի, գետերի ու լճերի վրա: Սրանով հակառակորդը

¹¹⁵ **Модестов С. А.** «Стратегическое сдерживание на театре информационного противоборства». Вестник Академии военных наук, N 1, 2009 (<http://militaryarticle.ru/voennopromishlennii-kurer/2009-vpk/10915-strategicheskoe-sderzhivanie-na-teatre>).

¹¹⁶ **Terry Terriff, Stuart Croft, Lucy James, Patrick M. Morgan.** Security Studies Today, York House Typographic Ltd, London, 2002, PP 115-134:

¹¹⁷ **Paul Williams.** Security Studies: An Introduction, 3rd edition. 2018. Taylor & Francis Ltd. 666 P.

¹¹⁸ **Շահվերդյան Ա.** Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա: Հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010, հմ. 4, էջեր 103-112 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2011/10/n4-_2010-final.pdf):

կարողանում է համել մարտավարական, օպերատիվ ու ռազմավարական մակարդակներում զգալի գերազանցության մյուս կողմի նկատմամբ՝ նրա զինված ուժերի գործողությունները դժվարացնելով, խաթարելով նրա տնտեսության բնականոն գործունեությունը: Այդ ամենի հետևանքով բնակչությունը զրկվում է կյանքի ու կենսագործունեության համար կենսականորեն անհրաժեշտ պայմաններից:

Հակառակորդի կողմից Էկոլոգիական խնդիրների քաղաքական շահարկումների վերաբերյալ

Վերոնշյալ Էկոլոգիական խնդիրների քաղաքական շահարկումներից գերծ չեն մնացել նաև Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը¹¹⁹: Ղարաբաղյան հակամարտության ամբողջ ընթացքում Էկոլոգիական խնդիրները մշտապես եղել են Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության նպատակային թիրախներից: Այն մեղադրանքները, թե իբր հայկական կողմը միտումնավոր վնասում է տարածաշրջանի բնությունը, Ադրբեջանի արտաքին քաղաքականության խաղաթղթերից մեկն է: Նման մեղադրանքներով Ադրբեջանը հանդես է գալիս նաև միջազգային հարթակներում (ՄԱԿ, ԵՄ, ԵՆԽԿ և այլն)՝ փորձելով հասնել հակահայկական բանաձևերի ընդունման:

Որպես բնութագրական օրինակ նշենք, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽԿ) 2014 թ.-ի գարնանային նստաշրջանում Ադրբեջանի պատվիրակությունը քննարկման էր դրել Սարսանգի ջրամբարի վերաբերյալ բանաձևի նախագիծը: Այնտեղ ասվում էր, թե ջրի պակասի հետևանքով Ադրբեջանի սահմանամերձ գոտու շրջանների բնակչությունը բախվում է լուրջ մարդասիրական, տնտեսական, բնապահպանական ու կենսաբանական աղետի: Նախագծում Ադրբեջանը կոչ էր անում խնդրի վերաբերյալ ձեռնարկելու անհապաղ ու կոնկրետ միջոցներ¹²⁰:

ԵՆԽԿ 2015 թ.-ի ձմեռային նստաշրջանում ընդունվել է «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները կանխամտածված կերպով զրկված են ջրից» բանաձևը¹²¹: Նախագծի հեղինակը Բոսնիայի և Հերցեգովինայի պատվիրակ Միլիցա Մարկովիչն էր: Նախագծում հղում էր արվում ՄԱԿ-ի 1992 թ.-ի կոնվենցիային, որում ջրային ռեսուրսների օգտագործման իրավունքը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Փաստաթղթում ամրագրված էր, որ ջրի հասանելիությունը չի կարող սահմանափակվել սահմաններով, այն դիտվում է որպես կյանքի արքյուր և ռազմավարական նշանակություն ունի յուրաքանչյուր անդամ պետության համար: Բանաձևի նախագծում նշված էր, որ Վեհաժողովն իր ափսոսանքն է հայտնում, որ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հարակից այլ շրջանների օկուպացիան շրջակա միջավայրի խնդիր է ստեղծում նաև Դաշտային Ղարաբաղի հովտում ապրող բնակչության համար¹²²:

¹¹⁹ **Շահվերդյան Ա.**, «Բնահամակարգերի ոչնչացման մեջ մեղադրանքների օգտագործումը քաղաքական շահարկումների նպատակով՝ Ղարաբաղյան հակամարտության օրինակով»: ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2020, հմ. 1, էջեր 81-88 (Էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2020/07/hb_2020-n1.pdf):

¹²⁰ **Աբրահամյան Տ.**, «Սարսանգի ջրամբար. ԵՆԽԿ-ն ԼՂՀ-ին չարձագանքեց, իսկ Ադրբեջանին չներժեց»: «Panorama.am», 18.04.2014 (<https://www.panorama.am/am/news/2014/04/18/t-abrahamyan/306900>):

¹²¹ **Milica Marković.** Inhabitants of frontier regions of Azerbaijan are deliberately deprived of water, 12 December 2015 (<http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?FileID=22290&lang=EN>); նաև՝ «ԵՆԽԿ Սարսանգի ջրամբարի մասին զեկույցում կա «ՀՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի օկուպացիա» եզրույթը»: «Pan ARMENIAN.Net», 27.11.2015 (<http://www.panarmenian.net/arm/news/201335/>):

¹²² Տե՛ս Միլիցա Մարկովիչ, նշ. աշխ.:

Այսօրինակ մեղադրանքներն ու բանաձևերի առաջաշարունակները շարունակվում են նաև այսօր: Հայաստանը երբեմն նաև դառնում է Թուրքիայի մեղադրանքների թիրախ՝ կապված Մեծամորի ատոմակայանի շահագործման հետ: Օրինակ՝ 2016 թ.-ին Թուրքիայի Էներգետիկայի նախարար Բերատ Ալբայրակը ՄԱԳԱՏԵ-ի Գլխավոր խորհրդատու դրվում հայտարարել էր, որ Հայաստանի Մեծամորի ատոմակայանը գտնվում է սեյսմիկ գոտում և վտանգ է ներկայացնում տարածաշրջանի պետությունների, մասնավորապես՝ Թուրքիայի համար¹²³:

Մեր կարծիքով՝ հայկական կողմը այս իմաստով երկար տարիներ հիմնավոր հակազդեցություն չի ցուցաբերել՝ բավարարվելով միայն դիվանագիտական մեղմ արձագանքներով ու պաշտպանվելով: Տեսանելի է, որ առ այսօր աղբբեջանական հակահայ քարոզչության նկատմամբ իրականացվող հակազդումը շարունակում է կրել նույնօրինակ բնույթ, մինչդեռ պարբերաբար ստեղծվում են տարբեր հնարավորություններ՝ ռազմավարական մակարդակում օգտագործելու հակառակորդի հայտարարությունները՝ ձևավորելու ու վարելու համար ավելի հեռուն տանող քաղաքականություն:

Այս իմաստով իրավիճակը կտրուկ փոխվեց և հայկական քարոզչական հակապայքարի համար զգալիորեն բարենպաստ դարձավ 2020 թ.-ի հուլիսին հայադրբեջանական սահմանի հյուսիս-արևելյան ուղղությամբ լարվածության ընթացքում: Մասնավորապես հուլիսի 16-ին Ադրբեջանի ՊՆ մամուլի ծառայության ղեկավար Վահիֆ Դարգյախլին հայտարարեց, թե Ադրբեջանը կիրթիռակոծի Հայաստանի Մեծամորի ատոմակայանը՝ այդպիսով սպառնալիք հնչեցնելով քաղաքացիական ու ռազմավարական նշանակության օբյեկտի, ինչի վնասումը կբերի հումանիտար ու էկոլոգիական աղետի:

«Հայկական կողմը չպետք է մոռանա, որ առավել ժամանակակից հրթիռային համակարգերը, որոնք գտնվում են աղբբեջանական բանակի զինանոցում, կարող են մեծ ճշգրտությամբ հարվածել Մեծամորի ԱԵԿ-ին, ինչը կհանգեցնի մեծ աղետի Հայաստանի համար», - ասել էր Դարգյախլին հուլիսի 16-ին կայացած ասուլիսում արձագանքելով աղբբեջանցի լրագրողի հնչեցրած հարցին¹²⁴:

Այս հայտարարությանն ի պատասխան՝ եղան ՀՀ ԱԳՆ, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի պատասխան հայտարարությունները:

Մասնավորապես ՀՀ ԱԳՆ հայտարարության մեջ նշված էր. «Այն գործողությունները, որոնցով սպառնում էր Ադրբեջանի ՊՆ-ն, հանդիսանում են ընդհանուր առմամբ միջազգային հումանիտար իրավունքի և, մասնավորապես, ժնկյան կոնվենցիայի առաջին լրացուցիչ արձանագրության աղաղակող խախտում: Նմանօրինակ սպառնալիքները պետական ահաբեկչության ուղղակի դրսևորում են»¹²⁵:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը նույնպես հանդես եկավ հայտարարությամբ՝ մասնավորապես նշելով. «Այս սպառնալիքը քաղաքացիական բնակչությանն ուղղված բացահայտ ահաբեկում է, ինչը միջազգային մարդասիրական իրավունքի բացարձակ արգելք է: Սա ունահարում է միջազգային մարդասիրական

¹²³ «Թուրքիան ՄԱԳԱՏԵ-ին բողոքել է Մեծամորի ատոմակայանից»: «Arminfo», 26.09.2016 (https://arminfo.info/full_news.php?id=22204&lang=1), նաև՝ «Թուրք պատգամավորը Մեծամորի ատոմակայանի «վտանգավորության» հարցով դիմել է Թուրքիայի փոխնախագահին»: «Թերթ.am», 24.12.2019 (<https://www.tert.am/am/news/2019/12/24/turkey-armenia/3172344>):

¹²⁴ «Ադրբեջանը Հայաստանին սպառնում է միջուկային ահաբեկությամբ»: «Արմենպրես», 16.07.2020 (<https://armenpress.am/arm/news/1022013.html>):

¹²⁵ «ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Ադրբեջանի ՊՆ կողմից Մեծամորի Հայկական ատոմային էլեկտրակայանի հրթիռակոծման վերաբերյալ սպառնալիքի առնչությամբ»: 16.07.2020 (https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2020/07/16/MFA_Metsamor/10379):

իրավունքի հիմնարար սկզբունքները, խարխուլում է միջազգային հանրային իրավունքի հիմքերը»¹²⁶:

Կարելի է փաստել, որ հայտարարությանը հայկական կողմից տրվեց բավականին սուր արձագանք: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական ու ադրբեջանական քարոզչությունը տարիներ շարունակ ուղղված է եղել Մեծամորի ատոմակայանի փակմանը՝ պատճառաբանելով, թե այն վնաս է տարածաշրջանի բնակչությանը և սպառնալիք՝ էկոհամակարգին: Ատոմակայանի վերաբերյալ մեղադրանքները և այն հրթիռակոծելու սպառնալիքը չեն տեղավորվում ռացիոնալ տրամաբանության մեջ, քանի որ մի կողմից հակառակորդը բողոքում է հայկական ատոմակայանի վնասակարությունից, մյուս կողմից սպառնում է հրթիռակոծել այն՝ այդպիսով լրջագույն վտանգ առաջացնելով նույն տարածաշրջանում:

Սակայն որքան էլ սպառնալից հայտարարությանը տրվեց համարժեք արձագանք, և այն ստացավ զգալի հասարակական հնչեղություն, այնուամենայնիվ համոզված ենք, որ այսօրինակ հայտարարությունը կարելի էր և դեռ կարելի է հետևողականորեն օգտագործել՝ հայկական իշխանությունների կողմից հարցը բարձրացնելով ընդհուպ ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԽՏՎ-ի ատյաններում՝ Ադրբեջանին ներկայացնելով որպես ցեղասպան ու ագրեսոր, որը սպառնում է քաղաքացիական նշանակության ու ռազմավարական կարևորության օբյեկտներին՝ այդպիսով մեծ սպառնալիք ներկայացնելով ամբողջ տարածաշրջանում:

Ակնհայտ է, որ այսօրինակ անխոհեմ քայլով ադրբեջանական կողմը հայկական կողմի տեղեկատվական ընդդիմամատույան համար (տեղեկատվական հակապայքար) ստեղծում է պարարտ հող և գործելու լայն հնարավորություններ:

Ի թիվս պատերազմավարության նոր դրսևորումների (տեղեկատվական ընդդիմամարտություն, հիբրիդային պատերազմ և այլն)՝ հակառակորդը վարում է նաև էկոլոգիական բովանդակություն և ուղղվածություն ունեցող ուրույն պատերազմ: Մի կողմից թվում է, թե դրա նշանակությունը այնքան զգալի չէ, որքան ավանդական պատերազմի ձևերը, սակայն եթե հաշվի առնենք, որ այդօրինակ քարոզչական գործողությունների հետևանքով զգալիորեն վնասվում է Հայաստանի և Արցախի հեղինակությունը միջազգային ասպարեզում, ապա պարզ է դառնում, որ այսօրինակ քաղաքական մեղադրական շահարկումներին անհրաժեշտ է տալ համարժեք հակահարված, ընդ որում՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բոլոր շահագրգիռ կողմների ակտիվ մացնակցությամբ:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է որդեգրել նախահարձակ տեղեկատվական-քարոզչական քաղաքականություն՝ ցույց տալով իրական պատկերը, քանի որ հակառակորդ պետությունը քառորդ դարից ավելի է, ինչ իր սանձազերծած պատերազմի հետևանքով շարունակում է զգալի վնաս հասցնել տարածաշրջանի բնահամակարգին: Խոսքը վերաբերում է և՛ անմիջական ռազմական գործողություններին, և՛ ականապատմանը, և՛ բնական կենսատարածքների միտումնավոր ոչնչացմանը:

Համոզված ենք, որ այս հարցը հրատապ է և հույժ կարևոր, որովհետև կապված է հայության անվտանգության և գոյապահպանության գերակա խնդրի՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հետ: Այս համատեքստում թշնամական պետության հետ բանակցությունների ընթացքում բանակցային սեղանին խնդրի՝ էկոլոգիական ասպեկտից դիտարկումն ու հիմնավորումը կարող են լուրջ լրացուցիչ ռեսուրս հանդիսանալ հայկական կողմի համար՝ շահավետ ու հայանպաստ արդյունքների հասնելու համար:

¹²⁶ «ԱԷԿ-ը հրթիռակոծելու Ադրբեջանի սպառնալիքը կարող է բերել հումանիտար աղետի ողջ տարածաշրջանի համար. ՄԻՊ»: «Արմենպրես», 16.07.2020 (<https://armenpress.am/arm/news/1022062.html>):

Ելնելով առաջ քաշված թեմայի խիստ արդիականությունից՝ ներկայացնում ենք գործնական առաջարկություններ*:

- ուսումնասիրել Ղարաբաղյան հակամարտության զինված փուլում և ներկայումս հրադադարի ռեժիմի խախտման ընթացքում Ադրբեջանի ձեռնարկած մարտական գործողությունների հետևանքով Արցախի խաղաղ բնակչությանը և բնահամակարգին՝ որպես Կովկասի բացառիկ կենդանական ու բուսական տեսակներով հարուստ կենսատարածքի մի հատվածին պատճառած վնասները: Այդ նպատակով ստեղծել ներկայացուցչական հանձնաժողով՝ կազմված Հայաստանի, Արցախի և օտար պետությունների փորձագետներից, որոնք վայելում են միջազգային հեղինակություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում,

- հետազոտության արդյունքները տարածել հեղինակավոր կազմակերպությունների (ՄԱԿ, ՆԱՏՕ, ՀԱԴԿ, ինչպես նաև ԵՄ, ԵԽԽՎ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ) շրջանում, դնել Ղարաբաղյան հարցով բանակցությունների սեղանին, դիմել միջազգային դատական ատյաններին:

ENVIRONMENTAL ASPECTS OF THE INFORMATION-PROPAGANDIST WAR IN THE CONTEXT OF THE KARABAKH CONFLICT

ARLEN SHAHVERDYAN

*INSS, NDRU, MOD, RA, Lieutenant Colonel, Senior Lecturer;
Center for Military Strategic Studies, NDRU, Applicant,
Yerevan, Republic of Armenia*

Taking into account the special importance of the environmental problems in the contemporary world, one of the conflicting sides at times makes an attempt to speculate on them aiming to receive political dividends in the international arena. Azerbaijan also does employ suchlike methods in its anti-Armenian policy, in an effort to accuse Armenia and Artsakh in inflicting damage to the local ecosystem, constituting part of the unique biosystem of the South Caucasus.

Meanwhile, Armenia and Artsakh only passively respond, parrying Azerbaijan's fabrications attacks, despite having the irrefutable evidence of the environmental damage caused by Azerbaijan itself.

The method of complex and systematic study, comparative analysis, critical approach, method of procedural research, method of analysis of documentary and factual documents were used.

The article brings forward a number of objective facts capable of discrediting Azerbaijan in the eyes of the world community.

Key words: *Ecosystem, environmental damage, environmental problems, world community, political accusations, hybrid war, information-propagandist war, Karabakh conflict.*

* Հոդվածի հեղինակն իր առաջարկությունները մշակել ու շրջանառության մեջ է դնում նաև ՊԱՀՀ-ում իր դասախոսական գործունեության շրջանակներում և տարբեր գիտակրթական հարթակներում՝ «Էկոլոգիական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ» թեմայի ներկայացմամբ:

ЭКОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ИНФОРМАЦИОННО-ПРОПАГАНДИСТСКОЙ ВОЙНЫ В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

АРЛЕН ШАХВЕРДЯН

*подполковник, старший преподаватель Центра
Военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА,
соискатель НИУО,
г.Ереван, Республика Армения*

С учетом особой важности экологических проблем в современном мире одна из конфликтующих сторон порой пытается спекулировать ими в целях получения политических дивидендов на международной арене. Подобные методы в своей антиармянской политике использует и Азербайджан, пытающийся обвинить Армению и Арцах в нанесении ущерба местной экосистеме, являющейся частью уникальной биосистемы Южного Кавказа.

Между тем Армения и Арцах реагируют лишь пассивно, парируя измышленные нападки Азербайджана, хотя и обладают неопровержимыми доказательствами нанесения экологического ущерба самим Азербайджаном. В статье предлагается ряд объективных фактов, способных дискредитировать Азербайджан в глазах мирового сообщества.

Ключевые слова: *экосистема, экологический ущерб, экологические проблемы, мировое сообщество, политические обвинения, гибридная война, информационно-пропагандистская война, карабахский конфликт.*

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 327.8

ԳՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ, Կովկասի ինստիտուտի գիտաշխատող, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն gor.petrosyan@ysu.am

Սույն հոդվածի շրջանակներում ներկայացնում ենք ժամանակակից միջազգային հարաբերություններում պատժամիջոցների գործածման ուսումնասիրության արդյունքները: Ուսումնասիրության նպատակն է միջազգային կազմակերպությունների ու պետությունների կողմից կիրառվող պատժամիջոցների էության ու նպատակների բացահայտումը, իսկ ուսումնասիրության խնդիրն է պատժամիջոցների կիրառման նպատակին ծառայող մեխանիզմների դասակարգումը:

Ուսումնասիրության իրականացման ընթացքում օգտվել ենք ինչպես առաջնային աղբյուրներից, ինչպիսիք են՝ ՄԱԿ կանոնադրությունը, այնպես էլ արևմտյան ու ռուսական առաջատար մասնագետների վերլուծական աշխատանքներից: Ստացված տվյալները ենթարկել ենք սինթեզի, համեմատության ու վերլուծության, իսկ ուսումնասիրության առաջին հատվածում օգտագործել ենք նաև հետապոստությունների պատմական մեթոդը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ժամանակակից միջազգային համակարգը նպաստում է պատժամիջոցների կիրառմանը: Պատժամիջոցների կիրառման հիմքերն ու նպատակները նախ և առաջ քաղաքական են, հանդիսանում են պետությունների քաղաքական շահերի գործիք, իսկ պատժամիջոցների տակ գտնվող միջոցները շարունակաբար արդիականացվում և համապատասխանեցվում են արդի մարտահրավերներին՝ բարձրացնելով կիրառման արդյունավետությունը:

Հիմնաբառեր՝ միջազգային պատժամիջոցներ, հիմքեր, էմբարգո, խելացի պատժամիջոցներ, մեխանիզմներ, իրավունք, գործիք:

Վերջին տասնամյակների ընթացքում պատժամիջոցները վերածվել են միջազգային հարաբերություններում լայնորեն կիրառվող հարկադրման գործիքի: Միջազգային կազմակերպություններն ու պետությունները պատժամիջոցներ են կիրառում ինչպես միջազգային իրավունքի պաշտպանության, այնպես էլ սեփական շահերի իրացման նպատակով: Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), գտնվելով բարդ աշխարհաքաղաքական տարածաշրջանում, ևս զերծ չի մնում պատժամիջոցների ազդեցությունից: Մի կողմից՝ այն գտնվում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից կիրառվող տնտեսական սահմանափակումների տակ, մյուս կողմից՝ արևմուտքը պատժամիջոցներ

* Հոդվածը ներկայացվել է 17.07.2020թ., գրախոսվել՝ 09.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

Է կիրառում Հայաստանի հարավային հարևան Իրանի և Հայաստանի ռազամավարական դաշնակից Ռուսաստանի Դաշնության նկատմամբ: Այսպիսով՝ առաջանում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ ուսումնասիրելու միջազգային պատժամիջոցների կիրառման փորձը: Կարևորելով և հաշվի առնելով պատժամիջոցների կիրառման մեխանիզմների մեթոդաբանությունն ու կիրառման/գործադրման տարբերությունները՝ սույն հոդվածի շրջանակներում ներկայացրել ենք պատժամիջոցների կիրառման նպատակների ու պատժամիջոցների տեսակների ուսումնասիրության արդյունքները:

Մեր ձևակերպմամբ՝ միջազգային պատժամիջոցները պետությունների կամ միջազգային կազմակերպությունների կողմից մեկ այլ պետության կամ կազմակերպության նկատմամբ տնտեսական ու քաղաքական սահմանափակումների կիրառում են, որոնք միտված են հարկադրելու պատժամիջոցների օբյեկտ հանդիսացող պետությանը՝ փոփոխելու իր քաղաքականությունը կամ սահմանափակելու վերջինիս կարողությունները: Սույն հոդվածի շրջանակներում պատժամիջոցների օբյեկտ հանդիսացող պետությունը պայմանականորեն անվանում ենք պատժամիջոցների «թիրախ» հանդիսացող պետություն:

Թեպետ պատժամիջոցները որպես միջպետական հարկադրանքի միջոց կիրառվել են դեռևս անտիկ ժամանակներից, օրինակ՝ մ.թ.ա. 432թ.-ին աթենացիների կողմից Մեգարիայի հետ առևտրի արգելքը, սակայն պատժամիջոցների կիրառումը միջազգային հարաբերություններում ինստիտուցիոնալիզացվեց 20-րդ դարի ընթացքում¹²⁷: Պատժամիջոցների իրավաքաղաքական ինստիտուցիոնալիզացիան 20-րդ դարում բխում էր այն տրամաբանությունից, որ մի կողմից երկու արյունալի համաշխարհային պատերազմները, մյուս կողմից սառը պատերազմի ընթացքում կուտակված զանգվածային ոչնչացման զենքի պաշարները անտրամաբանական էին դարձնում պատերազմի միջոցով հակամարտությունների լուծումը գերտերությունների միջև, քանի որ բախումն առաջացնելու էր խաղ՝ բացասական արդյունքով բոլոր կողմերի համար, ուստի պատժամիջոցների կիրառումն ավելի ապահով միջոց էր հանդիսանում: Պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից պատժամիջոցների կիրառման դեպքերն էականորեն ավելացել են հատկապես սառը պատերազմի ավարտից հետո: Խորհրդային Միության փլուզումից հետո պետությունների քաղաքական ու տնտեսական կախումը ԱՄՆ-ից էականորեն մեծացավ: Ունենալով համաշխարհային տնտեսական հեգեմոնի կարգավիճակ՝ ԱՄՆ-ն լայնորեն սկսեց կիրառել տնտեսական պատժամիջոցները որպես արտաքին քաղաքականության գործիք: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ, օրինակ, տնտեսական պատժամիջոցները քաղաքականապես առավել ապահով ու մատչելի պատժիչ գործիք են, քան ռազմական ինտերվենցիաները: Ի հավելումն նշենք, որ պատժամիջոցների կիրառման աճին նպաստում է նաև ազատ շուկայական հարաբերություններով պայմանավորված պետությունների տնտեսական փոխկապակցվածության ամրապնդումը:

Վերջին հարյուրամյակի ընթացքում մշակվել են պատժամիջոցների կիրառման մեխանիզմները, և ստեղծվել է պատժամիջոցների կիրառման իրավական բազան: Վերջին տասնամյակների ընթացքում պատժամիջոցների ակտիվ կիրառումը որպես միջազգային հարաբերությունների հարկադրանքի միջոց իր վրա է սևեռել նաև գիտական ու վերլուծական հանրության ուշադրությունը՝ դառնալով միջազգային հարաբերությունների ուսումնասիրության կարևոր առարկա: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ պատժամիջոցների ուսումնասիրմամբ

¹²⁷ Տե՛ս՝ **Steve Chan, A. Cooper Drury**, Sanctions as Economic Statecraft: An Overview - Published by PALGRAVE Houndmills, Basingstoke, Hampshire, New York, 2000:

զբաղվող փորձագետները չունեն միասնական մոտեցում ինչպես պատժամիջոցների տեսակների, այնպես էլ դրանց արդյունավետության մասին: Խնդրի ուսումնասիրությամբ զբաղվող հեղինակ Ռ.Փեյվը և ուրիշներ համարում են, որ պատժամիջոցները միջազգային հարաբերությունների անարդյունավետ գործիք են¹²⁸: Բայց ամերիկյան փորձագիտական համայնքի ներկայացուցիչների մեծամասնությունը պատժամիջոցների կիրառումը համարում է բավական արդյունավետ՝ ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառմանը փոխարինող գործիք¹²⁹: Խնդրի խորքային ուսումնասիրմամբ զբաղվող բոլոր այդ հեղինակները հաճախ պատժամիջոցի կիրառման հաջողությունը կապում են միայն պատժամիջոցի պաշտոնական նպատակի հետ՝ անտեսելով պատժամիջոց կիրառող կողմի իրական նկրտումները: Ուսումնասիրության արդյունքները հիմք ընդունելով՝ հանգել ենք այն մտքին, որ պատժամիջոցների արդյունավետությունը հնարավոր է հիմնավորել այն պարագայում, երբ հստակ են պատժամիջոց կիրառող կողմի ոչ միայն ֆորմալ, այլև իրական՝ քաղաքական նպատակները: Մենք համարում ենք, որ միջազգային կազմակերպությունների կողմից պատժամիջոցների կիրառումը անհրաժեշտ է կապել միայն պաշտոնական նպատակների հետ հետևյալ պատճառով. այնպիսի միջազգային կազմակերպությունում, ինչպիսին է ՄԱԿ-ը, պատժամիջոցների կիրառման համար անհրաժեշտ է փոխհամաձայնության (կոնսենսուսի) ձևավորում կազմակերպության առանցքային անդամների միջև՝ հանձին ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամների՝ ԱՄՆ, ՄԲ, ՌԴ, ՉԺՅ և Ֆրանսիա: Այս պետությունների միջև առկա մրցակցությունն ու տարաձայնությունները հաճախ խոչընդոտում կամ արգելակում են ՄԱԿ-ի կողմից պատժամիջոցների կիրառումը: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի կողմից պատժամիջոցներ կիրառվում են հետևյալ հանցագործությունների կանխարգելման նպատակով՝

- Ահաբեկչության և ահաբեկչության աջակցման
- Միջուկային սպառազինության տարածման
- Մարդկության դեմ հանցագործությունների
- Մարդու իրավունքների խախտումների
- Այլ պետությունների տարածքի ապօրինի բռնակցման
- Ինքնիշխան պետության դիտավորյալ ապակայունացման¹³⁰:

Պատժամիջոցների կիրառման վերոնշյալ հիմքերը հաճախ հանդիսանում են սուբյեկտիվ մեկնաբանությունների հիմք: Հաճախ ՄԱԿ-ի ԱԽ մշտական անդամ հանդիսացող երկրներն իրենք են հանդիսանում վերոնշյալ խախտումների հեղինակ, ուստի օգտվելով իրենց վետո կիրառելու իրավունքից՝ կասեցնում են կազմակերպության կողմից պատժամիջոցների կիրառման փորձերը: Այդ իսկ պատճառով ի տարբերություն առանձին պետությունների կողմից կիրառվող միակողմանի պատժամիջոցների՝ ՄԱԿ-ի կողմից կիրառվող պատժամիջոցները առավել ապաքաղաքական են և ունեն հետևյալ նպատակները՝ հարկադրել պատժամիջոցների թիրախ հանդիսացող պետությանը՝ փոխելու իր կողմից իրականացվող քաղաքականությունը, զսպելու հնարավոր ագրեսիան և ցույց տալու թիրախ հանդիսացող պետությանը, որ իր գործողություններն ընդունելի չեն միջազգային հանրության համար:

Պատժամիջոցների կիրառման ուսումնասիրության առավել մեծ կարևորություն են ներկայացնում առանձին պետությունների կողմից կիրառվող պատժամիջոցների

¹²⁸ Տե՛ս՝ **Robert A. Pape**, Why Economic Sanctions Do Not Work - International Security Vol. 22, No. 2, Fall, 1997, էջ 90-136:

¹²⁹ Տե՛ս՝ **Gary Clyde Hufbauer, Jeffrey J. Schott Kimberly, Ann Elliott Barbara Oegg**, Economic sanctions reconsidered - Washington, DC November 2007, էջ 158:

¹³⁰ Տե՛ս՝ Issue Brief UN General Assembly Fourth Committee: Disarmament The Role of the Sanctions in Diplomacy - ODUMUNC 2020, էջ 2:

Նպատակները, քանի որ պատժամիջոց առավել հաճախ կիրառվում են միակողմանիորեն՝ առանձին պետությունների կողմից: Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ժամանակակից աշխարհակարգի պայմաններում ռեսուրսներով հարուստ, զարգացած տնտեսությամբ ու առաջադեմ տեխնոլոգիական զարգացվածությամբ պետություններն ունեն մեծ տնտեսական ազդեցություն և հետևապես ունեն պատժամիջոցներ կիրառելու հարաբերականորեն մեծ ռեսուրսներ: Այլ կերպ ասած՝ պատժամիջոցները հանդիսանում են առավել արդյունավետ գործիք տնտեսապես ուժեղ և տեխնիկապես զարգացած պետությունների համար: Առանձին պետությունները հաճախ պաշտոնապես պայմանավորում են պատժամիջոցների կիրառումը նույն հիմքերով, որոնցով այն պաշտոնապես պայմանավորվում է ՄԱԿ-ի կողմից՝ պաշտպանելու միջազգային իրավունքը: Սակայն ի տարբերություն ՄԱԿ-ի՝ առանձին պետությունների կողմից պատժամիջոցների կիրառումը առավել հաճախ ունենում է սեփական շահերը պաշտպանելու քաղաքական նպատակներ: Այդ նպատակները բազմաշերտ են, կարող են ունենալ և՛ արտաքին քաղաքական, և՛ ներքաղաքական դրդապատճառներ, ուստի անհրաժեշտ է ընդգծել որ պատժամիջոցների կիրառումը միտված է ոչ միայն միջազգային իրավունքի պահպանմանը, այլև հանդիսանում է պետությունների քաղաքական շահերի պաշտպանության գործիք:

Օրինակ՝ պատժամիջոցներ կիրառող պետության համար կարևոր քաղաքական նպատակ կարող է հանդիսանալ թիրախ հանդիսացող պետության քաղաքական իշխանության կամ քաղաքական համակարգի փոփոխությունը¹³¹: Այդ նպատակով պատժամիջոցների կիրառումը բնորոշ էր հատկապես սառը պատերազմի ժամանակաշրջանին, երբ ԽՍՀՄ-ն ու ԱՄՆ-ն փորձում էին պատժամիջոցների միջոցով նպաստել հակառակորդ ճամբարի պետություններում տնտեսական իրավիճակի վատթարացմանը՝ ցանկանալով հեղափոխությունների ու քաղաքական կացութաձևի փոփոխության միջոցով թուլացնել հակառակորդի ճամբարի դաշնակցային կապերը և ընդլայնել սեփական դաշնակիցների թիվը: Քաղաքական համակարգի փոփոխությանը միտված պատժամիջոցների կիրառման առավել հայտնի դեպքերից էին ՅԱՀ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, որի արդյունքում փոխվեց ռասայական խտրականության հիմքով ստեղծված քաղաքական համակարգը:

Մեր դիտարկմամբ՝ պատժամիջոցների կիրառումը հաճախ պայմանավորված է լինում պետության ներսում առկա *հասարակական պահանջի* բավարարմամբ, որի միջոցով իշխող քաղաքական ուժը փորձում է քաղաքական դիվիդենտներ շահել: Այս պարագայում պատժամիջոցների էությունը կիրառման մեջ է և ոչ թե թիրախ հանդիսացող պետությանը հասցված վնասի: Այսպիսի դեպքերին կարելի է դասել Մերձբայթյան պետությունների կողմից ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, երբ կառավարությունները, ընդառաջելով հանրային տրամադրություններին, առևտրային պատժամիջոցներ էին սահմանում ՌԴ-ի նկատմամբ՝ այդ կերպ վնաս հասցնելով սեփական գյուղատնտեսությանը: Պատժամիջոցների կիրառող կողմը նաև փորձում է ազդանշան տալ այլ պետություններին, որ նմանատիպ գործունեության պարագայում իրենք ևս կարող են հայտնվել պատժամիջոցների ցանկում: Պատժամիջոցների կիրառման նպատակն է նաև հեղինակային վնաս պատճառելու միջոցով թուլացնել հակառակորդ պետության տնտեսական ու քաղաքական դիրքերը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններում ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից պատժամիջոցներն օգտագործվում են որպես ժողովրդավարացման գործիք: Վերջիններս պատժամիջոցներ են կիրառում ոչ ժողովրդավարական քաղաքական

¹³¹ Տե՛ս՝ Gary Clyde Hufbauer, Jeffrey J. Schott Kimberly, Ann Elliott Barbara Oegg, Economic sanctions reconsidered - Washington, DC November 2007, էջ 13:

համակարգերով պետությունների և այնտեղ գործող քաղաքական գործիչների նկատմամբ: Օրինակ՝ պատժամիջոցների սպառնալիքի միջոցով ԱՄՆ-ն և ԵՄ-ն փորձում են ավտորիտար համակարգ ունեցող պետություններում թուլացնել ճշշումը ազատ մամուլի նկատմամբ, ձևավորել քաղաքացիական հասարակություն, որն էլ իր հերթին պետք է հանգեցնի քաղաքական համակարգի փոփոխության: Միջազգային և անվտանգության հարցերի գերմանական ինստիտուտի՝ ամերիկյան հետազոտությունների ղեկավար դոկտոր Պ. Ռուդոլֆը առանձնացնում է համակարգի փոփոխությանը միտված պատժամիջոցների կիրառման պլուրալիստական մոդելը¹³²: Այդ մոդելն իրենից ենթադրում է պատժամիջոցների կիրառում թիրախավորված խմբերի նկատմամբ, որի միջոցով հնարավոր է հասնել թիրախ հանդիսացող պետության քաղաքական համակարգի փոփոխության: Ըստ հեղինակի՝ պատժամիջոցներ կիրառելով քաղաքական էլիտայի և նրան աջակցող հասարակական խմբերի նկատմամբ՝ հնարավոր է հասնել ցանկալի զիջումների ու քաղաքական փոփոխությունների: Հեղինակը կարծում է նաև, որ պատժամիջոցները կարող են նաև հաջողություն բերել, եթե դրանք թիրախավորում են հասարակության մեջ կշիռ ունեցող, տնտեսապես ակտիվ ու ազդեցիկ խմբերին, որոնք քաղաքական ակտիվություն չեն ցուցաբերում: Նշված տրամաբանության համաձայն՝ պատժամիջոցների պատճառած տնտեսական վնասները կարող են ստիպել ազդեցիկ խմբերի ներկայացուցիչներին ճշշում բանեցնել որոշում ընդունողների վրա կամ ձևավորել ընդդիմադիր բևեռ՝ թուլացնելով իշխող համակարգի դիմադրողականությունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում ընգծել այն հանգամանքը, որ քաղաքական համակարգի փոփոխություն կամ իշխանափոխություն տեղի ունենալ չի կարող միայն պատժամիջոցների կիրառման արդյունքում: Եթե պետությունում առկա են իշխանափոխության միտումներ, ապա պատժամիջոցների առաջացրած սոցիալական բողոքը կարող է արագացնել արդեն ընթացող գործընթացը, իսկ նման միտումների բացակայության պարագայում պատժամիջոցները կարող են հակառակ ազդեցություն ունենալ և իշխանությունների շուրջը համախմբել թիրախ հանդիսացող պետության հասարակությանը:

Պատժամիջոցների կիրառման ոչ պաշտոնական՝ արտաքին քաղաքական կարևորագույն նպատակներ են թիրախ-պետության *ռազմական ու տնտեսական կարողությունների թուլացումը*: Սառը պատերազմի ժամանակաշրջանում ԱՄՆ-ը տեխնոլոգիաների վաճառքի և մատակարարման պատժամիջոցներ էր սահմանել հորհրդային Միության նկատմամբ, որը Էականորեն նպաստում էր տեխնոլոգիական մրցավազքում վերջինիս պարտությանը և տնտեսական հետընթացին: Պատժամիջոցները ԱՄՆ-ի զսպման քաղաքականության կարևորագույն մասն էին: Այժմ ևս պատժամիջոցը համարվում է զսպման քաղաքականության ամենատարածված գործիքներից մեկը: Ադրբեջանը երեք տասնամյակ շարունակ Հայաստանի նկատմամբ կիրառում է տնտեսական շրջափակման քաղաքականություն՝ նպատակ ունենալով թուլացնել Հայաստանի տնտեսությունն ու ռազմական ներուժը և այդպիսով հասնել զիջումների:

Պատժամիջոցների տեսակները

Միջազգային խնդիրների առաջացման պարագայում պատժամիջոցների առաջին տեսակը, որը կիրառում են պետությունները, *դիվանագիտական* պատժամիջոցներն են: Դիվանագիտական պատժամիջոցների կիրառման մեխանիզմները տարբեր են և կարող են դրսևորվել բարձր մակարդակի այցերի չեղարկումից և դիվանագետների ետկանչից,

¹³² Տե՛ս՝ Peter Rudolf, Sanctions in International Relations: On the Current State of Research - Berlin, 2007, էջ 13:

ընդհուպ մինչև դեսպանատների փակում և դիվանագիտական կապերի խզում: Ըստ էության, դիվանագիտական պատժամիջոցներն իրենցից ներկայացնում են քաղաքական քայլ, որի միջոցով կիրառող պետությունը ցույց է տալիս թիրախ հանդիսացող պետության վարած քաղաքականության անընդունելիությունը: Այդ պատժամիջոցի թույլատրելիությունն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածում¹³³: Դիվանագիտական պատժամիջոցների կիրառման մեզ քաջածանոթ դեպք է ՀՀ-ի կողմից դիվանագիտական կապերի խզումը Հունգարիայի հետ՝ Ռամիլ Սաֆարովի արտահանձնման դեպքի կապակցությամբ¹³⁴:

Դիվանագիտական պատժամիջոց կիրառող պետությունը հեղինակության հարված է հասցնում թիրախում գտնվող կողմին, մյուս կողմից կիրառող պետությունը զրկում է նաև թիրախ հանդիսացող կողմին այն օժանդակությունից, որը հասցնում էր իր ԱԳՆ-ի և զարգացման գործակալությունների միջոցով, եթե այդպիսիք գոյություն ունեն: Դիվանագիտական պատժամիջոցները համարվում են կիրառող կողմի համար նվազ վտանգներ ներկայացնող գործիք: Այնուամենայնիվ, որոշ մասնագետներ համարում են, որ դիվանագիտական պատժամիջոցներ կիրառելով՝ պետությունը կարող է թուլացնել իր հատուկ ծառայությունների դիրքերը և կորցնել տեղեկատվության հավաքագրման այնպիսի աղբյուր, ինչպիսին է դիվանագիտական ներկայացուցչությունը¹³⁵:

Պատժամիջոցների տեսակ հանդիսացող հաջորդ գործիքը, որն առկա է միջազգային հարաբերությունների զինանոցում, **Եմբարգոն** է: Եմբարգոյի ազդեցիկ տեսակ է օդային Եմբարգոն՝ պետության օդային տարածքի վրայով թռիչքների արգելումը: Սակայն Եմբարգոյի առավել տարածված տեսակ է զենքի Եմբարգոն՝ վաճառքն ու առաքումը: Չենքի Եմբարգոյի հետ միասին հաճախ արգելվում է նաև հարակից կյուրթերի, սարքավորումների, ինչպես նաև զենքի պահպանման ու շահագործման հետ կապված տեխնիկական միջոցների վաճառքն ու տեղափոխումը: Կարող է արգելվել նաև զենքի հետ աշխատող անձնակազմի վերապատրաստումը¹³⁶: Այս գործիքի կիրառումը կարող է ունենալ ինչպես քաղաքական, այնպես էլ գաղափարական նպատակ: Համապատասխանաբար, պետությունները կարող են կիրառել այդ գործիքը, որպեսզի մրցակից պետությունները չզարգացնեն իրենց ռազմական ներուժը, որի ակնառու օրինակ էր ԱՄՆ-ի ռազմական Եմբարգոն ԽՍՀՄ-ի նկատմամբ: Սակայն միջազգային կազմակերպություններն ու պետությունները զենքի Եմբարգո են կիրառում նաև հակամարտություն ունեցող կողմերի միջև ռազմական բախումը կանխելու նպատակով, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ի և ԵՄ պետությունների կողմից Հայաստանին ու Ադրբեյջանին ռազմամթերքի վաճառքի արգելքը¹³⁷: Չենքի Եմբարգոն միջազգային հարաբերություններում հաճախակի կիրառվող գործիքներից է ոչ միայն այն պատճառով, որ այն բավականին հասանելի է, այլև նրա համար, որ զենքի Եմբարգոն կիրառող պետության համար ֆինանսապես առավել մատչելի է՝ ի տարբերություն, օրինակ, առևտրային պատժամիջոցների: Նշվածով հանդերձ՝ զենքի Եմբարգոն զերծ չէ

¹³³ Տե՛ս՝ ՄԱԿ-ի կանոնադրություն, հոդված 41, https://www.un.org/res/un%20Treaties/Charter_arm_unicode.pdf, 21.06.2020թ.

¹³⁴ Տե՛ս՝ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք, Երկկողմ հարաբերություններ, Հունգարիա, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/hu>, 22.06.2020թ.

¹³⁵ Տե՛ս՝ **Maller, Tara**, Diplomacy Derailed The Consequences of Diplomatic Sanctions - THE WASHINGTON QUARTERLY 33, 2010թ. էջ 61-79:

¹³⁶ Տե՛ս՝ **Дмитрий Кисю**. Современные международные механизмы санкционного воздействия в книге Политика санкций: цели, стратегии, инструменты : хрестоматия. Издание 2-е, переработанное и дополненное. / [сост. И.Н.Тимофеев, В.А.Морозов, Ю.С.Тимофеева]; Российский совет по международным делам (РСМД). — М.: НП РСМД, 2020, 452с., С. 73:

¹³⁷ Տե՛ս՝ Խաղաղության խնդիրների ուսումնասիրության ստոկհոլմյան միջազգային ինստիտուտի պաշտոնական կայքը, Arms embargoes, <https://www.sipri.org/databases/embargoes>, 02.07.2020թ.

Նաև քննադատություններից: Երբ միջազգային կազմակերպության կամ գերտերությունների կողմից կիրառվում է զենքի էմբարգո հավասարապես հակամարտության մեջ գտնվող բոլոր կողմերի նկատմամբ, ապա պաշտպանվող կողմը փաստացի զրկվում է պաշտպանվելու իրավունքից, որը ամրագրված է ՄԱԿ-ի կանոնդրության 51-րդ հոդվածում¹³⁸:

Պատժամիջոցների զինանոցում գտնվող և ամենից տարածված գործիքը **տնտեսական պատժամիջոցներն** են: Տնտեսական պատժամիջոց են համարվում, օրինակ, արտահանման ու ներկրման, ծառայությունների մատուցման արգելքները: Տնտեսական պատժամիջոցների խստագույն ձևը մենք համարում ենք տնտեսական շրջափակումը: Տնտեսական պատժամիջոցների արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքան մեծ է թիրախ հանդիսացող պետության կախվածությունը պատժամիջոց կիրառող պետությունից: Ընդ որում, տնտեսական պատժամիջոցներ կարող են կիրառվել նաև այն պետությունների նկատմամբ, որոնք աջակցում են պատժամիջոցների օբյեկտին: Նման պատժամիջոցները կոչվում են երկրորդային պատժամիջոցներ (secondary sanctions): Անհրաժեշտ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ արտահանման սահմանափակմանն ուղղված պատժամիջոցների նպատակն է թուլացնել թիրախ հանդիսացող պետության տնտեսությունը, առաջացնել գործազրկություն և սոցիալական բողոք: Մինչդեռ ներկրման արգելքը հաճախ միտված է լինում արգելակելու տեխնիկական զարգացումը կամ առաջացնելու որոշ ապրանքների դեֆիցիտ: Տնտեսական պատժամիջոցների հաջողությունը պայմանավորված է կիրառող պետության քաղաքական նպատակներով: Եթե այդ նպատակն է, օրինակ, էթնո-քաղաքական հակամարտությունում զիջում ստանալը, ապա այն հաճախ ունենում է հակառակ ազդեցություն և նպաստում է թիրախ հանդիսացող պետությունում ազգային համախմբմանը: Սակայն կարճաժամկետ հեռանկարում նման պատժամիջոցները կարող են որոշակիորեն արգելակել թիրախ հանդիսացող պետության զարգացումը:

Չարգացած պետությունների համար տնտեսական պատժամիջոցների առավել ապահով տեսակն են հանդիսանում *ֆինանսական պատժամիջոցները*: Ֆինանսական պատժամիջոցներից են, օրինակ, զարգացմանը միտված պաշտոնական ֆինանսական աջակցության դադարեցումը: Այս տեսակի պատժամիջոցի կիրառմամբ կարող են կասեցվել ենթակառուցվածքների, առողջապահական, ռազմական, կրթական և այլ ծրագրեր: Նման պատժամիջոցի կիրառումը բացասական ազդեցություն է ունենում հատկապես զարգացող պետությունների հասարակության զարգացման վրա: Ֆինանսական պատժամիջոցների շրջանակում կարող են դադարեցվել նաև վարկերի տրամադրումը, ինչպես նաև միջազգային բանկերը կարող են չեղարկել պատժամիջոցների թիրախում հայտնված պետության հետ առնչվող կազմակերպությունների դրամական փոխանցումները և սառեցնել բանկային հաշիվները¹³⁹, ինչն էական վնաս է հասցնում վերջինիս տնտեսությանը: Ֆինանսական պատժամիջոցների մեկ այլ գործիք է հանդիսանում բանկային ակտիվների սառեցումը: Այդ գործիքի կիրառման փաստացի մենաշնորհը պատկանում է ԱՄՆ-ին: Ֆինանսական պատժամիջոցների առավելությունն այն է, որ կիրառող պետությունն ու այդ պետությունում գործող կազմակերպությունները փաստացի վնասներ չեն կրում: Անհրաժեշտ է ընդգծել այն հանգամանքը, որ ֆինանսական պատժամիջոցները հանդիսանում են հարուստ պետությունների գործիք, որոնք փաստացի կառավարում են միջազգային դրամական ու բանկային համակարգերը:

¹³⁸ Տե՛ս՝ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածը, https://www.un.org/res/un%20Treaties/Charter_arm_unicode.pdf, 26.06.2020թ.

¹³⁹ Տե՛ս՝ ИНФОГРАФИКА РСМД. Всё, что нужно знать о санкциях, их субъектах, объектах и предметах, 09.07.2020г., <https://russiancouncil.ru/sanctions>.

Պատժամիջոցների զինանոցում գտնվող առավել նոր գործիք են համարվում *խելացի պատժամիջոցները* (*smart sanctions*): Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ խելացի պատժամիջոցները ոչ թե պատժամիջոցների առանձին տեսակ են, այլ կիրառման մոդել: Խելացի պատժամիջոցները մշակվել և կիրառության մեջ են հայտնվել 1990-ական թվականներին, երբ պարզ դարձավ, որ Իրաքի դեմ կիրառվող պատժամիջոցներն ավելի մեծ ազդեցություն են ունենում քաղաքացիական հասարակության վրա՝ հանգեցնելով մարդկային կորուստների, այնինչ Իրաքի քաղաքական էլիտան գրեթե անմասն էր մնում պատժամիջոցների անմիջական ազդեցությունից, իսկ երբեմն էլ օգուտներ էր քաղում վերահսկելով «սև շուկան»¹⁴⁰: Խելացի պատժամիջոցները, ի տարբերություն համընդհանուրի, թիրախավորում են քաղաքական էլիտայի ներկայացուցիչներին, նրանց հետ փոխկապակցված անձանց և ձեռնարկությունները: Խելացի պատժամիջոցների միջոցով թիրախավորվում են անձինք ու կազմակերպությունները, սառեցվում են նրանց հաշիվները, արգելվում է նրանց մուտքը պատժամիջոց կիրառող պետության տարածք: Այսպիսով՝ խելացի պատժամիջոցներից ավելի շատ տուժում են պատժամիջոցների կիրառման պատճառ հանդիսացող անձինք և ոչ թե տվյալ պետության բնակչությունը: Նվազում է այդ անձանց ֆինանսական ազդեցությունը: Միաժամանակ խելացի պատժամիջոցները վնաս են հասցնում թիրախում հայտնված պետության հեղինակությանը¹⁴¹: Միաժամանակ խելացի պատժամիջոցներն իրենց մեջ ներառում են թաքնված ազդանշան թիրախում հայտնված հասարակության այն մասին, որ կիրառող պետության գործողություններն ուղղված են ոչ թե հասարակությանը, այլ որոշում ընդունողներին: Այդպիսով փորձ է կատարվում նաև նպաստելու երկրում քաղաքական փոփոխություններին:

Ամփոփելով ուսումնասիրության արդյունքները՝ հարկավոր է ընդգծել այն հանգամանքը, որ պատժամիջոցները ծառայում են որպես քաղաքականության իրականացման գործիք: Միջազգային հարաբերությունների սուբյեկտները կիրառում են պատժամիջոցներ սեփական քաղաքական շահերի պաշտպանության համար, իսկ միջազգային իրավունքի պաշտպանությունն օգտագործվում է որպես պատրվակ հակառակորդ կամ մրցակից պետություններին պատժելու համար: Պատժամիջոցների կիրառման հիմքերը նախ և առաջ ներկայացնում են պետության քաղաքական շահերի իրականացումը, այդ թվում՝ գաղափարական շահերի: Ինչպես ռազմական ուժի կիրառումը, այնպես էլ պատժամիջոցները իրացման միջոց են և ժամանակի ընթացքում համարվում են իրենց սպառազինությունները առավել արդիականացված գործիքներով, ինչպիսիք խելացի պատժամիջոցներն են:

¹⁴⁰ Грачева А. М., Понятие и виды экономических санкций в международном праве – РАН, Москва, РФ, 2017, С. 165.

¹⁴¹ Տե՛ս՝ Uri Friedman, Smart Sanctions: A Short History. How a blunt diplomatic tool morphed into the precision-guided measures we know today, Foreign Policy, <https://foreignpolicy.com/2012/04/23/smartsanctions-a-short-history/>, 05.07.2020թ.

GOR PETROSYAN

*Yerevan State University, Department of Political Institutions and Processes,
Ph.D. Student; Researcher, Institute of the Caucasus,
Yerevan, Republic of Armenia*

This paper analyzes the objectives and mechanisms of sanctions in modern international relations. The aim of the study is to determine the nature and purpose of the sanctions applied both by international organizations and states. The purpose of the study seeks to classify the mechanisms of applying the sanctions.

When conducting the study, we used both primary sources, such as the UN Charter, and the analytical works of the leading Western and Russian experts. The obtained data was generalized, compared and analyzed, as for the first part of the study the historical research method is used.

The study finds that the modern international system promotes the application of sanctions. The grounds and objectives of the sanctions are primarily political in nature, mainly because they are interpreted as an instrument for the realization of the political interests of states, and the tools in the arsenal of the sanctions are constantly updated, adapted to current challenges and the effectiveness of the application of sanctions increases through time.

Keywords: *International sanctions, basis embargo, mechanisms, right, instruments, smart sanctions.*

ЦЕЛИ И МЕХАНИЗМЫ ПРИМЕНЕНИЯ САНКЦИЙ В СОВРЕМЕННЫХ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЯХ

ГОР ПЕТРОСЯН

*аспирант кафедры политических институтов и процессов
Ереванского государственного университета,
научный сотрудник Института Кавказа,
г.Ереван, Республика Армения*

В рамках данной статьи представлены результаты исследования по применению санкций в современных международных отношениях. Цель исследования – определить характер и цели санкций, применяемых международными организациями и государствами, задача исследования – классифицировать механизмы, которые служат применению санкций.

При проведении исследования были использованы первоисточники, такие, как Устав ООН, а также аналитические работы ведущих западных и российских экспертов. Полученные данные были обобщены, сравнены и проанализированы; в первой части статьи использован исторический метод.

В результате исследования мы пришли к выводу, что современная международная система способствует применению санкций. Основания для применения и цели санкций носят, в первую очередь, политический характер. Они являются инструментом для реализации политических интересов государств, а орудия санкций постоянно обновляются, адаптируются к текущим вызовам, а эффективность их применения повышается.

Ключевые слова: *международные санкции, основания, эмбарго, механизмы, право, инструменты, умные санкции.*

ՀՀ ԱՐՏԱԲԻՆ ԸԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌՈՒՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՐՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈՐՁ ԵՎ ԱՅՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ*

ՀՏԴ 327

ՆԱՐԵԿՍՈՒԹՅԱՆ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

nareksukiasyan@gmail.com

Հոդվածի նպատակն է տեսականացնել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ապրող գործոնները միջազգային հարաբերությունների նեոռեալիզմի (կառուցվածքային ռեալիզմ) տեսության միջոցով և վեր հանել նման մոտեցման արդյունավետությունը Նշված առարկայի ուսումնասիրման հարցում: Տեսականացման փորձը այս հոդվածում կիրառվում է ԽՍՀՄ փլուզումից մինչ 2013թ. ընկած ժամանակահատվածում, որն ուղեկցվում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ապրող գործոնների Էվոյուցիայի կառուցմամբ: Տեսականացման այս փորձը որպես արտաքին քաղաքականության փոփոխությունն արտացոլող փոփոխականներ է սահմանում Հայաստանի ա) ներքին-կառուցվածքային խոցելիությանն առնչվող սպառնալիքները, բ) տարածաշրջանային-համակարգային և գ) գլոբալ-համակարգային ուժերի դասավորությունը: 1991-2013թթ-ի. ընթացքում ընտրված փոփոխականների չափումները թույլ են տալիս ելրակացնելու, որ տեսականացման նման փորձը նեոռեալիզմի մեթոդական մոտեցումների կիրառմամբ թույլ է տալիս վեր հանելու ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող առավելագույնս վերաբերելի գործոնները: Ընտրված ժամանակշրջանը նաև թույլ է տալիս հետևելու ընտրված գործոնների ազդեցության Էվոյուցիային Հայաստանի Հանրապետության տարբեր ղեկավարների պաշտոնավարման ընթացքում:

Հիմնաբառեր՝ արտաքին քաղաքականություն, Հայաստան-Ռուսաստան հարաբերություններ, նեոռեալիզմ, ուժերի բալանսավորում, արտաքին քաղաքականության Էվոյուցիա, սպառնալիքի բալանսավորում, արտաքին բալանսավորում:

Ներածություն

ԽՍՀՄ փլուզման արդյունքում Նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականությունը սկսեց ձևակերպվել ու կիրարկվել Նոր ձևավորվող աշխարհաքաղաքական միջավայրում և չնախատեսված ներքին մարտահրավերների համատեքստում: Այս հոդվածի նպատակն է պարզել՝ անկախությունից ի վեր կառուցվածքահամակարգային ինչ հիմնական գործոններ են ազդել ՀՀ արտաքին քաղաքականության վրա, այսինքն՝ վեր հանել ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող կառուցվածքահամակարգային փոփոխականները: Հոդվածի խնդիրն է այդ

* Հոդվածը ներկայացվել է 15.10.2020թ., գրախոսվել՝ 25.10.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գործոնների՝ սահմանափակող կամ հնարավորություններ ստեղծող ազդեցությունների ուրվագծումը, ինչպես նաև դրանց դասակարգումը: Այդպիսով՝ հետազոտության շրջանակներում ազդեցության գործոնները դասակարգվել են՝ ա) ներքին-կառուցվածքային խոցելիության, բ) տարածաշրջանային-համակարգային և գ) զրբալ-համակարգային հարացույցների շուրջ: Այս գործոնների ընտրությունը պայմանավորված է միջազգային հարաբերությունների՝ *նեոռեալիզմի* կամ *կառուցվածքային ռեալիզմի* տեսամեթոդական պրիզմայով: Ըստ նեոռեալիստների՝ երբ համակարգային անիշխանության պայմաններում պետությունները ձգտում են կարողությունների մեծացման միջոցով սեփական անվտանգության ապահովմանը, ձևավորվում է համակարգային բալանս, քանի որ «միջազգային քաղաքականության համար չբալանսավորված ուժն անընդունելի է»¹⁴²: Խնդրո առարկա գործոնները օպերացիոնալիզացվել են *սպառնալիքների հավասարակշռման* ու *ենթադաշնակցման (bandwagoning)* հայեցակարգերի միջոցով: Արտաքին անվտանգային քաղաքականության ձևավորման դեպքում առավել նպատակահարմար ենք համարել կիրառել Սթիվեն Ուոլթի սպառնալիքների բալանսավորման տեսությունը¹⁴³, որով հրաժարվում ենք ուժի ու սպառնալիքի նույնացումից: Ըստ Ուոլթի՝ պետությունները վարում են բալանսավորման քաղաքականություն՝ հաշվի առնելով ոչ թե ուժային դասավորությունը, այլ սպառնալիքի աղբյուրները¹⁴⁴: Սպառնալիքի ուժգնությունը պայմանավորող գործոններից են աշխարհագրական դիրքը, հարձակողական/պաշտպանողական կարողությունները և ագրեսիվ մտադրությունների առկայությունը սպառնացող պետությունում¹⁴⁵: Ինչ վերաբերում է ենթադաշնակցման հայեցակարգին, ապա այն օգնում է պարզել ՀՀ-ՌԴ հարաբերությունների բնույթը: Ենթադաշնակցումը ստեղծում է «[...]անհավասար փոխանակում. խոցելի ուժը դոմինանտ ուժի հետ հարաբերություններում գնում է անհամաչափ զիջումների», ինչպես նաև ենթադաշնակցումը ենթադրում է «[...] դոմինանտ դաշնակցի ոչ լեգիտիմ գործողությունները աջակցելու կամ հանդուրժելու պատրաստակամություն»¹⁴⁶:

Հայաստանի ներքին-կառուցվածքային խոցելիությունը ԽՍՀՄ փլուզման արդյունքում

Հայաստանի ներքին-կառուցվածքային խոցելիությունը սկսեց արտահայտվել անկախության առաջին օրերից: Հայաստանն անկախացավ ԽՍՀՄ շրջանից «ժառանգած» պետական կարողունակության համար առնվազն երեք կարևոր խնդիրներով՝ 1988թ.-ի երկրաշարժի, 1989թ.-ի Մեծամորի ԱԷԿ-ի երկու էներգաբլոկների աշխատանքների դադարեցման, ինչպես նաև 1988 թվականից սկսված Արցախյան ազատամարտի անվտանգային և սոցիալ-տնտեսական հետևանքները: Սպիտակի երկրաշարժը Հայաստանին հասցրեց մինչև այսօր պահպանվող մարդկային, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական ու ենթակառուցվածքային ահռելի հարված: Ադրբեջանի հետ ընթացող պատերազմում ռազմաճակատի կարիքները հոգալու անհրաժեշտությունը ևս էապես դժվարացնում էր ներքին մարտահրավերներին դիմակայելու կարողությունը: Ինչպես նշում էր Լ. Տեր-Պետրոսյանը, Նորանկախ Հայաստանի արտաքին քաղաքականությունը պայմանավորում էին խիստ առօրեական հարցեր՝ քանի տոննա հացահատիկ է առկա, քանի փամփուշտ ու ինչքան վառելիք

¹⁴² **Waltz K.**, Structural Realism after the Cold War, *International Security*, Vol. 25, No. 1, 2000, էջ 28; **Dunne T., Schmidt B.**, Chapter 6: Realism, ed. Baylis J., Smith S., Owens P., *The Globalization of World Politics: an Introduction to International Relations*, Oxford, Oxford University Press, 2014, էջ 104:

¹⁴³ **Walt S.**, *The Origins of Alliance*, Ithaca, Cornell University Press, 1987:

¹⁴⁴ **Walt S.**, *The Origins of Alliance*, Ithaca, Cornell University Press, 1987, էջ 287-288, 263:

¹⁴⁵ **Walt S.**, *The Origins of Alliance*, Ithaca, Cornell University Press, 1987, էջ 23-26:

¹⁴⁶ **Schweller R.**, Bandwagoning for Profit: Bringing the Revisionist State Back In, *International Security*, Vol. 19, No. 1, 1994, էջ 80:

տանկերի համար¹⁴⁷: Դրանցից բացի, ՀԱԵԿ-ի Էներգաբլոկների փակման, Վրաստանում ներքին անկայունության և Ադրբեջանի հետ կապող ենթակառուցվածքների գործունեության դադարեցման հետևանքով Հայաստանը կանգնեց Էներգետիկ համակարգի կազմալուծման առաջ՝ ապահովելով սեփական Էներգետիկ կարիքների ընդամենը 10-15%-ը¹⁴⁸: Ի հավելումն դրա՝ միուլթենական տնտեսական համակարգի փլուզման արդյունքում 1993 թ.-ի դրությամբ ՀՀ-ի արդյունաբերության հիմնական ոլորտների անկումը կազմեց 60-90 %, ՀՆԱ-ն կրկնակի կրճատվեց¹⁴⁹: Ներքին կարողությունների զարգացմանը խոչընդոտում էին նաև բնական ռեսուրսների սակավությունը¹⁵⁰, մարդկային ռեսուրսների պակասը, որն էլ ավելի էր սրվում աճող արտագաղթի պատճառով¹⁵¹:

Տարածաշրջանային-համակարգային գործոնների Էվոյուցիան

Վերոնշյալ խնդիրներից զատ՝ նորանկախ Հայաստանը բախվեց նաև տարածաշրջանային-համակարգային կանխորոշված կարևոր գործոնի՝ աշխարհագրական մարտահրավերներին: Տնտեսական զարգացմանը խոչընդոտում էր նաև ծովային ելք չունենալու հանգամանքը: Ըստ Ելենա Կուլիպանովայի՝ ծովային ելք չունեցող երկրների արտաքին առևտրի ծավալը կարող է մինչև 60%-ով զիջել նման ելք ունեցող երկրներին և արժենալ կրկնակի թանկ¹⁵²: Դիտարկումը տեղին է նաև Հայաստանի համար. Վրաստանի տարածքով Ռուսաստանի հետ կապող երկաթուղու գործարկման դադարելուց հետո Հայաստանը ստիպված էր օգտվել ապրանքափոխադրումների ամենաթանկ միջոցներից՝ մեքենա- և ավիափոխադրումներից: Հայաստան ժամանող բեռնափոխադրումների 75%-ից ավելին տարանցվում է Վրաստանի տարածքով¹⁵³: Հետևաբար Վրաստանի քաղաքացիական պատերազմի ընթացքում տարանցիկ ուղիների ապակայունացումը զգալի ազդեցություն ունեցավ Հայաստան ներկրվող ապրանքների մատակարարման տեմպի վրա: Անկախության առաջին տարիներից ՀՀ արտաքին անվտանգության, ինչպես նաև դաշինքային քաղաքականությունը սահմանող հիմնական տարածաշրջանային-համակարգային գործոնը դարձավ թուրքական սպառնալիքը, որի հետևանքները կանխորոշելով՝ երկրի ղեկավարությունը ապարդյուն փորձում էր վերափոխել այն: Այդ գործոնի հաստատումը կարելի է համարել 1993 թ.-ի ապրիլը, երբ հայկական ուժերի կողմից Զարվաճառում (նախկին Զեյթաջար) իրականացրած ռազմական գործողությունների արդյունքում Թուրքիան, ի համերաշխություն Ադրբեջանի, միացավ Հայաստանի շրջափակման գործընթացին¹⁵⁴՝ արգելելով իր տարածքով հումանիտար

¹⁴⁷ **Սարգսյան Կ., Դավթյան Վ.,** Առասպելի և իրականի սահմանագծին: Լևոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին և քաղաքագետը, Երևան, Նաիրի, 1996, էջ 133:

¹⁴⁸ **Սարուխանյան Ս.,** ՀՀ Էներգետիկ անվտանգություն հիմնական ձեռքբերումները և մարտահրավերները, Երևան, 21-րդ ԴԱԲ, 2011, էջ 31-33:

¹⁴⁹ **Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Իսահակյան Ռ.,** Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները, Երևան, Երևանի պետական համալսարան, 2017, էջ 64:

¹⁵⁰ **Kotchikian A.,** The Dialectics of Small States: Foreign Policy Making in Armenia and Georgia, Boston, Boston University Graduate School of Arts and Sciences, 2006, էջ 172:

¹⁵¹ **Vasilyan S.,** Swinging on a Pendulum, Problems of Post-Communism, Vol. 64, No. 1, 2016, էջ 39:

¹⁵² **Kulipanova E.,** International Transport in Central Asia: Understanding the Patterns of (Non-) Cooperation, University of Central Asia Institute of Public Policy and Administration, 2012, էջ 7:

¹⁵³ **Heinrich-Böll-Stiftung,** Հայաստան և Վրաստան. առաձգական հարաբերություն, 2017, <https://ge.boell.org/en/2017/12/20/hayastan-ew-vrastan-arhadzgakan-haraberowtyown> .

¹⁵⁴ Իրավական տեսանկյունից սահմանը երբեք էլ բաց չի եղել: Տե՛ս **Ter-Matevosyan, V.,** Review On Ünal Çeviköz's Paper "Perspectives For Security And Stability In The South Caucasus: The Role

օգնության փոխադրումը¹⁵⁵, ապա չեղարկեց Հայաստանին էլեկտրաէներգիա վաճառելու առաջարկը¹⁵⁶ և որպես սպառնալիքի ծայրահեղ դրսևորում տեղակայեց իր զորքերը Հայաստանի հետ սահմանի երկայնքով¹⁵⁷: Թուրքիայի վարչապետ Թանսու Չիլլերը Ղարաբաղում հայկական ուժերը չզսպելու պարագայում սպառնաց ռազմական գործողություններով¹⁵⁸: Էսկալացիան կանխվեց ԱՊՀ միավորված ուժերի հրամանատար Շապոշնիկովի հայտարարությամբ. ըստ որի՝ նման հարձակումը կարող էր հանգեցնել Երրորդ համաշխարհային պատերազմի¹⁵⁹: ՌԴ արտգործնախարար Անդրեյ Կոզիրևը հայտարարեց, որ Թուրքիայի կողմից հարձակման դեպքում Ռուսաստանը կգա օգնության¹⁶⁰: Ի սկզբանե տարածաշրջանային ուժերի ու սպառնալիքների դրույունը, այն է՝ արտաքին կառուցվածքահամակարգային հրամայականները, Հայաստանի առջև դնում էին արտաքին անվտանգային քաղաքականության երկու տարբերակ. կամ Ռուսաստանի հետ դաշինքի միջոցով բալանսավորել թուրք-ադրբեջանական սպառնալիքը և, վերականգնելով տարածաշրջանում ուժային բալանսը, հաստատել կայունություն, կամ Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման միջոցով «վսասագերծե» թուրքական սպառնալիքը¹⁶¹: Պետության ինքնավարության տեսանկյունից առավել բարենպաստ էր երկրորդ տարբերակը, քանի որ այն կմեղմեր կառուցվածքահամակարգային սահմանափակումները՝ նվազեցնելով խոցելիությունն ու սպառնալիքին դիմակայելու համար անհրաժեշտ ներքին ու արտաքին բալանսավորման «գինը»: Այդպիսով կնվազեր Ռուսաստանից անվտանգային բացարձակ կախվածության անհրաժեշտությունը, սակայն կստեղծվեր նոր խնդիր՝ փոխադարձաբար բալանսավորել Ռուսաստանի ու Թուրքիայի ազդեցությունները, օրինակ՝ Թուրքիային ենթադաշնակցելուց խուսափելու համար: Թեև այս քաղաքականությունը ինդրահարույց էր, սակայն այն հնարավորություն էր տալիս երկու բևեռների միջոցով խուսափել մեկ բևեռից ամբողջական կախումից և ստեղծել մանևրելու ավելի լայն հնարավորություն: Առաջին տարբերակի ընտրության դեպքում թեև կբալանսավորվեր համակարգային հիմնական սպառնալիքը և կլրացվեր ներքին խոցելիության բացը, սակայն անհամաչափ հարաբերությունների, տարածաշրջանային անվտանգային համալիրում այլ բևեռների բացակայության և ուժային հավասարակշռության շեշտակի խախտման պատճառով այդ բալանսավորումը կարժենար խորը կախվածություն և Ռուսաստանի հետ հարաբերությունների ենթադաշնակցում:

Կառուցվածքահամակարգային նման դասավորության պայմաններում, ի հեճուկս հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերի, Տեր-Պետրոսյանի

Of Normalisation Between Turkey And Armenia”, Regional and National Security Dynamics: Armenian-Turkish Relations, Yerevan State University Center for Civilization and Cultural Studies, 2017, էջ 219-220:

¹⁵⁵ **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 68.

¹⁵⁶ **Bolukbasi S.** Ankara’s Baku-Centered Transcaucasia Policy: Has It Failed?, Middle East Journal, Vol. 51, No. 1, 1996, էջ 85.

¹⁵⁷ **New York Times**, Turkey Moves Troops to Armenian Border, 1993, <https://www.nytimes.com/1993/09/04/world/turkey-moves-troops-to-armenian-border.html>.

¹⁵⁸ **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, page 73: **Chrysanthopoulos L.**, Caucasus Chronicles : Nation-building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton, NJ, Gomidas Institute Books, 2002, էջ 77-78:

¹⁵⁹ **Aves J.**, Post-Soviet Transcaucasia, in ed. Allison, R., Challenges for the Former Soviet South, London, The Royal Institute of International Affairs, 1996, էջ 186:

¹⁶⁰ **Pry P.**, War scare : Russia and America on the nuclear brink, London, Praeger, 1999, էջ 121:

¹⁶¹ Տեսական մեկ այլ սցենարում հնարավոր է նաև ՀՀ ենթադաշնակցումը Թուրքիային:

Նախագահության օրոք Թուրքիայի թշնամական քաղաքականությունն¹⁶² եապես վերափոխել չստացվեց¹⁶³: Սա հանգեցրեց Ռուսաստանի միջոցով թուրքական սպառնալիքի բախնսավորման տարբերակի ընտրությանը, և 1992 թ.-ի մայիսին ՀՀ ԱԳ նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը Մոսկվայում ինկրեց Հայաստանում պահել ԱՊՀ զինված ուժերը: Արծվաշենի կորստից հետո Տեր-Պետրոսյանը ստորագրեց ԱՊՀ Հավաքական անվտանգության պայմանագիրը (ՀԱՊ), և հայկական կողմը սկսեց արտահայտել փոխապաշտպանության իր ակնկալիքները թե՛ ադրբեջանական¹⁶⁴, թե՛ թուրքական սպառնալիքի դեմ¹⁶⁵: Կարճ ժամանակ անց ռուսական զորքերի տեղակայումը հայ-թուրքական և հայ-իրանական սահմանին ստացավ իրավական կարգավիճակ¹⁶⁶ 1994 թ.-ին Հայաստանն ու Ռուսաստանը համաձայնության եկան ռուսական ռազմաբազայի, ինչպես նաև Հայաստանի օդային տարածքը պաշտպանող ՀՕՊ ուժերի տեղակայման շուրջ¹⁶⁷: 1996 թ.-ին երկու պետությունների միջև ստորագրվեցին մի շարք ռազմապաշտպանական նշանակության պայմանագրեր, որոնց հաջորդեց 1997թ.-ին ստորագրված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը¹⁶⁸, որը, բացի ՀԱՊ-ից, փոխօգնության լրացուցիչ երկկողմանի հարթակ տրամադրեց Հայաստանին: Այսպիսով՝ թուրք-ադրբեջանական սպառնալիքի չեզոքացման կառուցվածքային անհնարինությունը Հայաստանին մղեց Ռուսաստանի հետ ենթադաշնակցման խորացմանը և սահմանեց արտաքին հարաբերություններում ռուսական հարացույցի աստիճանական գերակայության ամրապնդմանը:

Ռոբերտ Զոչայանի նախագահության տարիներին ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների փոխանցումը (իմա՝ վաճառքը) Ռուսաստանին վկայում էր ներքին խոցելիության շարունակականության և արտաքին հարաբերությունների միաբնեռության խորացման մասին:

Ենթակառուցվածքների առաջին նշանակալի փոխանցումներից էր «գույք՝ պարտքի դիմաց» գործարքը, որով ՌԴ-ին անցան մի շարք էներգետիկ ենթակառուցվածքներ, այդ թվում՝ «Հրազդան» ջերմաէլեկտրակայանը, «Մարս»

¹⁶² Հարաբերությունների կարգավորման համար Թուրքիան առաջ էր քաշում հետևյալ նախապայմանները, որոնց դասակարգումն ըստ առաջնահերթության և ըստ իրավիճակի ենթարկվում էր փոփոխության. կարգավորել արցախյան հակամարտությունը՝ համաձայն ադրբեջանական պահանջների, դադարեցնել Ցեղասպանության ճանաչմանն ուղղված միջազգային քայլերը, ճանաչել հայ-թուրքական սահմանը՝ ըստ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի, հրաժարվել Թուրքիայի հանդեպ ունեցած տարածքային պահանջներից: Տե՛ս **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 67:

¹⁶³ Այն դրվագներում, երբ Թուրքիան փորձում էր ուղղակի մասնակցությունն ապահովել արցախյան կարգավորման հարցում կամ էներգետիկ ենթակառուցվածքների շահավետ գործարք ստանալ, ապա վերջինիս շեշտադրումները փոքր-ինչ մեղմանում էին:

¹⁶⁴ **Avetisyan S.**, The Hunchback of Caucasus: Armenia’s “Stateness” issue and its post-war democratization, MPhil thesis, Oxford, University of Oxford, 2016, էջ 44:

¹⁶⁵ **MacDougall J.**, Post-Soviet Strategic Alignment: The Weight of History in the South Caucasus, Washington D.C., A Dissertation submitted to the Faculty of the Graduate School of Arts and Sciences of Georgetown University, 2009, էջ 184:

¹⁶⁶ **UAWire**, Armenia refuses to revise the status of Russian border guards, 2018, <https://www.uawire.org/armenia-refuses-to-revise-the-status-of-russian-border-guards.>: **TASS**, Russian border guards’ presence on border with Turkey important for Armenia — premier, TASS Russian News Agency, 2018, <https://tass.com/world/1014872>.

¹⁶⁷ **Kotchikian A.**, The Dialectics of Small States: Foreign Policy Making in Armenia and Georgia, Boston, Boston University Graduate School of Arts and Sciences, 2006, էջ 180:

¹⁶⁸ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին, 1997:

ընկերությունը և երեք գիտահետազոտական կենտրոններ: 2006 թ.-ին ռուսական «Վիմպեյբոմ»-ին են անցնում «ԱրմենՏել»-ի բաժնետոմսերի 90%-ը, իսկ 2007 թվականին «ՄՏՍ»-ը գնեց «ՎիվաՍելլ» ընկերությունը: 2008 թ.-ին «Ռուսական երկաթուղիներ»-ի դուստր «Հարավկովկասյան երկաթուղիները» ստանձնեց հայկական երկաթգծային համակարգի կառավարումը¹⁶⁹: Նշված ժամանակահատվածում խորացավ նաև էներգետիկ ենթակառուցվածքներում ՌԴ ներկայությունը, որի նախադրյալները նույնպես առաջ էին եկել նախորդ տասնամյակում: 2002 թ.-ին ռուսական «Գազպրոմին» էր անցել Հայաստանի էներգետիկ շուկայի 45%-ը, իսկ «Իտերային»՝ 10 %-ը: 2006 թ.-ին «Գազպրոմը» ձեռք բերեց ևս 13% բաժնեմաս, Իրան-Հայաստան գազատարի Հայաստանով անցնող 40-կիլոմետրանոց հատվածը և Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը՝ ՀՀ-ին թողնելով բաժնեմասերի 30%-ը¹⁷⁰:

2003 թ.-ին 40 միլիոն ԱՄՆ դոլար պարտքի դիմաց Մեծամորի ատոմային էլեկտրակայանի հավատարմագրային կառավարումը փոխանցվեց ռուսական «ՌԱՕ-Ե-Ես» ընկերությանը, որն ատոմակայանի գործարկումից ստացված շահույթի 75%-ը պարտավորվում էր փոխանցել ՀՀ կառավարությանը¹⁷¹: Ատոմակայանի գործունեության համար անհրաժեշտ ուրանը նույնպես ներկրվում է Ռուսաստանից¹⁷²:

Երկրորդ հարաբերությունները զարգանում էին միջազգային համակարգի կառուցվածքային որոշակի փոփոխությունների համատեքստում: Դրանցից հատկապես կարևոր էին՝ 1. Ռուսաստանի ներքին հզորության ու կայունության ամրապնդումը, 2. արևմտյան շահերի վերափոխումը՝ պայմանավորված տարածաշրջանի էներգետիկ կարևորությամբ¹⁷³, 3. ԱՄՆ-ՌԴ հարաբերություններում տարածաշրջանային և գլոբալ շահերի փոխադրեցությամբ պայմանավորված տատանումները: Ըստ Միլրոյանի՝ կայունացումը թույլ տվեց Ռուսաստանին ավելի շատ ռեսուրսներ կենտրոնացնել «մերձավոր արտասահմանում», և Պուտինի դոկտրինի շրջանակներում, ի հակադրություն ելցինյան քաղաքականության, բարձրացավ Ադրբեյջանի հետ հարաբերությունների մակարդակը¹⁷⁴: Նման փոփոխության պատճառը կասսյան էներգետիկ հնարավորությունների հասանելիությունն էր, որը հանգեցրեց ՌԴ-ի և ԱՄՆ/ԵՄ միջև ոչ միայն էներգետիկ, այլ նաև աշխարհաքաղաքական շահերի բախման: Սակայն չկարողանալով մաս կազմել տարածաշրջանային ծրագրերին, աշխարհաքաղաքական ու տնտեսական շրջափակումն առավել խորացրեց Հայաստանի մեկուսացումը՝ ի համեմատություն իրեն սպառնացող պետությունների, որոնց համար այդ ծրագրերը զարգացման նոր հեռանկարներ էին բացում (կարդա՝ հարաբերական հզորություն)¹⁷⁵:

¹⁶⁹ **Vasilyan S.**, Swinging on a Pendulum, Problems of Post-Communism, Vol. 64, No. 1, 2016, page 36-37.

¹⁷⁰ **Gazprom Armenia**, «ՀայՌուսգազարդ»-ը լրացուցիչ բաժնետոմսերի վաճառքից ստացված գումարով գնելու է Հրազդանի ՁԷԿ-ի 5-րդ բլոկը, 2006, <https://armenia-am.gazprom.com/press/about-company/2006/11/93/>.

¹⁷¹ **RFE/RL**, Մեծամորի ատոմակայանը փոխանցվեց «ՌԱՕ- Ե-Ես» ընկերությանը, 2003, <https://www.azatutyun.am/a/1572226.html>.

¹⁷² **Ասիական զարգացման բանկ**, Հայաստան. Երկրի գործընկերության ռազմավարություն (2014-2018), 2011, <https://www.adb.org/sites/default/files/institutional-document/158364/cps-arm-2014-2018-hy.pdf>.

¹⁷³ **White House**, The National Security Strategy of the United States of America, 2002, <https://2009-2017.state.gov/documents/organization/63562.pdf>.

¹⁷⁴ **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 43-44.

¹⁷⁵ Տարածաշրջանային համագործակցության ծրագրերից Հայաստանը դուրս թողնելու թուրք-ադրբեյջանական քաղաքականության մասին առավել մանրամասն տե՛ս **Դավթյան Է.**, Թուրքիա-Վրաստան-Ադրբեյջան տնտեսական և ռազմաքաղաքական եռակողմ

Օգտվելով այդ թվում ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսական հնարավորություններից՝ 2009 թ.-ից Ադրբեջանը զգալիորեն խորացրեց իր ռազմական ներուժը՝ պաշտպանական ծախսերին տրամադրելով մոտ 7 անգամ ավել գումար, քան Հայաստանը՝ վերջինիս համար բարձրացնելով ռազմական մրցավազքի գինը: Ու թեև 2015 թ.-ին՝ նավթի գնի համաշխարհային արժեզրկումից հետո, Ադրբեջանը ստիպված էր կրկնակից ավել կրճատել ռազմական քյուջեն. այն դեռևս մոտ 3 անգամ գերազանցում է հայկական կողմի հատկացրած ծախսերը¹⁷⁶: Ադրբեջանական գնումների մեջ զգալի մաս ունի ռուսական արտադրության ռազմատեխնիկական, իսկ ՀՀ պաշտոնական դաշնակիցներ Ղազախստանը և Բելառուսի հանրապետությունը պահպանում են Ադրբեջանի հետ իրենց «հատուկ» կապերը¹⁷⁷: Այս հանգամանքները վկայում են ՀՀ դաշինքային քաղաքականության խոցելիության մասին: Թեև 2016 թ.-ի «Ակրիյան պատերազմը» վկայեց, որ արագ հարձակողական պատերազմն Ադրբեջանի համար խոստումնալից չէ¹⁷⁸, նրա վարած քաղաքականությունը շարունակում է լուրջ սպառնալիք մնալ Արցախի բնակչության անվտանգության համար:

Գլոբալ-համակարգային գործոնների էվոլյուցիան

Գլոբալ-համակարգային մակարդակում ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող հիմնական գործոնը գտնվում էր Ռուսաստանի և Արևմուտքի հարաբերությունների տատանումների ոլորտում: Սառը պատերազմի ավարտով պայմանավորված՝ տարածաշրջանային աշխարհաքաղաքական կարգը ևս անկայուն էր: Նոր աշխարհակարգի ձևավորումը ուղեկցվում էր տարածաշրջանային ուժերի շահերի ու որդեգրած քաղաքականությունների վերափոխումներով: Մի կողմից տարածաշրջանը տեղակայված է Ռուսաստանը Միջին Արևելքին կապող միջանցքում, մյուս կողմից Արևմուտքը Կասպից ծովին ու Կենտրոնական Ասիային միացնող խաչմերուկում: Այս ուժերի շահերի հնարավոր բախումը հետսառըպատերազմյան Հարավային Կովկասում որոշ հեղինակներ անվանեցին «Նոր Մեծ խաղ»¹⁷⁹: Հակառակ համեմատական կանխատեսման՝ անկախության առաջին տարիներին Հայաստանի շահերի հաշվին նման բախում տեղի չունեցավ: Դեռևս 1988 թ.-ին ԱՄՆ-ի հումանիտար օժանդակության արդյունքում կայացած շփումներն ու կապերը, Հայաստանի որդեգրած ժողովրդավարական ուղին դրական միջավայր էին ստեղծել Նորանկախ Հայաստանի հանդեպ ԱՄՆ քաղաքականության ձևավորման համար: Ի լրումն դրան՝ Նշենք, որ ըստ Միդդլանդի մինչ 1990-ական թթ.-ի կեսերը ԱՄՆ-ի հայկական սփյուռքի լոբբին մեծ ազդեցություն ուներ տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության վրա և Կոնգրեսում ստեղծել էր Արցախյան հակամարտության հարցում հայանպաստ մթնոլորտ¹⁸⁰: Այս հանգամանքը Անա Ռադեյատին թույլ է տալիս պնդել, որ մարդկային, ֆինանսական ու

համագործակցությունը 1991-2016թթ., թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ:

¹⁷⁶ **Персиян Л.** Способны ли конфликты в Закавказье перерасти в региональную войну?, Russian Council, 2019, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/columns/military-and-security/sposobny-li-konflikty-v-zakavkaze-pererasti-v-regionalnuyu-voynu/>.

¹⁷⁷ Shirinyan., For Armenia, an Alliance That May Be More Trouble Than It's Worth, Chatham House, 2018, <https://www.chathamhouse.org/expert/comment/armenia-alliance-may-be-more-trouble-it-s-worth>.

¹⁷⁸ **Персиян Л.** Способны ли конфликты в Закавказье перерасти в региональную войну?, Russian Council, 2019, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/columns/military-and-security/sposobny-li-konflikty-v-zakavkaze-pererasti-v-regionalnuyu-voynu/>.

¹⁷⁹ Սրանով փորձ էր արվում նմանություններ գտնել 19-20-րդ դարերում ռուս-բրիտանական հակամարտության հետ:

¹⁸⁰ **Mirzoyan A.** Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 138:

ինստիտուցիոնալ խիստ սահմանափակ ռեսուրսներ ունեցող փոքր պետության սփյուռքի ակտիվը հնարավորություն էր ստեղծում ազդել համաշխարհային գերտերության արտաքին քաղաքականության վրա¹⁸¹ (Shain & Barth, 2003): Ազդեցության գլխավոր ձեռքբերումը Կոնգրեսի կողմից «Ազատության աջակցության ակտի» 907-րդ հատվածի ընդունումն էր, որն արգելք էր սահմանում Ադրբեջանին տրվող օգնության վրա, քանի դեռ վերջինս շրջափակման մեջ էր պահում Հայաստանը կամ դիմում հարձակողական ուժի¹⁸²: Իսկ ՌԴ-ի հետ տարածաշրջանային շահերի բախման կանխումը պայմանավորված էր նաև ԱՄՆ-ի կողմից Հարավային Կովկասում Ռուսաստանի առաջնային դերի ընդունման և դրան զուգահեռ՝ Բալկաններում ԱՄՆ-ի այլ առաջնահերթություններով¹⁸³: Միևնույն ժամանակ տարածաշրջանում ՌԴ քաղաքականությունը նույնպես դրական համակարգային գործոններ էր ապահովում ՀՀ արտաքին քաղաքականության իրականացման համար: Ըստ Մաթեուզայի՝ սրան նպաստում էին նաև երկու պետությունների պաշտպանական գերատեսչությունների միջև առկա գործընկերային տրամադրությունները¹⁸⁴: 1997 թ. -ին Դումայում ներկայացված զեկույցը փաստում էր, որ մինչ այդ պահը Հայաստանին տրամադրած ռազմական մատակարարումները կազմում էին մոտ 1 միլիարդ դոլար: Ռազմատեխնիկայից բացի, շրջափակված Հայաստանը ՌԴ-ից ստանում էր նավթ, բնական գազ, իսկ 1992-1993թթ.-ին տրամադրված մեծ վարկերը կանխում էին պետության տարրական գործառույթների ձախողումը¹⁸⁵:

Այս ընթացքում, ըստ որոշ հեղինակների, ՌԴ արտաքին քաղաքականության մեջ հետխորհրդային տարածաշրջանում ԱՄՆ-ի հետ մրցակցությունը ոչ միայն չէր գլխավորում արտաքին քաղաքական օրակարգը, այլև վերջինիս աշխարհակարգի մոդելի ընդունումն ու համագործակցության խորացումը համարվում էին առաջնային գերակայություններ¹⁸⁶: Այսպիսով՝ ԱՄՆ-ի տեսանկյունից ՀՀ-ի՝ կայունության և «ժողովրդավարության կոզյակ» հանդիսանալը, ի հակադրություն Վրաստանի ու Ադրբեջանի, իսկ ՌԴ տեսանկյունից տարածաշրջանային համագործակցության կառույցներին ՀՀ-ի միանալը, կրկին ի հակադրություն վերջիններին, ոչ միայն բարենպաստ հնարավորություններ էին ստեղծում տարածաշրջանային տերությունների «Մեծ խաղից» խուսափելու համար, այլև կառուցվածքահամակարգային գործոնների նման դասավորությունը թույլ էր տալիս անկախության առաջին տարիներին լավագույնս վարելու բազմավեկտոր և առավել ինքնավար արտաքին քաղաքականություն:

Սակայն գործոնների նման դասավորությունը 2000-ական թթ.-ի սկզբից կտրուկ վերադասավորումների փուլ մտավ: ԱՄՆ-ՌԴ հարաբերությունների վերափոխման գլխավոր բնորոշիչներից է 2001 թ.-ի սեպտեմբերի 11-ից հետո սկսված ԱՄՆ-ի գլոբալ պայթյալն ահաբեկչության դեմ, որը թեև թույլ կապերով, բայց մեկ նպատակի շուրջ էր միավորում հակադիր շահեր հետապնդող ուժերին (ԱՄՆ-ՌԴ, ՌԴ-Թուրքիա, Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան) և հնարավորություն ստեղծում խնդիրների վերանայման

¹⁸¹ **Shain Y., Barth A.**, *Diasporas and International Relations Theory*, International Organization Vol. 57, No. 3, 2003.

¹⁸² **Mirzoyan A.**, *Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics*, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 141:

¹⁸³ **Mirzoyan A.**, *Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics*, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 142:

¹⁸⁴ **MacDougall J.**, *Post-Soviet Strategic Alignment: The Weight of History in the South Caucasus*, Washington D.C., A Dissertation submitted to the Faculty of the Graduate School of Arts and Sciences of Georgetown University, 2009, էջ 188:

¹⁸⁵ **Mirzoyan A.**, *Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics*, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 133:

¹⁸⁶ **Kotchikian A.**, *The Dialectics of Small States: Foreign Policy Making in Armenia and Georgia*, Boston, Boston University Graduate School of Arts and Sciences, 2006, էջ 115:

համար¹⁸⁷: Սակայն միևնույն ժամանակ ըստ Միրզոյանի՝ 2001-2003 թթ.-ին տարածաշրջանային ավտանգության համալիրը փոխակերպվեց, որի արդյունքում Հարավային Կովկասում ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև ձևավորվեց գրոյական արդյունքով խաղ¹⁸⁸: Կառուցվածքահամակարգային այս գործոնի ազդեցությունը Հայաստանի վրա բացահայտ արտահայտվեց 2008 թ.-ի ռուս-վրացական պատերազմի արդյունքում, երբ Կրաստանի տարածքով տարանցման սահմանափակման պատճառով Հայաստանը կրեց մոտ 70 միլիոն ԱՄՆ դոլարի վնաս և կանգնեց էներգետիկ ճգնաժամի առաջ¹⁸⁹: Համակարգային մակարդակում պատերազմը նախանշեց Արևմուտքի ինստիտուցիոնալ ու գաղափարական արագացված ընդլայնման փուլի ավարտի և ՌԴ-Արևմուտք տարածաշրջանային անվտանգային միջավայրը ձևավորող շահերի բախման նոր փուլի մեկնարկը: Հայաստանի արտաքին քաղաքականության մակարդակում այն ազդակ եղավ և թուրքական ջանքերի հետ համատեղման արդյունքում հանգեցրեց «Ֆուտբոլային դիվանագիտության» նախաձեռնմանը, ապա տապալմանը: Նման հանգուցալուծման գլխավոր պատճառներից էր արցախյան չկարգավորված հակամարտությունը և, ըստ Կահրամ Տեր-Մաթևոսյանի, «դիվանագիտության» մեթոդաբանությունը¹⁹⁰:

Սերժ Սարգսյանի նախագահության առաջին ժամկետի ընթացքում կառուցվածքահամակարգային գործոնների հիմնական բնորոշիչներից մեկը դարձավ Ռուսաստան-Արևմուտք հակասությունների սրման և տարածաշրջանային անվտանգության համալիրում շահերի բախման նոր փուլը: ՀՀ արտաքին քաղաքականության մեջ նոր փուլը գլխավորապես դրսևորվեց զուգահեռ ընթացող տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացներում: Հայաստանը կանգնեց ԵՄ-ի հետ համագործակցության խորացման և Մաքսային միություն մուտք գործելու՝ առկա հանգամանքներում փոխբացառող երկընտրանքի առաջ: Մի շարք հեղինակների համոզմամբ՝ հաշվի առնելով հիմնականում ՀՀ անվտանգության միջավայրը պայմանավորող համակարգային գործոնները և այդ ճարտարապետության մեջ ՌԴ-ի դերը՝ Հայաստանն ընտրեց ինտեգրացիոն եվրասիական ուղին¹⁹¹: Ռուսաստան-Արևմուտք մրցակցության ազդեցությունը ՀՀ արտաքին քաղաքականության վրա փոքր ինչ մեղմվեց ԵՄ-ի՝ 2015 թ.-ին վերանայված դիրքորոշմամբ, ըստ որի՝ անհրաժեշտ

¹⁸⁷ Այս համատեքստում ԱՄՆ-ն ամեն տարի նախագահական նամակով սկսեց շրջանցել «Ազատության ակտի» 907-րդ հատվածը, Թուրքիայի համար առաջ եկան Հարավային Կովկասով և Կենտրոնական Ասիայով հետաքրքրության պրագմատիկ նախադրյալներ, Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցության թեկնածության համատեքստում սկսեց գործել Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը, ԱՄՆ-ն ակտիվացրեց արցախյան հակամարտության շուտափույթ կարգավորմանն ուղղված ջանքերը, այդ թվում՝ որոշ հեղինակների գնահատմամբ՝ Հայաստանի վրա ճնշում գործադրելով: Տե՛ս **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 146:

¹⁸⁸ **Mirzoyan A.**, Armenia, the Regional Powers, and the West Between History And Geopolitics, New York, Palgrave Macmillan, 2010, էջ 154-155:

¹⁸⁹ **Գիրագոսյան Ռ.**, Տարածաշրջանային զարգացումները և Հայաստանի ազգային անվտանգությունը, 21-րդ ԴԱԸ, 2009, էջ 66:

¹⁹⁰ **Ter-Matevosyan V.**, Review On Ünal Çeviköz's Paper "Perspectives For Security And Stability In The South Caucasus: The Role Of Normalisation Between Turkey And Armenia", Regional and National Security Dynamics: Armenian-Turkish Relations, Yerevan State University Center for Civilization and Cultural Studies, 2017, էջեր 221-226:

¹⁹¹ **Vasilyan S.**, Swinging on a Pendulum, Problems of Post-Communism, Vol. 64, No. 1, 2016: **Ter-Matevosyan V., Drnoian A., Mkrtychyan N., Yepremyan T.**, Armenia in the Eurasian Economic Union: reasons for joining and its consequences, Eurasian Geography and Economics, Vol. 58, No. 3, 2017: **Der-Ghougassian Kh.**, Farewell to Complementarity: Armenia's Foreign Policy at a Crossroad, The Armenian Weekly, 2014, <https://armenianweekly.com/2014/04/01/farewell-to-complementarity-armenias-foreign-policy-at-a-crossroad/>.

Էր կիրառել առավել տարբերակված մոտեցում Արևելյան գործընկերության յուրաքանչյուր պետության նկատմամբ՝ հաշվի առնելով նրանց աշխարհաքաղաքական յուրահատկությունները¹⁹²: Ըստ Ֆրնեսի և Շեֆերի՝ այս քայլը ԵՅԶ-ի մեջ մեծացրեց ռեալիզմի կշիռը¹⁹³: Սա թույլ տվեց մշակել Հայաստանի հետ համագործակցության նոր ձևաչափ, որը հիմքը դարձավ 2017 թ.-ին կնքված ՅԸԳՀ-ն՝ ուղղված երկկողմ տնտեսական, ֆինանսական ու քաղաքական հարաբերությունների խորացմանը և Հայաստանում ժողովրդավարական և ազատ շուկայական հարաբերությունների հիմքերի ամրապնդմանը¹⁹⁴:

Գլոբալ-համակարգային հարթության մեջ Հայաստանը գտնվում է դինամիկ զարգացող հակասական ու համագործակցային շահերի համատեքստում: Ըստ Գայանե Նովիկովայի՝ Հայաստանի արտաքին քաղաքականությունը շարունակում է գտնվել ԱՄՆ-ՌԴ ներհակ հարաբերությունների, թուրք-ամերիկյան կուտակվող անհամաձայնությունների, իրանա-ամերիկյան հակամարտության սրացումների, ինչպես նաև Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի երկկողմ ու եռակողմ հարաբերությունների քարելավման կառուցվածքային ազդեցությունների ներքո¹⁹⁵:

Ամփոփում

Սույն հոդածի նպատակն էր տեսականացնել, վեր հանել և դասակարգել ՀՀ արտաքին քաղաքականության վրա ազդող ներքին կառուցվածքային, տարածաշրջանային-համակարգային ու գլոբալ-համակարգային գործոնները և ուրվագծել դրանց ազդեցությունը:

Ամփոփելով կարող ենք նշել, որ այդ գործոնները պայմանավորված էին պետության ներքին խոցելիությամբ, արտաքին տարածաշրջանային միջավայրով և գլոբալ-համակարգային մակարդակում շահերի փոխդասավորությամբ: Փոքր, ծովային ելք չունեցող պետությունը գտնվում է աշխարհաքաղաքական դժվարին իրավիճակում՝ չունենալով դիվանագիտական հարաբերություններ երկու հարևանների հետ: Դրանցից Ադրբեյջանը կոնվենցիոնալ, իսկ Թուրքիան անուղղակի սպառնալիքի աղբյուր են, մինչդեռ մյուս երկու հարևանները թշնամական հարաբերություններ ունեն Հայաստանի ռազմավարական դաշնակցի և կարևորագույն գործընկերոջ հետ, որոնց շահերի բախումը տարածաշրջանում սահմանափակում է ՀՀ-ի հավասարակշռված արտաքին քաղաքականությունը, ինչը վերը նշած կառուցվածքային ու համակարգային գործոնների հրամայականի ներքո ձևավորվել է ՌԴ-ի հետ ենթադաշնակցման շուրջ: Տեսականացման այս փորձի արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ նեոռեալիզմի մեթոդական մոտեցումների կիրառումը հնարավորություն է տալիս վեր հանելու ՀՀ-ի արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը պայմանավորող առավելագույնս վերաբերելի գործոնները:

¹⁹² **European Commission**, Review of the European Neighbourhood Policy, 2015, http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf, էջ 4-5:

¹⁹³ **Furness M., Schäfer I.**, The 2015 European Neighbourhood Policy Review: more realism, less ambition, German Development Institute / Deutsches Institut für Entwicklungspolitik (DIE), 2015:

¹⁹⁴ Council of the European Union, Comprehensive and enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part., 2017, <http://data.consilium.europa.eu/doc/document/ST-12525-2017-ADD-1/en/pdf>, էջ 11-12:

¹⁹⁵ **Novikova G.**, Armenia in a Shifting Security Environment, Spectrum, 2019, <https://spectrum.am/en/article/armenia-in-a-shifting-security-environment/>.

AN ATTEMPT OF THEORIZING THE STRUCTURAL FACTORS INFLUENCING THE RUSSIAN DIRECTION OF ARMENIA'S FOREIGN POLICY AND THE EVOLUTION OF THOSE FACTORS

NAREK SUKIASYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Chair of Political Institutions and Processes, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The goal of the article is to theorize the factors influencing the Russian direction of Armenia's foreign policy through the school of neorealism (structural realism) of International Relations and reveal the effectiveness of such approach in the study of the discussed subject.

This theorizing attempt is applied on a period beginning with the collapse of the Soviet Union up to 2013, which is accompanied by the reconstruction of the factors influencing the Russian direction of Armenia's foreign policy. This attempt identifies the following variables that reflect the transformations of the foreign policy: (A) the threats concerning Armenia's domestic-structural vulnerabilities, (B) regional-systemic, (C) the global-systemic balance of power. The measurement of the selected variables in the period of 1991-2013 allows to conclude that such an attempt of theorization through the application of the theoretical-methodological approaches of neorealism allow to reveal the more relevant factors influencing the Russian direction of Armenia's foreign policy. The selected period also allows tracking the evolution of the selected factors during the tenure of different leaders of Armenia.

Key words: foreign policy, Armenia-Russia relations, neorealism, balance of power, evolution of foreign policy, balance of threat, external balancing.

ПОПЫТКА ТЕОРЕТИЗИРОВАНИЯ СТРУКТУРНЫХ ФАКТОРОВ, ВЛИЯЮЩИХ НА РОССИЙСКОЕ НАПРАВЛЕНИЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ АРМЕНИИ И ИХ ЭВОЛЮЦИЮ

НАРЕК СУКИАСЯН

*аспирант кафедры политических институтов и процессов
факультета международных отношений
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является теоретизирование факторов, влияющих на российское направление внешней политики Армении с помощью школы неореализма (структурного реализма) международных отношений и выявление эффективности такого подхода в изучении рассматриваемой темы.

Данная попытка теоретизирования применяется для периода от распада Советского Союза до 2013 года, который сопровождается реконструкцией факторов, влияющих на российское направление внешней политики Армении. Эта попытка выявляет следующие переменные, отражающие трансформации внешней политики: (А) угрозы, связанные с внутренними структурными уязвимостями Армении, (Б) регионально-системные, (В)

глобально-системный баланс сил. Измерение выбранных переменных в период 1991-2013 гг. позволяет сделать вывод о том, что подобная попытка теоретизирования путем применения теоретико-методологических подходов неореализма позволяет выявить более релевантные факторы, влияющие на российское направление внешней политики Армении. Выбранный период позволяет также проследить эволюцию выбранных факторов в период пребывания у власти различных руководителей Армении.

Ключевые слова: *внешняя политика, армяно-российские отношения, неореализм, баланс сил, эволюция внешней политики, баланс угроз, внешняя балансирование.*

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ»
ԵՐԵՎԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ***

ՉՏԴ 343.1

ԼՈՒՍԻՆԵ ՍՈՒԼԵՅՍԱՆՅԱՆ

ԱՅ Ստեփանակերտ քաղաքի
դատախաչության ավագ դատախաչ,
երկրորդ դասի խորհրդական,
ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
lusine.prosecutor@mail.ru

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Էլեկտրոնային կրիչների վրա առկա տեղեկատվության՝ որպես ապացույցի օգտագործման պրակտիկան քրեական դատավարությունում, համադրել այն գործող իրավական կարգավորումների հետ՝ վեր հանելով առկա անհամապատասխանությունները, ուսումնասիրել «Էլեկտրոնային ապացույցների» կարգավիճակի, դրանց վերաբերյալ առկա իրավական կարգավորումների միջազգային փորձը՝ համեմատելով այն ներազգային օրենսդրության հետ:

Ուսումնասիրության ընթացքում վիճարկվել է Էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող տեղեկատվության՝ որպես ապացույց այլ փաստաթղթի կարգավիճակով օգտագործելու պրակտիկան և բարձրացվել քրեական դատավարությունում որպես ապացույցի առանձին տեսակ՝ «Էլեկտրոնային ապացույցի» նախատեսման խնդիրը:

Աշխատանքի ընթացքում կիրառվել են գիտական ուսումնասիրության ինչպես ընդհանուր՝ դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական, այնպես էլ մասնավոր՝ համեմատաիրավական, ձևական-իրավաբանական մեթոդներ:

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ, թեև գիտնականների շրջանում հարցի լուծման միատեսակ մոտեցում չկա, սակայն նորոշյա գիտատեխնիկական զարգացման պայմաններում դժվար է վիճարկել, որ քրեական դատավարությունում «Էլեկտրոնային ապացույց» հասկացության ներդրումը և դրանց հավաքման, ստուգման, գնահատման նոր իրավական ռեժիմներ սահմանելը կբարձրացնի այդ ապացույցի արժանահավատությունը և օգտագործման հուսանելիության աստիճանը:

Հիմնաբառեր՝ քրեական դատավարություն, թվային ինֆորմացիա, ապացույց, Էլեկտրոնային ապացույց, Էլեկտրոնային փաստաթուղթ, ինֆորմացիայի Էլեկտրոնային կրիչ, իրեղեն ապացույց, այլ փաստաթուղթ, ապացույցի նոր տեսակ:

* Հոդվածը ներկայացվել է 01.09.2020թ., գրախոսվել՝ 14.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

Ներածություն

Արդի ժամանակներում դժվար է թերագնահատել տարբեր էլեկտրոնային սարքավորումներում առկա թվային ինֆորմացիայի դերն ու նշանակությունը պետության ու հասարակության կյանքում: Դրա կիրառելիությունը լայն տարածում է գտել նաև իրավապահ մարմինների, դատական համակարգի ներսում: Անժխտելի փաստ է, որ հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողնում քրեական գործերի քննության վրա, և ինչքան վերջինս համապատասխանում է հասարակական արդի զարգացումներին, այնքան բարձր է գնահատվում որակը: Դրանով պայմանավորված՝ այսօր նախաքննական ու դատական մարմինները քրեական գործերի քննության ընթացքում լայնորեն օգտագործում են տարբեր թվային սարքավորումների (համակարգչային, բջջային սարքեր, հիշողության կրիչներ, թվային տեսագրիչներ) վրա առկա էլեկտրոնային ինֆորմացիան: Սակայն նշված ինֆորմացիայի՝ որպես ապացույցի օգտագործումը պրակտիկայում առաջացնում է որոշ իրավական խնդիրներ:

Էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող տեղեկատվության օգտագործումը քրեական դատավարությունում

ԱՅ քրեական դատավարության 113-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը սպառնիչ կերպով սահմանում է ապացույցների տեսակները: Լ.Վ.Գոլովկոն արդարացիորեն նշում է, որ օրենսդրի կողմից ապացույցների սպառնիչ ցանկ նախատեսելն ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական կողմերը: Նշված սկզբունքը մի կողմից ապահովում է ցանկացած տեսակի անհուսալի և ոչ պիտանի տեղեկատվության բացակայությունը քրեական դատավարությունում, մյուս կողմից կարող է խոչընդոտ հանդիսանալ ապացույցների տեսակների և գիտատեխնիկական առաջընթացի, համակարգչային տեխնիկայի և թվային տեխնոլոգիաների կիրառման ժամանակակից պայմանների համապատասխանեցման գործընթացում¹⁹⁶:

Ապացույցների ցանկի ուսումնասիրությունից դիտվում է, որ հայ քրեական դատավարության իրավունքում որպես ապացույցի առանձին տեսակ բացակայում է էլեկտրոնային ապացույցը, այն բացակայում է նաև ՌԴ, Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության և մի շարք այլ պետությունների օրենսդրություններում¹⁹⁷: Էլեկտրոնային ապացույցների ոլորտին առնչվող մի շարք հասկացություններ մշակվել են Թվային ապացույցների միջազգային կազմակերպության (IOCE) կողմից՝

թվային ապացույց՝ նյութական կրիչներ և ինֆորմացիոն օբյեկտներ (տվյալներ), որոնք պահպանված կամ փոխանցված են բինար ձևով և կարող են օգտագործվել դատարանում,

թվային ապացույցի բնօրինակ՝ ֆիզիկական կրիչներ և առգրավման պահին դրանց հետ կապված ինֆորմացիոն տվյալներ,

¹⁹⁶ Головкин Л.В. Курс уголовного процесса / под ред. д. ю. н., Л.В.Головкин. М.: Статут, 2016. С. 444.

¹⁹⁷ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվ., 2-րդ մաս, ԲՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվ., 2-րդ մաս:

թվային ապացույցի կրկնօրինակ՝ բնօրինակ հանդիսացող ֆիզիկական կրիչներում պարունակվող տվյալների ճշգրիտ թվային վերարտադրություն,

թվային ապացույցի պատճեն՝ տվյալներում պարունակվող տեղեկատվության ճշգրիտ վերարտադրություն՝ անկախ բնօրինակ հանդիսացող կրիչից¹⁹⁸:

Չուզահեռներ անցկացնելով քաղաքացիական ու վարչական դատավարությունների հետ՝ հարկ է նշել, որ ԱՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում թվարկվող գրավոր ապացույցների տակ օրենսդիրը նախատեսում է նաև էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով կամ փաստաթղթերի իսկությունը հաստատելու հնարավորություն ընձեռող այլ եղանակով ստացված ապացույցները, իսկ ԱՅ վարչական դատավարության 43-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը, սահմանելով վարչական դատավարությունում օգտագործվող գրավոր ապացույցների տեսակները, դրանց թվին է դասում նաև էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութերը, եթե առկա է հաղորդակցության իսկությունն ապացուցելու հնարավորություն: Ինչպես տեսնում ենք, վարչական դատավարության օրենսդրությունում էլեկտրոնային կամ կապի այլ միջոցով ստացված նյութերի սկզբնաղբյուր դիտվում է հաղորդակցությունը, իսկ ավելի կոնկրետ՝ էլեկտրոնային հաղորդակցությունը: Նշված ոլորտը հանրապետությունում իրավական կարգավորման է ենթարկվել դեռևս 2006 թվականի դեկտեմբերի 20-ին ընդունված «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքով, որի 2-րդ հոդվածում թեև ուղղակիորեն չի բացահայտվում «էլեկտրոնային հաղորդակցություն» հասկացության իմաստը, սակայն նշված հոդվածի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրա տակ հասկացվում է հաղորդման համակարգի՝ էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, մայրխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, այդ թվում՝ արբանյակային ցանցով, ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով հաղորդվող տեղեկություն:

Չնայած նրան, որ քաղաքացիական դատավարությունում էլեկտրոնային փաստաթղթերը ներառված են գրավոր ապացույցների տակ, դրանց առանձնահատկությունների վերաբերյալ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը որևէ իրավական կարգավորում չի սահմանել: Այսպես, Ա.Գ.Չոհրաբյանն առաջարկում է էլեկտրոնային փաստաթղթերը սահմանել որպես գրավոր ապացույցների առանձին ենթատեսակներ և ենթարկել առանձին, ինքնուրույն իրավական կարգավորման գրավոր ապացույցների քաղաքացիադատավարական կարգավորման շրջանակներում՝ հաշվի առնելով էլեկտրոնային ապացույցների առանձնահատկությունները¹⁹⁹:

ԱՅ բրեական դատավարության օրենսգրքում անձից էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ստացված տվյալների, մասնավորապես ցուցմունքի տեսքով որպես ապացույցի օգտագործման հնարավորություն նախատեսված չէ: Այս առումով պրակտիկայում առաջանում են խնդիրներ՝ կապված քննչական գործողությունների մասնակիցների՝ հանրապետությունից դուրս գտնվելու և վարույթն իրականացնող մարմին ներկայանալու իրավաչափ անհնարիտության հետ: Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում տեսակապի միջոցով վկաներին հարցաքննելու պրակտիկան նորույթ չէ և նշված մեխանիզմն առավելապես կիրառվում է

¹⁹⁸ Международная организация по компьютерным (цифровым) доказательствам (International Organization on Computer Evidence-IOCE), URL: https://ceur.ru/library/spravochnik/katalog_kompanij/item126250/.

¹⁹⁹ **Չոհրաբյան Ա.** «Ապացուցման միջոցների հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում», սեղմագիր, Երևան, 2013, էջ 5:

ԵՄ անդամ պետությունների միջև քրեական գործերով իրավական աջակցություն ցուցաբերելիս²⁰⁰:

Վերադառնալով Էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող ինֆորմացիայի՝ որպես ապացույցի օգտագործմանը՝ հարկ է նշել, որ ԱՅ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածը անդրադառնում է որպես ապացույց օգտագործվող այլ փաստաթղթերին: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները: ՀՀ Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել վերոնշյալ հոդվածը և իրավական դիրքորոշում հայտնել հետևյալի մասին՝ « (...) Փաստորեն ապացույցի այս տեսակն իր մեջ ներառում է տեղեկության (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար»²⁰¹:

Քրեական դատավարությունում չի սահմանվում «Էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը: Նշված եզրույթի իրավական իմաստը բացահայտվում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ԱՅ օրենքում, որի 2-րդ հոդվածում նշվում է, որ էլեկտրոնային փաստաթուղթ է հանդիսանում էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկությունը կամ հաղորդագրությունը: Հարկ է նկատել, որ բովանդակային առումով քրեական դատավարությունում այլ փաստաթղթերի տակ ներառվող «Էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը համապատասխանում է նշված օրենքում տրված հասկացությանը: Այսպես, երկու դեպքում էլ դրա տակ նկատի է առնվում ա) բովանդակություն՝ տեղեկություն, հաղորդագրություն՝ ինֆորմացիա, բ) ձև՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա արված ցանկացած գրառում:

Էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող տեղեկատվության հետազոտումը պրակտիկայում իրականացվում է հետևյալ կերպ՝ համապատասխան մասնագետի, իսկ որոշ դեպքերում նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից ինքնուրույն կատարվում է զննում, որի ընթացքում զննության է ենթարկվում տեղեկատվություն պարունակող նյութական կրիչը, այնուհետև նկարագրվում պարունակվող էլեկտրոնային փաստաթուղթը (ֆայլ) և նշվում, թե քրեական գործի համար նշանակություն ունեցող ինչպիսի տվյալներ կան նշված փաստաթղթում: Անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային կրիչների վրա առկա տեղեկատվության վերականգնման, հետազոտության, վերծանման նպատակով նշանակվում է համակարգչատեխնիկական փորձաքննություն:

ԱՅ քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրոնային կրիչները, որոնք պարունակում են քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալներ, քննիչի որոշմամբ որպես ապացույց ճանաչվում են այլ փաստաթուղթ և կցվում քրեական գործի նյութերին: Ուսումնասիրված թիվ 141...18 (քրեական գործի համարը ներկայացված է ոչ ամբողջական) քրեական գործով քննիչի կողմից որոշում է կայացվել այլ փաստաթուղթը ապացույց ճանաչելու մասին, որով հաշվի առնելով, որ համապատասխան հաստատություններից ստացված լազերային

²⁰⁰ Քրեական դատավարությունում տեսակապի միջոցով ստացված տվյալների օգտագործման վերաբերյալ թեմայով նպատակահարմար է հանդես գալ առանձին աշխատությամբ՝ հաշվի առնելով հատկապես 03.06.2020թ-ին ՀՀ քր.դատ.օր-ում կատարված լրացումները՝ 209.1 և 209.2 հոդվածների տեսքով, որոնցով կարգավորվել են տեսակապի միջոցով, այդ թվում նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող վկայի և տուժողի հարցաքննության առանձնահատկությունները:

²⁰¹ Վլեքսեյ Սարգսի Մկրտչյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԿԲ-01/09 առ 17.02.2009 թվականի որոշում, 25-րդ կետ:

սկավառապատերն իրենց մեջ պարունակում են հեռախոսահամարների ելքային ու մուտքային հեռախոսազանգերի, «ՍՄՍ» հաղորդագրությունների վերծանումների և սպասարկող ակտիվների (բիլինգի) տվյալներ, այլ փաստաթուղթ հանդիսացող լազերային սկավառապատերը ճանաչվել են որպես ապացույց:

Գործող պրակտիկան համադրելով այլ փաստաթղթերի իրավական ռեժիմը սահմանող քրեադատավարական նորմի հետ՝ պետք է նշել, որ օրենսդիրը այլ փաստաթուղթ է դիտում թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառումը, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները, և որը կարող է պահպանվել թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա: Փաստորեն պրակտիկայում այլ փաստաթուղթ է դիտվում ոչ թե տվյալը՝ քննարկվող դեպքում հեռախոսահամարների ելքային ու մուտքային հեռախոսազանգերի, «ՍՄՍ» հաղորդագրությունների վերծանումների և սպասարկող ակտիվների (բիլինգի) տվյալները (էլեկտրոնային փաստաթուղթ, ֆայլ), այլ կրիչը՝ լազերային սկավառակը, որի վրա պահպանված են այդ տվյալները: Այս առումով տարակարծությունների տեղիք է տալիս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-01/09 առ 17.02.2009 թվականի որոշմամբ տրված դիրքորոշումն այն մասով, որով այլ փաստաթղթերի տակ հասկացվում է (ինֆորմացիայի) նյութական կրողների բոլոր տեսակները, եթե այն նշանակություն ունի ապացուցման ենթակա հանգամանքները պարզելու համար:

«Էլեկտրոնային ապացույցների» հավաքման, ստուգման, գնահատման ընթացքում առաջացող իրավական խնդիրները, դրանց վերաբերյալ ՌԴ օրենսդրությամբ տրված լուծումները

Ժամանակակից տեխնիկական զերգարգացման պայմաններում էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող տեղեկատվության՝ որպես ապացույցի հավաքման, ստուգման, գնահատման գործընթացում առաջանում են տարբեր իրավական խնդիրներ՝ կապված մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հետ:

Քիչ չեն այն դեպքերը, երբ քրեական գործի շրջանակներում անձի մոտ հայտնաբերվում է էլեկտրոնային սարքավորում, որում կարող է պարունակվել քննությանն անհրաժեշտ տեղեկատվություն: Այսպես, անձին ձերբակալելիս անձնական խուզարկություն կատարելու համար վարույթն իրականացնող մարմնին անհրաժեշտ չէ որևէ թույլտվություն, սակայն խուզարկության ժամանակ հայտնաբերված բջջային հեռախոսի կամ անձնական համակարգչի ստուգումը կարող է անմիջականորեն խախտել ԱՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով և ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձի՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Բացի այդ, հաճախ էլեկտրոնային կրիչների ստուգումը պայմանավորված է «թարմ հետքերով» հանցագործությունը բացահայտելու անհրաժեշտությամբ: Այս առումով ՌԴ քրեական դատավարությունում կատարվել են որոշակի փոփոխություններ, որոնք միտված են նշված ոլորտում անձի իրավունքների պաշտպանությանը: Նշված փոփոխությունների արդյունքում քրեական դատավարություն է մտցվել «ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչ» հասկացությունը: Սահմանվել է, որ մինչդատական վարույթի ընթացքում առգրավված և իրեղեն ապացույց չճանաչված առարկաները, այդ թվում նաև ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչները ենթակա են վերադարձման այն անձանց, որոնցից դրանք առգրավվել են²⁰²: Հատկանշական է, որ նախքան փոփոխություն կատարելը սահմանվում էր միայն առգրավված և իրեղեն ապացույց չճանաչված առարկաների վերադարձման մասին:

²⁰² ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդված, 4-րդ մաս:

Այսինքն՝ կատարված փոփոխությամբ օրենսդիրն այլ առարկաներից սահմանազատել է ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչները: ՌԴ օրենսդիրը հստակ կարգավորման է եկաթարկել նաև այն դեպքերը, երբ անհետաձգելի քննչական գործողություններից հետո անհնար է Նշված կրիչները վերադարձնել օրինական տիրապետողին՝ սահմանելով, որ Նշված դեպքերում կրիչներում պարունակվող ինֆորմացիան պատճենահանվում է դրանց օրինական տիրապետողների կամ ինֆորմացիայի սեփականատիրոջ միջնորդությամբ: Նշված պատճենահանումը կատարվում է էլեկտրոնային կրիչների օրինական տիրապետողի և (կամ) դրանց վրա պարունակվող ինֆորմացիայի սեփականատիրոջ ու մասնագետի, ընթերակաների մասնակցությամբ՝ ապահովելով այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն ինֆորմացիայի կորուստը կամ փոփոխությունը: Ինֆորմացիայի պատճենը կրող էլեկտրոնային կրիչների հանձնումը օրինական տիրապետողի և (կամ) դրանց վրա պարունակվող ինֆորմացիայի սեփականատիրոջը հավաստվում է համապատասխան արձանագրության կազմամբ: Պատճենահանման ընթացակարգը համադրվել է նաև քննության շահի հետ և սահմանվել է, որ ինֆորմացիայի պատճենահանումն արգելվում է, եթե դա կարող է խոչընդոտել հանցագործության բացահայտմանը²⁰³:

Ավելին, 2016 թվականին կատարված փոփոխությամբ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել է լրացում, և օրենսգրքի 81.1 հոդվածով տնտեսական հանցագործություններով ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչներին տրվել է իրեղեն ապացույցների կարգավիճակ:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների ընդհանրական իրավական վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևյալին՝

- չնայած իրեղեն ապացույցների շարքում օրենսդիրը չի առանձնացնում ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչները, սակայն Նշում է, որ առգրավված և իրեղեն ապացույցներ չճանաչված առարկաները, այդ թվում նաև էլեկտրոնային կրիչները միևնույն կարգով իրեղեն ապացույց չճանաչվելու դեպքում ենթակա են վերադարձման, այսինքն՝ անհրաժեշտության դեպքում դրանք հանդես են գալիս որպես իրեղեն ապացույցներ,

- իրեղեն ապացույցների պահպանման կարգը որոշող հոդվածում հստակ կարգավորվում են ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչների պահպանման, պատճենահանման, վերադարձման գործընթացները, որոնց հիմքում մեծ մասամբ դրված են այդ ինֆորմացիայի արժանահավատությունը որոշող IOCE-ի կողմից մշակված սկզբունքները՝

ա. թվային ապացույցների հետ աշխատելիս պետք է պահպանվեն ընդհանուր դատափորձագիտական և դատավարական դրույթները,

բ. թվային ապացույցների առգրավմանն ուղղված գործողություններ կատարելիս չպետք է այդ ապացույցը ենթարկվի փոփոխությունների,

գ. բնօրինակ թվային ապացույցի հետ աշխատելու թույլտվություն ունեցող անձը պետք է ունենա համապատասխան պատրաստվածություն,

դ. թվային ապացույցների առգրավման, պահպանման, փոխանցման գործողությունները պետք է լրիվությամբ արտացոլվեն փաստաթղթերում, պահպանվեն և վերլուծության ենթարկվեն,

ե. անձը պարտավոր է իր տնօրինման տակ գտնվող թվային ապացույցների հետ կապված գործողություններ կատարելիս պահպանի զգուշություն,

²⁰³ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդված:

գ. թվային ապացույցների առգրավման, պահպանման, փոխանցման համար պատասխանատվություն կրող յուրաքանչյուր կազմակերպությունն ապահովում է վերոգրյալ կանոնների պահպանումը²⁰⁴,

- օրենսդրությամբ առանձնացվում է տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների խումբ, որոնցով ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչներին տրվում է իրեղեն ապացույցների կարգավիճակ, կարգավորվում են նաև նշված գործերով քննչական գործողություններ կատարելիս այդ կրիչների առգրավման և դրանց վրա պարունակվող ինֆորմացիայի պատճենահանման առանձնահատկությունները:

Դժվար չէ նկատել, որ թեև օրենսդիրն էլեկտրոնային կրիչն ուղղակիորեն չի դասել իրեղեն ապացույցների շարքին, սակայն դրա վերաբերյալ դատավարական կարգավորումները ներառել է իրեղեն ապացույցների վերաբերյալ հոդվածներում:

Էլեկտրոնային կրիչները որպես իրեղեն ապացույցի տեսակ

Էլեկտրոնային կրիչներին իրեղեն ապացույցի կարգավիճակ տալը ևս վիճահարույց է: ԱՅ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրեղեն ապացույցներ են այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել կամ հանցավոր գործողությունների օբյեկտներ են եղել, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամը, այլ արժեքները և մյուս բոլոր առարկաները, որոնք կարող են հանցագործությունը հայտնաբերելու, գործի փաստական հանգամանքները պարզելու, մեղավորներին ի հայտ բերելու, մեղադրանքը հերքելու կամ պատասխանատվությունը մեղմացնելու միջոցներ ծառայել: Ինչպես տեսնում ենք, իրեղեն ապացույցի հասկացությունը սահմանելիս օգտագործվում է «առարկա» եզրույթը, ինչի տակ լեզվաբանորեն հասկացվում է ինքնուրույն գոյություն ունեցող իր²⁰⁵:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ԱՅ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային կրիչի տակ հասկացվում է մազնիսական սկավառակ, մազնիսական ժապավեն, լազերային սկավառակ, կիսահաղորդչային և այլ նյութական կրիչներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կամ այլ տեխնիկական միջոցներով տեղեկատվության գրանցման և պահպանման համար:

Եթե մի դեպքում էլեկտրոնային կրիչները կարող են իրենց վրա օբյեկտիվորեն, անկախ մարդու կամքից կրել, պահպանել հանցագործության հետքեր կամ ինքնին հանդիսանալ հանցավոր գործողությունների օբյեկտներ (իրեղեն ապացույց), ապա մի այլ դեպքում դրանք կարող են օգտագործվել որպես տեղեկատվության գրանցման և պահպանման օբյեկտ և առանց այդ տեղեկատվության նշված կրիչները վարույթն իրականացնող մարմնի համար ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում: Ընդ որում, նշված տեղեկատվությունը մշակվում, գրանցվում, պահպանվում է սուբյեկտիվ կամահայտնությամբ արձակված ալգորիթմներով: Նկարագրված վերջին դեպքերի առկայությունն է հենց մատնանշում, որ իրեղեն ապացույցներ և «էլեկտրոնային ապացույցներ» հասկացությունները դատավարական իմաստով չեն կարող նույնանալ: Հենց այս տրամաբանությամբ է ՌԴ քրեական դատավարության օրենսդրության մեջ կատարվել համապատասխան փոփոխություններ. նախ էլեկտրոնային կրիչները ընդհանուր առմամբ չեն դասվել իրեղեն ապացույցների շարքին, միևնույն ժամանակ

²⁰⁴ Международная организация по компьютерным (цифровым) доказательствам (International Organization on Computer Evidence-IOCE), URL: https://ceur.ru/library/spravochnik/katalog_kompanij/item126250/.

²⁰⁵ Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 121:

օրենսդիրն ամրագրել է այդ առարկաների հետ կապված քննչական գործողությունների կատարման առանձին կարգ՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ գիտության մեջ դեռևս վիճելի է մնում քրեական դատավարությունում նոր՝ «Էլեկտրոնային ապացույցի» տեսակ սահմանելու հարցը: Արդյո՞ք էլեկտրոնային ապացույցներն ունեն այնպիսի յուրահատկություններ, որոնց շնորհիվ կարող են հանդիսանալ առանձին ապացույցի տեսակ և ունենալ հետազոտման այլ իրավական կարգավորում: Պ.Ս.Պաստուխովայի կարծիքով՝ անհրաժեշտություն չկա սահմանելու նոր ապացույցի տեսակ («Էլեկտրոնային ապացույց») կամ ապացույցի նոր աղբյուր («ինֆորմացիայի էլեկտրոնային կրիչ»), այլ անհրաժեշտ է միայն հստակեցնել ապացույց հասկացությունը՝ նշելով, որ տեղեկությունները կարող են լինել էլեկտրոնային ինֆորմացիայի տեսքով, որն իր հերթին կարող է ընդունվել որպես կամ իրեղեն ապացույց, կամ փաստաթուղթ²⁰⁶: Քրեական գործի լուծման համար նշանակություն ունեցող տվյալներ պարունակող էլեկտրոնային կրիչները իրեղեն ապացույց դիտելուն դեմ է Ռ.Ի.Օկոնենկոն, որ արդարացիորեն նշում է, որ էլեկտրոնային ապացույցների ամենաբնութագրիչ հատկանիշն այն է, որ դրանք ստեղծվում են ոչ միայն ֆիզիկական օրինաչափությունների միջոցով, այլ նաև համաձայն ծրագիր մշակողի կողմից արձակված ալգորիթմների²⁰⁷: Պ.Գ.Մարֆիցինը, անդրադառնալով նշված հարցին, առաջարկում է «Էլեկտրոնայինությունը» դիտել որպես ապացույցի այլ տեսակների հատկանիշ, այսինքն՝ դիտարկել որպես ձև, և նշված դեպքում վերանում է «Էլեկտրոնային ապացույց»-ի առանձնացման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ նրա եզրահանգումները վերջնական չեն, և նա ևս գտնում է, որ նշված հարցը ենթակա է մշակման²⁰⁸:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ քրեական դատավարության օրենսդրությունում ապացույցների ավանդական տեսակների շարքի լրացումը և, որպես ապացույցի առանձին տեսակ, էլեկտրոնային ապացույցի նախատեսման հարցը մնում է վիճահարույց, և դժվար է այսօր միանշանակ պնդել, որ դրա նախատեսումը պարտադիր է՝ հատկապես հաշվի առնելով այն, որ այդ դեպքում հանցագործությունները բացահայտելու, քրեական գործերի քննության ընթացքում կապահանջվի լրացուցիչ տեխնիկական հագեցվածություն: Միևնույն ժամանակ գործող օրենսդրությանը համահունչ քննչական ու դատական պրակտիկայի ադապտացումն էլեկտրոնային կրիչների վրա պարունակվող տեղեկատվությունը որպես ապացույց այլ փաստաթղթերի տակ ներառելու պրակտիկան իր հերթին կարող է հանգեցնել իրավական խնդիրների՝ կապված հաղորդակցության ազատության ու գաղտնիության սահմանադրական իրավունքի խախտման վտանգի, ինչպես նաև տեղեկատվության՝ որպես ապացույցի հավաքման, ստուգման, գնահատման գործընթացների հստակ իրավական կարգավորումների բացակայության հետ: Եվ եթե նույնիսկ համաձայնենք, որ էլեկտրոնային կրիչների վրա առկա տեղեկությունները կարող են այլ փաստաթղթի կարգավիճակով որպես ապացույց օգտագործվել քրեական դատավարությունում, ապա

²⁰⁶ Пастухов П.С. О развитии уголовно-процессуального доказывания с использованием электронных доказательств // СПС «Консультант Плюс».

²⁰⁷ Оконенко Р.И. «Электронные доказательства» и проблемы обеспечения прав граждан на защиту тайны личной жизни в уголовном процессе: сравнительный анализ законодательства Соединенных Штатов Америки и Российской Федерации: дис. ...канд.юрид.наук. М., 2016, С. 27.

²⁰⁸ Марфицин П.Г. Некоторые подходы к формулированию понятия «электронное доказательство» в уголовном судопроизводстве// Вестник Нижегородской академии МВД России- 2017.- № 3 (39).

միանշանակ կարելի է պնդել, որ դրանց հավաքման, ստուգման, գնահատման գործընթացում հարկ է մտցնել որոշակիություն՝ նկատի ունենալով առաջին հերթին անձի իրավունքների (հաղորդակցության ազատության և գաղտնիության, մտավոր սեփականության և այլ իրավունքներ) խախտման վտանգի հավանականությունը և դրանցով պայմանավորված՝ որպես ապացույց՝ այդ տեղեկատվության հետագա օգտագործման թույլատրելիության հարցը:

«ELECTRONIC EVIDENCE» IN THE CRIMINAL PROCEDURE

LUSINE SULEYMANYAN

*Stepanakert City Prosecutor's Office of the Republic of Artsakh,
Senior Prosecutor, second class counselor,
Stepanakert, Republic of Artsakh*

The aim of the article is to study the practice of using information on the electronic devices as evidence in the criminal procedure and to compare it with the existing legal regulations, as well as to identify inconsistencies. The international experience of the topic under discussion, the status of “electronic evidence” and legal regulations, comparing it with the domestic legislation were studied.

In the course of the study, both scientific (dialectical, logical, analytical) and special (comparative-legal, formal-judicial) methods were applied.

In the work, the practice of using information on electronic media as evidence in the form of another document is disputed, and the question of providing "electronic evidence" as a separate type of evidence is raised. The conclusion was drawn that there isn't any common approach among scientists to deal with the issue, but in terms of modern scientific and technical development it is difficult to dispute that the introduction of the concept of "electronic evidence" in criminal proceedings and the establishment of a new legal regime will increase the accuracy and reliability of the evidence.

Key words: criminal procedure, digital information, evidence, electronic evidence, electronic document, information on the electronic device, material evidence, other document, new type of evidence.

«ЭЛЕКТРОННЫЕ ДОКАЗАТЕЛЬСТВА» В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

ЛУСИНЕ СУЛЕЙМАНЯН

*старший прокурор прокуратуры города Степанакерт,
советник второго класса,
г. Степанакерт, Республика Арцах*

Цель статьи – изучение практики использования информации на электронных носителях в качестве доказательств в уголовном судопроизводстве, сравнение ее с действующими правовыми нормами, выявление существующих несоответствий, изучение

международного опыта о статусе «электронных доказательств» и правового регулирования, сравнение его с национальным законодательством.

В ходе исследования были применены как общие методы научного познания (диалектический, логический, исследовательский), так и специальные (формально-юридический, сравнительно-правовые методы).

В работе оспаривается практика использования информации на электронных носителях как доказательства в виде иного документа и поднимается вопрос о предоставлении «электронных доказательств» как отдельного вида доказательств. В результате исследования мы приходим к выводу о том, что единого подхода у ученых в плане решения проблемы нет, но в условиях современного научно-технического прогресса трудно оспаривать, что внедрение понятия «электронные доказательства» в уголовное судопроизводство и установление нового правового режима повысит степень достоверности и надежности использования этих доказательств.

Ключевые слова: *цифровая информация, доказательство, «электронное доказательство», электронный документ, электронный носитель информации, вещественное доказательство, иной документ, новый вид доказательства.*



**ՊԱՐՍԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐՎԱՆԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ (ԺԸ. ԴԱՐ)* 209**

ՀՏԴ 908

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

*Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական
ինստիտուտ-Մատենադարանի ավագ գիտաշխատող,
Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hasmik.kirakosian@ysu.am*

*Հոդվածում քննության է առնվել ԺԸ. դարում Շիրվանի հայ բնակչության
շրջանում պարսկերենի տարածվածության խնդիրները և դրա կիրառական
նշանակությունը: Նպատակն է բացահայտել տարածաշրջանում
տեղահանությունների և իսլամի պարտադրման պայմաններում հայերի կողմից
պարսկերենի յուրացման գործընթացը և առաջացած երկլեզվակրության
արդյունքերը: Առաջադրվել են շիրվանահայերի շրջանում պարսկերենի իմացության,
ժամանակի մեջ դրա տարբերակների դրսևորման ու գործառնական նշանակության
խնդիրները: Կիրառվել է հանրալեզվաբանության մեթոդաբանությունը:*

*Հոդվածի հիմնական եզրահանգումներն են. շիրվանահայերը մշակութային
պարսկականացման շրջանակներում բացի հայերենից տիրապետել են պարսկերենի
բանավոր՝ խոսակցական ու գրական տարբերակներին: Բանավոր խոսակցական
տարբերակին տիրապետելը պայմանավորված է եղել հարևան պարսկախոսների
հետ շփման անհրաժեշտությամբ: Գրական պարսկերենի կիրառական
նշանակությունը հայերի շրջանում պահպանվել է մինչև ԺԸ դարի վերջ, որի մասին
վկայող աղբյուրներ են Երևանի Մատենադարանի հայերեն ձեռագրաֆոնդի
հայատառ պարսկերեն Ավետարանի Հ^մ 8492 և Հ^մ 3044 ձեռագրերը:*

*Հիմնաբառեր՝ Շիրվան, հայ բնակչություն, պարսկախոս, երկլեզվություն, միջերևիկ
շփման լեզու, մահմեդականացում հայատառ, ձեռագիր, Ավետարան:*

Լեոն «Մշակ» թերթում հրապարակած «Շամախի» հոդվածում գրում է. «Հայերը
Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը
պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը

* Հոդվածը ներկայացվել է 20.07.2020թ., գրախոսվել՝ 10.08.2020թ., տպագրության
ընդունվել՝ 22.12.2020թ.:
209 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական
աջակցությամբ՝ 18T-6F376 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական և քաղաքական խիստ ազդեցութեան տակ»²¹⁰:

Միջնադարում երկրամասի հայաբնակ շեների թիվը հասել է ավելի քան 200-ի, որոնք կորուստներով դիմացել են մինչև ԺԸ դարի առաջին քառորդը²¹¹:

Ընդհանուր տեղեկություններ: Ժ-ԺԶ. դարերում Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծովն ընկած երկրամասը, որը սկզբնաղբյուրներում առավելապես հայտնի էր Շիրվան անունով²¹², եղել է մշակութապես պարսկականացված Շիրվանշահերի իշխանության և նրանց պաշտոնական լեզու հանդիսացող պարսկերենի գերակայության տարածքը²¹³: Այդ ժամանակաշրջանում պարսկական մշակույթը և պարսկերենը խաղաղ համակեցության մեջ են եղել բնիկ ժողովուրդների, այդ թվում՝ հայերի լեզվի և մշակույթի հետ: Այդ ընթացքում և այդ տարածքում նոր պարսկերենին զուգահեռ ստեղծվել են նաև դրա բանավոր տեղական տարբերակները: 1538 թվականին Շիրվանում Սեֆյանները հաստատել են իրենց իշխանությունը, որն իրականացրել են թյուրքախոս ղալբալների միջոցով: Ստեղծվել է սեֆյանահպատակ Շիրվանի բեկլարբեկությունը²¹⁴: Իրանական ներկայությունը Շիրվանում սասանվել է հատկապես Սեֆյանների անկումով, իսկ այդ դարաշրջանում տեղի ունեցող լեզվական ու կրոնական գործընթացները, տեղահանությունները կարևոր նշանակություն են ունեցել երկրամասի ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հետագա ճակատագրի համար: Սույն հոդվածում քննության կառնենք ԺԸ. դարում Շիրվանի հայ բնակչության շրջանում պարսկերենի տարածվածության խնդիրը, դրա կիրառական նշանակությունը և հետևանքները:

ԺԸ. դարասկզբին Սեֆյանների իշխանությունն անկում է ապրում և Շիրվանում ու Շաքիում այդ դարի 20-ական թվականներին հաստատվում են դադեստանյան լեռնականները՝ Յաջի Դաուդ Բեկի և Սուրխայի խանի գլխավորությամբ: Ընդ որում, տարածքում սկսվում է սունի-շիայական հակամարտություն:

Դաուդ բեկը զբաղված էր կողոպուտով ու հարձակումներով, իսկ 1719 թվականից արգելել էր շիրվանյան ճանապարհներից օգտվել՝ առևտուր անելու համար²¹⁵, պայթարում էր ռուսական ազդեցության տարածման և օսմանցիների առաջխաղացման դեմ: 1712-1722 թվականների ընթացքում լեզգիների ասպատակությունների արդյունքում Շամախի, Շաքի, Արցախ, Գանձակ գավառներում տեղի է ունենում տեղաբնիկ հայերի գերեվարություն: Ինչպես նշում է Մակար Բարխուտարեանցը, այսչափ սպանություններն ու գերեվարությունները «դատարկում են խոճալի Աղուանից երկիրն»²¹⁶:

Լեզգիներին Շամախիից դուրս քշելու գործում կարևոր դերակատարություն ունեցավ պարսից Նադիր շահը: Նա Մուղանի վրայով շարժվում է դեպի Շամախի՝ Նպատակադրվելով ավերել այն: Շամախիի մոտ Նադիրի բանակի երևալը ստիպում է, որ

²¹⁰ Տե՛ս, **Լեո**, «Շամախի», *Մշակ*, Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28

²¹¹ Տե՛ս **Կարապետյան Ս.**, «Շամախու գավառի գյուղերի պատմությունից», *ԼՅԳ* 2, Երևան, 1989, էջ 57:

²¹² Տե՛ս **Минорский В.**, *История Ширвана и Дербенда X-XI вв.*, Москва, 1963, С. 85, 106-119.

²¹³ Շիրվանշահերի մասին տե՛ս **Bosworth** C. E., *Šervānšāhs*, *EI*, <http://www.iranicaonline.org/articles/servansahs>, վերջին այց՝ 11.05.2020:

²¹⁴ 1846 թվականի վերջերից երկրամասը կոչվել է *Շամախու*, իսկ 1859 թվականի վերջերի՝ *Բաքվի* նահանգ անուններով, տե՛ս **Ստեփանյան Գ.**, «Գանձակ-Ելիզատավետալոյի նահանի Նուփի և Արեշ գավառների ու Բաքվի նահանգի հայ բնակչության պատմաժողովրդագրական համառոտ ակնարկ (XIX դարի երկրորդ կես-XX սկիզբ)», *Արևելագիտության հայեր* հ^տ 9, 2015, էջ 219:

²¹⁵ Տե՛ս **Б у т к о в П. Г.**, *Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 гг.*, Ч. 1, СПб., 1869, С. 3-4.

²¹⁶ Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, *Աղուանից երկիր և դրացիք: Արցախ: Խմբ. տ. Մետրոպ քին. Արամեան, Երեւան, Գանձասար, 1999, էջ 56:*

քաղաքի բնակչության կեսը կազմող թաթարները (ռուսական աղքյուրներում այսպես էին կոչվում էթնիկ թյուրքական ցեղերը) փախչեն լեզգիների բնակեցրած լեռները: Հայերն ու եվրոպացիները մտում են քաղաքում և պատրաստ էին ընդունել իրանցիներին: Նադիրը մտնում է Շամախի: Նա ձերբակալում ու կոտորում է քաղաքում գտնվող փոքրաքանակ թուրքերին: Շահն ուզում էր լեզգիներին հետապնդել մինչև իրենց վերջին հանգրվանը, սակայն լեռնանցքներով ու ոլորապտույտ ճանապարհներով լի լեռնաշղթայում նրանց հետապնդելն անհնարին էր, ճանապարհները հայտնի էին միայն տեղի բնակիչներին: Նա վրեժի ծարավը բավարարում է մի շարք գյուղեր այրելով, դաշտավայրի բնակավայրերն ասպատակելով: Այդ արշավանքից հետո նա իր բանակով շարժվեց դեպի Գանձակ, որը լքեց երկու ամիս պաշարելուց հետո²¹⁷: Սակայն լեզգիներին ամբողջությամբ դուրս քշել հնարավոր չեղավ, նույն կարգի վայրագություններ նրանք արեցին Գանձակում՝ 1753 թվականին: Շամախին կործանելուց հետո Նադիր շահը 700000 գերի՝ հայեր, վրացիներ, տեղափոխել է Իրան²¹⁸: Լեզգիական ճնշումների մասին է խոսում նաև Յովսեփ Արքեպիսկոպոս Արղուբեանի նամակը՝ ուղղված ռուսական հրամանատարությանը, որով նա խնդրում է նրանց ճնշումներից պաշտպանել Մուշկուրի նահանգի Խաչմաս, Ղարաջալու, Մեծ և Փոքր Պարախում, Զիվար, Ղարաղուրթլու և Ազատոլլի, ինչպես նաև Դերբենդ նահանգի Մուլա-խալիլ և Նուզդի գյուղերը²¹⁹:

Սեֆյաններից հետո արևելյան Այսրկովկասը դարձավ ռուսների, օսմանցիների, լեզգիների և իրանցիների՝ փոփոխվող ուժային ազդեցության գոտի, սակայն անջնջելի էին երկրամասում պարսկական մշակույթի ու պարսկերենի, պարսկական ներկայության հետքերը՝ «Պարսիկներն թողած են պարսիկ ժողովուրդ, որք բնակում են թե՛ բոլոր քաղաքներում եւ թե՛ դաշտային գավառներում»²²⁰:

1723 թվականին, երբ ռուսները հաստատվեցին Բաքվում, քաղաքում ապրում էին հիմնականում ղզլբաշներ կամ պարսկական զինվորներ²²¹, որոնք աշխատավարձ էին ստանում: Բաքվի մերձակա գյուղերը դատարկ էին Շամախիում տեղի ունեցող վայրագությունների պատճառով²²²: Մինչդեռ ժԹ. դարի վկայությունները Բաքվի հայության մասին ցույց են տալիս, որ Բաքուն երբեք չի դատարկվել հայերից (մինչև Ի. դարի վերջի իրադարձությունները) և ունեցել է սովոր հայ բնիկ բնակչություն: Այսպես, Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցը նշում է, որ ժԹ. դարի վերջին Բաքվում առաջնորդական պաշտոնն իրականացնելով մի քանի եկեղեցական ու դպրոցական կարևոր գործեր է արել՝ մասնավորապես ծխաբաժանության գործն իրականացնելով, երրորդ եկեղեցու շինարարության գործն իրականացնելով, և ամենամեծ խնդիրը, որ կարևոր էր Էջմիածնի մայր աթոռի համար, արդյունաբեր կալված է հայթայթել Բաքվի

²¹⁷ Տե՛ս **Չուլայան Մ.**, *Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների*, Երևան-ՀԳԱ հրատ., 1990, էջ 215-216:

²¹⁸ Տե՛ս **Սակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 56:

²¹⁹ Տե՛ս **Յակոբեան Ա.**, «Հայ-թաթարի տարաբաշխուսձույթեան ու տեղահանութիւնների պատմութիւնից (ԺԸ. դարի սկիզբ – ժԹ. դարի վերջ)», *Հայկապետն Հայագիտական Հանդես*, հ. ԻԱ., Պեյրուզ 2001, էջ 128:

²²⁰ Տե՛ս **Սակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 149:

²²¹ Վերջիններս թյուրքախոս էին և թյուրքախոսության տարածումը Կապադակի մի շարք հայկական գյուղերում (*Միրզաբեկլու, Չորլու, Սուլթան-Նուխի* և այլն) բացատրվում է նաև այդտեղ ղզլբաշների հաստատմամբ: Ընդ որում, ինչպես նշում է Սամվել Կարապետյանը, ինչը վկայում են նաև այդ գյուղերի հայկական գերեզմանոցների տապանաքարերի վիմագրությունները, թյուրքախոսության պայմաններում ևս այս գյուղերում գրված տապանաքարերը հայերեն են եղել, տե՛ս **Կարապետյան Ս.**, «Պատմական Հայաստանի Կապադակ գավառի թրքախոս հայկական գյուղերը», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 3^դ 4, 1988, էջ 50:

²²² Տե՛ս **Б у т к о в П. Г.**, Укз. соч., С. 46.

մեջ²²³: Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատանցի այս հիշատակությունը խոսում է այն մասին, որ Բաբվի հայ բնակչությունը երբեք չի թողել իր բնակավայրը և Նույնիսկ նշված ժամակահատվածում Նոր եկեղեցի կառուցելու պահանջ է ունեցել:

Շիրվանի կենտրոն Շամախիի Սաղիան գյուղի ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը կառուցվել էր 1660 թվականին, իսկ բնակչության զգալի մասը գաղթել էր Սպահանից²²⁴: Սաղիանի վանքի նորոգման համար Սիմեոն կաթողիկոսը 1768 թվականին հղեց կոնդակ, որտեղ կաթողիկոսը նշում է բոլոր հայաբնակ Աղուանից տները. «յևստուածախնամ քաղաքդ Գեանճայ, և ի համայն վիճակս դորին. ի բոլոր երկիրդ համաայու, և Շուշու, և յամենայն նահանգս և ի Գիւղօրայս դորին... ի Շամախի և յամենայն գաւառս դորին, ի Շաքի, ի Նուխի, և յայլ շրջակա գաւառս դոցին՝ ի բոլոր երկիր Շիրուանու: Այլ և ի Բագու, և ի Դարբանդ և յամենայն շրջակա գաւառս և ի գիւղօրայս դեցին՝ ի Տիրապահ և յևստուածախնամ քաղաքդ Յաշտարխան, և ի Ղլլար, և ի բոլոր երկիրդ Գիլանու...»²²⁵: Այս տարածքների հայ բնակչության հիշատակումը Սիմեոն կաթողիկոսի կողմից կարևոր կռիվն է, որ ԺԸ. դարի երկրորդ կեսին հայ բնակչությունը, ապրելով այս տարածքներում, հայապահպանության խնդիր ուներ. հրատապ էին եկեղեցաշինությունը, դպրանոցների բացման և գործարկման խնդիրները: Իսկ 1796 թվականին սպասվող ռուսական արշավանքի կապակցությամբ դեպի Այսրկովկաս Յովսեփ Արքեպիսկոպոս Արղուբանը Մուշկուրի և Դերբենդի ինը հայկական գյուղերի անունից դիմում է ռուսական հրամանատարությանը և օգնություն ակնկալում դեռևս 1792 թվականից Ռուսաստանին հավատարմություն հայտնած այդ գյուղերի համար²²⁶: Այս իրադարձությունները, իհարկե, ճակատագրական էին հյուսիս-արևելյան Այսրկովկասի բնակչության համար, որոնք թողնում էին իրենց բնակավայրերը՝ Յյուսիսային Կովկասում հաստատվելու համար, սակայն նաև կարևոր կռիվներ էին հայաբնակ գյուղերի գոյության մասին:

ԺԸ. դարում Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության համար տեղահանությունների հետ մեկտեղ տեղի էր ունենում (նաև՝ տեղի էր ունեցել) լեզվական ինքնության փոփոխման գործընթաց՝ երկլեզվության և երբեմն նաև եռալեզվության երևույթներ, որոնք ուղեկցվում էին նաև մահմեդկանացման շարունակական գործընթացով:

1. Զրիստոնեա-մուսուլմանական հարաբերությունները և մահմեդականացման քարոզչության գործընթացը

ԺԸ. դարի սկզբին հայերի նկատմամբ իրանական իշխանությունների գործադրած հալածանքների մասին հիշատակել են եվրոպացի ճանապարհորդ-հեղինակներն ու կաթոլիկ քարոզիչները: «Անհավատները,— գրում է ճիզվիտ մի միսիոներ,— հայերի նկատմամբ գործադրում են դաժան իշխանություն: Նրանց ծանրաբեռնում են զանազան տուրքերով ու հարկերով և դրանք հավաքում բռնությամբ»: 1698 թվականին Ղազվին ճանապարհորդած ֆրանսիացի հիսուսյան ժան-Բատիստ դը լա Մազը (1624-1709 թթ.), անդրադառնալով Թավրիզի հայության իրավական վիճակին, նշում է, որ «...հայ քրիստոնյաները խիստ ճնշումների են ենթարկվում, հայերին մյուսներից լավ տարբերելու համար հրամայված է, որ իրենց

²²³ Տե՛ս Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի և միւս վանօրէից եւ ուղտատեղեայ, եւս եւ քաղաքացւս եւ գիւղերօրէից որբ'ի Շամախոյ թեմի (Սկսեալ 'ի 1887 ամե գ-1895 ամս)*, Տիփիսի, Տպարան Մովսէս Վարդանեանցի, 1896, էջ 78-79:

²²⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 50-51:

²²⁵ Տե՛ս Մեսրոպ Արք-եպիսկոպոս Սմբատանց, նշված աշխ., էջ 80-81:

²²⁶ Տե՛ս Յակոբեան Ա., նշվ. աշխ., էջ 127-128:

մահուդէ գլխարկներին մանիշակագոյն կտոր կարէն, և նրանց արգելում են տներից դուրս գալ անձրևի ժամանակ կամ երբ ցեխ է լինում: Ե՛վ Սպահանում, և՛ Իրանի մյուս կողմերում ըստ ամենայնի ջանք են թափում, որպէսզի մարդիկ հրաժարվեն քրիստոնեական կրոնից ... Անգամ Շամախում հայերին կործանելու զարմանալի միջոցների են դիմում: Անհիմն տուգանքներ են բարդում նրանց վրա, իսկ գյուղացիներն այն աստիճան են ճնշված, որ գրեթէ բոլորն էլ մտածում են իրենց երկրից հեռանալու մասին և եթէ ունենային ապահով ապաստան, այստեղ չէր մնա ոչ ոք»²²⁷: Նա նաև վկայում է, որ հայ վեց կոշկակար հավատափոխ եղավ, քանի որ շահր արգելել էր մուսուլմաններին գործարքի մեջ մտնել քրիստոնյա արհեստավորների հետ²²⁸:

1722 թվականիո Դաուդ-բեկը, երբ ռուսների հովանավորությամբ դարձավ Շամախի-Շիրվանի խանը, սկսեց հատկապէս քրիստոնյաների նկատմամբ հալածանքները: Օրինակ՝ քրիստոնյաներին հրամայել էր կրել դեղին կրծքանշաններ, որպէսզի մուսուլմանները նրանց «սալամ ալ-այթոմ (ողջույն)» չասեին²²⁹:

Նույն ժամանակըջանում Օսմանյան զորքերը զգալիորեն առաջանում են Այսրկովկասում և բուն Աղուանքի տարածքում նպաստում էթնո-կրոնական իրավիճակի խախտմանը²³⁰: Ղազար Յովսէփյան քահանան, հղելով Մակար Բարխուտարեանցին, հիշատակում է բնակավայրերը, որոնք ԺԸ. դարի կեսին մահմեդականացվել էին, այն է՝ Խաչ-մաս, Վանտամ, Փաղար, Ղուղաշէն, Բումավան, Էրմանիտ և այլն²³¹: Իսկ ԺԸ. դարում սկսված մահմեդականացման գործընթացի արդյունքը Մակար Բարխուտարեանցը արձանագրել է այս թվաքանակով. «Շաքուայ գաւառների տաճկացեալ հայոց ծխաթիվը՝ 15480 ծուխ»²³²:

Մահմեդականացման գործընթացի ժամանակ կիրառվող մեթոդներից հիշատակման է արժանի քարոզչությունը, որի ընթացքում մուսուլման հոգևորականները քրիստոնյա համայնքին համոզում էին իսլամի ճշմարտության մեջ և հող նախապարաստում հավատափոխության համար: Այս երևույթի աղբյուրագիտական հենքը, որը նաև կարևոր է հայերի մեջ պարսկախոսության տարածվածությունը քննելիս, Երևանի Մատենադարանի հայերեն ձեռագրաֆոնդում պահվող հայատառ պարսկերեն Ավետարանի երկու ձեռագրերի հիշատակարանների հաղորդումներն են: Գաղափար ձեռագիրը, Յ՞՛ 8492, գրվել է 1717-1720 թվականներին Շամախիում²³³ և ընդօրինակվել է 1780 թվականին Գանձակում, Յ՞՛ 3044²³⁴: Հիշատակարանները հաղորդում են, որ

²²⁷ Տե՛ս **Չուկայան, Մ.**, նշվ. աշխ., էջ 185-186:

²²⁸ Տե՛ս **Jean-Baptiste de la Maze**, “Journal du voyage du Père de la Maze, de Chmakié à Ispahan, par la province du Guilan”: in *Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères*, ed. by P. Fleuriau, Toulouse: Noel-Etienne Sens, 1811, 4: 74:

²²⁹ Տե՛ս **Б у т к о в П. Г.**, Укз. соч., С. 10-11.

²³⁰ Տե՛ս **Խառատյան Յ.**, «Քրիստոնեությունը Բուն Աղուանքի տարածքում զարգացած միջնադարում», Հայաստանը եւ Երիտառնյա Կովկասը, Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Կովկասյան դրաններում եւ Կրաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին, Երեւան, 15-16 դեկտեմբերի, 2015 թ., *Չեկուցումներ և վեկուցումների դրոյթներ*, Խմբ. Ա. Հակոբյան, Ա. Բոզոյան, Ռ. Սաֆրաստյան, Երևան. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 117:

²³¹ Տե՛ս **Յովսէփեան Ղ.**, *Ակնարկներ ուսիացի եւ մահմեդական հայերի մասին*, Թիֆլիս, 1904, էջ 64-65: Ղազար Յովսէփյանը իր այս գրքում վկայակոչում է նաև մահմեդականացման դեպքերն ու ձևերը, տե՛ս նույնը, էջ 62-63:

²³² Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 147-148:

²³³ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, Խ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Թ. Անթաթյան, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1970 սյ. 756:

²³⁴ *Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, Խ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Թ. Անթաթյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965 սյ. 927, նաև՝ *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*

Ավետարանը պարսկերեն թարգմանելու հիմնական նպատակը քրիստոնյա համայնքին օգնելն է, որ մուսուլման հոգևորականների հետ զրույցներում կարողանան պարսկերենով վիճաբանել կրոնական հարցերի շուրջ և հավատափոխ չլինեն²³⁵: Սեֆյան շրջանից սկիզբ առած մահմեդականացման քարոզչությունը, որն իրականացվում էր պարսկերենով, շարունակվում էր նաև ԺԸ. դարում և սույն ձեռագրերի հաղորդումները եական են շիրվանահայերի շրջանում մահմեդականացման գործընթացը արձանագրելու համար:

2. Պարսկերենի տարածվածությունը

Մինչև Ժ2. դարը պարսկերենի և պարսկականցված մշակույթի գերակայության գոտի լինելուց հետո, ինչպես նշվեց, Շիրվանն անցավ Սեֆյանների իշխանության տակ, որոնք ևս, չնայած իրենց իշխանությունը տարածում էին թյուրքախոս ղզլբաշների միջոցով, սակայն պարսկական մշակույթի կրողներն ու հովանավորներն էին: Տարածքում պարսկերենի տարածվածությունը պայմանավորված էր նաև մեծաքանակ պարսիկ բնակչությամբ: Մասնավորապես, Մեսրոպ Արքեպ. Սմբատեանցը նշում է, որ ԺԹ. դարի երկրորդ կեսին Շամախի քաղաքի վերին տափարակ մասում հայեր և ռուսներ, իսկ ներքին թաղում պարսիկներ են ապրում: Ընդ որում, հայերն ու պարսիկները մեծամասնություն են կազմել՝ պարսիկները՝ 3000 տուն, իսկ հայերը՝ 500 տուն²³⁶: 1891 թվականին 480 տուն՝ 2345 արական և 1890 իգական անձերից բաղկացած: Եվ հայերը, շրջապատված լինելով պարսիկներով, «կամայ մոռացել էին հայության հոգին, և մի պատճառ պետք էր, որ թողային հայ կրօնը և եկեղեցին...»²³⁷: Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանցը Շամախեցի Լալայեանց տոհմի կենսագրությունը ներկայացնելիս ակնարկում է, որ 1730-ական թվականներին Շիրվանում պարսից խանության ժամանակ հայերեն լավ իմացող ուսեալ քահանայի պահանջ է եղել²³⁸, ինչից նույնպես ենթադրելի է, որ պարսկախոսությունը հայերի շրջանում տարածված է եղել, որի օգտին են խոսում նաև վերոբերյալ հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանների հիշատակարանների տեղեկությունները և ձեռագրերի գոյությունն ինքսին: Պարսկերենի տարածվածությունը և հայերի մեջ պարսկախոսության աճին նպաստում էր նույն բնակավայրում պարսկախոսների հետ շփվելու պահանջը, որոնք ըստ ամենայնի արդեն ձևավորել էին պարսկերենի իրենց տարբերակը (կովկասյան պարսկերենը²³⁹): Պատահական չէր, որ պարսկերենին լավագույնս տիրապետում էր նաև Հակոբ Շամախեցի կաթողիկոսը (կաթ. 1759-1763 թվականներին)²⁴⁰:

Աղբյուրագիտական տեղեկությունները և հատկապես հայատառ պարսկերեն Ավետարանի ձեռագրերի գոյությունը (Հ^մ 8492, Հ^մ 3044) թույլ են տալիս ենթադրելու, որ ԺԸ. դարում Շամախիում (նաև գրեթե Շիրվանի հայաբնակ բոլոր գյուղերում՝ Հնդար, Մադրասա, Սաղիան, Չարխու, Փախրաքիչի, Տուարշեն, Ղաջար, Թալիշ, Գիւրջիլար,

Մաշտոցի անունն Մատենադարանի, ձեռագիրք 3001 - 3400, հ. Ժ, խմբագրությամբ՝ Գ. Տեր-Վարդանեանի, Երևան, 2019, սյ. 213 - 218:

²³⁵ Ձեռագրերի հիշատակարանների հայերեն թարգմանությունը և վերլուծությունը տե՛ս **Կիրակոսյան Յ.** «Մաշտոցյան Մատենադարանի հայատառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին (ՄՄ 3044, ՄՄ 8492)», *Էջմիածին, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ՀԵ (Ե)*, էջ 47-61:

²³⁶ Տե՛ս **Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 255-256:

²³⁷ Տե՛ս **Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 310-311:

²³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 328:

²³⁹ Կովկասյան պարսիկների և պարսկերենի մասին տե՛ս **Տոնյան Ա., Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն**, բանասիրական գիտությունների թեկնածուի ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզուի հիմնախոսություն 2015:

²⁴⁰ Տե՛ս **Օրմանյան արք. Մաղաքիա, Ազգապատում**, Հայ Ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբեն մինչև մեր օրերը յարակից ազգային պարագաներով, Բ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, սյ. 3006:

Քիվվար, Խաչմաս և այլն²⁴¹), Գանձակում հայերեն տեղական բարբառին զուգահեռ կամ գուցե ավելի լավ տիրապետել են նաև պարսկերենի գրական տարբերակին: Ընդ որում, հայ բնակչությունը, լիովին հասկանալով նոր պարսկերենը և ունենալով սեփական հայերեն բարբառը, խոսել է նաև պարսկերենի տեղական տարբերակով, որը եղել է հարևան պարսկախոսների հետ շփման միջոց: Ըստ Մադրասայի (Շամախիի շրջանի այն եզակի գյուղերից, որը մինչև ԺԹ. դարի վերջը պահպանել է իր պարսկական բարբառը և արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը) բնակիչների տեղեկությունների՝ նրանց նախնիները տասնյակ տարիներ առաջ դժվարացել են հայերեն արտահայտվել, եղել են մարդիկ, որոնք հայերեն բոլորովին չեն կարողացել խոսել: Ծերերը պատմել են, որ իրենց պապերն առհասարակ հայերեն չէին խոսում, բայց հաճախում էին հայկական եկեղեցի և «պաշտում էին Գրիգոր Լուսավորչի կրոնը»²⁴²: Յետագայում հայկական դպրոցների գործարկմամբ հաջողվել է հայերենը պահպանել՝ շփման լեզու օգտագործվող պարսկերենին ու թյուրքերենին զուգահեռ: Մակար Բարխուտարեանցը գրում է, որ «Դարբանդի, Ղուբայի, Բագուի, Շամախու, Շաքուայ եւ սոցա բոլոր գավառների (բացի Կապադակից) հայերեն ընդհանուր տիրող բարբառն է Արցախի այժմեան գործածական լեզուն, քանզի ինչպես գիտենք կանխաւ բնակչաց ամենամեծ մասն գաղթած եւ տեղափոխւած են Արցախից: Սպահանից, Խոյից և Թեհրանից եկողներ նույնպես կան»²⁴³: Ղաբայան, ինչպես ներկայացնում է Եսայի Յասան Ջալայան կաթողիկոսը, խիստ բնակեցված էր ինչպես Ղարաբաղից այստեղ տեղափոխված հայերով, այնպես էլ տեղաբնիկ այլ ժողովուրդներով²⁴⁴: 1720-ական վերջերին և 1730-ականների սկզբներին Ղարաբաղից ու Սյունիքից հայ գաղթականության հոսք է սկսվում դեպի ռուսական զորքերի կողմից գրավված մերձկասպյան տարածքները: 1724 թվականին Պետրոս Առաջին թագավորը հրաման է արձակում հայերին տեղափոխել ու բնակեցնել Գիլան, Մազանդարան, Բաբու, Դերբենդ, և այլ համապատասխան գավառներում և ստեղծել նրանց համար բարեկեցիկ կյանքի պայմաններ²⁴⁵: Եվ չենք բացառում, որ հենց այս գաղթի ընթացքում տեղափոխված հայալեզու բնակչության միջոցով ևս հայերենը պահպանվեց:

Մտրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանցը աղուանից մնացորդ է համարում Շամախի գավառի Մադրասա գյուղի 500²⁴⁶ տանից ավելի հայերին և Ղուբայի գավառի Խաչմաս և Քիվվար գյուղերի 150 տանից ավելի հայերին, որոնք ամենքը խոսում են «Ֆարս-հրեարեն» բարբառով²⁴⁷: Մակար Բարխուտարեանցը նշում է, որ Մադրասան

²⁴¹ ԺԸ. դարում Դերբենտի, Ղուբայի, Մուշկուրի, Գյոզչայի հայաբնակ գյուղերի մի ցանկ տե՛ս **Ղալայան, Տ.**, «Նոր առաներենի ուսումնասիրության պատմությունից», *Էջմիածին*, Ե, 2016, էջ 91-92: Իսկ Շիրվանի հայաբնակ գյուղերը տե՛ս **Կարապետյան Ս.**, *Բուն Աղվանքի հայկական վիճազրերը*, Երևան, 1997: Արսեն Յակոբյանը ներկայացրել է պարսկախոս հայերի տեղաբախվածությունը Դերբենդի, Ղուբայի և Մուշկուրի շրջաններն ընդգրկող տարածքում, տե՛ս, **Յակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 125-143:

²⁴² Տե՛ս **Ղալախյան Ա.**, «Յամառուտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին», *Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Տեղեկագիր*, հ^տ 4, 1957, էջ 86:

²⁴³ Տե՛ս **Մակար Եսա. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 150:

²⁴⁴ Տե՛ս **Խառատյան Յ.**, նշվ. աշխ., էջ 113:

²⁴⁵ Տե՛ս **Бутков П. Г.**, Указ. соч., С. 62, 68.

²⁴⁶ Տե՛ս **Մտրովբ Արքեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 197, 541, 544: Նույն աշխատության էջ 546-ում Սմբատեանցը նշում է «5-6000 տան չափ քրիստոնյա», ինչը, կարծում ենք, տպագրական սխալ է:

²⁴⁷ Արսեն Յակոբյանը նշում է, որ XVIII-XX դարերի աղբյուրագիտական և գիտական հրապարակումներում Արևելյան Այսրկովկասի հայերը հիշատակվում են «թաթախոս հայեր», «հայ-թաթեր», «քրիստոնյա կամ գրիգորյան թաթեր» անուններով, տե՛ս **Акопян А.**, «Татоязычные армяне: 15 веков от «Армянство» к «Армянству», Южный Кавказ: Территории. Истории. Люди., Науч. ред.: Екатерина Герасимова, От. ред.: Нино Лежава, Тбилиси: «Диодене», 2006, С. 190.

ունի 483 ծովս, բնակիչները գաղթել են Սպահանից, խոսում են պարսկերեն, որը մերձավորություն ունի *լինաց* կամ *լահնաց* բարբառին: Սակայն բոլորը գիտեն հայերեն²⁴⁸: Ընդ որում, մադրասացիները իրենց լեզուն անվանել են «փարսի»²⁴⁹: Ըստ տեղեկությունների, Շիրվանում թաթերի ու հայերի փոքր մասը խոսում է թաթարերենից ու հայերենից տարբերվող յուրահատուկ լեզվով, որը, ըստ տեղացիների, «աղավաղված պարսկերեն է»²⁵⁰: ԺԸ. դարի առաջին կեսին վերաբերող ռուսական աղբյուրի վկայություններում նշվում է երեք լեզուների՝ թյուրքերենի, թաթարերենի (իմա՝ թաթերեն) և պարսկերենի գոյությունը²⁵¹: Իսկ ԺԹ. դարի վերջին և Ի. դարի սկզբին նշվում է Զիվար, Խաչ-մաս, Մադրասա գյուղերում թաթերեն (Յ. Կ. պարսկերենի տարբերակ)-թուրքերեն երկլեզվության մասին²⁵²:

ԺԸ. դարում պարսկերենի մասին հիշատակություններն հիմնականում ավարտվում են և ԺԹ. դարի վերջում և Ի. դարի սկզբում ռուսումնասիրողները խոսում են միայն թաթերենի, այսինքն՝ պարսկերենի բանավոր մի տարբերակի մասին: Կարծում ենք՝ թաթերենը կամ պարսկերենի տարբերակը, որն իր լեզվական առանձնահատկություններով պարսկական կամ հարավ-արևմտաիրանական լեզու է²⁵³, անցել է պարսկերեն → աղավաղված պարսկերեն/թաթերեն/պարսկերենի բանավոր տարբերակ փուլով: Ընդ որում, այն Շիրվանի պարսիկների խոսակցական և հարևանների, այդ թվում՝ հայերի հետ շփման լեզուն էր: Այս փուլը, երբ Շիրվանի հայ բնակչության համար նոր պարսկերենը լիովին հասկանալի լեզու էր, իսկ բանավոր խոսքում օգտագործում էին կովկասյան պարսկերենի մի տարբերակը կամ թաթերենը, կարծում ենք, շարունակվել է մինչև ԺԸ. դարի վերջ: Այս երևույթի համար կարևորագույն կոման են կրկին Մատենադարանյան հայատառ պարսկերեն ձեռագրերը, որոնք, գրված լինելով նոր պարսկերենով (որոշակի հայերենի ազդեցությունը պայմանավորված է գրիչների հայ լինելով), ցույց չեն տալիս բարբառային շեղում (բացառությամբ, թերևս, ապառնի ժամանակաձևի):

Պարսկերենի գերակայության փուլն անցած Շիրվանի հայկական բնակավայրերից ռուսումնասիրվել է Մադրասա, Զիվար, Խաչ-մաս գյուղերի բնակիչների պարսկերեն բարբառը²⁵⁴: ԺԹ. դարի վերջում Մակար Եպս. Բարխուտարեանցը²⁵⁵, Մեսրոպ Արթեպիսկոպոս Սմբատեանցը²⁵⁶, Լ. Լոպատինսկին²⁵⁷ իսկ ավելի ուշ Մերգեյ Ղալթախյանը²⁵⁸, Բորիս Միլլերը²⁵⁹, Արսեն Յակոբյանը²⁶⁰, Ս. Էֆենդյանը²⁶¹, Տորբ

²⁴⁸ Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 91:

²⁴⁹ Տե՛ս **Акопян А.**, Укз. соч., С. 201.

²⁵⁰ Տե՛ս **Յակոբյան Ա.**, «Թաթախոս հայերի լեզվական մշակույթի շուրջ (18-րդ դ.-20-րդ դ. սկիզբ)», *Էջմիածին*, հմր 9, 2002, էջ 71:

²⁵¹ Տե՛ս **Ղալալյան Տ.**, նշվ. աշխ., էջ 80-81

²⁵² Տե՛ս **Յակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 78:

²⁵³ Տե՛ս **Грюнберг А. Л.** «О месте татского среди иранских языков», *Вопросы языкознания*, №1, 1961, С. 106-107.

²⁵⁴ Յայերենի տեղական բարբառի և պարսկերենի լեզվական տարբերակի փոխազդեցությունները, հնչյունական, ձևաբանական, բառապաշարի և նույնիսկ լեզվական կաղապարների համակարգերի փոխառնչակցությունները հանգեցնում են բազմաթիվ տիպաբանական նմանությունների, այս մասին տե՛ս **Ղալթախյան Ա.**, «Յայերենի տարրերը հայ-թաթերեն բարբառում», Լրաբեր Հասարակական Գիտությունների հմր 3, 1970, էջ 72-77:

²⁵⁵ Տե՛ս **Մակար Եպս. Բարխուտարեանց**, նշվ. աշխ., էջ 56-58:

²⁵⁶ Տե՛ս **Մեսրոպ Արթեպիսկոպոս Սմբատեանց**, նշվ. աշխ., էջ 283-292:

²⁵⁷ Տե՛ս **Лопатинский Л.** *Армяно-татские тексты, Сборник материалов для описания местностей и племен Кавказа*, Тифлис, 1894, вып. 20, С. 25-32

²⁵⁸ Տե՛ս **Ղալթախյան Ա.**, «Համառոտակի Մադրասայի հայ-թաթերենի մասին», *ՏԳԳ*, 1957, թ. 4, էջ 85-96, նույնի՝ Մադրասցիների թաթերեն լեզուն (ատենախոսություն), Երևան, 1972:

Դալայյանը²⁶² ուսումնասիրել են Արևելյան Այսրկովկասի պարսկախոս հայերի լեզվական մշակույթի, լեզվի և լեզվի պատմության հարցերը:

Եզրակացություն

Այսպիսով՝ պարսկերենի լեզվական գերակայության պայմաններում Շիրվանի հայ բնակչությունն անցնում է երկլեզվության, երբեմն նաև՝ եռալեզվության փուլերով: Եթե պարսկերենի բանավոր խոսակցական տարբերակը կամ կովկասյան պարսկերենի բարբառը հայ բնակչության համար հարևանների հետ շփման միջոց էր, ապա գրական նոր պարսկերենը լիովին հասկանալի էր նրանց համար՝ ընդհուպ մինչև ԺԸ դարավերջ: Պատկերը փոխվում է ԺԹ դարի կեսերից, երբ գրական պարսկերենի օգտագործումը կորցնում է իր նշանակությունը տարածաշրջանում այլ պետությունների ուժային գերակայությունների փոփոխության արդյունքում, մինչդեռ բանավոր պարսկերենի տարբերակը մնում է գործածության մեջ:

Շիրվանի ողջ բազմալեզու, բազմամշակութային ու բազմէթնիկ խճապատկերում պարսկերենը միջէթնիկական հաղորդակցության լեզու էր, և ողջ տարածաշրջանում պարսկալեզվությունը համընդհանուր տարածում էր գտել: Սրան զուգահեռ՝ տարածաշրջանում պահպանվեցին հայերենը և հարավարևելակովկասյան լեզուները՝ այսպիսով ստեղծելով լեզվական ներթափանցումների բացառիկ կոնտակտային մի գոտի:

THE PERSOPHONIE AMONG ARMENIANS OF SHIRVAN (18TH CENTURY)²⁶³

HASMIK KIRAKOSYAN

Matenadaran, Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts,

Senior Researcher;

Yerevan State University, Faculty of Oriental Studies,

Ph.D. in Philology, Associate Professor

Yerevan, Republic of Armenia

The article deals with the problems related to the spread of the Persian language and its practical role among the Armenian population in Shirvan in the 18th century. The aim of the study is to reveal the process of adoption of Persian by the Armenians with the resulting bilingualism under the conditions of Islam imposition and deportations in the region. The article highlights issues regarding the knowledge of Persian among Shirvan Armenians as well as the problems connected with the language variations over time and its practical significance. The method of sociolinguistics is used in the article. The main conclusions of the article are the following: within the frames of cultural Persianization the Shirvan Armenians were fluent in oral Persian both in

²⁵⁹ Տե՛ս Миллер, Б., *Таты, их расселения и говоры*, Известия общества обследования и изучения Азербайджана, N 8, вып. VII, Баку, 1929, С. 28-29:

²⁶⁰ Տե՛ս **Յակոբեան Ա.**, նշվ. աշխ. էջ 125-142, **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 70-82, **Աкопян А.**, Укз. соч., С. 190-213:

²⁶¹ Տե՛ս **Էֆենդյան Ս.**, «Մադրասացիների երկլեզվության հարցի շուրջ», *Լրաբեր Հասարակական Գիտությունների*, 2004 (1), էջ 88-96:

²⁶² Տե՛ս **Դալայյան Տ.**, նշվ. աշխ., էջ 88-89, 91-95:

²⁶³ *The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project №18T-6F376.*

colloquial and literary versions, in addition to Armenian, the knowledge of oral colloquial was due to the need for communication with the neighboring Persian speakers, the practical use of literary Persian was preserved among Armenians until the turn of the 18th century the proofs of which are the Persian Gospel manuscripts N 8492 and N 3044 written in Armenian letters, kept in the Armenian manuscript fund at the Matenadaran, Yerevan.

Key words: *Shirvan, Armenian population, Persephone, language of interethnic communication, bilingualism, Islam, written by Armenian letters, manuscript, Gospel.*

ПЕРСОФОНИЯ У АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ ШИРВАНА (XVIII В.)²⁶⁴

АСМИК КИРАКОСЯН

*главный сотрудник Матенадарана,
Института древних рукописей имени Месропа Маштоца,
кандидат филологических наук, доцент
факультета востоковедения
Ереванского государственного университета
г. Ереван, Республика Армения*

В статье рассматриваются проблемы распространения персидского языка и его практическое значение для армянского населения Ширвана в XVIII веке. Цель статьи – выявить результаты овладения персидским и процесса персофонии среди армян Ширвана в условиях депортации и распространения ислама в регионе. Затрагиваются вопросы, касающиеся знания персидского языка среди армян Ширвана, периодов появления его вариантов и практического значения.

В процессе работы были применены методы социолингвистических исследований.

Основные выводы статьи заключаются в следующем: в рамках культурной персианизации армяне Ширвана, помимо армянского, осваивали устную и литературную версии персидского языка. Потребность в устном или разговорном персидском языке была вызвана необходимостью межэтнического общения с персофонными соседями. Практическое значение литературного персидского сохранялось среди армян до конца 18-го века, о чем свидетельствуют рукописи Евангелия (N 8492, N 3044) на персидском языке, но написанные армянскими буквами, хранящиеся в Армянском фонде Матенадарана.

Ключевые слова: *Ширван, армянское население, персофония, двуязычие, язык межэтнического общения, ислам, армянские надписи, рукопись, Евангелие.*

²⁶⁴ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта №18Т-6F376.

I'TIKĀF-Ի ԾԻՍԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՍՈՒՆՆԻ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՉՅԱԲՆԵՐԻ*

ՉՏԴ 0.01.011/016

ՎԱՅԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի ասիստենտ և ասպիրանտ, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն vahe.hakobyan@yahoo.com

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել *i'tikāf-ի*²⁶⁵ ծիսակարգն իսլամում, դրա հիմունքներն ու իրագործման ժամանակացույցը, պայմանները, կատարման վայրը, իրականացման անթույլատրելի ու ոչ խրախուսելի հանգամանքներն ու կատարման վարվելակերպի կանոնները՝ հիմնական շեշտը դնելով սուննիական կրոնաիրավական չորս դպրոցների՝ հանաֆիական, շաֆիիական, հանբալիական և մալիքիական մազհաբների²⁶⁶ վրա՝ վերլուծելով վերոնշյալ դպրոցների ունեցած տեսակետներն այդ պաշտամունքի իրագործման հարցում:

Սույն ուսումնասիրության խնդիրն է ցույց տալ *i'tikāf-ի* շուրջ չորս մազհաբների ունեցած կարծիքների համընկնումներն ու տարբերությունները: Աշխատանքի մեթոդաբանության հիմքում ընկած են քննական ու վերլուծական մեթոդները:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ բոլոր չորս կրոնաիրավական դպրոցների ներկայացուցիչները հիմնականում տարբեր տեսակետներ են ունեցել *i'tikāf-ի* արարողակարգի կատարման պայմանների առնչությամբ:

Հիմնաբառեր՝ *ի'թիբաֆ*, *մու'թաբիֆ*, *մազհաբ*, *հանաֆիներ*, *հանբալիներ*, *մալիքիներ*, *շաֆիիներ*, *պայման*, *մզկիթ*, *ռամադան*:

Ներածություն

i'tikāf-ը մզկիթում մեկուսի մնալու ծիսակարգն է, հատկապես երկրպագության համար: Մուսուլմանի կողմից մզկիթում մեկուսանալու համար մտադրություն ունենալը ոչ թե հիմք է, այլ պայման: Այս հարցում հանաֆիների ու հանբալիների կարծիքները համընկնում են, իսկ մալիքիներն ու շաֆիիներն հակառակվում են Նրանց՝ ասելով, որ նման մտադրություն ունենալը հիմք է, այլ ոչ թե պայման: Հարկ է նշել, որ ըստ սահմանման՝ բոլոր դեպքերում մտադրության առկայությունը պարտադիր է՝ լինի հիմք,

* Հոդվածը ներկայացվել է 08.12.2020թ., գրախոսվել՝ 13.12.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

²⁶⁵ *i'tikāf* (արաբ․ *إِعْتِكَافٌ*), լեզվական իմաստով նշանակում է ինքնազսպման դրսևորում հավասարապես թույլատրելի կամ ոչ թույլատրելի արարք կամ գործողություն կատարելիս: Իսկ կրոնական իմաստով՝ ըստ շարիաթի՝ տերմինը նշանակում է մնալ մզկիթում՝ Ալլահին երկրպագելու համար: Նա, ով *i'tikāf* է կատարում, կոչվում է *mu'takif* (արաբ․ *مُتَكِفٌ*):

أبي الفضل جمال الدين محمد بن مكرم ابن منظور الأفرقي المصري (المتوفى 1895م), لسان العرب، دار صادر بيروت، الطبعة الثالثة، 1994م، المجلد التاسع، ص. 255.

²⁶⁶ *Maqhab* (*maqhab*) բառն աաբերելից թարգմանաբար նշանակում է ուղի, ուսմունք կամ դոկտրինա, որին պետք է հետևի մուսուլմանը:

թե պայման²⁶⁷: Նրանք, ովքեր ասում են, որ մտադրությունը հիմք է i'tikāf-ի ծիսակարգի կատարման համար, բնութագրում են այն՝ ավելացնելով maxṣūṣ bilniyya (հատկապես մտադրությամբ) արտահայտությունը, իսկ նրանք, ովքեր համարում են պայման, «մտադրությամբ» բառը չեն ընդգծում:

I'tikāf-ի ծիսակարգի երեք հիմունքներն են՝ մզկիթի առկայությունը, միայնակ մնացող անձը և նրա՝ մզկիթում մնալու հանգամանքը:

Ինչ վերաբերում է մզկիթում մենակյաց մնալու տեսակներին²⁶⁸, ապա դրանք երկուսն են՝ պարտադիր i'tikāf, որի դեպքում անձը ուխտ է անում և առանձնանում է մզկիթում, և խրախուսելի/կամուփի i'tikāf, որի դեպքում մուսուլմանը կամուփի է առանձնանում մզկիթում: Խրախուսելի i'tikāf-ի ժամկետը պետք է լինի առնվազն մեկ օր և մեկ գիշեր:

I'tikāf-ի կատարման ժամանակացույցը

I'tikāf-ի ժամկետի առումով մագհաբներն ունեն տարբեր տեսակետներ: Ըստ հանբալիների՝ i'tikāf-ի ժամանակահատվածը պետք է համընկնի ռամադանի²⁶⁹ ամսվա վերջին տասը օրերին, մինչդեռ համաձայն շաֆիիների ու հանաֆիների՝ այն պետք է կատարվի է կամ ռամադանի ամսվա, կամ այլ ամսվա վերջին տասը օրերին: Այս առումով մալիքիները գտնում էին, որ i'tikāf-ի ժամանակահատվածը կարող է լինել ինչպես ռամադանի ամսվա վերջին տասը օրերին, այնպես էլ այլ ամիսների վերջին տասը օրերին, բայց և այնպես նախապատվությունը տալով ռամադանի ամսվա վերջին տասը օրերին: I'tikāf-ի տևողության ժամկետի շուրջ սուննիական կրոնաիրավական չորս մագհաբները տարբեր տեսակետներ են ունեցել: Մասնավորապես շաֆիիներն ասում էին, որ i'tikāf-ի տևողության ժամանակն առնվազն պետք է համընկնի subḥānu Allah (փառք Տիրոջը) արտահայտության արտասանության ժամանակաչափին: Մալիքիները շեշտում էին, որ i'tikāf-ը պետք է տևի մեկ օր ու մեկ գիշեր և ոչ պակաս, քան 10 օր: Հանաֆիներն ասում էին, որ ամենակարևորն այն է, որ mu'takif-ն ունենա մտադրություն, թեկուզև իր i'tikāf-ը լինի կարճ ժամանակով, իսկ ըստ հանբալիների՝ կարևորը mu'takif-ի՝ մզկիթում մնալու գաղափարի իրագործումն է անկախ այն բանից, թե նա մզկիթում կմնա մե՞կ ժամ, թե՞ մեկ ակնթարթ²⁷⁰:

²⁶⁷ عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة 2003م، ص. 529. والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 529.

²⁶⁸ مجموعة المؤلفين، الموسوعة الفقهية - إصدار وزارة الأوقاف والشؤون الإسلامية، الكويت، الطبعة الثانية، 1986م، دار السلاسل: الجزء الخامس، ص. 208.

²⁶⁹ Ռամադան (արաբ. رمضان - Ramaḍān), իսլամական օրացույցի իններորդ ամիսն է: Այն համարվում է մուսուլման աշխարհի պահքի ամիսը, որով նրանք, ըստ իրենց հավատքի, հիշատակում են Մուհամմադ մարգարեի առաջին հայտնությունը և ծոմ են պահում արևածագից մինչև մայրամուտ: Արևածագին նախորդող կերակուրը կոչվում է suḥūr, իսկ գիշերային ճաշկերույթը, որն ընդհատում է պահքը, կոչվում է ifṭār: Այս ամենամյա ավանդույթը իսլամի 5 հիմնասյուներից է: Ռամադանի ամիսը տևում է 29-30 օր՝ կախված կիսալուսնի երևալուց: Այս ամենի հաշվարկները կատարված ու արձանագրված են մարգարեի մասին պատմող հադիսներում: Ռամադան բառը ծագել է արաբերեն ramīḍa կամ al-ramaḍ արմատից, որը նշանակում է կիզիչ շոգ կամ չորություն: Պահքի ընթացքում մուսուլմանները ձեռնպահ են մտնում ոչ միայն սննդից ու խմիչքից, այլ նաև ծխախոտ օգտագործելուց (ցանկացած տեսակի), սեռական հարաբերությունից և մեղք գործելուց՝ փոխարենը նվիրվելով աղոթքին և Ղուրանի ընթերցանությանը: Ծոմ պահելը պարտադիր է բոլոր չափահաս մուսուլմանների համար՝ բացառությամբ նրանց, ովքեր ունեն հիվանդություններ, ճամփորդում են, շատ ծեր են, ունեն շաքարային դիաբետ, հոդի են, կրծքով կերակրող կամ դաշտանային ցիկլի մեջ գտնվող կանայք են:

²⁷⁰ وهبة بن مصطفى الزحيلي، الفقه الإسلامي وأدلته (الطبعة الرابعة)، سوريا: دار الفكر، الجزء الثالث، 1985م، ص. 1752.

I'tikāf -ի իրականացման պայմանները²⁷¹

I'tikāf-ի ծիսակարգ կատարողը պետք է լինի մուսուլման, չափահաս ու խելամիտ անձնավորություն: Երրորդ պայմանն այն է, որ այդ ծիսակարգը պետք է պարտադիր տեղի ունենա մզկիթում, իսկ մզկիթից դուրս ցանկացած վայրում կատարվող i'tikāf-ը սխալ է համարվում: Ըստ շաֆիիների ու հանբալիների՝ mu'takif-ը նախքան i'tikāf սկսելը պետք է ունենա մտադրություն և ծիսական մաքրում անցնի (ցանկացած սեռական հարաբերությունից հետո, կնոջ պարագայում՝ դաշտանային ցիկլից և ծննդաբերությունից հետո): Հանաֆիները ևս պարտադիր պայման էին համարում ծիսական մաքրում անցնելը i'tikāf-ի կատարման թույլտվության համար: Հանաֆիներն ավելացնում էին նաև ծով պահելու պայմանն այն պարագայում, եթե mu'takif-ը i'tikāf-ի կատարման ուխտ է արել, իսկ եթե կամովին է i'tikāf իրագործում, ապա տվյալ դեպքում ծովը պարտադիր չէ²⁷²: Ըստ մալիքիների՝ mu'takif-ի կողմից ծիսական մաքրում անցնելը պարտադիր պայման է, բայց այդ գործընթացը չի ընդհատում i'tikāf-ը մզկիթում ջրի առկայության դեպքում: Մզկիթում ջրի բացակայության պարագայում mu'takif-ը կարող է ծիսական մաքրում անցնել մզկիթից դուրս՝ սահմանափակ ժամանակահատվածով, քանզի մզկիթ ուշ վերադառնալու դեպքում իր i'tikāf-ը չեղյալ կհամարվի, բացառությամբ այն դեպքի, երբ նա ուշացել է ինչ-որ առաջնային կարիքից ելնելով: Ըստ մալիքիների՝ առաջնային կարիք կարող է համարվել եղունգներ կամ բեղեր կտրելը, և այդ դեպքում իր i'tikāf-ը չեղյալ չի համարվի: Կնոջ պարագայում, ըստ մալիքիների, ծիսական մաքրում անցնելը պարտադիր պայման է i'tikāf-ի ծիսակարգի ճիշտ կատարման համար՝ անկախ այն բանից, թե i'tikāf-ը ուխտ արված է կամ ոչ: Կյո ընթացքում i'tikāf-ի բաց թողած օրերը կհնդ պետք է լրացնի իր՝ մզկիթ վերադառնալուց հետո: Մալիքիներն i'tikāf-ի կատարման պայմաններից մեկը համարում են ծովը՝ անկախ այն բանից՝ i'tikāf-ն ուխտ կատարած է, թե՞ կամովին²⁷³:

Իսկ շաֆիիներն ու հանբալիները²⁷⁴ ծովը պարտադիր պայման են համարել այն դեպքում, երբ mu'takif-ը ուխտ է արել կատարել i'tikāf-ի ծիսակարգը ծովի հետ միասին²⁷⁵:

I'tikāf-ի կատարման վայրի պայմանները

Մալիքիների՝ i'tikāf-ի կատարման վայրի հետ կապված պայմանը հետևյալն է. ծիսակարգի կատարման վայրը պետք է բաց լինի բոլոր մարդկանց համար, ինչպես նաև հավաքատեղի լինի բոլոր ուրբաթօրյա աղոթք կատարողների համար: Ըստ Նրանց՝ չի թույլատրվում i'tikāf կատարել ո՛չ տուն-մզկիթի մեջ, ո՛չ էլ քաաբայի²⁷⁶ տաճարում²⁷⁷:

²⁷¹ مجموعة مؤلفين، الفقه الميسر في ضوء الكتاب والسنة، السعودية: مجمع الملك فهد لطباعة المصحف الشريف بالمدينة المنورة، 1425 هـ / 2003 م، ص. 167.

²⁷² وهبة بن مصطفى الزحيلي، الفقه الإسلامي وأدلته (الطبعة الرابعة)، سوريا: دار الفكر، الجزء الثالث، 1985 م، ص. 1762.

²⁷³ ابن الجلاب، التفرغ في فقه الإمام مالك بن أنس (الطبعة الأولى)، بيروت-لبنان: دار الكتب العلمية، الجزء الأول، 2007 م، ص. 187.

²⁷⁴ منصور البهوتي، كشاف القناع على متن الإقناع، لبنان: دار الكتب العلمية، الجزء الثاني، 1983 م، ص. 349.

²⁷⁵ زكريا الأنصاري، فتح الوهاب بشرح منهج الطلاب، سوريا: دار الفكر، الجزء الأول، 1994 م، ص. 153.

²⁷⁶ քաաբայի տաճար (Ka'aba - الكعبة)، խորանարդաձև կառույց Մեքքայի կենտրոնում, մուսուլմանների գլխավոր սրբավայրը: Վաղ ժամանակներից սկսած՝ ողջ աշխարհի մուսուլմաններն աղոթելիս ուղղվում են դեպի քաաբա: Ըստ մուսուլմանների՝ քաաբան կլլահի առաջին տունն է, որը խորհրդանշում է մուսուլմանների միասնությունը, և մուսուլմանները դեպի Մեքքա են ուղղում իրենց սրտերն ու մարմինները: Ի սկզբանե եղել է հեթանոսական տաճար, որտեղ եղել են արաբական տարբեր կուռքեր: Մուհամմադ մարգարեի՝ Մեքքայից Մադինա (Յասրիբ) փախուստի ժամանակ՝ 622 թվականից, մուսուլմաններն աղոթելիս ուղղվում էին Երուսաղեմ, իսկ Մեքքայի ազատագրումից հետո՝ քաաբա:

Հանաֆիները պայման էին դնում, որ մզկիթը լինի հանրային մզկիթ և որ այն ունենա կրոնական առաջնորդ - իմամ և աղոթքի կանչող²⁷⁸ անկախ այն հանգամանքից, թե իսլամով սահմանված ամենօրյա պարտադիր հինգ աղոթքները կատարվում են տվյալ մզկիթում²⁷⁹, թե՞ ոչ: Այս ամենը տղամարդու պարագայում: Ինչ վերաբերում է կնոջը, ապա նրան թույլատրելի է i'tikāf կատարել իր տան աղոթատեղի անկյունում և խրափուսելի չէ կնոջ համար այն, որ նա i'tikāf կատարի բոլորի համար նախատեսված մզկիթում: Ճիշտ չէ նաև կնոջ i'tikāf կատարելը որևէ այլ վայրում, բացի իր սովորական աղոթատեղիից²⁷⁹: Ըստ շաֆիիների, եթե mu'takif-ը ենթադրում է, որ մզկիթը նախատեսված է ոչ հատուկ խմբի համար, այլ ընդհանուր է, ապա այնտեղ և՛ տղամարդը, և՛ կինը կարող են i'tikāf կատարել: Հանաֆիներն ասում էին, որ թե՛ կնոջը, և թե՛ տղամարդուն թույլատրելի է i'tikāf կատարել ցանկացած մզկիթում և չեն սահմանել հստակ պայմաններ²⁸⁰: Իսկ եթե ցանկացած mu'takif ցանկանում է i'tikāf կատարել այնպիսի մի ժամանակահատվածում, որի ժամանակ մուսուլմանների համար պարտադիր կատարելի արարք կա, ապա տվյալ դեպքում կարելի է i'tikāf անել միայն այն մզկիթում, որտեղ այլ mu'takif-ներով լի կրոնական այլ արարողություններ են կատարվում²⁸¹:

Կնոջ կողմից կատարվող i'tikāf-ն առանց ամուսնու թույլտվության

Կնոջ՝ առանց ամուսնու թույլտվության i'tikāf կատարելու հետ կապված շաֆիիներն ասում էին, որ եթե կինը i'tikāf է կատարում առանց իր ամուսնու թույլտվության, ապա նրա i'tikāf-ը ճիշտ է, սակայն մյուս կողմից նա մեղք է գործում նման կերպ վարվելով: Իսկ եթե ամուսինը թույլ է տվել նրան կատարել i'tikāf ու նա արտաքննապես բարետես է, ապա նրա i'tikāf-ն անընդունելի է, քանի որ նա կարող է գրավել ուրիշների ուշադրությունը²⁸²: Իսկ մալիքիները, հանաֆիներն ու շաֆիիները համարում էին, որ կնոջն ամեն դեպքում թույլատրելի է i'tikāf կատարել միայն ամուսնուց թույլտվություն ստանալու դեպքում²⁸³:

I'tikāf-ի կատարման ժամանակ մզկիթից դուրս գալու պայմանները²⁸⁴

Մարգարեի հաղիսներից²⁸⁵ մեկում²⁸⁶ նշվում է, որ նա i'tikāf-ի կատարման ժամանակ մզկիթից դուրս եր գալիս միայն անձնական կարիքներից ելնելով: Ըստ հանաֆիների՝ mu'takif-ի՝ մզկիթից դուրս գալու առնչությամբ կա երկու պայման. առաջինը՝ երբ i'tikāf-ը ուխտ արած է, ապա նման պարագայում մզկիթից դուրս գալ չի թույլատրվում, լինի գիշեր թե՛ ցերեկ, դիտավորյալ կամ մոռանալով: Իսկ նա, ով տվյալ

عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة 277 والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 530.

مجموعة المؤلفين، الموسوعة الفقهية - إصدار وزارة الأوقاف والشؤون الإسلامية، الكويت، الطبعة الثانية، 1986م، دار 278 السلاسل: الجزء الخامس، ص. 213.

عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة 279 والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 530.

مجموعة المؤلفين، الموسوعة الفقهية - إصدار وزارة الأوقاف والشؤون الإسلامية، الكويت، الطبعة الثانية، 1986م، دار 280 السلاسل: الجزء الخامس، ص. 213-214.

حسن الشرنبلالي، مراقي الفلاح شرح نور الإيضاح (الطبعة الأولى)، سوريا: المكتبة العصرية، 2005م، ص. 264. 281

عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة 282 والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 531.

ابن حجر الهيتمي، المنهاج القويم شرح المقدمة الحضرمية (الطبعة الأولى)، لبنان: دار الكتب العلمية، 2000م، ص. 268-269. 284

Հաղիսները (ḥadīṭ) Մուհամմադ մարգարեի կյանքի տարբեր դրվագների մասին պատմություններն են, նրա խոսքն ու արարքները, որոնք փոխանցվել են բանավոր ու գրավոր կերպով: Ислам: энциклопедический словарь / отв. ред. С. М. Прозоров. — М. : Наука, ГРВЛ, 1991, стр. 262. 285

رواه شعيب الأرنؤوط، في تخريج المسند، عن أم المؤمنين عائشة، الصفحة أو الرقم: 26408، صحيح. 286

դեպքում դուրս է գալիս մզկիթից առանց որևէ արդարացման, ապա նրա i'tikāf-ը պղծվում է: Պարտադիր i'tikāf անողին թույլատրվում է դուրս գալ մզկիթից երեք պարագաներում. առաջինը՝ բնական կարիքները հոգալու (միզել, արտաթորել և այլն, քանի որ նմանատիպ դեպքերում նա չի կարող մզկիթում լվացվել՝ պայմանով, որ նա կարիքները հոգալու որոշակի ժամանակով միայն լինի մզկիթից դուրս), երկրորդը՝ շարիաթով²⁸⁷ պայմանավորված արդարացումներ. օրինակ՝ դուրս գալ ուրբաթօրյա աղոթք կատարելու համար, եթե իր այդ մզկիթում, որտեղ որ նա գտնվում է, չի կազմակերպվում ուրբաթօրյա աղոթք, և միայն թույլատրվում է դուրս գալ adān-ից²⁸⁸ առաջ, որպեսզի չորս կամ վեց ծնկի գալու (արաբ.՝ rak'a) չափ աղոթք անի խորանում: Դրանից ավելի երկար ժամանակով մնալու դեպքում նրա i'tikāf-ը չեղյալ չի համարվում, քանի որ երկրորդ մզկիթը, որտեղ նա աղոթում է, համարվում է i'tikāf-ի կատարման վայր, քանզի այն ևս մզկիթ է, սակայն դա անխրախուսելի է համարվում, քանի որ այն հակասում է նրան, ինչին որ նա պարտավորվել է կատարել այն է՝ լինել առաջին մզկիթում: Երրորդը՝ անհրաժեշտ արդարացումների առկայության պայմանն է՝ վախ իր անձի կամ իր ունեցվածքի հանդեպ, ըստ որի, եթե նա շարունակի մնալ մզկիթում, հնարավոր է տեղի ունենա իր կյանքին վտանգ ներկայացնող որևէ գործողություն (օրինակ՝ մզկիթի փլուզումը), սակայն դուրս գալիս պայմանով, որ նա անմիջապես գնա այլ մզկիթ, որտեղ իր սկսած i'tikāf-ը կհասցնի ավարտին:

Երկրորդ պայմանի դեպքում, ըստ հանաֆիների, եթե i'tikāf-ը կամովին կատարվող է, ապա խնդիր չէ mu'takif-ի կողմից մզկիթից դուրս գալն առանց արդարացման, քանի որ տվյալ դեպքում նա չունի հստակ սահմանված ժամանակահատված դուրս գալու համար, և իր i'tikāf կատարած օրերի քանակը դուրս գալու դեպքում չեղյալ չի համարվում, և եթե նա կրկին վերադառնա մզկիթ և մտադրվի i'tikāf անել, ապա նա իր վարձքը կստանա Ալլահի կողմից: Իսկ եթե նա դուրս գա մզկիթից պարտադիր i'tikāf-ի ժամանակ առանց արդարացման, ապա դա մեղք է համարվում, և իր i'tikāf-ը կհամարվի ապարդյուն²⁸⁹:

Մալիքիները կարծում էին, որ եթե mu'takif-ը մզկիթից դուրս է գալիս իր բնական կարիքները բավարարելու համար (սնունդ և խմիչք գնելու նպատակով, ինչպես նաև բնական կարիքները հոգալու համար), ապա իր i'tikāf-ը անարդյունավետ չի համարվում: Իսկ եթե mu'takif-ը հանգամանքների բերումով ստիպված դուրս է գալիս ինչ-որ մի հիվանդի խնամելու կամ ուրբաթօրյա աղոթք կատարելու համար²⁹⁰, ելնելով նրանից, որ իր մզկիթում նման արարողություն չի կատարվում, կամ դուրս է գալիս վկայություն տալու և կամ հուղարկավորության մասնակցելու (թեկուզև հանգուցյալն իր ծնողներից մեկն է), ապա իր i'tikāf-ը սին է համարվում: Այն դեպքում, որ նա մնա մզկիթում և դուրս չգա ուրբաթօրյա աղոթք անելու, ապա դա մեղք կհամարվի աղոթք անելու տեսանկյունից, բայց i'tikāf-ի առումով ճիշտ է, քանի որ ուրբաթօրյա մեկ աղոթքի բաց թողնելը մեծ մեղք չի համարվում:

²⁸⁷ Շարիաթ, շարիաթական օրենք, իսլամական օրենք (արաբ.՝ شريعة, šarī'a - ճշմարիտ ուղի, գործելակերպ), Ղուրանի ու սուրբ ավանդության՝ սուննայի հիման վրա կազմված իսլամական կրոնական ու իրավական օրենքների ժողովածու, որը մշակվել է Արաբական խալիֆայությունում՝ 7-12-րդ դարերում: Կազմում է իսլամական ավանդույթի մասը:

²⁸⁸ Ազանը (adān) աղոթքի կանչն է, որով տեղեկացվում է աղոթքի կատարման ժամանակը:

²⁸⁹ عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة 2003م، ص. 532. والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 532.

²⁹⁰ خالد المشيقح، فقه الاعتكاف، الرياض: دار أصدقاء المجتمع للنشر والتوزيع، 1999م، ص. 152.

Եթե *mu'takif-ի*՝ *i'tikāf* կատարելու օրերը համընկնում են *'id al-Fitr-ի*²⁹¹ օրերի հետ (*i'tikāf* չի համարվում այդ օրերը), ապա նա պետք է շարունակի մնալ մզկիթում: Տևի վերջանալուն պես անկախ այն բանից՝ ուխտ արած *i'tikāf* է, թե կամովի, պետք է *'id al-Fitr-ի* ժամանակ բաց թողածը օրերը լրացվի *mu'takif-ի* կողմից:

Հանրալիներն ասում էին, որ եթե *mu'takif-ը* *i'tikāf-ի* ժամանակ մզկիթից դուրս է գալիս, լինի դիտավորյալ, թե սխալմամբ, ապա նրա *i'tikāf-ը* անհիմն է՝ բացառությամբ բնական կարիքները հոգալու դեպքերի (օրինակ՝ միզելու ու փսխելը, կամ վնասալու մի այնպիսի հագուստ, որի կարիքն ունի և դուրս է գալիս այն վնասալու համար): Այնուհետև մզկիթ վերադառնալիս նա պետք է ծիսական մաքրում անցնի մզկիթում այնպես, որ մզկիթին կամ տեղի մարդկանց վնաս չպատճառի: Եթե *mu'takif-ը* դուրս է գալիս վերը նշված կարիքներից մեկը հոգալու համար, ապա նա պետք է քայլի ըստ իր սովորության, առանց շտապելու: Նա կարող է միաժամանակ դուրս գալ իր սնունդը բերելու համար, եթե չկա այնպիսի մարդ, որ իր համար կբերի այն: Կարող է դուրս գալ նաև ուրբաթօրյա աղոթքի համար, եթե համարում է այն պարտադիր իր համար: Այս բոլոր պարագաներում նրա դուրս գալու դեպքում իր *i'tikāf-ը* արդարացված է, քանի որ նա հարկադրված է դուրս ելել: *Mu'takif-ը* կարող է երկար մնալ իր ուրբաթօրյա աղոթք կատարած մզկիթում առանց վարանելու, քանի որ երկրորդ մզկիթը ևս համարվում է *i'tikāf-ի* համար պիտանի վայր, սակայն առավել խրախուսելի է նրա վերադարձը առաջին մզկիթ՝ իր՝ արդեն իսկ սկսած *i'tikāf-ը* ավարտին հասցնելու համար: Եվ ընդհանուր առմամբ, ըստ հանրալիների՝ *i'tikāf-ի* կատարումը սխալ չի համարվում բնական կամ շարիաթով պայմանավորված կարիք հոգալու համար²⁹²:

Ըստ շաֆիիների՝ մզկիթից դուրս գալն առանց պատրվակի ապարդյուն է դարձնում *i'tikāf-ը*: Թույլատրելի արդարացումները, որոնք թույլ կտան նրան դուրս գալ մզկիթից, պետք է լինեն բնական, ինչպես, օրինակ, միզել և արտաթորել, կամ միզուցե անհրաժեշտ լինի նրա դուրս գալը, օրինակ, մզկիթի պատերի փլուզման հետևանքով, և վերը բերված պատրվակներով նրա՝ տվյալ մզկիթից դուրս գալը և այլ մզկիթ գնալը չեղյալ չի դարձնում իր *i'tikāf-ը*: *I'tikāf-ը* չեղյալ է համարվում, եթե *mu'takif-ը* կատարել է որևէ արարք դիտավորյալ, կամովի՝ իմանալով հանդերձ, որ տվյալ արարքը անթույլատրելի է, իսկ եթե տվյալ անթույլատրելի արարքը կատարի մոռանալու հետևանքով կամ ստիպված ու չիմացության պատճառով, ապա ըստ շարիաթի՝ նրա *i'tikāf-ը* հիմնավորված է, քանի որ տվյալ անձը նորեկ է իսլամում: Նա, ով շարիաթով ընդունելի պատրվակով է դուրս եկել մզկիթից, ապա նրա դուրս եկած ժամանակը չի ազդում *i'tikāf-ի* ժամկետի տևողության վրա, և վերադառնալիս նա պարտավոր չէ վերահաստատել իր *i'tikāf* կատարելու մտադրությունը, սակայն նա պետք է դրսում անցկացրած ժամանակը լրացնի մզկիթում, բացի բնական կարիքները հոգալու ժամանակաչափից, որի համար երկար ժամանակ չի ծախսել: Այս ամենը այն պարագայում, եթե *i'tikāf-ը* պարտադիր է և շարունակական, այսինքն՝ եթե *mu'takif-ը* ուխտ է արել, որ իր *i'tikāf-ը* չլինի ընդհատվող, տվյալ երկու պարագայում էլ, նույնիսկ առանց արդարացման, նա կարող է դուրս գալ մզկիթից, սակայն իր դուրս գալով *i'tikāf-ն* ընդհատվում է: Այդ դեպքում նա մզկիթ վերադառնալիս պետք է վերահաստատի իր *i'tikāf* անելու մտադրությունը՝ բացառությամբ այն դեպքի, երբ նա դուրս գալու ժամանակ դուրս է եկել ետ վերադառնալու և շարունակելու մտադրությամբ, կամ երբ իր դուրս գալը բնական կարիք

²⁹¹ *'id al-Fitr*, (արաբ․ «առամադանի ավարտը ավետող և դրան հաջորդող տոն»), իսլամի տոները է: Նշվում է իսլամական լուսնային օրացույցի 10-րդ՝ *šawwāl* ամսվա ընթացքում (արաբ․ *شَوَّال*): Այն առանձնահատուկ է համայնքային աղոթքի (*ṣalāt*) կատարմամբ՝ տոնի առաջին օրվա կեսօրին: *'id al-Fitr-ը* պաշտոնական ընդունելությունների և մասնավոր այցերի ժամանակահատված է, որի ընթացքում մուսուլմանները ողջունում են միմյանց, փոխանակվում են նվերներով, նոր հագուստ են կրում, ինչպես նաև այցելում են հարազատների գերեզմանները:

²⁹² المرجع السابق نفسه، ص. 159.

հոգալու համար է: Այս կանոնին է ենթարկվում նաև կամովի i'tikāf-ը, իսկ mu'takif-ի կողմից միգելը մզկիթի որևէ ամանի մեջ խստիվ անթույլատրելի է շարիաթով, բայց դրանով իր i'tikāf-ը ընդունելի է²⁹³:

I'tikāf-ի կատարման համար սահմանված անթույլատրելի հանգամանքները²⁹⁴

I'tikāf-ի անթույլատրելիության հանգամանքներից մեկը դիտավորությամբ սեռական հարաբերություն ունենալն է²⁹⁵ երկուստեք համաձայնությամբ՝ հավասարապես լինի գիշերը, թե ցերեկը, կամ էլ իրենց կամքին հակառակ՝ մոռանալով իրենց՝ i'tikāf-ի ծիսակարգին մասնակից լինելու հանգամանքը: Տվյալ դեպքում i'tikāf-ը չէոյալ է համարվում: Ըստ շաֆիիների՝ եթե զույգը կենակցում է՝ մոռանալով, որ իրենք i'tikāf-ի մեջ են, ապա նրանց i'tikāf-ը օրինական է համարվում, իսկ այն դեպքերը, որոնք անչլվում են մտածված դիտավորությամբ կենակցությանը, ապա i'tikāf-ը անօրինական է համարվում: Այս մտքին համամիտ են բոլոր մազհաբները, բացի մալիքիականներից, քանզի նրանք կարծում էին, որ բոլոր դեպքերում նման գործողությունն անօրինական է և դրանով i'tikāf-ը պղծվում է:

I'tikāf-ը չէոյալ դարձնող իրողություններից է նաև իսլամից հրաժարվելը:

Ըստ հանաբիլների՝ եթե i'tikāf-ի ընթացքում մուսուլմանը իսլամից հրաժարվի և Նորից վերադառնա, ապա նա պետք է պարտադիր կերպով կատարի իր i'tikāf-ը: Ըստ շաֆիիների՝ եթե i'tikāf-ը պարտադիր կերպով կատարվելիք i'tikāf-ն է և ունի շարունակական ժամկետային սահմանում, այսինքն՝ եթե նա ուխտ է արել i'tikāf կատարել տասը օր շարունակ առանց ընդհատելու և դրա ընթացքում հրաժարվել է իսլամից, ապա իսլամին կրկին վերադառնալու պարագայում պետք է Նոր ժամկետ վերսկսի, իսկ եթե ուխտ է արել i'tikāf կատարել ոչ շարունակական ժամկետով և այդ ընթացքում հրաժարվում է իսլամից և կրկին ընդունում իսլամ, ապա նա Նոր ժամկետ սահմանելու կարիք չի ունենում, այլ շարունակում է իր կիսատ թողած i'tikāf-ը:

Հանաբիներն ու մալիքիներն այս հարցի շուրջ համակարծիք էին և, ըստ նրանց, եթե mu'takif-ը հրաժարվի իսլամից, ապա նրա i'tikāf-ը ապարդյուն կհամարվի, քանզի հավատուրացությունը չէոյալ է դարձնում երկրպագության բոլոր ձևերը: Բացի այդ, i'tikāf-ի կատարման պարտադիր պայմաններից է նաև մուսուլման լինելու հանգամանքը:

I'tikāf-ի ոչ խրախուսելի հանգամանքները և դրա իրականացման վարվելակերպը²⁹⁶

Ըստ մալիքիների՝ i'tikāf-ը պղծվում է տղամարդու կողմից այն դեպքում, երբ նա դիտավորությամբ կեսօրին սկսվում է կամ հեղուկ է ընդունում: Նման պարագայում նա պարտավոր է կրկին սկսել i'tikāf անելը՝ անկախ այն բանից, թե i'tikāf-ն ուխտ արած է, թե ոչ: Իսկ եթե սկսվի կամ հեղուկ օգտագործի մոռացության հետևանքով, ապա պարտադիր չէ սկզբից սկսել, այլ շարունակում է իր՝ արդեն իսկ սկսած i'tikāf-ը: Եթե i'tikāf-ը կամովին է, և գիշերը mu'takif-ն արգելված ալկոհոլ օգտագործի, ինչպես նաև թմրանյութեր, որոնք իրեն իրապես թմրեցնեն, ապա իր i'tikāf-ը անհիմն կդառնա և տվյալ անձը պետք է Նորից սկսի i'tikāf կատարել: I'tikāf-ի ոչ խրախուսելի իրողություններից է նաև մեծ մեղք գործելը, որը չի պղծում ծոմը, սակայն չէոյալ է դարձնում i'tikāf-ը (օրինակ՝ վատաբանելն ու զրպարտելը)²⁹⁷: Ըստ մալիքիների՝ խելագարության և հոգեկան խանգարման պարագայում պղծվում է ծոմը, և i'tikāf-ը ևս անհիմն է դառնում, սակայն

²⁹³ عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي ببيوضون لنشر كتب السنة 2003م، ص. 533. والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 209-177.

²⁹⁴ خالد المشيخ، فقه الاعتكاف، الرياض: دار أصدقاء المجتمع للنشر والتوزيع، 1999م، ص. 187.

²⁹⁵ القرآن الكريم، سورة البقرة، آية: 187.

²⁹⁶ بدر الدين العيني، البناية شرح الهداية، لبنان - بيروت: دار الكتب العلمية، الجزء الرابع، الطبعة الأولى، 2000م، ص. 121.

²⁹⁷ خالد المشيخ، فقه الاعتكاف، الرياض: دار أصدقاء المجتمع للنشر والتوزيع، 1999م، ص. 202.

ուշագնացությունը չի ազդում i'tikāf-ի վրա: Մալիքիներն ասում էին, որ i'tikāf-ի ոչ խրախուսելի հանգամանքները, որոնք խարխուլում են այն, շատ են, դրանցից են՝

- i'tikāf-ի կատարման ժամկետը տասը օրից պակաս կամ մեկ ամսից ավել լինելը:
- Մզկիթից դուրս կամ դրա մոտակայքում mu'takif-ի սնվելը (ինչպես, օրինակ, մզկիթի հրապարակում ու բակում): Մզկիթից հեռու տարածքում սնվելը ապարդյուն է դարձնում i'tikāf-ը:
- Կարողունակ լինելու դեպքում mu'takif-ի կողմից իրեն բավարար ուսելիք, խմիչք, հագուստ չվերցնելը:
- Այն դեպքում, երբ mu'takif-ի տունը մզկիթի մոտակայքում է և նա տուն է գնում ինչ-որ կարիքից ելնելով, ապա տանը չպետք է լինեն իր կինն ու աղախինը, որպեսզի նա չչեղվի i'tikāf-ից և զբաղվի նրանցով, իսկ եթե նրա տունը հեռու է մզկիթից, ապա այնտեղ գնալը չեղյալ է դարձնում նրա i'tikāf-ը:
- Ոչ խրախուսելի հանգամանքներից է i'tikāf-ի ժամանակ նոր բան սովորելը կամ սովորեցնելը, քանի որ i'tikāf-ի նպատակը հոգին մարզելն է, որը տեղի է ունենում միայն Ալլահի հիշատակմամբ և աղոթքով:
- Շատ գրագրությամբ զբաղվելը, եթե mu'takif-ը դրանով ստիպված չէ վաստակել իր հանապազօրյա հացը:
- Անխրախուսելի արարքներից է նաև աղոթքով, Ալլահի հիշատակմամբ, նրան փառք տալով, փառաբանելով, մեղա գալով և Մուհամմադի համար աղոթելով չզբաղվելը, և հակառակը՝ զբաղվելն այլ բաներով, օրինակ՝ մզկիթում հիվանդի խնամքով զբաղվելը, մզկիթում հանգուցյալի վրա աղոթելը, կամ տանիք բարձրանալը՝ աղոթքի կանչելու համար, ինչպես նաև i'tikāf-ի ծիսակարգ իրականացնելը՝ չունենալով բավարար պարագաներ:

Մալիքիների կողմից առաջ քաշված վարվելակերպի կանոններից է այն, որ mu'takif-ը, բացի իր կրած հագուստից, իր հետ վերցնի նաև այլ հագուստ, քանզի հավանական է, որ վերջինս ունենա դրա կարիքը: Կարվելակերպի մյուս կանոնն է mu'takif-ի՝ մզկիթի վերջնամասում մնալը՝ հեռու մնալով այն մարդկանցից, որոնք կզբաղեցնեն իրեն խոսելով:

Մալիքիների առաջ քաշած վերջին կանոնն է ռամադանի փառաբանումը և ռամադանի վերջին տասը օրերին մզկիթում մնալը, որպեսզի ռամադանի ամսվա վերջին տասը գիշերներից մեկի ժամանակ (laylat al-Qadr²⁹⁸) mu'takif-ն իր աղերսը հղի առ Ալլահ:

Ըստ հանաֆիների՝ i'tikāf-ը չեղյալ է համարվում ուշագնացության ու խելագարության դեպքում, եթե դրանք տևում են օրեր, իսկ գիշերով հարբելը չեղյալ չի դարձնում i'tikāf-ը: Ինչպես նաև i'tikāf-ը չի պղծում հայիոյելը, վիճաբանելը և նմանատիպ մեղքերը: Ինչ վերաբերում է դաշտանային և հետծննդաբերական կեղտից ծիսական մաքրում անցնելուն, ապա դա պարտադիր պայման է i'tikāf-ի ճիշտ կատարման համար: Եթե mu'takif-ը կոնկրետ ժամկետով i'tikāf է կատարում, ինչպես օրինակ՝ մտադրվել է, որ պետք է անի 10 օր, ապա պետք է լրացնի իր բաց թողած այն օրերը, որոնց ժամանակ ինչ-ինչ պատճառներով i'tikāf չի կատարել, և տվյալ դեպքում չպետք է նորից սկսի i'tikāf-ը, իսկ եթե հստակ սահմանված ժամկետ չկա, ապա պետք է վերսկսի i'tikāf-ը:

²⁹⁸ Laylat al-Qadr (արաբ․՝ ليلة القدر), թարգմանաբար կանխորոշման գիշեր. համաձայն իսլամի՝ դա այն գիշերն է, երբ Ղուրանն առաջին անգամ իջեցվեց երկնքից երկիր և նաև այն գիշերը, երբ Ղուրանյան առաջին հայտնությունները հայտնվեցին Մուհամմադ մարգարեին: Ըստ իսլամական աղբյուրների՝ դա ռամադանի ամսվա վերջին տասը օրվա գիշերներից մեկն է: Այդ ժամանակվանից ի վեր մուսուլմանները օրինված են համարել ռամադանի վերջին տասը գիշերը: Մուսուլմանները հավատում են, որ կանխորոշման գիշերը գալիս է առատ օրինություններով և Ալլահի ողորմությամբ, մեղքերը ներվում են, իսկ աղաչանքները՝ ընդունվում:

Ըստ հանաֆիների՝ i'tikāf-ի կատարման ժամանակ անխրախուսելի և արգելված արարքներն են՝

- Ենթադրաբար Ալլահին մերձենալու համար mu'takif-ի լուռ մնալը: Հակառակ դեպքում, եթե նա այդպես չենթադրի ու լուռ մնա, ապա դրա համար նրան չեն ստիպի, որ խոսի, ինչն անխրախուսելի չէ: Ըստ հանաֆիների՝ լռելը լեզվական մեղք չգործելու համար ամենամեծ պաշտամունքներից է:
- Վաճառելու նպատակով իր հետ մզկիթ ապրանք տանելը: Սակայն իր և իր երեխաների կարիքները հոգալու նպատակով վաճառքի գործարք կատարելու համար մզկիթում պայմանավորվածություն ձեռք բերելն ու վաճառքի ակտ կնքելը առանց ապրանք բերելու թույլատրելի է²⁹⁹:

Ինչ վերաբերում է վարվելակերպի կանոններին, ապա, ըստ հանաֆիների, mu'takif-ը պետք է բարի մտքեր արտահայտի և պետք է ընտրի լավագույն մզկիթը, որոնց թվում են³⁰⁰ ալ-Հարամ, ալ-Հարամ ալ-Նաբավի և ալ-Ակսա մզկիթները: Դա այն դեպքում, երբ mu'takif-ը ապրում է նշվածներից որևէ մեկի մոտակայքում: Գերադասելի է նաև i'tikāf-ի ծիսակարգ իրականացնելը ուրբաթօրյա աղոթքի կատարման մզկիթում՝ հետևելով Ղուրանի ընթերցմանը, մարգարեի հաղիսներին:

Ըստ հանբալիների՝ i'tikāf-ը պղծող պայմաններն են՝

- Հարբելը³⁰¹, թեկուզև դա լիկի գիշերը, իսկ ալկոհոլ խմելը, բայց չհարբելը, կամ մեծ մեղք գործելը չեն պղծում i'tikāf-ը:
- Կնոջ մոտ դաշտանային ցիկլն ու հետծննդաբերած վիճակը, քանզի դրանք չեն պղծում i'tikāf-ը, սակայն եթե կինն այդ վիճակից ծիսական մաքրում անցնի, ապա կարող է շարունակել i'tikāf-ը, քանի որ նա ունի հարգելի արդարացում ի տարբերություն հարբեցողի, որ հարբեցողությունից սթափվելուց հետո նորից սկսում է սկզբից i'tikāf անել:
- Հանբալիները գտնում էին նաև, որ ուշագնացությունը չի պղծում i'tikāf-ը:
- I'tikāf-ը պղծող հանգամանքներից է նաև mu'takif-ի կողմից մզկիթից դուրս գալու մտադրություն ունենալու հանգամանքը, թեկուզ դուրս չգալու պարագայում:
- Անխրախուսելի է համարվում mu'takif-ի լուռ մնալը մինչ գիշեր, իսկ եթե ուխտ է արել, որ պետք է լուռ մնա, ապա պարտադիր չէ իր կողմից դրա կատարումը:

Ինչ վերաբերում է վարվելակերպի կանոններին՝ ապա, ըստ հանբալիների, mu'takif-ն այդ ընթացքում պետք է երկրպագի ու հիշատակի Ալլահին, ընթերցի Ղուրան, աղոթի ու խուսափի իրեն չվերաբերող բաներից:

Ըստ շաֆիիների՝ i'tikāf-ը պղծվում է և՛ հարբեցողության, և՛ խելագարության դեպքում, եթե դրանց չափը գերազանցվում է, ինչպես նաև պղծվում է դաշտանային ցիկլի և հետծննդաբերության ժամանակ այն դեպքում, երբ ուխտ արած ժամկետում կինը չի նշում այն մասին, որ իրեն նման բան է սպասվում (նշելու դեպքում պետք է ընդգծել դաշտանային ցիկլի ժամանակը 15 օր կամ ավելի քիչ, իսկ հետծննդաբերականը՝ 9 ամիս կամ ավելի քիչ ժամանակահատվածից հետո ընկած շրջանը)³⁰²: Իսկ դրանց պատահելու դեպքում (նշված ժամկետներից դուրս) ո՛չ դաշտանային ցիկլը, ո՛չ հետծննդաբերական շրջանը չեն պղծում i'tikāf-ը: Մեծ մեղք գործելը, ինչպիսիք են՝ կշտամբելն ու հայիոյելը, ևս չեն պղծում i'tikāf-ը:

299 عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة، 2003م، ص. 535 والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 535

300 رواه البخاري، في صحيح البخاري، عن أبي سعيد الخدري، الرقم: 1995، صحيح.

301 Հարբելը խստիվ արգելված է նաև համաձայն Ղուրանի, որում նշվում է հետևյալը՝ «Մի՛ մոտեցե՛ք աղոթքի հարբած վիճակում»:

القران الكريم، سورة النساء: آية 43.

302 عبد الرحمن الجزيري، كتاب الفقه على المذاهب الأربعة، الجزء الأول، منشورات محمد علي بيضون لنشر كتب السنة، 2003م، ص. 534 والجماعة، دار الكتب العلمية، بيروت - لبنان، الطبعة الثانية، 2003م، ص. 534.

Ըստ շաֆիիների՝ ոչ խրախուսելի արաքներից են.

- I'tikāf-ի ժամանակ մզկիթի մաքրությունը պահպանելով երակից կամ մեջքից արյուն քաշելը, իսկ եթե չկարողանա պահպանել մաքրությունը, ապա անթույլատրելի է նման բան անել:
- Մզկիթում երկար զբաղվել իր արհեստով (օրինակ՝ կար ու ձև անել կամ արմավենու տերևներից գետնի ծածկոցներ հյուսել):

Ինչ վերաբերում է վարվելակերպի կանոններին, ապա ըստ շաֆիիների՝ mu'takif-ը պետք է երկրպագի Ալլահին՝ Ղուրան և hadīf³⁰³ ընթերցելով, Ալլահի անվան մշտական հիշատակմամբ: Վարվելակերպի ձևերից են նաև ծոմ պահելը, mu'takif-ի՝ ուրբաթօրյա աղոթքի համար նախատեսված մզկիթում լինելը՝ նախապատվությունը տալով ալ-Յարամ, ալ-Նաբավի, ալ-Ակսա մզկիթներին: Վարվելակերպի կանոններից է նաև այն, որ նա պետք է միայն բարի մտքեր արտահայտի և չհայհոյի ու չդատարկախոսի³⁰⁴:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով i'tikāf-ից բխող արժանիքները, կարող ենք առանձնացնել հետևյալը³⁰⁵.

- Կեղծավորությունից ձերբազատվելը, քանզի i'tikāf-ը վարժեցնում է հոգին Ալլահի հանդեպ հավատարմության դրսևորման:
- Իր անձի նկատմամբ վերահսկողություն սահմանելը և հաշվետու լինելն ինքն իրեն՝ իր կողմից տարվա ընթացքում չափն անցած արարքների համար:
- Անձին վարժեցնելը պաշտամունքներ իրականացնելուն, որոնցից են Ղուրան ընթերցելն ու Ալլահին հիշատակելը:
- Ինքնազսպելու և աշխարհիկ հաճույքներից հրաժարվելու կարողության դրսևորումը, քանի որ i'tikāf-ը mu'takif-ին վարժեցնում է նվազեցնել աշխարհիկ որոշ թույլատրելի արարքներ և նվիրվել Ալլահի պաշտամունքին:
- Յրաժարվելը որոշ վատ սովորոյթներից (օրինակ՝ արթուն գիշերելը, ծխելը, չափից շատ ուտելն ու խմելը):
- Անձին վարժեցնելն ինքն իրեն հնազաղվելուն և համբերություն դրսևորելուն:
- Կարգավորել ժամանակը, քանի որ i'tikāf-ը սովորեցնում է mu'takif-ին ճիշտ օգտվել ժամանակից և կարգավորել կյանքը:
- Սիրտն ու հոգին անբիծ դարձնելն ու ախտերից մաքրելը, քանի որ mu'takif-ը, մտալով Աստծո տանը և հրաժարվելով աշխարհիկ զբաղվածություններից հանուն պաշտամունքի, մաքրում է սիրտը և դարձնում իր հոգին անբիծ:

³⁰³ Չադիս (արաբ.՝ حديث - hadīf), Մուհամմադ մարգարեի կյանքի տարբեր դրվագների մասին պատմող զրույցներ, արաբամուսուլմանական իրավագիտության (Ֆիկհ) 4 հիմքերից մեկը: Որպես այդպիսին՝ կարող են լինել մարգարեի խոսքերը, որոնք փոխանցվել են գրավոր կամ բանավոր կերպով:

³⁰⁴ المرجع السابق نفسه، ص. 535.

وهبة بن مصطفى الزحيلي، الفقه الإسلامي وأدلته (الطبعة الرابعة)، سوريا: دار الفكر، الجزء الثالث، 1985م، ص. 1751.

THE RITUAL OF I‘TIKĀF ACCORDING TO SUNNI RELIGIOUS LEGAL MADĤABS

VAHE HAKOBYAN

*Yerevan State University, Faculty of Oriental Studies, Chair of Arabic Studies,
Assistant and Ph.D. Student (Arabic Manuscripts)
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to examine the worship of i‘tikāf in Islam, its foundations and timing, conditions, place of its performance, impermissible and unacceptable circumstances of performance, and rules of conduct putting the main emphasis on the four Sunni schools of law - Hanafi, Shafi‘i, Hanbali and Maliki, analyzing the views of the above-mentioned schools on the implementation of that worship.

The aim of this study is to show the similarities and differences between the opinions of the four madĥabs about i‘tikāf. The working methodology is based on examination-analytical methods.

As a result of the study, we came to the conclusion that the representatives of all four religious and legal schools had different views in relation to the conditions for performing i‘tikāf ritual.

Keywords: *I‘tikaf, mu‘takif, madĥab, Hanafites, Hanbalites, Malikites, Shafites, condition, mosque, Ramaḍān.*

РИТУАЛ «ИТИКАФ» В СООТВЕТСТВИИ С РЕЛИГИОЗНО- ПРАВОВЫМИ МАЗХАБАМИ

ВАГЕ АКОПЯН

*аспирант, ассистент кафедры арабистики
факультета востоковедения
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Цель данной статьи – изучить ритуал поклонения «итикафу» в исламе, его основания и календарь, условия и место его исполнения, недопустимые и неприемлемые обстоятельства исполнения, а также правила поведения, в которых существенное внимание уделяется четырем суннитским школам права: Ханафи, Шафи‘и, Ханбали и Малики; кроме того, анализируются взгляды вышеупомянутых школ на осуществление этого религиозного обряда.

Задача исследования – показать сходство и различие мнений четырех мазхабов об «итикафе». Методология работы основана на познавательных-аналитических методах.

В результате исследования мы пришли к выводу о том, что представители всех четырех религиозных и юридических школ придерживались разных взглядов в отношении условий проведения ритуала «итикаф».

Ключевые слова: *итикаф, мутакиф, мазхаб, ханафиты, ханбалиты, маликиты, шафиты, условие, мечеть, Рамадан.*

**ՇԻՄԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԱՐԻՔԵԶԱՆԱԻՐԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ***

ՀՏԴ 284(479.25:55)

ԱՐԱԶՍ ՓԱՇԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԻ առաջատար գիտաշխատող,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
a.pashayan@hotmail.com

ՆԱԶՆԵԼԻ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԻ ավագ գիտաշխատող,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս,
պատմական գիտությունների թեկնածու,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
naznav24@gmail.com

Հոդվածի նպատակն է բնության ենթարկել հետաևակախության շրջանում Ադրբեջանում Իրանի Իսլամական Հանրապետության կրոնական ազդեցության նպատակներն ու դրդապատճառները, վերհանել դրա առանձնահատկություններն ու կերպափոխման փուլերը: Հետազոտության խնդիրն է նաև ցույց տալ Ադրբեջանում Իրանի կրոնական ազդեցության դրսևորումներն ու հետևանքները:

Ուսումնասիրության վերջում հանգել ենք այն եզրակացության, որ չնայած իրանական ազդեցությունն Ադրբեջանի կրոնական ու մշակութային դաշտում պատմական խոր արմատներ ունի, այնուհանդերձ, անկախացումից ի վեր Ադրբեջանին մտահոգում էր այն հանգամանքը, որ Իրանը ցանկանում է արտահանել քաղաքական շիայականությունը՝ Ադրբեջանում ստեղծելով կրոնասիրությամբ աչքի ընկնող իրանամետ սոցիալական հենարաններ, այդ թվում՝ իրանական ծագում ունեցող տեղաբնիկների շրջանում: Արդյունքում՝ հետխորհրդային գաղափարական վակուումի պայմաններում Ադրբեջանը քաղաքական ու քաղաքակրթական առումով կողմնորոշվեց դեպի Թուրքիա: Բաբուն ամեն կերպ ցանկանում էր պահպանել պետության աշխարհիկ բնույթը՝ հակադրելով Իրանի հարածուն կրոնական ներթափանցումներին: Չնայած Ադրբեջանի ազգային անվտանգությանը հիմնականում հաջողվեց չեզոքացնել կրոնական խողովակներով տարածվող «իրանական վտանգները», այնուամենայնիվ իրանական ազդեցությունն Ադրբեջանում ունեցավ խոր ու անշրջելի հետևանքներ կրոնական Նոր ինքնությունների, կրոնական պահպանողական շրջանակների, քաղաքական իսլամիզմի և շիայական քաղաքացիական ակտիվության ձևավորման հարցում:

Հիմնաբառեր՝ Ադրբեջան, Իրան, Թուրքիա, Նարդարան, շիայականություն, թյուրքականություն, խոմեյնիզմ, «փափուկ ուժ», կրոնական ինքնություն, քարույշություն, մկկիթ, այաթոլլա:

* Հոդվածը ներկայացվել է 10.12.2020թ., գրախոսվել՝ 13.12.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

Ներածություն

Հետանկախության շրջանում Ադրբեջանում հասարակական-քաղաքական վերափոխումների առումով Ադրբեջանը զարգացավ եթնիկ՝ թյուրքականության ինքնության և թյուրքական աշխարհիկ կառավարման մոդելի ճանապարհով: Դրան ուղղակիորեն նպաստեցին նաև Ադրբեջանի էներգետիկ ու պաշտպանական ոլորտների վեկտորների ուղղորդումը դեպի Իրանի տարածաշրջանային մրցակիցներ Թուրքիա և Սաուդյան Արաբիա, ինչպես նաև դեպի Իրանի աշխարհաքաղաքական հակառակորդներ ԱՄՆ և Իսրայել: Արդյունքում Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների և դրան հետևած գործընթացների արդյունքում, որոնցից կարևոր էր Իրանի դուրս մղումը կասպից ծովյան և հարավկովկասյան նավթագազային գործընթացներից, Իրանը մեկուսացվեց: Այնուհանդերձ Թեհրանը, ճկունություն դրսևորելով Ադրբեջանի հետ հարաբերություններում, այդ երկրում իր ազդեցության ամրապնդման նպատակով մշտապես կարևորել և առաջնահերթություն է տվել «փափուկ ուժի» քաղաքականությանը և դրա քաղաքական բաղադրիչին³⁰⁶: Չնայած այն հանգամանքին, որ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո բարեփոխիչ Յ. Ռոհանին (2013 թ. մինչ օրս) իրանաադրբեջանական համագործակցության վերալիցքավորման նպատակով սկսեց կարևորել տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացը, Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին արտաքին, այդ թվում՝ իրանական, կրոնական ներթափանցումների դեմ կոշտ հակազդեցությունը: Կրոնական բաղադրիչն այդ երկրների հարաբերություններում շարունակեց մնալ առավել զգայուն խնդիրներից մեկը³⁰⁷:

Իրանի քաղաքականությունն Ադրբեջանում անկախացումից հետո

1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումը Նոր հնարավորություններ ընձեռեց Իրանին Ադրբեջանում իր ազդեցությունն ընդլայնելու համար՝ հաշվի առնելով երկրամասի հետ ունեցած պատմական, կրոնական ու մշակութային դարավոր կապերը: Ադրբեջանի հետ հարաբերությունների սերտացումը հնարավորություն կտար Իրանին՝ նվաճելու Նոր շուկա, շահեկանորեն համագործակցելու Կասպից ծովի խնդիրների շուրջ, ի դեմս Ադրբեջանի՝ ձեռք բերել քաղաքական Նոր դաշնակից՝ ուժեղացնելով շիայական տանդեմը, տարածաշրջանում մասնավորապես Թուրքիայի հետ մրցակցության մեջ առավելություն ձեռք բերելու, սերտացնելու կապերն Ադրբեջանի՝ իրանական ծագում ունեցող տեղաբնիկ ժողովուրդների՝ թալիշների ու թաթերի հետ, տարածելու խոմենիզմի գաղափարները, նաև հակազդելու Իրանական Ադրբեջանի (Ատրպատականի) հարցի շուրջ շահարկումներին³⁰⁸:

Չնայած ամենատարբեր ոլորտներում Իրանի հետ ձևավորված բազմակողմ համագործակցությանը, այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ երկկողմ հարաբերություններում ի հայտ էին գալիս լարվածության օջախներ: Իրանը դիտարկվում էր որպես ոչ վստահելի գործընկեր, որը ոչ միայն ձգտում էր Ադրբեջանում տարածել իր կրոնական ու քաղաքական ազդեցությունը, այլև համագործակցում էր Յայաստանի հետ՝ դարաբաղյան հակամարտության հարցում ունենալով որոշակի հավասարակշռված մոտեցում, ինչը Բաթուն ընկալում էր բացասական լույսի ներքո: Ադրբեջանում Իրանի կրոնական ազդեցությունն առավելապես ուժեղ էր 1990-ականների առաջին կեսին:

³⁰⁶ Valiyev Anar. Iranian soft power in Azerbaijan: Does religion matter?, Religion and Soft Power in South Caucasus, 1 st edition, 2017, Routledge, p. 86-87.

³⁰⁷ Jödicke Ansgar. Shia groups and Iranian religious influence in Azerbaijan: the impact of trans-boundary religious ties on national religious policy, Eurasian Geography and Economics, Volume 58, 2017-Issue 5: Recinfiguration of Political Space in the South Caucasus, p. 8-9.

³⁰⁸ Эльмир Кулиев. Азербайджан: иранский вектор религиозного возрождения, Центральная Азия И Кавказ, 2005, № 5 (41), С. 165.

Հետանկախության շրջանում Ադրբեջանը Մերձավոր Արևելքի երկրների հետ վարում էր բաց դռների քաղաքականություն, ինչը զգալիորեն հեշտացնում էր նշված փուլում Իրանի ներթափանցումն Ադրբեջան: Այս ժամանակահատվածում Ադրբեջանը, կարելի է ասել, հեղեղված էր իրանցի միսիոներներով, իրանական բարեգործական, կրոնական ու մշակութային կազմակերպություններով³⁰⁹: 1993 թ.-ից մինչև 2014 թ.-ը Ադրբեջանում «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամի» (Imam Xomeyni adına İmdad Komitəsi) և «Իմամ Ալիի» մասնաճյուղերը ակտիվ գործունեություն են ծավալել: Իրանը զգալի միջոցներ է ներդրել Ադրբեջանում շիայական բազմաթիվ մզկիթներ վերանորոգելու և նորերը կառուցելու, ինչպես նաև մի շարք ադրբեջանցի երիտասարդների աստվածաբանական կրթությունը Իրանում կազմակերպելու հարցում³¹⁰:

Հետանկախության շրջանում և հետագա տարիներին Ադրբեջանում Իրանի «փափուկ ուժի» քաղաքականությունը զգալի արդյունքներ տվեց: Թեհրանը լուրջ ջանքեր գործադրեց Ադրբեջանում ձևավորելու նաև իսլամի քաղաքականացման գործընթաց: Կովկասյան պարսիկներով կամ թաթերով բնակեցված ապշերոնյան Նարդարան ավանում 1991 թ.-ին ստեղծվեց անկախ Ադրբեջանի պատմության մեջ առաջին կրոնաքաղաքական՝ «Ադրբեջանի իսլամական կուսակցությունը», որն ուներ հակաթյուրքական, հակախորայելական և հակաարևմտյան ուղղվածություն, աչքի էր ընկնում որպես խոմեյնիզմի, այսինքն՝ «վելյայաթե ֆակիհի» գաղափարների աջակից: Կուսակցության գործունեությունն արգելվեց 1995 թ.-ին, սակայն այն շարունակեց գործել կիսասրինական դաշտում: Կուսակցության հիմնադիրը Նարդարանցի, շիայական պահպանողական հայացքներով աչքի ընկնող Մովսում Սամադովն էր:

Նարդարան ավանը դարձավ նաև շիայական պահպանողական տրամադրությունների հենակետն ու կենտրոնը: Հատկանշական է, որ Ադրբեջանում գործել են նաև մեծ թվով իրանական մադրասաներ՝ կրոնական դպրոցներ³¹¹: Ադրբեջանում կրոնական քարոզչական գործունեություն են ծավալել իրանցի միսիոներներ, այաթոլլաներ, առհասարակ՝ շիա հոգևորականներ: Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում որոշակի տրամադրություններ է ստեղծել նաև Իրանի աջակցությամբ ստեղծված «Հիզբալլահ» անունով, լիբանանյան նույնանուն շարժման հետ կապ չունեցող մի կառույց, որին 2000 թ.-ին. իշխանությունները մեղադրեցին ադրբեջանցի հայտնի գիտնական, ակադեմիկոս Չիա Բունիաթովի սպանության (1997թ. փետրվար) մեջ³¹²:

Իրանական «փափուկ ուժի» կրոնական քաղաքիչը և դրա գործիքակազմը

Այսպիսով՝ հետխորհրդային շրջանում Ադրբեջանում իրանական կրոնական քաղաքականությունը, սերտորեն պայմանավորված լինելով Ադրբեջանի շուրջ ինչպես արտաքին քաղաքական գործընթացներով, այնպես էլ հասարակական-քաղաքական ներքին զարգացումներով, կերպափոխումների մի շարք փուլեր է անցել, որոնցից կառանձնացնենք հետևյալ ուղղությունները՝

³⁰⁹ «Իմամ Խոմեյնիի բարեգործական հիմնադրամի» (Imam Xomeyni adına İmdad Komitəsi) մասնաճյուղը Ադրբեջանում ունեցել է հարյուրից ավելի մասնաճյուղեր: Մանրամասն տե՛ս **Anar Valiyev**, Azerbaijan: Islam in a Post-Soviet Republic, Middle East Review of International Affairs, 2005, 9 (4).

³¹⁰ **Փաշայան Ա.**, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Եր., 2014, էջ 87-93:

³¹¹ International Crisis Group, Azerbaijan. Independent Islam and the State. IGG Europe Report 191, 2008.

³¹² Central Asia and the Northern Caucasus: Salafis, Shi'ites, and Jihadists, <https://mesbar.org/central-asia-northern-caucasus-salafis-shiites-jihadists/>, January 1, 2014, «Հեզբալլահը» Չիա Բունիաթովի նկատմամբ մահվան դատավճիռ էր սահմանել դեռևս 1996 թ.-ին՝ նրան մեղադրելով իսրայելական Մոսադի գործակալ լինելու և Ադրբեջանում սիոնիզմը տարածելու մեջ:

1. Կառույցներ ու կազմակերպություններ, որոնք ուղղակի ստեղծվել, ղեկավարվել կամ առնվազն ֆինանսավորվել են Իրանի կողմից: Դրանց թվում է ԻԻՀ Մշակույթի և իսլամական կողմնորոշման նախարարության վերահսկողության տակ գործող Իրանի մշակութային կենտրոնը, որն Ադրբեջանում ԻԻՀ ղեսպանատան աջակցությամբ գործունեություն է ծավալել ոչ միայն մշակութային դիվանագիտության, այլ նաև կրոնական ոլորտում կազմակերպելով Ղուրանին նվիրված միջոցառումներ ու մրցույթներ, շիայական գրականության հրատարակություն, կրոնի դասախոսություններ, ինչպես նաև իրանական լեզուների և Իրանի ուսումնասիրության ծրագրեր: Մասնավորապես տպավորիչ է Իմամ Խոմեյնիի հիմնադրամի գործունեությունը: Իրանական մարդասիրական ու մշակութային գործունեությունն ունեցել է քաղաքական ու կրոնական բաղկացուցիչներ: Մշակութային կենտրոնները սերտ կապեր են հաստատել մզկիթների հետ և շատ դեպքերում իրենք էլ ծառայել են որպես մզկիթներ:

2. Ադրբեջանի շիայական համայնքներին ֆինանսական, տեղեկատվական, սոցիալական, գաղափարական և այլնայլ աջակցությունների տրամադրում, ինչը հնարավորություն է ստեղծել Ադրբեջանում ձևավորել իրանամետ քարոզչության օջախներ: Իրանի գաղափարական ու ֆինանսական օժանդակությամբ 100-ից ավել մարդաստներ ու կրոնական ուսումնական կենտրոններ են գործել: Քարոզչության կարևոր բաղկացուցիչներից է եղել կրոնական մեծածավալ գրականության մատակարարումը:

3. Իրանական քարոզչությունն առնչվել է նաև շիայական ծիսակարգերի, շիայական սրբավայրերի այցելությունների և ուխտագնացությունների, այլ կերպ ասած՝ կրոնական զբոսաշրջության ակտիվացմանն Ադրբեջանում:

4. Իրանական քարոզչությունն անբակտեիորեն կապ է ունեցել նաև շիա բարձրաստիճան հոգևոր առաջնորդներին կամ հեղինակություններին հետևելու ավանդույթն Ադրբեջանում առաջ տանելու հետ: Ադրբեջանում շատերն իրենց կրոնական կենտրոնը համարել և համարում են Իրանը: Խնդիրն այն է, որ Ադրբեջանում գոյություն չունի շիայական կրոնական հեղինակությունների՝ «մարջա-ե թաղլեդի» ինստիտուտը: Դրան նպաստել են նաև ժամանակակից տեխնոլոգիաները, սոցիալական մեդիան, այաթոլանների հիմնադրամներից կատարված ֆինանսավորումները և այլն: Տարիներ ի վեր Իրանից ադրբեջաներենով իրականացվել է ոչ միայն կրոնական կոնտենտի, այլ նաև կրոնական հեղինակությունների ֆեթվաների, կոչերի ու հայտարարությունների տարածում Ադրբեջանում: Հասարակական առանձին կրոնատեր խմբերի համար Ադրբեջանում կրոնական հեղինակություններ են համարվել ազերիական ծագմամբ և պահպանողական հայացքներ ունեցող այաթոլաններ Մուհամեդ Ֆազիլ Լենթորանին (1931-2007), Ջավադ Թաբրիզին (1926-2006) և այլք:

Իրանի գրավչությունը բարձրացնող տարբեր տեղեկատվական ծրագրերի իրականացումը նույնպես մաս է կազմել ընդհանուր քարոզչությանը: Այս ուղղության առավել ազդեցիկ գործիքը Ադրբեջանում հեռարձակվող իրանական Սահար ռադիո-հեռուստատեսային ալիքն է, որի հաղորդումները հեռարձակվում են հիմնականում ադրբեջաներենով և լուսաբանում են Ադրբեջանի ներքաղաքական զարգացումները, տեղաբնիկներին առնչվող խնդիրները հիմնականում քննադատական լույսի ներքո՝ ի հեճուկս ադրբեջանական կառավարության դժգոհության: Սահարը մեծ ժողովրդականություն ունի հատկապես Ադրբեջանի հարավային՝ թալիշաբնակ շրջաններում³¹³:

5. Իրանը լայնորեն աջակցել և աջակցում է կրոնական կրթական ծրագրերին, այդ թվում՝ Իրանի Ղոմ շիայական հոգևոր-կրթական կենտրոնում՝ ստանձնելով ադրբեջանցի

³¹³ **Kotecha Hema**, *Islamic and Ethnic Identities in Azerbaijan: Emerging trend and tension*. A Discussion Paper. OSCE. Baku, 2006, p. 28.

երիտասարդների ուսումնառության մեկնաստությունը: Կրոնական կրթության շիայական ավանդույթի սկզբունքը Ադրբեջանում ստեղծեց Իրանի դիրքերի ամրապնդում: Աստվածաբանի կամ բարձրաստիաճան շիա հոգևորականի աստիճանակարգ հնարավոր է ստանալ Իրանի և Իրաքի շիայական հայտնի բարձրագույն կրթական կենտրոններում ուսանելուց հետո՝ շիայական կրոնագիտական հիերարխիկ աստիճանակարգին համապատասխան: Հատկանշական է, որ Ադրբեջանում Թուրքիայի ֆինանսական աջակցությամբ Բաքվի համալսարանում գործող Աստվածաբանության ֆակուլտետը սուննիական ուսմունքի գերակայության պատճառով գրավիչ չէ շիայական քարոզչության տեսանկյունից: Մյուս կողմից՝ Կովկասի մուսուլմանների վարչության (ԿՄՎ) հովանու ներքո գործող Իսլամական համալսարանը, որը պատրաստում է շիա հոգևորականներ, մինչև վերջ ընկալելի չէ Իրանի և շիայական առավել պահպանողական շրջանակների համար, ինչը նրանք հիմնավորվում են նախ՝ կրթական ծրագրերի ցածր մակարդակով, ապա՝ սուննի աստվաբանության հետ սերտ համագործակցությանը տուրք չտալով, ինչը պետական այդ կառույցի նպատակներից է³¹⁴:

Պետությունը արտաքին կրոնական ներթափանցումների դեմ

Ադրբեջանում ատաքին կրոնական ներթափանցումները սահմանափակելու նպատակով 1992-2011 թթ.-ի ընթացքում իշխանությունները «Դավանանքի ազատության մասին» օրենքում 14 անգամ փոփոխություններ իրականացրին: Կրոնական զարթոնքի ու վերախոխման տարբեր փուլեր անցնելուց հետո իսլամն Ադրբեջանում ենթարկվեց պետական խիստ վերահսկողության: 2009 թ.-ից սկսած Ադրբեջանի կառավարությունն ընդունեց մի շարք օրենքներ ու իրավական ակտեր՝ իսլամական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեության սահմանափակումների և պետական վերահսկողության մեխանիզմների հստակեցման վերաբերյալ: Սահմանափակվեցին կրոնական քարոզչության հնարավորությունները, իսկ կրոնական գործիչներին արգելվեց մասնակցել համազգային ընտրություններին: Քաղաքական կուսակցությունների մասին օրենքն արգելեց նաև կրոնա-քաղաքական կառույցների ստեղծումը, կրոնական գործիչների անդամագրումը կուսակցություններում³¹⁵:

2001 թ.-ին Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովի (ԿԿԱՊՀ) տեղծմամբ կրոնական բոլոր կառույցներն անցան նրա իրավասության ներքո, և 2009 թ.-ին «Դավանանքի ազատության մասին» օրենքում արված փոփոխությամբ՝ Ադրբեջանում կրոնական քարոզչությունը հնարավոր դարձավ միայն պետական այդ կառույցի թույլտվությամբ: Նշված փոփոխությունների համաձայն՝ խստացվեց կրոնական կազմակերպությունների գրանցման կարգը և լրացուցիչ լիազորություններ շնորհվեց Կովկասի մուսուլմանների վարչությանը³¹⁶:

2009 թ.-ին քրեական ու վարչական օրենսգրքերի լրացուցիչ փոփոխություններով քրեականացվեցին կրոնական գրականության հրատարակումը, տարածումն ու ներմուծումը՝ առանց պատկան մարմինների համաձայնության: 2013 թ.-ին նախագահի հաստատմամբ «Դավանանքի ազատության մասին» օրենքում արված լրամշակումների համաձայն՝ կրոնական գրականության, տեսաձայնագրված նյութերի օգտագործումը, հրատարակումը, տարածումն ու ներմուծումը կարգավորվում էր համապատասխան

³¹⁴ Jödicke Ansgar. Shia groups and Iranian religious influence in Azerbaijan: the impact of trans-boundary religious ties on national religious policy, Eurasian Geography and Economics, Volume 58, 2017-Issue 5: Reconfiguration of Political Space in the South Caucasus, p. 10.

³¹⁵ Ter-Matevosyan Vahram & Minasyan Nelli. Praying Under Restrictions: Islam, Identity and Social Change in Azerbaijan, Europe-Asia Studies, Vol. 69, No. 5, July 2017, p. 825.

³¹⁶ Լույս տեղում, էջ 821-822:

պետական մարմինների՝ ԿՄԿ-ի և ԿԿԼՊՅ-ի թույլտվությամբ: Կրոնական նյութերի վաճառքը հատուկ նշանակության վաճառակետերում հնարավոր էր միայն պատկան մարմինների թույլտվության դեպքում: Այսուհանդերձ, լիովին մեկուսացնել կրոնի ներթափանցումն Ադրբեջանի հասարական ու քաղաքական կյանք, չհաջողվեց: Արգելները կրոնական գործունեությունը դարձրին ընդհատակյա, ինչն էլ իր հերթին իշխանություններին մղեց բռնաճնշումների: Պետությունը չխուսափեց «պաշտոնական իսլամից» դուրս գործող կրոնական առաջնորդների ու ակտիվիստների ձերբակալություններից ու բանտարկություններից, «պաշտոնական իսլամից» դուրս՝ կրոնական գրականության բռնագրավումից, մզկիթների փակումից, պետական շինությունների վրայից կրոնական խորհրդանիշների հեռացումից, ազանի արգելումից, կրոնական բովանդակությամբ կայքերի արգելափակումից, հիջաբի և կրոնական տարրեր պարունակող հանդերձանքի արգելից, Աշուրայի ծիսական արարողության սահմանափակումներից և այլն³¹⁷:

Հիջաբի օրակարգն Ադրբեջանում. իրանական աջակցություն

Իրանը ոչ պաշտոնական աջակցություն է ցույց տվել նաև Ադրբեջանում իսլամական գլխաշորի՝ հիջաբի օրակարգի ձևավորմանը, դրա ներդրմանն և, առհասարակ, ինդրի քաղաքականացմանը: Դեռևս 1998 թ.-ին, երբ Ներքին գործերի նախարարությունը անձնագրերի համար պաշտոնապես արգելեց հիջաբով լուսանկարվելը, գտնվեցին կանայք, որոնք հրաժարվեցին անձնագրերից: Իրանամետ տրամադրություններով հայտնի Բաբվի շիայական Ջումա մզկիթի համայնքը 2005 թ.-ին սկսեց «Իմ գլխաշորը իմ հպարտությունն է» խորագրով քարոզարշավը³¹⁸: Նշենք, որ Ջումա մզկիթի նախկին իմամ, շիա քարոզիչ, աստվածաբան Յաջի Իլբար Իբրահիմօղլին ևս համարվում է իրանամետ գործիչ, որ աստվածաբանական կրթություն է ստացել Իրանում:

2010 թ.-ին հիջաբի օրակարգը սկսեց ավելի ընդգծված քաղաքական նշանակություն ձեռք բերել այն բանից հետո, երբ Կրթության նախարարությունը պաշտոնապես արգելեց դպրոցներում ու կրթական հաստատություններում կրոնական գլխաշորի կրումը: 2010 թ.-ի դեկտեմբերին և 2011 թ.-ի մայիսին հիջաբի արգելիչի դեմ Բաբվում տեղի ունեցած ցույցերը, ըստ իշխանական աղբյուրների, կազմակերպվել էին հիմնականում Աբդուլ Սուլեյմանովի և Թալե Բադերգադեի կողմից, որոնք համարվում էին իրանական քարոզչության և Ադրբեջանի իսլամական կուսակցության (ԱԻԿ) հետ կապ ունեցող մարդիկ: 2011 թ.-ի մայիսի 6-ին Նշված ցույցերին մասնակցելու համար ԱԻԿ անվազն 65 անդամ ձերբակալվեց: ԱԻԿ նախագահ Մովսում Սամադովը, որ ձերբակալվեց 2011 թ.-ի հունվարին, նախագահ Ի. Ալիևի դեմ խիստ քննադատական ճառ ասելուց հետո իր դատավարության ժամանակ բառացիորեն նշեց հետևյալը. «Մենք ընդդիմություն ենք այս կառավարությանը, որովհետև այն իրեն ենթակա է դարձրել սիոնիզմին: Սիոնիստներն իրենց վերահսկողության տակ են պահում Ադրբեջանը... մարգարեի ծաղրանկարները տեղ են գտնում օրաթերթերում, հիջաբն արգելվում է, մզկիթները քանդվում են, մուսուլմանական երկրում այսպիսի բաներ չեն կարող կատարվել»³¹⁹:

³¹⁷ Նույն տեղում, էջ 827:

³¹⁸ **Bedford Sofie.** Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context. Doctoral Thesis. Stockholm University, <http://www.diva-portal.org/smash/get/diva2:200259/FULLTEXT01>, 2009, p. 133.

³¹⁹ «Մենք ընդդիմանում ենք այս կառավարությանը, որովհետև նրանք ենթարկվում են սիոնիստներին, [ադրբեջաներեն] <http://qafqazinfo.az/news/detail/biz-bu-hakimiyete-ona-gore-etiraz-dirik-ki-onlar-sionistlere-tabe-olublar-2565>, 2011

Նշենք, որ 2010-2011 թթ.-ին գլխաշորի արգելքի դեմ կազմակերպված բողոքի գործողություններին, ըստ աղբյուրների իշխանական աղբյուրների, աջակցել էին իրանական մի շարք այաթուլլաներ ևս, այդ թվում՝ Նասեր Մաքարեմ Շիրազին, Բաբլում Իրանի մշակութային կենտրոնը և այլն³²⁰: Բաբուն Իրանին մեղադրել է Ադրբեջանի ներքին գործերին միջամտելու մեջ: Այս շրջանում Ադրբեջանում հիջաբի հետ կապված ակտիվ հասարակական քննարկումներ են ծավալվել: Առաջ է քաշվել այն տեսակետը, որ Ադրբեջանում հիջաբի խնդիրը քաղաքականացված է, որին օգնում են արտաքին ուժերը, մասնավորապես՝ իրանական: Ադրբեջանցի առանձին ուսումնասիրողների կարծիքով՝ հիջաբի օրակարգը կարևոր տեղ է զբաղեցնում Ադրբեջանում Իրանի կրոնա-քաղաքական ընդլայնման քաղաքականության մեջ³²¹:

**Նարդարանը՝ պահպանողական շիայականության միջնաբերդ.
«Մուսուլմանական միության» գործունեությունը**

Հայտնի է, որ քաղաքական իսլամիզմի, մասնավորապես իրանամետ շիայական համայնքների նկատմամբ ադրբեջանական իշխանությունների հետևողական բռնաճնշումների, որոնք իրականացվել են ահաբեկչության և կրոնական ծայրահեղության դեմ պայքարի թողի ներքո, ամենացայտուն դրսևորումները տեղ են գտել Նարդարանում³²²: Նարդարանը շուրջ 25 տարի է, ինչ այիևյան վարչակարգի կրոնական քաղաքականության գարշապարն է: Դեռևս 1990-ականներից իշխանությունները հետևողական պայքար սկսեցին Ադրբեջանի իսլամական կուսակցության դեմ, իսկ 2000-ականների սկզբին՝ ԱԻԿ-ին փոխարինելու եկած «Մուսուլմանական միություն» շարժման դեմ, որը, հետևելով ԱԻԿ-ի քաղաքական և հասարակական գծին, ընդդիմադիր շարժում ծավալեց Ադրբեջանում մուսուլմանների իրավունքների սահմանափակման դեմ պահանջելով ոչ միայն Նարդարանի սոցիալ-տնտեսական հարցերի հրատապ լուծումներ, այլ նաև «խղճի բանտարկյալների» ազատ արձակում: 2002 թ.-ին Նարդարանում իշխանությունների դեմ հուզումներն ու բողոքի զանգվածային ցույցերը, որոնք կրկնվեցին 2006, 2010, 2011, 2013 թվականներին, ուղեկցվեցին ոստիկանության ու տեղի բնակչության միջև բաց առճակատմամբ ու արյունալի բախումներով՝ երկուստեք վիրավորներով ու զոհերով: Ոստիկանական ուժերի խիստ ճնշումների և հատուկ գործողությունների արդյունքում, որպես կանոն, կալանավորվում էին նաև հոգևորականներ: Ցույցերի կազմակերպիչներն ու մասնակիցները մեծ մասամբ դատապարտվում էին առանձնակի ծանր հանցագործությունների հողվածներով³²³: Նարդարանի շիաներին լռեցնելու վճռական

³²⁰ **Bashirov Galib.** The Politics of the Hijab in Post-Soviet Azerbaijan, Nationalities Papers, 2020, p. 5-6.

³²¹ Նույն տեղում, էջ 6:

³²² Բաբլից 25 կմ հեռավորության վրա գտնվող, շուրջ 9,8 հազար բնակչությամբ Նարդարան ավանը կրոնական ավանդապաշտությամբ ու պահպանողականությամբ աչքի է ընկել Նույնիսկ խոհրդային տարիներին: Խորհրդային շրջանում Նարդարանը ԽՍՀՄ-ի ծաղկաբուծության ամենահայտնի կենտրոններից էր, որը միութենական տնտեսական համակարգի փլուզման հետևանքով հայտնվեց սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրների առաջ: Այդ խնդիրներն անտեսվեցին Նորանկախ Ադրբեջանում կապված ավանի ընդվզող ու կրոնասեր կեցվածքի հետ: Նարդարանի հոգևոր կենտրոնը Ռահիմա խասուն մզկիթն է, որը կառուցվել է շիայական ութերորդ իմամ Ալի իբն Մուսա Ալ-Ռեզայի (766-818) քրոջ գերազմանատեղիում և տեղացիների շրջանում հայտնի է Նարդարան փիր անվամբ: Նարդարանի բնակչությունը մշտապես բախվել է կենցաղային տարրական խնդիրների՝ կապված գազի, ջրի, էլեկտրաէներգիայի մատակարարումների հետ: Ավանում մեծ չափերի է հասնում նաև գործազրկությունը:

³²³ Нардаран, Кавказский Узел, <https://www.kavkaz-uzel.eu/articles/291187/>, 21 июля 2017 /հասանելի՝ 12.05.2020/

փուլը մեկնարկեց 2015 թ.-ի հոկտեմբերին, երբ Ադրբեջանի մի շարք քաղաքներում Աշուրայի սգո արարողությունների անցկացման դեմ ձեռնարկվեցին զսպիչ գործողություններ, որից հետո Նարդարանը կրկին դարձավ դիմադրության կենտրոն: 2015 թ.-ի նոյեմբերից մեկնարկեցին Նարդարանի պատժիչ գործողությունները, որոնք նպատակ ունեին վերջնականապես ջախջախելու «Մուսուլմանական միություն» շարժումը, ձերբակալելու նրա առաջնորդ Թալեհ Բադերգադեին, վերջինիս Նարդարանի համախոհներին և լռեցնելու ավանը: 2017 թ.-ի հունվարի 25-ին Բաքվի դատարանը մեղադրական դատապճճով շիա խարիզմատիկ հոգևորական Թալեհ Բադերգադեին ու նրա 17 աջակիցներ դատապարտվեցին 20 տարվա ազատազրկման³²⁴: Չնայած պետության բռնաճնշումներին՝ մասնավորապես Նարդարանում իրանական կրոնական ազդեցությունը շարունակում է մնալ կրոնական, հասարակական-քաղաքական օրակարգի լուրջ գործոն³²⁵:

Եզրակացություն

Ադրբեջանի ազգային անվտանգությունը հետանկախության և դրան հաջորդած տարիներին, ընդհանուր առմամբ, կարողացավ կասեցնել երկրում Իրանի կրոնական ու քաղաքական ազդեցությունը, որի հաջողությունը պայմանավորված էր մի շարք այլ գործոններով՝ ադրբեջանական հասարակության առավելապես աշխարհիկ բնույթը, հասարակության շրջանում խոմենիզմի գաղափարների ոչ լայն ժողովրդականությունը, Բաքվի թուրքամետ կողմորոշումը, իրանական կրոնական ազդեցության դեմ «պաշտոնական իսլամի» կամ «պաշտոնական շիայականության» և պետական մեքենայի կոշտ հակազդեցությունը³²⁶, նաև սուլունի իսլամի շրջանակներում գործող գյուլենականության և վահաբականության որոշակի առաջխաղացումն Ադրբեջանում: Մյուս կողմից՝ Իրանի արտաքին կրոնական ներթափանցումների դեմ աշխարհիկ ու կրոնական իշխանությունների հակազդեցությունն էապես նպաստեց պետության աշխարհիկ ինքնության շուրջ հասարակության հիմնական շերտերի համախմբմանը: Ադրբեջանական իշխանություններին հաջողվեց գերծ պահել կրոնը քաղաքականացումից՝ իսլամը հմտորեն օգտագործելով ազգային ինքնության ձևավորման և համաշխարհային իսլամական ազգին ու մուսուլմանական ընտանիքին (ուսմային) ինտեգրվելու գործիք: Միևնույն ժամանակ հակված ենք կարծելու, որ Ադրբեջանում իրանական կրոնական ներթափանցումների ու իրանական միջամտության մասին պետության ձևավորած կարծրատիպերը ներթափաքական օրակարգում առավելապես կոչված էին օրինականացնելու վարչակարգի բռնաճնշումները թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ ընդդիմության դեմ:

Ամեն պարագայում, իրանական գործոնը այսօր էլ շարունակում է որոշակի դերակատարություն ունենալ Ադրբեջանի հասարակական-քաղաքական ու կրոնական դաշտում: Իրանին հաջողվեց Ադրբեջանում հենք ստեղծել շիայական չափավոր, արմատական ու պահպանողական կրոնաքաղաքական գործունեության և, ընդհանրապես, «քաղաքական իսլամի» զարգացման համար: Եվ չնայած օրենքով սահմանված սահմանափակումներին, արգելքներին ու «պաշտոնական իսլամի» հակազդեցությանը՝ Ադրբեջանում սոցիալ-տնտեսական խնդիրների, խոսքի

³²⁴ Նարդարանի դեպքերի և Թալեհ Բադերգադեի մասին մանրամասն տե՛ս Murad Ismayilov, Islamic radicalism that never was: Islamic discourse as an extension of the elite’s quest for legitimation. Azerbaijan in focus, Journal of Eurasian Studies, 2019, Vol. 10(2) 183–196.

³²⁵ Political Islam in the Caucasus: Trends in Islam in the Wider Caucasus, Carnegie Endowment, http://carnegieendowment.org/files/022212_transcript_poli-islam-12.pdf

³²⁶ **Балджи Байрам.** Судьбы шиизма в постсоветском Азербайджане. Этнографическое обозрение 2, М., 2006, С. 84.

ազատության բացակայության, մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրների, մեծ ծավալների հասնող կոռուպցիայի և արժեքային համակարգի կերպափոխման պայմաններում կրոնը մեծամասամբ սոցիալական համախմբման դեր է խաղում, որի ընթացքն անկասելի է:

SHIA FACTOR IN AZERBAIJANI-IRANIAN RELATIONS

ARAKS PASHAYAN

Institute of Oriental Studies, NAS RA, Department of Arab Countries,

Leading Research Fellow;

YSU, Faculty of Oriental Studies, PhD, Associate Professor,

Yerevan, Republic of Armenia

NAZELI NAVASARDYAN

Institute of Oriental Studies, NAS RA, Department of Iran, Senior Research Fellow,

YSU, Faculty of Oriental Studies, Ph.D., Lecturer,

Yerevan, Republic of Armenia

The purpose of this article is to study the goals and motives of religious influence of the Islamic Republic of Iran in Azerbaijan after gaining independence, to identify its features, stages of transformation and consequences. As a result of the study, we came to the conclusion that although the Iranian influence has deep historical roots in the religious and cultural sphere in Azerbaijan, Baku feared Iran because Azerbaijan was oriented towards Turkey in terms of politics and civilization. Apart from Turkey, Azerbaijan has also established close cooperation with Iran's opponents, Israel and the United States. Although the national security of Azerbaijan largely succeeded in neutralizing Iranian religious influence, it nevertheless had a profound impact on the emergence of new religious identities, conservative circles, political Islamism and Shiite civic activism. Under the influence of Iran, Azerbaijan witnessed the awakening of conservative Shiism, including among the people of Iranian origin - Talysh and Caucasian Persians.

Key words: *Azerbaijan, Iran, Turkey, Nardaran, Shiism, Turkism, Khomeinism, "soft power", religious identity, propaganda, mosque, ayatollah.*

ШИИТСКИЙ ФАКТОР В АЗЕРБАЙДЖАНО-ИРАНСКИХ ОТНОШЕНИЯХ

АРАКС ПАШАЯН

*ведущий научный сотрудник отдела арабских стран
Института востоковедения НАН РА,
доцент факультета Востоковедения
Ереванского государственного университета
кандидат исторических наук,
г.Ереван, Республика Армения*

НАЗЕЛИ НАВАСАРДЯН

*ведущий научный сотрудник отдела арабских стран
Института востоковедения НАН РА,
лектор факультета Востоковедения
Ереванского государственного университета,
кандидат исторических наук,
г.Ереван, Республика Армения*

Цель данной статьи – изучить мотивы и инструментарий религиозного влияния Исламской Республики Иран в Азербайджане после обретения им независимости, выявить особенности, этапы трансформации и последствия этого влияния. В результате исследования мы пришли к выводу, что хотя иранское влияние имеет глубокие исторические корни в религиозной и культурной сфере Азербайджана, Баку опасался нарастания иранского религиозного влияния, так как Азербайджан политически и социально - был более ориентирован на светскую Турцию. Помимо Турции, Азербайджан также наладил тесное сотрудничество с оппонентами Ирана – Израилем и США. Хотя Азербайджану в значительной степени удалось нейтрализовать иранское религиозное влияние, тем не менее оно оказало глубокое воздействие на появление новых религиозных идентичностей, консервативных кругов, политического исламизма и шиитской гражданской активности. Под влиянием Ирана в Азербайджане наблюдалось пробуждение консервативного шиизма в том числе среди народов иранского происхождения – талышей и кавказских персов.

Ключевые слова: *Азербайджан, Иран, Турция, Нардаран, шиизм, тюркизм, хомейнизм, «мягкая сила», религиозная идентичность, пропаганда, мечеть, аятолла.*



ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԼԱՏԵՆՏ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ*

ՀՏԴ 628.1:519.71.8:303.224.74

ԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆ

*«Զրտուք» ՄՊԸ մենեջեր, ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ասպիրանտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
annaavaqyan7@gmail.com*

Հոդվածի նպատակն է գնահատել Երևան քաղաքի ջրամատակարարումը լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով: Մեր խնդիրն է բացահայտել Երևանի ջրամատակարարումը բնութագրող ցուցանիշների հիմքում ընկած լատենտ փոփոխականներն ու կրճատել ուսումնասիրվող ցուցանիշների թիվը: Այդ նպատակո, նախ ուսումնասիրել ենք Երևան քաղաքի ջրամատակարարումը բնութագրող ցուցանիշները՝ փորձելով բացահայտել ընտրված ցուցանիշների միջև կորելյացվածությունը և ստուգել այդ ցուցանիշներով գործոնային վերլուծություն իրականացնելու նպատակահարմարությունը, այնուհետև, իրականացվել է գործոնային վերլուծություն: Գործոնային վերլուծությունը կատարվել է առանցքային բաղադրիչի (principal component) մեթոդով և գործոնների պտտման կամ ճշգրտման VARIMAX ալգորիթմով: Վերլուծության համար կիրառվել է SPSS ծրագիրը: Օգտագործվել են IBNET-ում առկա ժամանակային շարքերը:

Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են վերլուծության, մաթեմատիկական ու վիճակագրական մեթոդներ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Երևան քաղաքի ջրամատակարարումը կարելի է բնութագրել 3 լատենտ փոփոխականներով, որոնք թույլ են տալիս առավել ամբողջական դիտարկել ջրամատակարարումը և նվազեցնել ուսումնասիրվող փոփոխականների թիվը: Ստացված արդյունքները կիրառելի են ջրամատակարարման արդյունավետության, ինչպես նաև ջրամատակարարման ծառայության ու տնտեսության փոխկապակցվածության ուսումնասիրություններում:

Հիմնաբառեր՝ ջրամատակարարում, գործոնային վերլուծություն, լատենտ փոփոխական, ջրամատակարարման գործոնային վերլուծություն, Երևանի ջրամատակարարում, Երևանի ջրամատակարարման գնահատում, ջրամատակարարման արդյունավետություն:

Ներածություն

Կարևորելով ջրի մատակարարման կենսական, սոցիալ-տնտեսական ու առողջապահական նշանակությունը՝ ջրամատակարարման ու տնտեսության

* Հոդվածը ներկայացվել է 08.08.2020թ., գրախոսվել՝ 22.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

փոխկապակցվածության ուսումնասիրությունների շրջանակում անհրաժեշտություն է առաջանում իրականացնել ջրամատակարարման գնահատում լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով:

Երևան քաղաքի ջրամատակարարման գնահատումը լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով իրականացնելու համար նախ առանձնացվել և ուսումնասիրվել են Երևան քաղաքի ջրի մատակարարման ծառայությունը նկարագրող ցուցանիշները, այնուհետև գործոնային վերլուծության միջոցով բացահայտվել են ջրամատակարարումը բնութագրող լատենտ փոփոխականները:

Երևան քաղաքի ջրամատակարարման գնահատումը լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով

Վերլուծության համար տվյալների աղբյուր է հանդիսացել IBNET-ը (International Benchmarking Network, թարգմ.՝ բենչմարքինգի միջազգային ցանց)³²⁷, որում առկա ցուցանիշներից որպես ելակետային տվյալներ ընտրվել են ջրարտադրությունը, ջրսպառումը, ջրի կորուստները, ջրամատակարարման տևողությունը, ջրամատակարարման համակարգում վթարների քանակը (այսուհետ՝ վթարները), սպասարկվող բնակչության թիվը, ջրամատակարարումն ապահովող աշխատողների քանակը (այսուհետ՝ նաև՝ անձնակազմ), ջրամատակարարման համակարգի շահագործման ծախսերը, շահագործումից ստացված հասույթը, շահագործման ծախսածածկումը և վճարների հավաքագրման ժամանակահատվածը: Ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է IBNET-ում տվյալների հասանելիությամբ, ինչպես նաև տարիների հնարավոր առավելագույն ժամանակային շարքեր ունենալով: Գործոնային վերլուծությունն³²⁸ իրականացվել է SPSS ծրագրի միջոցով՝ IBNET-ում առկա 1995-2016թթ. ժամանակային շարքերով³²⁹:

Նախքան գործոնային վերլուծությունը կատարվել է տվյալների ուսումնասիրություն՝ կորելացվածության բացահայտման և ընտրված ցուցանիշներով գործոնային վերլուծության իրականացման նպատակահարմարությունը ստուգելու նպատակով: Կորելացվածության ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ընտրված ցուցանիշները նշանակալիորեն կորելացված են: Այդ մասին են վկայում նաև KMO և Barlett's թեստերի արդյունքները, որտեղ KMO համապատասխանության չափումը գերազանցում է 0.6-ը՝ 0.000 նշանակալիությամբ³³⁰: Դա ցույց է տալիս, որ ընտրված ցուցանիշներով կարելի է իրականացնել գործոնային վերլուծություն՝ ցուցանիշների թվի կրճատման և դրանց հիմքում ընկած լատենտ փոփոխականների բացահայտման համար³³¹:

Այսպիսով՝ տվյալների ուսումնասիրությունից հետո նախապես սահմանված 11 ցուցանիշներով իրականացվել է գործոնային վերլուծություն: Վերլուծությունն իրականացվել է առանցքային բաղադրիչի (principal component) մեթոդով և գործոնների

³²⁷ Տե՛ս IBNET. (2017). Benchmarking database. Retrieved from IBNET: <https://www.ib-net.org/>, /02.11.19/.

³²⁸ Տե՛ս Comrey, A., & Lee, H. (1992). A first course in factor analysis (2nd ed.). New York: Psychology Press, pp. 4-14.

³²⁹ IBNET-ի ֆինանսավորման պատճառով և կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված՝ Երևան քաղաքի վերաբերյալ ընտրված ցուցանիշների թվային արժեքները 2016թ.-ից հետո բացակայում են:

³³⁰ Տե՛ս UCLA: Statistical Consulting Group. (2020). Factor analysis: SPSS annotated output. Retrieved from Institute for Digital Research & Education: <https://stats.idre.ucla.edu/spss/output/factor-analysis/>, /25.07.20/.

³³¹ Փոփոխականների կորելացվածության, KMO և Barlett's թեստերի մասին մանրամասն տե՛ս Hair, J., Black, W., Babin, B., & Anderson, R. (2014). Multivariate Data Analysis (7th ed.). Harlow: Pearson Education Limited, pp. 101-103

այստման կամ ճշգրտման VARIMAX ալգորիթով³³²: Գործոնային վերլուծության նախնական արդյունքների համաձայն՝ Երևանի ջրամատակարարումը կարող է նկարագրվել 3 գործոններով կամ լատենտ փոփոխականներով³³³:

Աղյուսակ 1. Ընդհանուր բացատրված վարիացիա

Component	Initial Eigenvalues			Extraction Sums of Squared Loadings			Rotation Sums of Squared Loadings		
	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %
1	6.070	55.183	55.183	6.070	55.183	55.183	5.972	54.289	54.289
2	2.361	21.463	76.647	2.361	21.463	76.647	2.255	20.504	74.793
3	1.512	13.745	90.392	1.512	13.745	90.392	1.716	15.598	90.392
4	.469	4.260	94.651						
5	.375	3.405	98.056						
6	.091	.829	98.885						
7	.061	.550	99.435						
8	.038	.346	99.781						
9	.013	.120	99.901						
10	.009	.082	99.983						
11	.002	.017	100.000						

Extraction Method: Principal Component Analysis.

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում, վերլուծության մեջ ներառված բոլոր ցուցանիշների ընդհանուր վարիացիայի մոտ 90,4%-ը կարելի է բացատրել 3 գործոններով, ընդ որում՝ առաջին գործոնը բացատրում է ընդհանուր վարիացիայի 55,2%-ը, սմանապես երկրորդ գործոնը՝ 21,5%-ը, իսկ երրորդը՝ 13,7%-ը:

Աղյուսակ 2. Ընդհանրությունների աղյուսակ (Communalities)

Ցուցանիշներ	Սկզբնական	Արտածում
Ջրարտադրություն	1.000	.845
Ջրապառում	1.000	.921
Ջրի կորուստ	1.000	.985
Ջրամատակարարման տևողություն	1.000	.968
Վթարներ	1.000	.958
Սպասարկվող բնակչություն	1.000	.927
Անձնակազմ	1.000	.725
Շահագործման ծախս	1.000	.935
Շահագործումից ստացված հասույթ	1.000	.967
Շահագործման ծախսածածկում	1.000	.918
Վճարների հավաքագրում	1.000	.793

Extraction Method: Principal Component Analysis.

³³² Տե՛ս Hair, J., Black, W., Babin, B., & Anderson, R. (2014). Multivariate Data Analysis (7th ed.). Harlow: Pearson Education Limited, pp. 113-114, 134-145

³³³ Լատենտ փոփոխականների օպտիմալ քանակն ընտրելիս կիրառվել են գրականությունում առաջարկվող մեթոդների համադրությունը. Կայսերի կանոնը՝ «սեփական արժեք մեծ է մեկից», Կատելի՝ գործոնների և սեփական արժեքի համադրության գրաֆիկը /scree plot/, ինչպես նաև վարիացիայի գումարային տոկոսը: Տե՛ս Hair, J., Black, W., Babin, B., & Anderson, R. (2014). Multivariate Data Analysis (7th ed.). Harlow: Pearson Education Limited, pp. 106-109, SPSS tutorials. (2020). SPSS Factor Analysis. Retrieved from SPSS tutorials: <https://www.spss-tutorials.com/spss-factor-analysis-tutorial/>, /25.07.20/, և Statistics Solutions. (2020). Conduct and Interpret a Factor Analysis. Retrieved from Statistics Solutions: <https://www.statisticssolutions.com/factor-analysis-2/>, /25.07.20/:

Ինչ վերաբերում է ցուցանիշների նշանակալիությանը, ապա համաձայն աղյուսակ 2-ի՝ բոլոր ցուցանիշները նշանակալի են՝ նշված երեք գործոնները ձևավորելու համար³³⁴։ Այնուամենայնիվ, համեմատության մեջ անձնակազմի ու վճարների հավաքագրման ցուցանիշները մի փոքր զիջում են մյուս ցուցանիշներին։

Թեև ընդհանուր բացատրված վարիացիայի մոտ 90,4%-ը նշանակալի արդյունք է տևտեսագիտական ինդիքների դեպքում, այնուամենայնիվ գործոնային վերլուծությունն իրականացվել է ևս երկու անգամ՝ բացառելով վճարների հավաքագրման և անձնակազմի ցուցանիշները՝ պարզելու, թե ինչպես կփոխվի ընդհանուր բացատրված վարիացիան։

Աղյուսակ 3. Ընդհանուր բացատրված վարիացիա

Component	Initial Eigenvalues			Extraction Sums of Squared Loadings			Rotation Sums of Squared Loadings		
	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %	Total	% of Variance	Cumulative %
1	5.639	62.655	62.655	5.639	62.655	62.655	5.410	60.106	60.106
2	1.713	19.035	81.690	1.713	19.035	81.690	1.786	19.846	79.952
3	1.252	13.908	95.599	1.252	13.908	95.599	1.408	15.646	95.599
4	.192	2.131	97.729						
5	.091	1.007	98.737						
6	.066	.732	99.468						
7	.032	.353	99.822						
8	.012	.130	99.951						
9	.004	.049	100.000						

Extraction Method: Principal Component Analysis.

Աղյուսակ 4. Ընդհանրությունների աղյուսակ (Communalities)

Ցուցանիշներ	Սկզբնական	Արտածում
Ջրարտադրություն	1.000	.969
Ջրսպառում	1.000	.919
Ջրի կորուստ	1.000	.982
Ջրամատակարարման տևողություն	1.000	.936
Վթարներ	1.000	.941
Սպասարկվող բնակչություն	1.000	.941
Շահագործման ծախս	1.000	.954
Շահագործումից ստացված հասույթ	1.000	.976
Շահագործման ծախսածածկում	1.000	.986

Extraction Method: Principal Component Analysis.

Ինչպես կարելի է տեսնել աղյուսակ 3-ում, վճարների հավաքագրման և անձնակազմի ցուցանիշները հեռացնելու արդյունքում ընդհանուր բացատրված վարիացիան բարելավվել է՝ 90,4%-ից դառնալով մոտ 95.6%: Այսինքն՝ ստացված 3 գործոններն այժմ բացատրում են ընդհանուր վարիացիայի մոտ 95.6%-ը: Միևնույն ժամանակ բոլոր ցուցանիշները, ըստ աղյուսակ 4-ի, զգալիորեն մոտ լինելով մեկին³³⁵, չարունակում են նշանակալի լինել երեք գործոնների ձևավորման գործում։

³³⁴ Ցուցանիշները նշանակալի են extraction value >0.5 պայմանի համաձայն: Տե՛ս Hair, J., Black, W., Babin, B., & Anderson, R. (2014). *Multivariate Data Analysis* (7th ed.). Harlow: Pearson Education Limited, p. 120.

³³⁵ Տե՛ս UCLA: **Statistical Consulting Group**. (2020). *A practical introduction to factor analysis: Exploratory factor analysis*. Retrieved from Institute for Digital Research & Education:

Գործոնների շրջված աղյուսակի (տե՛ս աղյուսակ 5) միջոցով ուսումնասիրելով ստացված 3 գործոնների կամ լատենտ փոփոխականների և նախնական ցուցանիշների փոխկապակցությունները՝ կտեսնենք, որ յուրաքանչյուր գործոնը նկարագրող փոփոխականի արժեքը մոտ է մեկի: Դա նշանակում է, որ ստացված գործոնների և նախնական փոփոխականների միջև կապը բավականին ուժգին է, որն ապացուցում է մոդելի նշանակալիությունը:

Աղյուսակ 5. Գործոնների շրջված մատրիցա

Ցուցանիշներ	Գործոն		
	1	2	3
Վթարներ	.970		
Շահագործումից ստացված հասույթ	.949		
Ջրամատակարարման տևողություն	.942		
Սպասարկվող բնակչություն	.939		
Ջրսպառում	-.912		
Ջրի կորուստ	.809		
Շահագործման ծախսածածկում		-.982	
Շահագործման ծախս		.795	
Ջրարտադրություն			.983

Extraction Method: Principal Component Analysis.
 Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

Ինչպես երևում է գործոնների շրջված մատրիցայից, նախնական ինը ցուցանիշներից վեցը ուժեղ կապված են առաջին գործոնի հետ: Այլ կերպ ասած՝ առաջին գործոնն ընդգրկում է ջրամատակարարման համակարգում վթարների քանակը, շահագործումից ստացված հասույթը, ջրամատակարարման տևողությունը, սպասարկվող բնակչությունը, սպառվող ջրի ծավալը և ջրի կորուստները: Հետևաբար առաջին լատենտ փոփոխականը պայմանականորեն անվանել ենք ջրամատակարարման որակ:

Երկրորդ գործոնը պարունակում է ջրամատակարարման համակարգի շահագործման ծախսածածկման ու շահագործման ծախսերի ցուցանիշները, հետևաբար այն անվանել ենք ջրամատակարարման ծախսեր կամ, այլ կերպ ասած, ջրամատակարար ընկերության ֆինանսական կենսունակություն (ֆինանսական ինքնաբավություն): Երրորդ ցուցանիշը, քանի որ ընդգրկում է ջրարտադրությունը, անվանել ենք ջրառ կամ ջրային ռեսուրսի օգտագործում:


Աղյուսակ 6. Լատենտ փոփոխականների ժամանակային շարքերը

Տարի	Ջրամատակարարման որակ	Ջրամատ. ծախսեր /ֆինանսական կենսունակություն	Ջրառ/ Ջրային ռեսուրսի օգտագործում
1995	-1.924980083	0.099008322	-0.912783599
1996	-1.633967808	-0.612106073	-1.001962919
1997	-1.363594754	-0.129979363	-1.188736286
1998	-0.853642675	-0.336264858	-1.888719272
1999	-0.919393101	-0.264395452	-0.187805243
2000	-0.879870315	-1.026725996	1.789840708
2001	-0.850272819	-0.764254126	1.430888214
2002	-0.834683354	0.002247716	1.291539183
2003	-0.529693443	2.804078549	1.131762959
2004	-0.005730842	1.638934094	0.563316102

<https://stats.idre.ucla.edu/spss/seminars/introduction-to-factor-analysis/a-practical-introduction-to-factor-analysis/>, /25.07.20/.

2005	0.363585569	1.901538526	0.315977878
2006	0.362022051	-0.283804465	0.809866948
2007	0.572575488	-0.969363803	0.789074968
2008	0.786529199	-1.445702906	0.527820687
2009	0.909325209	-0.55691318	0.478843458
2010	0.981180208	-0.676029976	0.24932981
2011	0.796214153	0.070652662	-0.174170677
2012	0.888011567	-0.375522883	-0.371933416
2013	0.921796045	0.008587264	-0.619787294
2014	1.091936465	0.02578817	-0.842980795
2015	1.067863796	0.135157193	-0.991058552
2016	1.054789445	0.755070586	-1.198322861

Աղյուսակ 6-ում ներկայացված են ստացված լատենտ փոփոխականների ժամանակային շարքերը, որոնք ուսումնասիրել ենք դրանց դինամիկան ներկայացնող գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 1. Լատենտ գործոնների դինամիկան

Լատենտ գործոնների դինամիկայի ուսումնասիրությունից երևում է, որ ջրամատակարարման որակը տարիների ընթացքում սահուն աճել է՝ աստիճանաբար բարելավվելով: Երևանի ջրամատակարարումն ապահովող ջրմուղ ընկերության ֆինանսական կենսունակությունը տարիների ընթացքում բավականին փոփոխվել է՝ վերջին տարիներին դրական միտում գրանցելով: Այսինքն՝ վերջին տարիներին ջրամատակարարման իրականացումը Երևան քաղաքում դարձել է ֆինանսապես ավելի կենսունակ, ինքնաձախսաձածվող և շահութաբեր: Ինչ վերաբերում է ջրառին, ապա համակարգի բարելավման, հոսակորուստների կրճատման և ջրաչափության ներդրման հետևանքով ջրառը համեմատաբար նվազել է, այսինքն՝ ջրային ռեսուրսներն ավելի արդյունավետությամբ են օգտագործվել:

Եզրակացություն

Ամփոփելով լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով Երևան քաղաքի ջրամատակարարման գնահատումը՝ կարող ենք ասել, որ ջրի մատակարարման ծառայությունը նկարագրող ցուցանիշները գործոնային վերլուծության արդյունքում խմբավորվել են 3 գործոններում: Այլ կերպ ասած՝ Երևանի ջրամատակարարումը կարելի է բնութագրել 3 լատենտ փոփոխականներով՝ ջրամատակարարման որակով,

ջրամատակարար ընկերության ֆինանսական կենսունակությամբ կամ ջրամատակարարման ծախսերով ու ջրառով կամ ջրային ռեսուրսի օգտագործմամբ:

Ստացված լատենտ փոփոխականները թույլ են տալիս մի կողմից՝ առավել ամբողջական դիտարկել ջրամատակարարումը, մյուս կողմից՝ նվազեցնել ուսումնասիրվող փոփոխականների թիվը և կիրառել ջրամատակարարման արդյունավետության, ինչպես նաև ջրամատակարարման ծառայության և տնտեսության փոխկապակցվածության ուսումնասիրություններում:

THE ASSESSMENT OF YEREVAN WATER SUPPLY BY LATENT VARIABLE MODELING

ANNA AVAGYAN

*«Jrtuk» LLC, Manager; ASUE, Chair of Economic Computer Science and
Information Systems, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The goal of the article is to assess the water supply of the city of Yerevan through latent variable modeling. The objective is to identify the latent variables underlying the characteristic indicators of the water supply of Yerevan and to reduce the number of studied indicators. To this end, first the indicators characterizing the water supply of Yerevan were studied in attempt to identify the correlation between selected indicators and to check the appropriateness of carrying out the factor analysis with those indicators. Then the factor analysis was implemented. The factor analysis was performed using the principal component method and VARIMAX algorithm for rotation of factors. SPSS software was applied for analysis. Time series available on IBNET were used.

During the study, analytical, mathematical and statistical methods were applied.

As a result of the study it was concluded that, the water supply of Yerevan can be characterized by 3 latent variables, allowing to consider the water supply more completely and to reduce the number of studied variables. The obtained results are applicable to the studies of water supply efficiency and of interrelation between water supply service and economy.

Keywords: *water supply, factor analysis, latent variable, water supply factor analysis, Yerevan water supply, assessment of Yerevan water supply, water supply efficiency.*

ОЦЕНКА ВОДОСНАБЖЕНИЯ ГОРОДА ЕРЕВАНА С ПОМОЩЬЮ МОДЕЛИРОВАНИЯ ЛАТЕНТНОЙ ПЕРЕМЕННОЙ

АННА АВАКЯН

*менеджер ООО «Джртук»,
аспирантка кафедры экономической информатики и
информационных систем АГЭУ,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является оценка водоснабжения города Еревана с помощью моделирования латентной переменной. Нашей задачей стало выявление латентных переменных, лежащих в основе показателей, характеризующих водоснабжение Еревана и

сокращение числа изучаемых индикаторов. С этой целью мы вначале изучили индикаторы, характеризующие водоснабжение города Еревана, стараясь выявить корреляцию между выбранными индикаторами и проверить целесообразность осуществления факторного анализа с помощью этих индикаторов. Далее проводился факторный анализ с помощью метода анализа главных компонент и VARIMAX алгоритма ротации факторов. Для анализа применялась программа SPSS. Использовались имеющиеся в IBNET числовые ряды.

В ходе исследования применялись аналитические, математические и статистические методы.

В результате анализа мы пришли к выводу о том, что водоснабжение города Еревана может быть охарактеризовано тремя латентными переменными, которые позволяют получить более целостную картину водоснабжения при меньшем числе исследуемых переменных. Полученные результаты могут применяться при изучении эффективности водоснабжения, а также взаимосвязи между услугами водоснабжения и экономикой.

Ключевые слова: *водоснабжение, факторный анализ; латентная переменная; факторный анализ водоснабжения, водоснабжение города Еревана; оценка водоснабжения города Еревана; эффективность водоснабжения.*

**ԲԱԶԵԼ III-Ի ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԵՏ***

ՀՏԴ 336.01(479.25)

ԵՎԳԵՆՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)

evgenyahayriyan@mail.ru

ՄԱՐԻԱ ԱՆՏՈՆՈՎԱ

Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության 1-ին կուրսի մագիստրանտ, ք.Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն (ԼՂՀ)

maria.antonova.99@mail.ru

Հոդվածի նպատակն է ներկայացնել ԲԱԶԵԼ III-ի ներդրման ազդեցությունը ՀՀ-ում ֆինանսական կայունության ապահովման վրա: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել ԲԱԶԵԼ III-ի ներդրման հետ կապված նոր նորմատիվների ներդրման գործընթացը, իրականացնել մակրոտնտեսական որոշ ցուցանիշների և կապիտալի համարժեքության նորմատիվների միջև գոյություն ունեցող կոռելյացիոն կապի վերլուծություն: Հետազոտության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական (համակարգային վերլուծություն, համադրում, վերլուծում, ինդուկցիա, դեդուկցիա և ստուգում՝ հետևելով մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկային և միտումներին), ինչպես նաև հատուկ գիտական (համեմատական-վերլուծական, նորմատիվ տրամաբանական տվյալների միջինացման, փաստերի համադրման, ստոխաստիկ վերլուծության) մեթոդներ: Հետազոտության ընթացքում փորձ է արվել հաշվարկել և ներկայացնել Բապել III-ի չափորոշիչների և ֆինանսական համակարգի կայունության ցուցանիշների միջև կոռելյացիոն կապը և արդյունքում վերհանել Բապել III-ի կապը ՀՀ-ում ֆինանսական համակարգի կայունության հետ:

Հիմնաբառեր՝ ֆինանսական կայունություն, կապիտալի համարժեքություն, Բապել III, իրացվելիություն, տնտեսական նորմատիվ:

Ֆինանսական համակարգի կայունության ապահովումը հանդիսանում է յուրաքանչյուր տնտեսության զարգացման կարևոր ու անհրաժեշտ գրավականը: Նշված խնդրի լուծումը առավել հրատապ է ՀՀ-ի նման փոքր տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ ֆինանսական համակարգի գործունեության արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված ընդհանուր տնտեսության ֆինանսական կայունությունը: Ֆինանսական համակարգի կայունության ապահովման նպատակով ՀՀ-ի ԿԲ-ն իրականացնում է թիրախային վերահսկողություն ՀՀ-ի բանկային համակարգի նկատմամբ՝ բանկային համակարգը դիտարկելով ՀՀ-ի ֆինանսական համակարգի կարևոր ու հիմնական բաղկացուցիչը: Բանկային վերահսկողության

* Հոդվածը ներկայացվել է 11.12.2020թ., գրախոսվել՝ 16.12.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

արդյունավետության բարձրացման գործընթացը գտնվում է անընդհատ կատարելագործման փուլում, ինչի արդյունքում բանկային վերահսկողության միջազգային նորմերը տեղայնացվում են ՀՀ-ում՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել բանկային համակարգի վերահսկողությունը: Հայաստանի Հանրապետության նման տնտեսությունների համար ֆինանսական համակարգի կայունությունը մեծապես պայմանավորված է բանկային համակարգի կայունությամբ: Բանկային համակարգի բնականոն գործունեության և, հետևաբար, տնտեսության ֆինանսական կայունության ապահովմանը վերաբերող կարևորագույն կարգավորող մարմին է հանդիսանում բանկային վերահսկողության Բազեյան կոմիտեն (այսուհետ՝ BCBS336):

Բանկային կանոնակարգերի բազեյան համաձայնագրերը երեքն են (Բազել I, II և III), որոնք սահմանվել են բանկային վերահսկողության Բազեյան կոմիտեի կողմից: Բազել III-ի ներդրումը ՀՀ-ում նպատակաուղղված է ՀՀ-ում բանկային համակարգի, հետևաբար նաև ֆինանսական համակարգի կայունության ամրապնդմանը և արդյունավետության բարձրացմանը:

Առաջին բազեյան համաձայնագիրը, որը հայտնի է Բազել I անվամբ, տրվել է 1988 թվականին և կենտրոնացել ֆինանսական հաստատությունների կապիտալի բավարարության վրա: Կապիտալի համարժեքության ռիսկը ֆինանսական կազմակերպությունների ակտիվները դասակարգում է 5 ռիսկային կատեգորիաների (0%, 10%, 20%, 50% և 100%): Բազել I-ի համաձայն՝ միջազգային բանկերում գործող բանկերից պահանջվում էր ունենալ ռիսկի 8% կամ ավելի ցածր կշիռ³³⁷:

Բազեյան երկրորդ համաձայնագիրը, որը կոչվում է «Վերանայված կապիտալի շրջանակ», բայց ավելի լավ հայտնի է որպես Բազել II, ընդունվել է 2004թ.-ին՝ անվանակոչելով սկզբնական համաձայնագրի թարմացումը: Այն կենտրոնացած էր երեք հիմնական ուղղությունների վրա՝ կապիտալի նվազագույն պահանջներ, կապիտալի համարժեքության գնահատման նկատմամբ ներքին վերահսկողության իրականացման գործընթաց և բանկային առողջ գործելաճի խրախուսում: Կենտրոնացման այս ոլորտները միասին հայտնի են որպես երեք հիմնասյուներ:

2008թ.-ին Lehman Brothers-ի՝ ժամանակի խոշորագույն ամերիկյան բանկի փլուզման և դրան հաջորդած ֆինանսական ճգնաժամի հետևանքով BCBS-ն որոշեց թարմացնել ու ամրապնդել բազեյան առաջին ու երկրորդ համաձայնագրերը: Բանկային վերահսկողության Բազեյան կոմիտեի կողմից 2010-11թթ.-ին մշակված «խաղի նոր կանոնները ստացան Բազել III անվանումը: Բազել III-ը մասնավորապես պահանջում է բանկերից, որպեսզի նրանց բաժնետիրական կապիտալը կազմի ակտիվների առավելագույն 4.5%-ը (ներկայումս՝ 2%), ինչպես նաև, այսպես կոչված, Առաջին մակարդակի (Tier 1) կապիտալի լրացուցիչ 2,5%-անոց բուֆեր, ինչպես նաև հակացիկլիկ բուֆեր, որը վարկավորման բուռն աճի ժամանակաշրջաններում թույլ է տալիս կարգավորողներին պահանջելու բանկերից պահուստավորել իրենց կապիտալի ևս 2,5%-ը այնպես, որ ընդհանուր կապիտալի համարժեքությունը պետք է կազմի 14-16%³³⁸:

Բազել III-ի ներդրման պահանջներից կարևորը, ինչպես նշվել է, կապիտալի որակի նկատմամբ պահանջներն են: Այս առումով Բազել III-ի պահանջները խստացվել են նաև իրացվելիության առումով: Ներդրվում է իրացվելիության նոր գործակից՝ Net Stable

³³⁶ Basel Committee on Banking Supervision.

³³⁷ OECD Economics Department Working Papers № 916 Systematically Important Banks and Capital Regulations Challenges // OECD Publishing, February, 2012.

³³⁸ Basel III: A global regulatory framework for more resilient banks and banking systems (revised version) // Basel Committee on Banking Supervision, June, 2011.

Funding Ratio (այսուհետ՝ NSFR), որով սահմանափակվում է բանկերի՝ կարծաժամկետ ռեսուրսներով երկարաժամկետ վարկերի ֆինանսավորումը՝ դրանով իսկ նվազեցնելով իրացվելիության անհամապատասխանության ռիսկը: NSFR-ի ներդրման արդյունքում ընկերությունները ստիպված կլինեն բախվել մեկ այլ խնդրի հետ՝ երկարաժամկետ ֆինանսավորման անհրաժեշտ մակարդակի բարձրացում մինչև 50%: Այսպիսով՝ Բազել III-ի ներդրումը կարևոր նշանակություն ունի բանկային համակարգի ֆինանսական կայունության պատշաճ մակարդակի ապահովման գործընթացում:

ՀՀ տնտեսության զարգացման կարևոր գրավականներից մեկը ֆինանսական կայունության ապահովումն է: Ֆինանսական կայունության ապահովման խնդիրը ամրագրված է ՀՀ-ի օրենսդրությամբ, որով և ամրապնդվում է նշված խնդրի կարևորությունը ՀՀ-ի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման համատեքստում:

Ինչպես հայտնի է, ՀՀ-ի ֆինանսական համակարգի կարևորագույն բաղադրիչը բանկային համակարգն է: Ապահովելով բանկային համակարգի ֆինանսական կայունությունը՝ զուգահեռաբար կապահովվի ընդհանուր տնտեսության ֆինանսական կայունությունը: Այս առումով խիստ կարևոր է ներդնել այնպիսի ստանդարտների, նորմատիվ իրավական ակտերի, կանոնակարգերի ամբողջություն, որը կնպաստի բանկային գործունեության ռիսկերի կրճատմանը, հետևաբար նաև ՀՀ-ի և ԱՀ-ի տնտեսությունների ֆինանսական կայունության ապահովմանը:

Բազել III-ի ներդրումը ՀՀ-ի բանկային համակարգում նշանավորվում է ՀՀ-ի ԿԲ-ի կողմից սահմանված մի շարք նորմատիվների դրույթաչափերի փոփոխությամբ, նորմատիվների հաշվարկի մեթոդաբանության փոփոխությամբ, ինչպես նաև նոր նորմատիվների ներդրմամբ: Բազել III-ի պահանջների ներդրման շրջանակներում ՀՀ-ի կենտրոնական բանկը մշակել և ընդունել է «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգը», որն ուժի մեջ է մտել 2019թ.-ի ապրիլից: Կարգի ընդունումը նպատակաուղղված է իրականացվող մակրոպոլիտիկալ քաղաքականության արդյունավետության մակարդակի բարձրացմանը և տնտեսական տարբեր իրավիճակներում բանկերի կողմից շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը:³³⁹

ՀՀ-ի կենտրոնական բանկի խորհրդի 30.12.2014թ. որոշման համաձայն 2017թ.-ի հունվարի 1-ից հայաստանյան բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալի սահմանաչափը ընդունվել է 30 մլրդ դրամ,³⁴⁰ որը իր հերթին հանգեցրել է վարկավորման ծավալների ավելացմանը և ֆինանսական կայունության ցուցանիշների բարելավմանը:

Բազել II համաձայնագրի շրջանակներում ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նվազագույն հարաբերակցությունը կազմում է 8%,³⁴¹ սակայն Բազել III համաձայնագրով այն սահմանվել է 10.5%, մինչդեռ ՀՀ-ում տվյալ հարաբերակցությունը 2001թ.-ին սահմանվել է 12% (Ն 1, նորմատիվ):

Բազել II-ի պահանջների շրջանակներում բաժնետիրական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների նվազագույն հարաբերությունը սահմանվում էր 2%, իսկ Բազել III-ի դեպքում այդ հարաբերությունը սահմանվեց որպես 4.5%:

ՀՀ-ի ԿԲ-ի կողմից սահմանվել է նոր տնտեսական նորմատիվ՝ հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը, որը ուժի մեջ է 2020 թվականի հունվարի 1-ից, դրույթաչափը նախատեսված էր 10 տոկոս, սակայն կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ ժամանակավոր սահմանված է 9.5 տոկոս դրույթաչափ: Նշված

³³⁹ ՀՀ-ի ԿԲ-ի 2018թ. Ֆինանսական կայունության հաշվետվություն

³⁴⁰ ՀՀ-ի կենտրոնական բանկի խորհրդի որոշումը ՀՀ-ի կենտրոնական բանկի խորհրդի 2007թ. փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

³⁴¹ Эрист энд Янг. «Внедрение стандартов БазельII/, БазельIII», (СНГ), 2013, С. 12-14.

Նորմատիվի սահմանումը բխում է Բազել III-ի պահանջներից և նպատակաուղղված է բանկերի կապիտալի որակի բարձրացմանը՝ դրանով իսկ ուղղված է վերջիններիս ֆինանսական կայունության մակարդակի բարձրացմանը:

Բազել III-ի պահանջի համաձայն՝ հիմնական կապիտալի հարաբերակցությունը պետք է լինի ոչ պակաս, քան 6%: Ընկերությունը համարվում է լավ կապիտալացված 6% և բարձր նորմատիվային կապիտալ ունենալու պարագայում: Պետք է նշենք, որ ՀՀ-ի ԿԲ-ի կողմից նշված նորմատիվը սահմանված է 8%:

ՀՀ-ի կենտրոնական բանկը, ելնելով ֆինանսական կայունության և բանկային համակարգի՝ ռիսկերի նկատմամբ ճկունության խնդիրներից, սահմանել է կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր երեք բուֆեր՝

- կապիտալի պահպանման բուֆեր,
- կապիտալի հակացիկլիկ բուֆեր,
- համակարգայնության բուֆեր:

Եթե առաջին երկու բուֆերները վերաբերում են ՀՀ-ի բանկային համակարգի բոլոր բանկերին, ապա վերջին բուֆերը սահմանվել է համակարգային նշանակություն ունեցող բանկերի համար:

Կապիտալի պահպանման բուֆերը 2020թ.-ից սկսած նախատեսված էր սահմանել 0.5% և աստիճանաբար ավելացվել է մինչև 2.5%: Այս բուֆերը նախատեսված է հիմնականում հնարավոր կորուստների կլանման և ռիսկերի նկատմամբ բանկային համակարգի ճկունության ապահովման համար, սակայն տարվա սկզբից ի հայտ եկած ճգնաժամով պայմանավորված՝ այս նորմատիվի կիրառումը ժամանակավոր դադարեցվել է:

ՀՀ-ի կենտրոնական բանկի կողմից հակացիկլիկ բուֆերի սահմանման նպատակը հիմնականում տնտեսության վրա ցիկլիկ տատանումների հետևանքների մեղմումն է. այսինքն՝ տնտեսական վերելքի շրջանում վարկավորման ծավալները զսպվում են (բարձրացվում է կապիտալի հակացիկլիկ բուֆերի պահանջը՝ ստեղծելով լրացուցիչ բուֆեր), իսկ անկման շրջանում ընձեռնվում են վարկավորման լրացուցիչ հնարավորություններ (բուֆերի պահանջը նվազեցվում է՝ կրճատելով դեվալուիզիոնի անհրաժեշտությունը): Կապիտալի հակացիկլիկ շեմը գտնվելու է 0%-ից մինչև 2.5%-ի միջակայքում:


Կապիտալի համակարգայնության շեմն ուժի մեջ է 2020թ.-ից սկսած և մինչև 2022թ.-ի հունվարի 1-ը սահմանվելու է 0.5%-ի չափով: Հետագա տարիներին այն աստիճանաբար բարձրացվելու է և, 2023թ. հունվարի 1-ից սկսած, կազմելու է 1.5%: Այն ուղղված է համակարգային նշանակություն ունեցող բանկերի՝ ճգնաժամային իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության աստիճանի բարձրացմանը:

Բազել III-ի պահանջներին համապատասխան՝ պետք է ներդրվի նաև Նոր Leverage Ratio գործակից, որը հաշվարկվում է որպես կապիտալի և ռիսկով չկշռված ակտիվների ու արտահաշվեկշռային պարտավորությունների հարաբերություն: Ըստ Բազել III-ի պահանջների՝ լեներջի գործակիցը սահմանվում է 3%:

Ընդհանուր կապիտալի նորմատիվի հաշվարկում լրացուցիչ կապիտալի հաշվարկման աստիճանական նվազումը նույնպես կարևոր է բանկերի կապիտալի որակի բարձրացման համար: ՀՀ-ի ԿԲ-ի կողմից ընդհանուր կապիտալի մեջ լրացուցիչ կապիտալի առավելագույն սահմանաչափը հիմնական կապիտալի 50%-ից իջեցվել է մինչև 20%:


Տարի		2015	2016	2017	2018	2019
Ցուցանիշ						
1.	Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին(%)	15,3	8,01	9,51	8,11	17,5
2.	Նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին(%)	13,3	5,11	6,01	5,51	15,2
3.	Զաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին(%)	8,6	9,5	6,9	6,2	5,3
4.	Շահութաբերությունն ըստ ակտիվների(%)	-0,5	0,3	0,9	1,5	1,5
5.	Շահութաբերությունն ըստ կապիտալի(%)	-3,5	1,7	5,7	9,4	9,7
6.	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին(%)	26,1	29,5	32,4	28,8	27,2
7.	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորությունների ն(%)	141,8	159,4	154,5	134,6	112,8

³⁴² Աղյուսակը կազմված է ՀՀ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:



Գծապատկեր 1. ՀՀ բանկային համակարգի կողմից փաստացի ապահովված կապիտալի համարժեքության նորմատիվը 2015-2019թթ., համեմատություն Բազել III-ի ու օրենսդրությամբ սահմանված նորմատիվի հետ³⁴³


Գծապատկերից երևում է, որ հայաստանյան բանկերում կապիտալի համարժեքության ցուցանիշն 2015-2019թթ.-ին տատանվել է 15.3%-19.5%-ի սահմաններում: Այսինքն՝ այս ցուցանիշի գծով ՀՀ-ի բանկերը բավարարում են Բազել III-ի պահանջներին: ՀՀ-ի բանկերի կողմից ապահովված կապիտալի համարժեքության մակարդակը 2015թ.ից սկսած աճել է՝ հասնելով իր ամենաբարձր կետին 2017թ.՝ 19.5%, իսկ այնուհետև սկսել է նվազել՝ կազմելով միջինում 17.5%:



Գծապատկեր 2. ՀՀ բանկային համակարգի կողմից փաստացի ապահովված նորմատիվային հիմնական կապիտալի հրապարակությունը ռիսկով կշռված ակտիվներին ցուցանիշը 2015-2019թթ. և Բազել III-ի պահանջներին համապատասխան սահմանային մեծությունը³⁴⁴


Գծապատկերից երևում է, որ ՀՀ-ի բանկերը բավարարում են վերոնշյալ պահանջները և համարվում են լավ կապիտալացված: Հայաստանյան բանկերի կողմից ապահովված մակարդակը ավելի քան 2 անգամ գերազանցում է բազելյան համաձայնագրի սահմանած մակարդակը. ցուցանիշի ամենացածր մակարդակը գրանցվել է 2015թ.-ին, իսկ ամենաբարձր մակարդակը՝ 2017թ.-ին, ինչը պայմանավորված էր ՀՀ-ի ԿԲ-ի կողմից ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի բարձրացման մասին որոշման ուժի մեջ մտնելուց հետո:

³⁴³ Գծապատկերը կազմված է ՀՀ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:
³⁴⁴ Գծապատկերը կազմված է ՀՀ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:



Գծապատկեր 3. ԳՅ բանկային համակարգի չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին 2015-2019թթ.³⁴⁵

Ինչպես տեսնում ենք գծապատկերում, հայաստանյան բանկերի վարկերի տեսակարար կշռում գերազանցում են աշխատող վարկերը. Այսպես՝ չաշխատող վարկերի և ընդհանուր վարկերի հարաբերության ամենաբարձր մակարդակը 2016թ.-ին էր՝ 9.50%, այնուհետև այն սկսել է նվազել՝ 2019թ.-ին կազմելով 5.30%³⁴⁶:




Գծապատկեր 4. ԳՅ բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների և ըստ կապիտալի 2015-2019թթ.³⁴⁷

³⁴⁵ Գծապատկերը կազմված է ԳՅ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:

³⁴⁶ Միջինացվել են ԳՅ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալները:

³⁴⁷ Գծապատկերը կազմված է ԳՅ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:

Գծապատկերում տեսնում ենք, որ 2015-ից մինչև 2018 թվականը բանկային համակարգի շահութաբերությունն ըստ կապիտալի աճել է համարյա 13 տոկոսային կետով՝ պահպանելով իր մակարդակը մինչև 2019թ.-ը՝ 9.7%: Շահութաբերությունն ըստ ակտիվների ևս ցուցաբերել է դրական դինամիկա՝ աստիճանական աճելով -0.5%-ից մինչև 1.5%:



Գծապատկեր 5. ՀՀ բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների հարաբերության դինամիկան ընդհանուր ակտիվներին և ցպահանջ պարտավորություններին 2015-2019թթ.³⁴⁸

2015-2019թթ.-ին ՀՀ-ի բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին ցուցանիչը հիմնականում կայուն է և տատանվում է 26.1%-ից մինչև 32.4% (2017թ.): ՀՀ-ի բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին ցուցանիչի ամենաբարձր մակարդակը գրանցվել է 2016թ.-ին՝ 159.4%, սակայն այդ կետից սկսած սկսել է կայուն նվազել՝ 2019թ.-ին կազմելով 112.8%:

ՀՀ-ի ֆինանսական համակարգի կայունության վրա Բազել III-ի ներդրման ազդեցության լծակները բացահատելու նպատակով իրակացվել է ստոխաստիկ վերլուծություն, որի համար հիմք ընդունված էլակետային տվյալներն ու բանաձևերը հետևյալն են.

Աղյուսակ2. Ստոխաստիկ վերլուծության իրականացման համար ընդունված էլակետային տվյալներ էլակետային տվյալներ ու բանաձև:³⁴⁹

Ցուցանիշ	ՀՆԱ(հազար դրամ)	Տնտեսական աճի տեմպ(%)	չաշխատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի մեջ(%)	ընդհանուր կապիտալ/ ռիսկով կշռված ակտիվներ (կապիտալի համարժեքություն) (%)
Տարի				

³⁴⁸ Գծապատկերը կազմված է ՀՀ-ի ԿԲ-ի կողմից հրապարակված ամսական տվյալների միջինացման հիման վրա:

³⁴⁹ Աղյուսակը կազմված է ՀՀ-ի ԿԲ-ի, ՀՀ-ի վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացված տվյալների հիման վրա:

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱՆ	SCIENTIFIC ARTSAKH	НАУЧНЫЙ АРЦАХ	№ 4(7), 2020	
2013	4555638.2	3.3	4.3	16.5
2014	4828626.3	3.6	6.4	16.1
2015	5043633.2	3.2	8.6	15.3
2016	5067293.5	0.2	9.5	18
2017	5564493.3	7.5	6.9	19.5
2018	6005058.1	4.5	6.2	18.1

$$r = \frac{x*y(\text{միջին}) - x(\text{միջին}) * y(\text{միջին})}{\sigma_x * \sigma_y}$$

$$\sigma_x = \sqrt{x^2(\text{միջին}) - x(\text{միջին})^2}$$

$$\sigma_y = \sqrt{y^2(\text{միջին}) - y(\text{միջին})^2}$$

Վերլուծության ընթացքում փորձ է արվել վեր հանել ՀՆԱ-ի, տնտեսական աճի տեմպի, ընդհանուր վարկերի մեջ չաշխատող վարկերի տեսակարար կշռի, կապիտալի համարժեքության ցուցանիշների միջև կոռելյացիոն կապը, որի արդյունքները ամփոփվել են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ 3. Ստոխաստիկ վերլուծության ամփոփ արդյունքները

	ՀՆԱ	Տնտեսական աճի տեմպ	չաշխատող վարկերի տեսակարար կշռը ընդհանուր վարկերի մեջ	ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ (կապիտալի համարժեքություն)
ՀՆԱ	1			
Տնտեսական աճի տեմպ	0.46478	1		
չաշխատող վարկերի տեսակարար կշռը ընդհանուր վարկերի մեջ	0.14399	-0.43273	1	
ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ (կապիտալի համարժեքություն)	0.64454	0.4375	0.03937	1

Կոռելյացիոն վերլուծության ընթացքում եկել ենք այն եզրակացության, որ կապիտալի համարժեքության ցուցանիշի 1% աճը (սվազումը) հանգեցնում է ՀՆԱ-ի աճին (սվազմանը) 0.644%-ով և տնտեսական աճի տեմպի աճին (սվազմանը) 0.437%-ով, իսկ ընդհանուր վարկերի մեջ չաշխատող վարկերի տեսակարար կշռի 1% աճը(սվազումը) հանգեցնում է տնտեսական աճի տեմպի սվազմանը (աճին) 0.433%-ով: Հետևելով վերջին տարիներին կապիտալի համարժեքության փաստացի ցուցանիշի

դինամիկային՝ կարող ենք ասել, որ վերջինիս միջին տարեկան աճի տեմպը կազմում է 0.5%: Համադրելով իրականացված վերլուծության արդյունքների հետ՝ նշենք, որ առաջիկայում կանխատեսվող կապիտալի համարժեքության ցուցանիշի 0.5 տոկոսային կետով աճը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի աճին 0.322 տոկոսային կետով և տնտեսական աճի տեմպի ավելացմանը 0.22 տոկոսային կետով: Վերջին տարիներին չափատող վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերի մեջ նվազում է 0.8% միջին տարեկան տեմպով, ինչից կարող ենք եզրահանգել, որ հաջորդ ժամանակաշրջանում նման դինամիկայի առկայության դեպքում տնտեսական աճի տեմպը կավելանա 0.35 տոկոսային կետով:

Բազել III-ի պահանջների լիարժեք ներդրումը կարևոր նշանակություն ունի ՀՀ-ի ֆինանսական համակարգի կայունության մակարդակը ավելի բարձր հարթակ տեղափոխելու գործընթացում: Բազել III-ի պահանջները հիմնականում թիրախավորված են՝ բարելավելու ինչպես բանկերի կապիտալի որակական բնութագրերը, այնպես էլ իրացվելիության գործող մակարդակը: Բազել III-ի ներդրմամբ պայմանավորված՝ տնտեսական նորմատիվների փոփոխությունները իրենց շղթայական ազդեցությունը կունենան ՀՀ-ի ֆինանսական համակարգի կայունության վրա: Ֆինանսական համակարգի կայունության ապահովման արդյունքային նպատակը տնտեսությունում տնտեսական աճի ապահովումն է, որը նաև հանդիսանում է յուրաքանչյուր պետության տնտեսական քաղաքականության առանցքային նպատակներից մեկը: Բազել III-ի պահանջներով պայմանավորված՝ բանկերի նկատմամբ խստացվող իրացվելիության նորմատիվները նպատակ ունեն ավելի կայունացնել բանկերի ֆինանսական դրությունը՝ դրանով իսկ ապահովելով վերջիններիս ֆինանսական կայունությունը: Այս առումով բանկերը ստիպված կլինեն հավելյալ ծախսեր կատարել իրացվելիության նորմատիվների պահպանման նպատակով: Նշված ծախսերի փոխհատուցման նպատակով բանկերի միջև առկա մրցակցության պայմաններում վերջիններիս կողմից մոտ հեռանկարում հնարավոր չի լինի վարկերի տոկոսադրույքների բարձրացում: Այս ամենի արդյունքում միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածում հնարավոր է տեղի ունենա բանկային գործունեության արդյունավետության մակարդակի իջեցում՝ շահութաբերության ցուցանիշի նվազմամբ: Այս առումով ցանկալի կլինի, որ տնտեսական նորմատիվների խստացման դեպքում ՀՀ-ի ԿԲ-ի կողմից հաշվի առնվի նաև բանկերի գործունեության արդյունավետության վրա վերջիններիս ազդեցության հետևանքները, քանի որ կարճաժամկետ հատվածում ֆինանսական համակարգի կայունության ապահովումը կարող է միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարում հանգեցնել բանկերի գործունեության արդյունավետության նվազմանը: Արդյունքում տեղի կունենա բանկերում իրականացվող ներդրումների անկում, որը կհանգեցնի բանկերի կապիտալի նվազմանը, որն էլ հետագայում կարող է վտանգ հանդիսանալ տնտեսությունում ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար:

BASEL III RELATIONS WITH ENSURING FINANCIAL SYSTEM STABILITY IN ARMENIA

YEVGENYA HAYRIYAN

*Member of the Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA),
Artsakh State University, Department of Financial accounting,
Faculty of Economics, Ph.D. in Economics, Associate Professor,
Stepanakert, Republic of Artsakh (NKR)*

MARIA ANTONOVA

*Artsakh State University, Faculty of Economics, 1st year Master,
Stepanakert, Republic of Artsakh (NKR)*

The purpose of this article is to present the impact of the introduction of BASEL III on ensuring financial stability in the Republic of Armenia. The aim is to study the process of introducing new standards related to the introduction of BASEL III, to analyze the existing correlation between some macroeconomic indicators, capital adequacy standards. During the research, general scientific methods (systemic analysis, comparison, analysis, induction, deduction and testing, following the dynamic trends of macroeconomic indicators) were used, as well as special scientific (comparative-analytical, normative logical averaging, fact-finding, stochastic analysis). Through the research, an attempt was made to calculate and present the correlation between Basel III standards and financial system stability indicators and as a result, to reveal the connection between Basel III and the stability of the financial system in Armenia.

Keywords: Financial stability, capital adequacy, Basel III, liquidity, economic standard.

ОТНОШЕНИЯ БАЗЕЛЯ III С ОБЕСПЕЧЕНИЕМ СТАБИЛЬНОСТИ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ В АРМЕНИИ

ЕВГЕНИЯ АЙРИЯН

*член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
кандидат экономических наук, доцент кафедры финансового учета экономического
факультета Арцахского государственного университета,
г.Степанакерт, Республика Арцах (НКР)*

МАРИЯ АНТОНОВА

*магистрант первого курса экономического факультета (финансы)
Арцахского государственного университета,
Степанакерт, Республика Арцах (НКР)*

Цель данной статьи – представить влияние внедрения Базеля III на обеспечение финансовой стабильности в Республике Армения. Из данной цели исходят следующие задачи: изучить процесс внедрения новых стандартов, связанных с внедрением Базеля III, проанализировать существующую корреляционную зависимость между некоторыми макроэкономическими показателями, стандартами достаточности капитала.

В ходе исследования использовались общенаучные (системный анализ, сравнение, анализ, индукция, дедукция и проверка, при которой отслеживалась динамика и тенденции макроэкономических показателей), а также специальные научные (сравнительно-аналитический, нормативно-логическое усреднение данных, сравнение фактов, стохастический анализ) методы.

В ходе исследования была предпринята попытка рассчитать и представить корреляцию между критериями Базеля III и показателями устойчивости финансовой системы и в результате выявить связь между Базелем III и стабильностью финансовой системы в Армении.

Ключевые слова: *финансовая устойчивость, эквивалентность капитала, Базель III, ликвидность, экономический норматив.*

ՉՏԴ 657.6

ՀՌԻՓՍԻՍԵ ՀՈՎԱԵՓՅԱՆ

*«Հայփոստ» ՓԲԸ կրտսեր ներքին աուդիտոր,
 ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտոր,
 Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և
 կառավարման ֆակուլտետի ասպիրանտ,
 ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
hripsime.94@mail.ru*

Հոդվածի նպատակն է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնել ներքին աուդիտին վերաբերող այն հիմնական ռիսկերը, որոնք Էական ապդեցություն ունեն ներքին աուդիտի գործառույթի արդյունավետ իրականացման գործում և որոնց մի մասին շատ հապվադեպ է անդրադարձ կատարվում: Այդ ռիսկերը կարող են ունենալ ինչպես ընդհանրական, այնպես էլ տեղային բնույթ՝ կապված կազմակերպությունների և գործունեության տեսակների հետ:

Մասնագիտական գրականության, մասնագիտական կառույցների տարատեսակ հրապարակումների, ինչպես նաև տեղական ու միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության միջոցով ներկայացվել են մշտական ու իրավիճակային խնդիրները, որոնք ներքին աուդիտին ներհատուկ ռիսկերի առաջացման հիմքում են: Վերլուծական, համեմատական ու համադրական մեթոդների կիրառմամբ ներկայացվել են տեսական ու գործնական հիմնավորումներ՝ կապված ներքին աուդիտին վերաբերող ռիսկերի առանձնահատկությունների և ներգործության մակարդակի հետ:

Հետազոտության արդյունքում առանձին ռիսկերի գծով կատարվել են մի շարք եպրահանգումներ ու արվել են առաջարկություններ դրանց ճանաչողական մակարդակի բարձրացման և հնարավորության սահմաններում վերջիններիս կառավարման ուղղությամբ:

Հիմնաբառեր՝ ներքին աուդիտ, ռիսկեր, ընտրանք, խարդախություն, ծախսողում, հեղինակություն, անկախություն, կիրբերանվտանգություն, ճգնաժամակայունություն:

Ներածություն: Ռիսկը, կապված լինելով անորոշության և այս կամ այն երևույթի տեղի ունենալու կամ չուենալու հավանականության հետ, բոլոր ժամանակներում կյանքի տարբեր ոլորտների և գործունեության տարբեր տեսակների անբաժան մասն է կազմել: Այս համատեքստում ներքին աուդիտը, հանդիսանալով անկախ, անաչառ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործառնությունների բարելավմանն ու արժեքի ավելացմանը, նույնպես գերծ չէ իրեն հատուկ ռիսկերից: Այն հետևողական մոտեցմամբ գնահատում ու բարելավում է ներքին հսկողության, ռիսկերի կառավարման ու կորպորատիվ կառավարման արդյունավետությունը՝ օգնելով կազմակերպությանն իրագործել իր նպատակները³⁵⁰: Այս ճանապարհին ներքին աուդիտն առնչվում է տարատեսակ ռիսկերի, որոնք կարող են լինել ինչպես ընդհանրական տարբեր տեսակի կազմակերպությունների և

* Հոդվածը ներկայացվել է 12.10.2020թ., գրախոսվել՝ 20.10.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

³⁵⁰ <https://iia.am/mandatory-guidance/>, 18.10.2020 (IIA Armenia: Mandatory Guidance).

գործունեության ոլորտների համար, այնպես էլ կարող են տարբերվել՝ կախված կազմակերպության կամ գործունեության առանձնահատկություններից: Այդ ռիսկերի մի մասին պարբերաբար և խորությամբ անդրադարձ է կատարվում տարատեսակ մասնագիտական համաժողովների ու քննարկումների ընթացքում, ինչպես նաև հրապարակումների և ուղեցույցների տեսքով, մինչդեռ առկա են ռիսկեր, որոնց մասին բավականին քիչ է խոսվում: Հարկ է նշել, որ ներքին աուդիտին ներհատուկ ռիսկերի վերաբերյալ մասնագիտական հանրության շրջանակներում հիմնարար գիտելիքների և իրազեկվածության բավարար մակարդակի առկայությունը մեծապես կարող է բարձրացնել ներքին աուդիտի գործառույթի իրականացման արդյունավետությունը, ինչպես նաև նոր հնարավորություններ ստեղծել այդ ռիսկերի կառավարման մեթոդների և ուղեցույցների մշակման համար: Միևնույն ժամանակ ոչ մասնագիտական հանրության կողմից ներքին աուդիտին վերաբերող հիմնական ռիսկերի տեղեկացվածությունն էլ ավելի կիեշտացնի և արդյունավետ կդարձնի համագործակցությունը ներքին աուդիտի ստորաբաժանման հետ, եթե, իհարկե, ոչ մասնագիտական հանրությունն ունի ներքին աուդիտի գործառույթի կարևորության բավարար գիտակցություն:

Աշխատանքի հետագա շարադրանքում կներկայացնենք ներքին աուդիտին ներհատուկ հիմնական ռիսկերն իրենց առանձնահատկություններով, հիմնախնդիրներով, տեսական ու գործնական հիմնավորումներով, ինչպես նաև կփորձենք ռացիոնալ մտածողության շրջանակներում յուրաքանչյուր ռիսկի արդյունավետ կառավարման գծով կատարել համապատասխան առաջարկություններ:

Ներքին աուդիտի գործառույթի անկախությանն ու անաչառությանը վերաբերող ռիսկեր: Անկախությունն ու անաչառությունը ներքին աուդիտում կարևոր տեղ ունեն, և այդ կարևորությունը նոր մարտահրավերներին զուգընթաց էլ ավելի է աճում: Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներում (այսուհետ՝ ստանդարտներ) բնութագրող ստանդարտների 1100-1120-ը վերաբերում են հենց անկախությանն ու անաչառությանը, իսկ 1130-ը՝ անկախության ու անաչառության խաթարմանը: Միևնույն ժամանակ «Էթիկայի կանոններ»-ի սկզբունքներ և վարքագծի կանոններ բաժիններում անաչառության հիմնարար կանոններն են ներկայացվում:

Ընդհանրապես ներքին աուդիտի գործառույթի անկախությունը ազատությունն է այնպիսի պայմաններից, որոնք սպառնում են վերջինիս պարտականությունների անկողմնակալ իրականացմանը: Անաչառությունն էլ անկողմնակալ վերաբերմունքի դրսևորում է, որը թույլ է տալիս ներքին աուդիտորներին իրականացնել հանձնառություններն այնպես, որ նրանք վստահեն իրենց աշխատանքի արդյունքին և որակի վերաբերյալ փոխգիշումներ չիրականացնեն: Անաչառությունը պահանջում է, որ ներքին աուդիտորներն աուդիտորական խնդիրների վերաբերյալ իրենց դատողությունները չստորադասեն այլոց: Անաչառության սպառնալիքները պետք է կառավարվեն յուրաքանչյուր աուդիտորի, հանձնառության, ֆունկցիոնալ ու կազմակերպական մակարդակներում³⁵¹: Նշենք, որ ներքին աուդիտի անկախության ապահովման համար կարևոր են նաև պատշաճ հաշվետվողականության մեխանիզմների կիրառումը, ինչպես նաև կազմակերպության ներսում, ղեկավարության ու խորհրդի հետ ունեցած փոխհարաբերությունների մակարդակը: Անկախության ու անաչառության ապահովման գործում կարևոր գործոն է նաև շահերի բախման հանգամանքի բացառումը:

³⁵¹ Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներ, Ստ. 1100 «Անկախություն և անաչառություն» (Մեկնաբանություն), https://iia.am/wp-content/uploads/2017/01/StandardsGlossary_2017.pdf (18.10.2020)

Ինչպես երևում է ստանդարտներում տրված սահմանումներից ու մեկնաբանություններից, անկախության ու անաչառության խաթարումը ուղղակիորեն վնաս կարող է հասցնել ներքին աուդիտի գործառույթի որակին, վստահելիությանը և աշխատանքի արդյունքի արժեքայնությանը, ուստի կարևոր է ճիշտ գնահատել դրանց սպառնացող ռիսկերը և համապատասխան քայլեր ձեռնարկել բացասական ազդեցության բացառման կամ մեղմման ուղղությամբ:

Առաջարկություն: Ներքին աուդիտի գործառույթի անկախությանն ու անաչառությանը վերաբերող ռիսկերի պատշաճ կառավարման համար հարկավոր է ի սկզբանե մշակել այնպիսի կանոնադրություն և փոխհարաբերությունների մեխանիզմներ, որ հնարավոր լինի առավելագույնս նվազեցնել կախվածության գործոնները, ստեղծել արդյունավետ հաշվետվողականության համակարգ և բացառել շահերի բախումները:

Հեղինակության հետ կապված ռիսկեր: Ներքին աուդիտի կարևորագույն բնութագրիչներից մեկը դրա հեղինակությունն է: Ներքին աուդիտի, ինչպես և այլ մասնագիտությունների դեպքում հեղինակությունը տվյալ մասնագիտության վերաբերյալ ձևավորված պատկերացումն է, որը կապված է վերջինիս ընդհանուր էության, նշանակության, որակի և առանցքային հատկանիշների հետ: Տվյալ դեպքում հեղինակության ձևավորման հիմքում բնականաբար ընկած են ստանդարտներով սահմանված հիմնարար նորմերն ու էթիկայի կանոնները, դրանց համապատասխանելու կամ չհամապատասխանելու մակարդակը, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա ընկալումը: Ներքին աուդիտի դեպքում հեղինակությունը կարևոր է այնքանով, որ կարելի է ասել հիմնական դեպքերում հենց դրա մակարդակից է կախված բարձրագույն ղեկավարության, խորհրդի, ինչպես նաև կազմակերպության այլ ստորաբաժանումների վերաբերմունքը ներքին աուդիտի գործառույթի ու ստորաբաժանման նկատմամբ: Վերջինս ուղղակիորեն կարող է ազդել տարբեր մակարդակներում համագործակցության, ներքին աուդիտի բուն գործառույթի իրականացման արդյունավետության, արժանահավատության և վստահելիության աստիճանի ձևավորման վրա: Այս առումով հարկավոր է հասկանալ, թե ինչ խնդիրների կամ գործոնների հետևանքով կարող են ներքին աուդիտի հեղինակության հետ կապված ռիսկեր առաջանալ:

Ընդհանրապես ամեն մի էական սխալ, ոչ ստույգ, ոչ ժամանակին և/կամ ոչ տեղին հաշվետվություն կարող են մեղմ ասած ոչնչացնել ներքին աուդիտի հեղինակությունը: Հետևաբար այս առումով վճռորոշ է մասնագիտական գիտելիքներին ու հմտություններին տիրապետելու մակարդակը, ներքին աուդիտի ստորաբաժանման, յուրաքանչյուր անդամի ու ղեկավարի մասնագիտական կարողությունը, անձնական պատասխանատվությունը, ինչպես նաև պարտաճանաչ ու բարեխիղճ մոտեցումն իրականացվող աշխատանքի նկատմամբ: Ավելացնենք նաև, որ ներքին աուդիտի հեղինակության համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ստորաբաժանման անդամների ներգրավվածությունը կոռուպցիոն և/կամ այլ հանցավոր գործընթացներում: Նման փաստացի դեպքերի և առհասարակ տեսական հնարավորության մասին շատ հազվադեպ է խոսվում, քանի որ այն բավականին բարդ ու դժվար բացահայտելի երևույթ է, այդուհանդերձ կարծում ենք, որ դրա հնարավորությունը չի կարելի բացառել:

Ինչպես արդեն նշվել է, ներքին աուդիտի հեղինակությունը ձևավորվում է նաև դրա գործառույթի վերաբերյալ պատկերացումներով: Այս առումով հարկ է նշել, որ ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ թյուրընկալումները լուրջ խնդիր կարող են հանդիսանալ վերջինիս հեղինակության պահպանման համար: Նշված թյուրընկալումների թվում կարող են լինել ներքին աուդիտորներին հաշվապահի, վերահսկողի, ոստիկանի և նմանատիպ այլ՝ ներքին աուդիտի էությունից տարբերվող

գործառնությունների վերագրումը: Միայն պատկերացումների ռիսկը վտանգավոր է այնքանով, որ թե՛ բարձրագույն ղեկավարությունը, թե՛ խորհուրդը և, իհարկե, կազմակերպության տարբեր ստորաբաժանումներն այլ ակնկալիքներ են ունենում ներքին աուդիտորներից և այլ հարթություններում են հարաբերություններ ձևավորում նրանց հետ, իսկ ակնկալիքների չարդարացման դեպքում, բնականաբար, նշված խմբերի պատկերացումներում ներքին աուդիտի հեղինակության անկում է տեղի ունենում:

Առաջարկություն: Ներքին աուդիտի հեղինակության պահպանման համար հարկավոր է նախևառաջ աշխատանքներ տանել կազմակերպության ներսում, ինչպես նաև բարձրագույն ղեկավարության և խորհրդի մոտ առկա ընկալումները ճիշտ ու հստակ ուղիով տանելու ուղղությամբ: Կարևոր են նաև համապատասխան գիտելիքներով ու հմտություններով, բարեխիղճ, ինչպես նաև բարձր պատասխանատվությամբ մասնագետներով թիմի համալրումը և բարձրորակ աշխատանք իրականացնելու համար նրանց պարբերաբար, պատշաճ վերապատրաստումը:

Ձախողման ռիսկը: Ներքին աուդիտին ներհատուկ ռիսկերը շատ առումներով միմյանց հետ փոխկապակցված են: Այդպիսի ռիսկերից է ձախողման ռիսկը: Այն բավականին լայն շրջանակ ունի և կարող է հիմք հանդիսանալ այլ ռիսկերի (այդ թվում՝ արդեն քննարկված) առաջացման և/կամ խորացման համար: Այս համատեքստում հարկ է հասկանալ, թե որտեղ կամ ինչպես կարող է ձախողվել ներքին աուդիտը:

Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA-Global) նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն Ռիչարդ Չեմբերսի դիտարկմամբ՝ ներքին աուդիտը կարող է ձախողվել՝ խուսափելով բարձր ռիսկային ոլորտներից կամ դիտարկելով խիստ նեղացված շրջանակներ, անտեսելով կազմակերպության մշակույթը, թերանալով կամ չիրականացնելով հետստուգման աուդիտներ, ինչպես նաև թերազնահատելով կամ գերազնահատելով նշանակալից խնդիրները³⁵²: Ամբողջությամբ ընդունելով նշված դիտարկումները՝ հավելենք նաև, որ մասնագիտական գրականության, հրապարակումների, ինչպես նաև գործնական փորձի ուսումնասիրությունից ելնելով՝ այդ շարքը կարելի է ընդարձակել: Մասնավորապես ներքին աուդիտը կարող է ձախողվել առանցքային տեղեկատվության հաղորդակցման գործընթացում, վստահության ձեռքբերման և/կամ ամրապնդման, ճիշտ հավաստիացման տրամադրման, ինչպես նաև կազմակերպությունում պատշաճ դիրքավորման հարցերում:

Այս համատեքստում ներկայացնենք աշխարհին առավել հայտնի՝ ճապոնական Toshiba Inc. ընկերության ներքին աուդիտի ձախողման օրինակը: Մեծ հեղինակություն վայելող կորպորացիան, որ զբաղվում է կենցաղային էլեկտրոնիկայից մինչև միջուկային էներգիայի տեխնոլոգիաների պատրաստմամբ, 2015թ.-ին հայտնվեց համաշխարհային մակարդակի սկանդալի կիզակետում: Անկախ քննչական կոմիտեի կողմից բացահայտվել էր, որ Կորպորացիան 2008-2014թթ.-ին ուռճացրել էր իր շահույթը 151.8 մլրդ իենի չափով (1.2 մլրդ ԱՄՆ դոլար), որն արդյունք էր հաշվապահական հաշվառման մի շարք լուրջ խախտումների: Ուշագրավ էր նաև, որ Toshiba-ն ճապոնիայում առաջիններից էր, որ որդեգրել էր կորպորատիվ կառավարման (ԿԿ) բարեփոխումները, և վերջինիս կորպորատիվ կառավարման կառուցվածքը համապատասխանում էր ԿԿ ստանդարտներին: Կորպորացիայի հետ կապված այս լուրջ ձախողումն իհարկե բազում հարցեր էր առաջացրել թե՛ առհասարակ Կորպորացիայի կառավարման, թե՛ արտաքին և թե՛ ներքին աուդիտի մասով: Անկախ քննչական կոմիտեի աշխատանքի արդյունքում պարզվել էր, որ Ընկերության կորպորատիվ աուդիտի ստորաբաժանումը առավելապես զբաղվել էր յուրաքանչյուր ընկերությունում մենեջմենթին խորհրդատվության

352

<https://iaonline.theiia.org/blogs/chambers/2019/Pages/Five-Ways-Internal-Audit-Can-Fail-to-Adequately-Serve-Its-Organization.aspx> (18.10.2020).

տրամադրմամբ՝ որպես գործառնական ստորաբաժանում, և հազվադեպ էր ծառայություններ մատուցել հաշվապահության պատշաճ իրականացման հետ կապված հավաստիացման գծով: Պարզվել էր նաև, որ այստեղ աուդիտ կոմիտեն (Ստանդարտներում «խորհուրդ» բառը կարող է վերաբերել կոմիտեի կամ այլ մարմնի, որին կառավարող մարմինը լիազորել է հստակ գործառնություններ (օրինակ՝ աուդիտ կոմիտե)³⁵³) ո՛չ անկախ է եղել, ո՛չ էլ կարող (capable): աուդիտ կոմիտեի 3 արտաքին անդամները բացարձակապես գիտելիքներ չեն ունեցել ֆինանսներից ու հաշվապահությունից: Բացի այդ, ներքին աուդիտը ևս անկախ չի եղել մենեջմենթից: Չնայած հավաստիացման գործառնության վրա սահմանափակ կենտրոնացմանը՝ թվով 2 աուդիտի ընթացքում ի հայտ էին եկել որոշակի անհամապատասխանություններ, որոնք կարող էին շատ ավելի վաղ հայտնաբերել հաշվապահության հետ կապված խնդիրները, սակայն դրանք դասվել էին իրազեկման համար ոչ բավարար նշանակության դիտարկումների թվին³⁵⁴: Այս դեպքում կարելի է վստահորեն փաստել, որ ներքին աուդիտը ձախողել է իր գործառնություն մի քանի առումներով՝ չի իրականացրել իր գլխավոր՝ հավաստիացման գործառնությունը, չի եղել անկախ, կարողունակ (competent), նշանակալի հանգամանքներին պատշաճ ուշադրություն չի դարձրել և առհասարակ առաջնահերթությունների մասով խնդիրներ է ունեցել, ինչի արդյունքում արժեք չի ավելացրել Կորպորացիայի համար, ոչ էլ բարելավել է վերջինիս գործունեությունը: Ներքին աուդիտն էլ, լինելով աուդիտ կոմիտեի «աչքերն ու ականջները», իր ձախողմամբ նպաստել է կորպորատիվ կառավարման համակարգի ձախողմանը:

Մեկ այլ օրինակ է բրիտանական 2-րդ ամենամեծ՝ Carillion PLC (Public Limited Company) շինարարական և լոգիստիկ ընկերության սնանկացումը 2018թ.-ի սկզբին: Carillion-ի «մայրամուտը» մեկնարկել էր 2017թ.-ի հուլիսից: Այդ ժամանակ Ընկերությունը հայտնել էր ընդհանուր շուրջ 845 մլն ֆունտ ստերլինգ արժողությամբ ոչ շահութաբեր նախագծերի առկայության մասին, իսկ վերջին տարիների պարտքն էլ կազմում էր ավելի քան 600 մլն ֆունտ ստերլինգ: Գլխավոր գործադիր տնօրենը հրաժարական էր տվել, Ընկերությունն էլ չեղարկել էր շահաբաժինների վճարումը: Նույն թվականի վերջին ամիսներին դրությունն ավելի էր վատթարացել. պարտքն աճել էր մինչև 900 մլն ֆունտ ստերլինգ: 2017թ.-ի սեպտեմբերին Ընկերությունը հայտնեց ավելի քան 1 մլրդ ֆունտ ստերլինգի վնասի մասին, իսկ նոյեմբերին ղեկավարները հայտարարեցին, որ Ընկերությունը չի կարողանա կատարել իր պարտքային պարտավորությունները, ինչպես նաև հայտնեցին, որ կենսաթոշակային ֆոնդն էլ շուրջ 600 մլն ֆունտ ստերլինգի չափով թերի է ֆինանսավորվել: Բրիտանիայի կառավարությունը, որը հենված էր Carillion-ի գործունեության վրա՝ սկսած ռազմաբազաներից մինչև դպրոցների սննդով ապահովում, փորձեր կատարեց փրկելու Ընկերությունը, սակայն ոչինչ չօգնեց, քանի որ ֆինանսական վիճակը գնալով էլ ավելի էր վատթարանում: Արդյունքում 2018թ.-ի հունվարին մեկնարկեց Ընկերության սնանկության գործընթացը, ինչի արդյունքում տասնյակ հազարավոր աշխատակիցներ կորցրին իրենց աշխատանքը. այդ պահի դրությամբ Ընկերությունն ուներ ընդամենը 29 մլն ֆունտ ստերլինգ կանխիկ գումար և շուրջ 1.3 մլրդ ֆունտ ստերլինգի պարտք:

Այս Ընկերության դեպքում ևս բազում հարցեր ծագեցին թե՛ ներքին և թե՛ արտաքին աուդիտի հետ կապված: Պարզվել էր, որ կազմակերպությունը արտապատվիրում էր ներքին աուդիտի գործառնությունը: Խորհրդարանական լուսմների

³⁵³ International Standards For The Professional Practice of Internal Auditing (Standards), The IIA, 2016 (Effective: January 2017), (<https://na.theiaa.org/standards-guidance/Public%20Documents/IPPF-Standards-2017.pdf>, 18.10.2020).

³⁵⁴ <https://iaonline.theiaa.org/blogs/chambers/2015/lessons-from-toshiba-when-corporate-scandals-implicate-internal-audit>, https://www.business-standard.com/article/opinion/toshiba-a-case-of-internal-audit-failure-115080900760_1.html (18.10.2020).

Ժամանակ գլխավոր աուդիտորը նշել էր, որ իրենք ի սկզբանե աշխատել են եռամյա պլանով, որի հիման վրա էլ կազմել են տարեկան պլանները: Նրանք կատարել են դա՝ քննարկելով Ընկերության հետ և տրամադրելով աուդիտ կոմիտեին՝ ներկայացնելով նաև, թե ինչ աշխատանքներ են փաստացի կատարում և թե ինչը չեն կատարում: Այս դեպքում պայմանագրային կողմ հանդիսացող արտապատվիրվող ներքին աուդիտի գործառույթը դժվար թե բավարար հնարավորություններ ու լծակներ ունենար աուդիտ իրականացնելու՝ պայմանագրով նախատեսվածից և պատվիրատուի թույլատրածից առավել լայն շրջանակներ ընդգրկելով³⁵⁵: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում առկա էր եղել նաև ներքին աուդիտի կարգավիճակի (ստատուսի) հետ կապված լուրջ խնդիր: Արդյունքում նշանակալի ու կործանարար խնդիրները բաց էին թողնվել, և ներքին աուդիտի գործառույթը ձախողվել էր արժեքի ավելացման ու կազմակերպության գործառույթի բարելավման տեսանկյունից:

Առաջարկություն: Վերը նշված օրինակների ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ ներքին աուդիտի գործառույթի ձախողումից խուսափելու համար հարկավոր է անհրաժեշտ մակարդակի անկախություն ապահովել վերջինիս համար, ունենալ կարողունակ, պատասխանատու, պարտաճանաչ թիմ և աուդիտ կոմիտե, պատշաճ կառուցվածքային սխեմա և ռեսուրսավորման մոդել, որոնք թույլ կտան հստակեցնել ներքին աուդիտի շրջանակները, ինչպես նաև ապահովել վերջինիս հասանելիությունը տարբեր աստիճանի խնդիրներ ունեցող օղակներին: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ վճռորոշ է նաև ներքին աուդիտի բուն գործառույթի պատշաճ իրականացման գիտակցության առկայությունն ու զարգացումը թե՛ կազմակերպության (ներառյալ՝ բարձրագույն ղեկավարության և խորհրդի/կոմիտեի), թե՛ ներքին աուդիտի ստորաբաժանման մոտ:

Ռեսուրսների անբավարարության, վատնման և/կամ անհամապատասխանության ռիսկը³⁵⁶: Ինչպես կյանքի տարբեր բնագավառներում, ներքին աուդիտի դեպքում ևս չի կարելի պնդել, որ ռեսուրսներն անսահմանափակ են: Նշվածի մեջ մտնում են թե՛ նյութական, թե՛ մարդկային ռեսուրսները և, իհարկե, ժամանակը: Ներքին աուդիտի գործառույթի արդյունավետ իրականացման համար հարկավոր է ունենալ բավարար ռեսուրսներ, սակայն միշտ չէ, որ դա ստացվում է ապահովել: Պատճառներից մեկը կայծակնային արագությամբ փոփոխվող աշխարհն է՝ իր նոր հրամայականներով, պահանջներով ու մարտահրավերներով: Ռեսուրսների վերապրոֆիլավորումը, վերազինումը և վերապատրաստումը ժամանակատար են, իսկ ժամանակը, այն էլ 21-րդ դարում, անգնահատելի կարևոր դերակատարում ունի: Զանի որ ներքին աուդիտի ոլորտում բարձրակարգ մասնագետ լինելու համար հարկավոր է տարատեսակ գիտելիքներ ու հմտություններ ունենալ, որոշ դեպքերում նաև՝ համապատասխան փորձ, ընդհանուր առմամբ այնքան էլ հեշտ չի լինում համապատասխան մասնագետների անմիջապես հավաքագրումը:

Ռեսուրսների անբավարարության, ինչպես նաև անհամապատասխանության խնդիր կարող է առաջանալ ինչպես նախնական հավաքագրման, այնպես էլ առանցքային կադրերի կորստի դեպքում: Այդ ռիսկը կարող է ի հայտ գալ նոր մասնագիտությունների շատ արագ ձևավորման, նոր տեխնիկայի և տեխնոլոգիաների ի հայտ գալու պարագայում, երբ համապատասխան գիտելիքների ու հմտությունների կարիք է զգացվում, ինչպես նաև սխալ կադրային քաղաքականության արդյունքում:

Մեկ այլ կարևոր ասպեկտ է ռեսուրսների վատնումը: Շատ կարևոր է թե՛ մարդկային ու նյութական ռեսուրսների, թե՛ ժամանակի արդյունավետ օգտագործումը,

³⁵⁵ “Tone at the top”, The IIA, 2018 (<https://dl.theiia.org/AECPublic/Tone-at-the-Top-June-2018.pdf>) և <https://www.iaa.org.uk/audit-risk-magazine/blogs/internal-audit-status-lessons-from-carillion/> (18.10.2020).

³⁵⁶ <https://iaonline.theiia.org/blogs/marks/2017/Pages/What-are-the-biggest-risks-for-internal-audit-this-and-next-year.aspx> (18.10.2020).

քանի որ առաջնահերթությունների սխալ դասակարգման դեպքում դրանք կարող են ուղղվել պակաս կարևոր ուղղությունների աուդիտին՝ բաց թողնելով առավել նշանակալիցներն ու շեղվելով ներքին աուդիտի բուն գործառնություններից և/կամ թերակատարելով դրանք: Նշված բոլոր հանգամանքներն ուղղակիորեն կարող են ազդել կազմակերպության արժեքի ավելացման և գործունեության բարելավման գործընթացների վրա:

Առաջարկություն: Ներքին աուդիտի կազմակերպման ու իրականացման գործընթացներում ռեսուրսների անբավարարության, անհամապատասխանության, ինչպես նաև վատնման ռիսկերից խուսափելու կամ դրանք մեղմելու համար անհրաժեշտ է իրականացնել պատշաճ կադրային քաղաքականություն, ընտրել համապատասխան կադրեր, պարբերաբար վերապատրաստել նրանց, զինել նոր գիտելիքներով, հմտություններով ու նյութատեխնիկական միջոցներով, ինչպես նաև առավելագույնս ուշադիր լինել առաջնահերթությունների սահմանման հարցում:

Կիբերանվտանգության ռիսկ: 21-րդ տեղեկատվական դարում կիբերանվտանգության ապահովումը կարևոր նշանակություն ունի թվային տեխնոլոգիաներ կիրառող գրեթե բոլոր կազմակերպությունների պարագայում: Կիբերանվտանգության հետ կապված ռիսկն ինչպես կազմակերպությունների պարագայում ընդհանուր վերցրած, այնպես էլ ներքին աուդիտին ներհատուկ ռիսկերի ցանկում շարունակում է մնալ առաջատար դիրքերում: Կիբերհարձակումները կարող են տարբեր նպատակներ հետապնդել: Այդպիսի օրինակներ են ֆինանսական խարդախությունները, տեղեկատվության հափշտակումը կամ այլ նպատակներով օգտագործումը, աշխատանքային համակարգերի և առանցքային ենթակառուցվածքների դիտավորյալ խափանումը³⁵⁷: Ներքին աուդիտի համար կիբերանվտանգության ապահովումը, բացի բնականոն աշխատանքային գործընթացների ապահովման տեսանկյունից, առանցքային է նաև գաղտնիության պահպանման համար: Գաղտնիք չէ, որ ներքին աուդիտը պատշաճ պայմաններում գործունեություն իրականացնելու դեպքում հասանելիություն է ունենում հսկայական տեղեկատվության, այդ թվում՝ խիստ կարևոր ու գաղտնի: Ուստի այդ տեղեկատվությունը, դրա հիման վրա կատարվող ուսումնասիրություններն ու վերլուծությունները առավելագույն գաղտնիության պայմաններում պետք է պահպանվեն: Այս առումով կարևոր է ընդգծել, որ գաղտնիությունը սահմանվում է նաև «Եթիկայի կանոններ»-ում³⁵⁸, համաձայն որի՝ ներքին աուդիտորները հարգում են ստացվող/ ձեռք բերվող տեղեկատվության արժեքն ու սեփականության իրավունքը և առանց համապատասխան թույլտվության չեն հրապարակում այդ տեղեկատվությունը՝ բացառությամբ իրավական կամ մասնագիտական պարտավորվածությամբ պայմանավորված դեպքերի:

Հարկ է նշել, որ վիրտուալ կազմակերպությունների բազմաթիվ հաջողություններն ակնհայտ են, բայց ավելի լայն համատեքստում վիրտուալ կազմակերպությունների կազմակերպման ու գործունեության վերաբերյալ բազմաթիվ հարցեր բաց են մնում: Այստեղ առկա որոշ խնդիրներ կարելի է գնահատել որպես ցանկացած նորարարական հայեցակարգի բնորոշ խնդիր, ինչպես նաև դեռևս կանոնակարգված չեն Հայաստանում էլեկտրոնային առևտրի մաքսային, հարկային ու վճարահաշվարկային օրենսդրությանն առնչվող խնդիրները: Որպես այս ոլորտի խթանում կարող ենք նշել, որ 2015թ.-ին ուժի մեջ է մտել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը, որը նախատեսում էր պետական աջակցություն 2 ուղղությամբ: Առաջինը վերաբերում է պետական աջակցության ծրագրերին, երկրորդը՝ հարկային արտոնություններին: 2016թ.-ին նոր ստեղծվող և սկսնակ տնտեսվարող սուբյեկտների համար հասանելի դարձան հարկային արտոնություններ. 0 % շահութահարկ և 10% եկամտահարկ, որը խթանեց նոր կազմակերպությունների առաջացման գործընթացները³⁸⁴:

Վիրտուալ կազմակերպության բիզնես գործընթացները շատ առումներով նման են ցանկացած կազմակերպությունում օգտագործվող ստանդարտ գործընթացներին՝ հաշվապահություն, մարքեթինգ, լոգիստիկա և այլն: Բայց ավելանում են նաև նոր ու յուրահատուկ գործընթացներ՝ միջնորդ-գործակալների փնտրում, վիրտուալ կազմակերպության գործակալների բանակցություն, պարտականությունները

³⁸⁴ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=112428>:

չկատարելու դեպքում գործակալների փոխարինում և այլն: Միևնույն ժամանակ բիզնես գործընթացները տարբերվում են ավանդականից: Դրանցում պետք է հաշվի առնվեն փոխադարձ թերությունների փոխհատուցման և գործակալների առավելությունների ամրապնդման միտումները: Օրինակ՝ կարելի է միավորել մեծ կազմակերպությունների առավելությունները և փոքր կազմակերպությունների՝ ռեսուրսների պակաս ունենալու թերությունները, որոնք, սակայն, կարողանում են արագ արձագանքել փոփոխություններին և վերակազմավորվել: Գործառույթների հստակեցումը պետք է լինի վիրտուալ կազմակերպության գործունեության համար բիզնես մոդելի մշակում, օրինակ՝ բանակցությունների սխեման և հաջորդականությունը, պատվերի իրականացման ժամանակ վիրտուալ կազմակերպության աշխատակիցների միջև ինֆորմացիայի փոխանակումը:

Վիրտուալ կազմակերպության առանձնահատկությունները բացահայտելու համար ոչ միայն ուսումնասիրել ենք վերոնշյալ կազմակերպության գործունեությունը և կառավարումը, այլ նաև համեմատել ենք ավանդական կազմակերպության հետ: Առաջին հերթին վիրտուալ կորպորացիաներն ունեն ավելի մեծ շարժընթաց և ճկունություն ինչպես գործընկերների փոփոխությունների, այնպես էլ իրենց գործունեության շրջանակների փոփոխության մեջ:

Ճկունություն: Վիրտուալ կազմակերպությունները կարելի է ձևավորել տարբեր անհամադրելի էլեմենտներից, որոնք ձևավորվում են որոշակի բիզնես նպատակի իրականացման համար և ապամոնտաժվում են դրա ձեռքբերումից հետո: Բացի դրանից, եթե փոփոխված ռազմավարությունը պահանջում է, ապա կարող է արագ վերակազմավորվել և անհրաժեշտության դեպքում վերաբաշխել ակտիվները: Քանի որ շահագործման ծախսերը ցածր են, ապա նվազում են արմատական փոփոխությունների իրականացման ծախսերը և ռիսկերը: Վիրտուալ կազմակերպությունների համար նախատեսված բոլոր պահանջներից սա հավանաբար առավել հակասականն է թվում: Հենց սրանում է վիրտուալ կազմակերպության ճկունության հնարավորությունը, սակայն դրա իրականացման համար պահանջվում է մենեջերների և աշխատակիցների աշխատանքի ճկունություն: Իսկ նորարարության ներդրման համար պահանջվում են մարդկային ռեսուրսների կառավարման նոր մոտեցումներ³⁸⁵: Ինչպես արդեն նշեցինք, ուսումնասիրվող կազմակերպությունը համագործակցում է ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան կազմակերպությունների հետ: Իսկ ավանդական կազմակերպությունները կողմնորոշած են երկարաժամկետ ծրագրերի վրա, ինչը նրանց զրկում է շուկայական իրավիճակի փոփոխություններին համարժեքորեն արձագանքելու հնարավորությունից: Մեծ, երբեմն հսկա կառույցները պահանջում են մեծ չափի ներդրումներ:

Շարժունություն: Հաղորդակցման ցանցերի, այլ ոչ թե շենքերի և ֆիզիկական ակտիվների օգտագործումը նշանակում է, որ մեր ժամանակներում աշխատանքի ֆիզիկական գտնվելու վայրը քիչ կարևոր է: Արդյունքում կարիք չի լինում, որպեսզի բաժիններն ու աշխատանքային խմբերը միմյանց հետ սերտ ֆիզիկական շփման մեջ լինեն: Ծրագրային խմբերը կարող են հավաքվել տարբեր վայրերում: Օրինակ հենց այդպես է լինում հրատարակչություններում: Տարբեր երկրներում ապրող առանձին աշխատակիցներն աշխատում են միասին և կարող է երբեք իրար չտեսնեն: Կարիք չի առաջանում աշխատանքը կատարելու գրասենյակում:

Սահմանների բացակայություն: Վիրտուալ կազմակերպությունները իրենց բնույթով միտումնավոր կերպով խառնված սահմաններ ունեն: Նրանք սահմանափակվում են, որպեսզի այն ընկալվի որպես առանձին, իրավաբանորեն

³⁸⁵ Zafar A., Abumelha M., Alharthi M., Virtual organization as a strategic tool: Past, Present and Future, International Journal of Computer Systems, Volume 02, Issue 04, April 2015, 108-114.

սահմանված կազմակերպություն: Նրանք ի վիճակի են մատակարարներին միավորելու մի ցանցի մեջ այնպես, որ դժվար է նկատել՝ որտեղ է մի կազմակերպությունն ավարտվում, որտեղից է մյուսը սկսվում³⁸⁶:

Ռեսուրսների ներգրավում: Ավանդական կազմակերպություններում նոր ապրանքների մշակման և շուկա ներկայացնելու համար պահանջվում է զգալի ռեսուրսների ներգրավում: Ի տարբերություն դրա՝ վիրտուալ կազմակերպությունները իրենց համար ռեսուրսներ չեն գնում, այլ փնտրում են նոր գործընկերներ, որոնք ունեն համապատասխան ռեսուրսներ, գիտելիքներ և ունակություններ համատեղ գործունեություն կազմակերպելու և իրականացնելու համար: Այլ կերպ ասած՝ շուկայում մրցակցային առավելության հասնելու համար ընտրվում են կազմակերպություններ, անհատներ կամ խմբեր, որոնք ունեն պատվերն իրականացնելու անհրաժեշտ ռեսուրսներ ու կարողություններ: Վիրտուալ կազմակերպություններն ապահովում են լուրջ մրցակցային առավելություններ՝ շնորհիվ հիմնական և շրջանառվող միջոցների ծախսերի կրճատման:

Կառուցվածք: Վիրտուալ կազմակերպությունները ունեն նման կազմակերպություններին բնորոշ ցանցային կառուցվածք, որում յուրաքանչյուրը հասանելի է բոլորին, իսկ առաջատար մենեջերների գործառույթները սահմանափակվում են համատեղ աշխատանքի, աշխատակազմի հավաքագրման և վերապատրաստման կազմակերպամամբ:

Վիրտուալ կազմակերպության ֆիզիկական կառուցվածքը շատ ավելի քիչ է զարգացած ավանդականի հետ համեմատած: Վիրտուալ կազմակերպությունների կյուբական միջոցները, ինչպիսիք են՝ գրասենյակները, կահույքը, պահեստը և այլն, այնքան էլ մեծ չեն, և դրանք, որպես կանոն, աշխարհագրորեն տեղաբաշխված են: Եթե շահագործման տեսանկյունից դիտարկենք իրավիճակը, ապա ապակենտրոնացված օբյեկտները գերադասելի են հսկայական և մի վայրում կենտրոնացածից³⁸⁷: Ավանդական կազմակերպությունները ունեն գրասենյակային շենք, իսկ վիրտուալ կազմակերպություններում նույն նպատակին է ծառայում հաղորդակցման ցանցը: Տեխնոլոգիաներն իրենցից ներկայացնում են գործիքներ, որոնք թույլ են տալիս իրականացնել աշխատանք:

Ամփոփելով համեմատական վերլուծությունը՝ առանձնացնենք ավանդական և վիրտուալ կազմակերպության հետևյալ բնութագրիչ հատկանիշների տարբերությունը.

Աղյուսակ 1. Ավանդական և վիրտուալ կազմակերպությունների տարբերությունը

Հատկանիշ	Ավանդական կազմակերպություն	Վիրտուալ կազմակերպություն
Գործունեության բնույթ	Մշտական, մեկուսացված	Ոչ մշտական, բաց
Աշխատակիցների կարգավիճակ	Փոխարինելի, փոխկապակցված, հանդուրժող	Հավատարմություն, տեղեկացված լինել, անկախ
Ճյուղային մակարդակ	Ցածր	Բարձր
Ազդեցություն,	Կախված է	Կախված է գիտելիքներից և

³⁸⁶ **Бережнов Г.В.** Виртуальная организация. Неравновесный принцип управления развитием предприятия. Российское предпринимательство. // Журнал, 2003, №12, С. 51-55.

³⁸⁷ **Шайхутдинов Д.В., Горбатенко Н.И., Коломиец А.В.** Виртуальное предприятие – новый подход к организации учебного процесса В ВУЗЕ // Международный журнал экспериментального образования. – 2017. – № 10. – С. 43-48.

իշխանություն	հիերարխիական մակարդակից	հմտություններից
Կազմակերպությունում կողմնորոշումը	Կազմակերպության նկատմամբ կողմնորոշում	Սեփական հետաքրքրությունների, կազմակերպության և կոլեկտիվի նկատմամբ կողմնորոշում
Աշխատակիցների և վարչական կազմի միջև հարաբերություններ	Ենթակա և ղեկավար հարաբերություն	Պայմանագրային բոլոր մակարդակներում, հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հեշտացում
Կառավարչական գործունեություն իրականացնելու մեխանիզմ	Ավանդական կապի միջոցների կիրառմամբ՝ հեռախոս, ֆաքս, փոստ	Ինտեգրացված և լոկալ տեղեկատվական համակարգերի միջոցով
Կազմակերպչական մշակույթ	Ֆորմալ	Ենթադրում է լինել բաց և փոխվատահոլ
Համագործակցության հնարավորություն	Ցածր	Լայն, հիմնված է մի շարք համաձայնագրերի և փոխադարձ ներդրումների վրա
Կարևորագույն նպատակը	Առավելագույն արդյունք	Օգուտի օպտիմալացում

Վիրտուալ իրականության ընդհանուր առանձնահատկություններն արտացոլվում են վիրտուալ կազմակերպություններին բնորոշ հատուկ բնութագրերում³⁸⁸.

- Նշանակալի ոչ նյութական ակտիվներ ու փոխկապակցված ցանցեր: Ոչ նյութական ակտիվներն են՝ մարդկային կապիտալում և գիտահետազոտական աշխատանքներում ներդրումներ, մտավոր կապիտալ, կորպորատիվ մշակույթ, ապրանքանիշ, կազմակերպության հեղինակություն, նոու-հաու, հմտություններ, ֆորմալ գիտելիքներ, կառավարման գործընթացներ, պոտենցիալ և հավատարիմ հաճախորդների բազա, մատակարարման ցանց, հուսալիություն և որակ, մենեջերների և աշխատողների արհեստավարժություն:
- Կազմակերպության այնպիսի ատրիբուտների բացակայություն, ինչպիսիք են՝ ուղղահայաց ինտեգրում, կենտրոնական գրասենյակ, հիերարխիա, ինչպես նաև կազմակերպության հստակ սահմաններ, ճկունություն:
- Հիբրիդային ձևերի առկայություն, որոնք ունակ են համատեղելու տարասեռ ակտիվները:
- Աշխատանքի հեռահար ձևերի առկայություն, աշխատողների՝ միմյանց հետ ֆիզիկապես շփվելու բացակայություն:
- Կազմակերպության ավելի քիչ թափանցիկություն և այլն:
Վիրտուալ կազմակերպության հիմնական առանձնահատկություններն են՝
- ճկուն ցանցային կառուցվածք՝ հորիզոնական կապերի հստակ գերակայությամբ,
- Ցանցի անդամների բարձր պրոֆեսիոնալիզմ,
- Նրանց աշխատանքի ինքնավարություն և նեղ մասնագիտացում,

³⁸⁸ Мазур И. Управление проектами: учебное пособие/ Мазур И. И., Шапиро В. Д., Ольдерогге И. Г.- М.:2-е издание, 2004, С. 36-37.

- Ինտեգրացիայի զարգացած տեղեկատվական միջոցների առկայություն:

Հաշվի առնելով այս առանձնահատկությունը՝ վիրտուալ կազմակերպությունների համար հնարավոր է ձևավորել ոչ ավանդական կառավարման գործառույթներ, որոնք հետևյալն են³⁸⁹,

- Ծրագրի նպատակների ու խնդիրների որոշում,
- Առաջադրանքներին համապատասխան գործընկերների որոնում, գնահատում և ընտրում,
- Իրականացնողների ներգրավում և տեղաբաշխում,
- Առաջադրանքների իրականացման ընթացքում գործընկերների և ռեսուրսների վերաբաշխում:

Վիրտուալ կազմակերպությունը ունի նաև որոշակի թերություններ, որոնք հետևյալն են՝

- գործընկերների տնտեսական կախվածության աճ, որը կապված է ցանցի անդամների նեղ մասնագիտացումից,
- գործընկերների նկատմամբ պատշաճ սոցիալական աջակցության բացակայություն, որը պայմանավորված է դասական երկարաժամկետ պայմանագրերի և սովորական աշխատանքային հարաբերությունների մեղմմամբ,
- կազմակերպության անդամների տարասեռությունից բխող հարաբերությունների չափազանց բարդացման վտանգի առկայություն,
- կազմակերպության անդամակցության և դրա ինքնակազմակերպման շարժընթացի վերաբերյալ անորոշություն:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ վիրտուալ կազմակերպությունները չունեն ինստիտուցիոնալ և կառուցվածքային շրջանակ, որը բնորոշ է ավանդական կազմակերպություններին, որն իր հերթին էապես փոխում է դրա կազմակերպչական ու կառավարչական գործունեության հիմքերը: Այդ կազմակերպությունների նպատակն է շահույթ ստանալով՝ բավարարելով ապրանքների ու ծառայությունների սպառողների կարիքները ավելի լավ, քան հնարավոր է դա անեն մրցակիցները: Այս նպատակը բնորոշ է շուկային կողմնորոշված կազմակերպություններին: Բայց առաջին հերթին վիրտուալ կազմակերպությունները, որպես կանոն, առաջնորդվում են ոչ թե բավարարելով ինչ-որ միջին շուկայի որոշ հատվածի կարիքներն ու պահանջները, այլ շուկայի պատվերի իրականացման վրա մինչև որոշակի հաճախորդների որոշակի պահանջմունքների բավարարումը: Եվ երկրորդ՝ այս կազմակերպությունները մեծացնում են պատվերի իրականացման որակը և արագությունը՝ միավորելով ցանցի մեջ գտնվող գործընկերների ռեսուրսները:

Վիրտուալ կազմակերպությունների մաքսային, հարկային և վճարահաշվարկային օրենսդրության համար առաջարկում ենք՝

- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքում կատարել որոշակի լրամշակում, որով կկարգավորվեն մտավոր սեփականության իրավունքի հետ կապված իրավահարաբերությունները, մասնավորապես կսահմանվեն տեղեկատվական ապրանքների կրկնօրինակման և պահպանման կանոններն ու պայմանները:
- Էլեկտրոնային առևտուրն ունի զլրբալ բնույթ, հետևաբար կարգավորման նորմատիվային ակտերը պետք է կառուցվեն միասնական սկզբունքների վրա: Մասնավորապես նշենք, որ 1998-ի մայիսին Էլեկտրոնային առևտրի աճի

³⁸⁹ Гумерова Г. И. Виртуальная организация как объект исследования и учета в российском экономическом пространстве цифровой экономики, Фонд инфраструктурных и образовательных программ, Москва, 2018, N 14, С. 616-639.

պատճառով ԱՅԿ անդամներն ընդունեցին Համաշխարհային էլեկտրոնային առևտրի մասին հռչակագիրը: Հռչակագրում ներառված էին էլեկտրոնային փոխանցումներում մաքսատուրքերի պարտականության մասին կետեր: Օրինակ՝ Ինդոնեզիան, պահպանելով ԱՅԿ-ի հռչակագիրը, նման ապրանքների մաքսատուրքեր է սահմանել 0% -ի չափով³⁹⁰: Ինչպես նաև նշեք, որ ԵՏՄ-ի երկրները պատրաստում են կանոններ միջսահմանային ինտերնետ առևտրի ինտեգրված կարգավորման համար³⁹¹, որը նույնպես կնպաստի այս ոլորտի կարգավորման գործընթացին:

- Անորոշ ժամանակով չպետք է միջամտել վիրտուալ կազմակերպությունների զարգացմանը և չպետք է հարկել էլեկտրոնային տնտեսական գործունեությունն իրականացնող սուբյեկտներին, քանի որ սա հնարավորություն կտա ավելի մեծ օգուտ ստանալ ցանցի ողջ ներուժն օգտագործելու շնորհիվ: Ինչպես նաև հետագայում պետք է սահմանվեն ցածր հարկադրույթներ, հարկման մեխանիզմները պետք է լինեն ավտոմատացված և պետք է հստակեցվեն ռեզիդենտները: Վաճառողը իր երկրում վաճառք իրականացնելիս պետք է վճարի շահութահարկ և ԱԱՀ, իսկ արտահանելու դեպքում գնորդը պետք է վճարի ԱԱՀ կամ «Գուզլի հարկ», որն արդյունավետորեն արդեն կիրառվում է եվրոպական մի շարք երկրներում: Նշենք, որ 1998 թ.-ին ՏՀԶԿ-ն առաջարկել է չափանիշներ առքուվաճառքի ժամանակ եկամտի վայրի ծագման դասակարգելու համար, ինչպես նաև թվային ապրանքների էլեկտրոնային առևտրի ժամանակ առկա հարկային համաձայնագրերի առանձնահատկությունները, որոնք թայլ են տալիս որոշակի հստակեցումներ անել այս ոլորտում³⁹²: Սակայն նշենք, որ ոլորտի զարգացման հետ նաև հնարավոր կլինի խորը ուսումնասիրություններ իրականացնել և առավել արդյունավետ լուծումներ գտնել, որոնք կնվազեցնեն ոլորտում առկա ռիսկերը:

FEATURES OF VIRTUAL ORGANIZATIONS

ANI SAHAKYAN

*Shirak M. Nalbandyan State University,
Chair of Business Administration, Ph.D. in Economic Sciences,
Gyumri, Republic of Armenia*

The purpose of this article is to discover specifics of virtual organizations. The task is to study activities of certain virtual organization, to compare some typical features of traditional and virtual organizations. As a result, the advantages and disadvantages of virtual organization are presented.

Empirical research methods were used during the research.

As a result of the research, the conclusion was drawn that a virtual organization is a voluntary temporary cooperation between independent partners, who, due to optimizing the production system, bring great benefits to customers. The advantages of these organizations are the

³⁹⁰ Trade Intelligence Asia Pacific, The Customs of e-Commerce, Pwc, April/May 2018, <https://customs.pwc.com/en/publications/assets/pdf/trade-intelligence-201806.pdf>.

³⁹¹ Եվրասիական տնտեսական հասնձնաժողով, <http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/30-06-2017.aspx>.

³⁹² Taxation Aspects of Electronic Commerce, OECD, <http://www.oecd.org/tax/treaties/ecommercereportsandtechnicalpapers.htm>.

speed of fulfillment of the market order, the reduction of the total costs, the more complete satisfaction of the customers' needs, the flexibility towards the changes of the environment, as well as the possibility of reducing the barriers to access to new markets.

Key words: virtual organization, traditional organization, artificial intelligence, communication technology, e-commerce

ОСОБЕННОСТИ ВИРТУАЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ

АНИ СААКЯН

*преподаватель кафедры делового администрирования
Ширакского государственного университета им. М. Налбандяна,
кандидат экономических наук,
г. Гюмри, Республика Армения*

Целью статьи является раскрыть специфику виртуальных организаций, ее задачей – изучить деятельность конкретной виртуальной организации, а также сравнить некоторые характерные особенности традиционных и виртуальных организаций. В результате были представлены преимущества и недостатки виртуальной организации.

В ходе работы использовались эмпирические методы исследования.

Подводя итоги, мы пришли к выводу о том, что виртуальная организация – это добровольное временное сотрудничество между некоторыми, как правило, независимыми партнерами, которые, благодаря оптимизации производственной системы, приносят огромную пользу клиентам. Преимуществами этих организаций являются скорость выполнения рыночного заказа, сокращение общих затрат, более полное удовлетворение потребностей клиентов, гибкость в отношении изменений окружающей среды, а также возможность снижения барьеров для доступа на новые рынки.

Ключевые слова: виртуальная организация, традиционная организация, искусственный интеллект, коммуникационные технологии, электронная коммерция.

ՀՏԴ 338.46:336:7

ՎԱՀԱԳՆ ՏԵՓՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ,
բ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
vtepoyan@yahoo.com*

Հոդվածի նպատակն է կառուցել ֆինանսական համակարգի այնպիսի ցուցիչներից բաղկացած օպտիմալ համակարգ, որը լավագույնս թույլ կտա հասկանալ և գնահատել տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ազդեցությունը, փոխկապվածությունը և կլիմի հնարավորինս ներկայացուցչական: Ստացված համակարգում մեր խնդիրն է գնահատել Արժույթի միջապային հիմնադրամի և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից լայնորեն կիրառվող թվով 7 ֆինանսական ցուցիչների ազդեցությունը տնտեսության հիմնական 3 հատվածների՝ իրական հատվածի, պետական հատվածի և արտաքին հատվածի ցուցանիշների վրա՝ ազդեցությունը չափելով քանակական գնահատմամբ և ժամանակային արտահայտությամբ:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրել ենք միջապային ու տեղական փորձը: Կառուցել ենք 16 մակրոտնտեսական ցուցանիշներից բաղկացած մեթոդական մոտեցում, որի գործոնային վերլուծությունը իրականացրել ենք կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի (SVAR) օգնությամբ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ ֆինանսական ցուցիչները, մասնավորապես Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին և Շահութաբերությունն ըստ ակտիվների ցուցիչները հատկանշական են համապատասխանաբար Գործադրության և Սպառողական գների ինդեքսի վրա ունեցած իրենց ազդեցություններով:

Հիմնաբառեր՝ գործոնային վերլուծություն, վեկտորական ավտոռեգրեսիոն մոդել, կորելյացիա, ճգնաժամ, իրական հատված, քանակական գնահատում, տրանսֆերտներ, սպառողական գների ինդեքս, առևտրաշրջանառություն, արտարժույթ:

Ներածություն

Տնտեսական ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների վերլուծության կարևորությունը վերջին տասնամյակում էապես մեծացել է: Ցուցիչների վերլուծությունը թույլ է տալիս հայտնաբերել ու գնահատել տնտեսությանը սպառնացող շոկային իրավիճակները: Այն պայմանավորված է տնտեսական և ոչ տնտեսական բնույթի մի քանի գործոններով: Տնտեսական բնույթի

* Հոդվածը ներկայացվել է 12.09.2020թ., գրախոսվել՝ 17.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գործոններից հատկանշական են 2009թ.-ի զլրբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը, 2014թ.-ի ռուս-ուկրաինական ճգնաժամը և զարգացած երկրների Կենտրոնական բանկերի կողմից (ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգ, Եվրոպական Կենտրոնական բանկ, Ասյայի և Ճապոնիայի բանկ) դրամավարկային քաղաքականության նոր գործիքի՝ բանական մեղմացման (Quantitative Easing) քաղաքականության իրականացումը: Ոչ տնտեսական բնույթի գործոններից կառանձնացնենք Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից 2020թ.-ի մարտի 11-ին պաշտոնապես ազդարարված կորոնավիրուսի զլրբալ համաճարակը, որը, համաձայն համաշխարհային բանկի, 1990թ.-ից ի վեր ամենախորը և տնտեսական ցուցանիշների նվազմամբ ամենակտրուկ զլրբալ ռեցեսիան է, որը 2020թ.-ի կանխատեսումների համաձայն կհանգեցնի համաշխարհային ՀՆԱ-ի 5,2 տոկոսով նվազման³⁹³:

Աշխատանքի նպատակն է կառուցել ֆինանսական համակարգի այնպիսի ցուցիչներից բաղկացած օպտիմալ համակարգ, որը լավագույնս թույլ կտա հասկանալ և չափելի դարձնել տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ազդեցությունը, փոխկապվածությունը և կլինի հնարավորինս ներկայացուցչական: Ժամանակային շարքերով ներկայացված ցուցիչների գծային փոխկապվածությունը և դինամիկ կապերը գնահատելու նպատակով, աշխատանքում ներկայացված գործոնային վերլուծությունները կատարել ենք Վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի (VAR) օգնությամբ:

Աշխատանքի առաջին մասը վերաբերում է գրականության վերլուծությանը, որտեղ ուսումնասիրել ենք Վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի կիրառությամբ տնտեսության ամփոփ ցուցանիշների վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների միջազգային փորձը երեք զարգացող երկրների օրինակով:

Երկրորդ մասը նվիրված է ՀՀ-ի համար մեր կողմից ներկառուցած 16 մակրոտնտեսական ցուցանիշներով պայմանավորված մեթոդական մոտեցման կառուցմանը, որը հիմնված է և՛ միջազգային, և՛ տեղական փորձի վրա՝ հաշվի առնելով ցուցիչների՝ ՀՀ-ի համար կիրառելիությունը և հասանելիությունը:

Երրորդ մասում կատարված են գործոնային վերլուծություններ R ծրագրային փաթեթի միջոցով՝ օգտագործելով կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելը (SVAR) թվով 16 մակրոտնտեսական ցուցիչների համար, որոնք արտահանված են 2007-2019թթ.-ի համար եռամսյակային պարբերականությամբ: Կատարված գործոնային վերլուծությունը իրականացվել է երկբևեռ՝ ներառելով ֆինանսական ցուցիչների ազդեցությունը տնտեսական ցուցիչներին, ինչպես նաև ֆինանսական ցուցիչների միջև փոխազդեցությունները:

1. Գրականության վերլուծություն

Ուսումնասիրության առարկա է հանդիսացել երեք երկրների՝ Ռուսիայի, Լեհաստանի և Մակեդոնիայի փորձը: Այս երկրների գործոնային վերլուծությունները նույնպես իրականացվել են Վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի (VAR) օգնությամբ: Վերոնշյալ երկրների գործոնային վերլուծության մոդելների ուսումնասիրման նպատակը կարելի է տարանջատել ըստ խմբի և կիրառելիության: Ըստ խմբի հասկանում ենք ուսումնասիրվող երկրում ցուցիչների ընտրությունը և բաշխվածությունն ըստ տնտեսականի և ֆինանսականի: Ըստ կիրառելիության հասկանում ենք, թե ընտրված ցուցիչի Վեկտորական ավտոռեգրեսիոն (VAR)

³⁹³ Համաշխարհային բանկ, The Global Economic Outlook During the COVID-19 Pandemic: A Changed World, 2020:

մոդելում ներառելու հետևանքով ստացված արդյունքները որքանով էին նշանակալի, բացատրուող ու նախատեսող:

1.1 Ռումինիայի փորձ³⁹⁴. Այստեղ դիտարկվում է Ռումինիայի տնտեսական 3 գործոնների՝ մասնավորապես տնտեսական աճի, մակրոտնտեսական գործոնների և ֆինանսական գործոնների փոխկապվածությունը: Կառուցվել է ներառական (composite) ֆինանսական կայունության ինդեքս՝ օգտագործելով այն ֆինանսական փոփոխականների կոմբինացիան, որոնք նշանակալի ազդեցություն ունեն տնտեսական գործոնների վրա: Այսպիսի ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսի կառուցումը օգտակար է, քանի որ այն թույլ է տալիս՝

- իրականացնելու ֆինանսական և իրական հատվածի փոփոխականների կորելյացիոն վերլուծություն ֆինանսական ճգնաժամերի տարբեր հատվածներում,
- ցանկացած ժամանակ գնահատելու փոփոխականների և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա, և այդպես ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսը հնարավորություն կտա չափելու տնտեսական ու ֆինանսական քաղաքականության դերը՝ ֆինանսական ճգնաժամերը մեղմելու հարցում,
- կանխատեսել հաջորդ ժամանակահատվածի տնտեսական աճը՝ օգտագործելով ընթացիկ ժամանակահատվածի ՀՆԱ-ն և ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսը:

Ուսումնասիրության ժամանակահատված է 2004-2017թթ.-ը, տվյալները՝ եռամսյակային: Ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսը բաղկացած է ներթուրյալ փոփոխականներից՝

- Սպառողական գների ինդեքս (CPI), Բյուջեի հաշվեկշիռ, Չուտ արտահանումներ,
- ROBOR (Ռումինիայի միջբանկային վարկավորման տոկոսադրույք), EURIBOR (Եվրոպական միջբանկային վարկավորման տոկոսադրույք), REER (երկրի արժույթի կշռված միջին՝ հարաբերած այլ հիմնական արժույթներին), VIX (CBOE Volatility Index),
- BET index (Բուխարեստի բորսայական առևտրի ինդեքս), GPI (համախառն ապահովագրավճար):

Վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով գնահատվել է առանձին փոփոխականների ազդեցությունը՝ ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսի մեջ: Ստացվել է ինդեքսի և ՀՆԱ-ի միջև կորելյացիոն և պատճառահետևանքային կապը: Այսպիսով՝ ինդեքսի ներկայացուցչականությունը հավաստիացվում է ինդեքսի և ՀՆԱ կորելյացիայի ինտենսիվությամբ և ստաբիլությամբ, որը բնութագրվել է 0.7 կորելյացիայի գործակցով: Ստորև ներկայացնում ենք առանձնացված փոփոխականների և ՀՆԱ-ի միջև նշանակալի ստացված կապը՝

- Corr. (GDP, EURIBOR) = 0.53
- Corr. (GDP, VIX) = 0.29
- Corr. (GDP, Budget balance) = 0.25
- Corr. (GDP, ROBOR) = 0.14

Ռումինիայի օրինակով արդյունքները ցույց են տալիս՝

³⁹⁴ **Manolescu E.**, The financial stability index – An insight into the financial and economic conditions of Romania, 2017, տե՛ս <http://store.ectap.ro/articole/1302.pdf>:

- ՅՆԱ-ի և Ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսի միաժամանակյա կայուն աճ,
- Ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսի կորոյացիա Ռուսիայում և միջազգային շուկայում ֆինանսական ճգնաժամի միջև (2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամ, 2014թ. ռուս-ուկրաինական ճգնաժամ, Թուրքիայում սոցիալ-տնտեսական ճգնաժամ),
- Ներկառուցված ֆինանսական կայունության ինդեքսի փոփոխականների միջոցով (երկու լագ) իրականացվել է հաջորդ տարվա՝ 2018թ.-ի ՅՆԱ-ի ցուցանիշի կանխատեսումը, որը ստացվել է տարեկան 6.53%, մասնավորապես առաջին եռամսյակի ՅՆԱ՝ 1.17%, առաջին եռամսյակի ՅՆԱ՝ 1.42%: Երրորդ եռամսյակի ՅՆԱ՝ 1.94%: Կորոնոս եռամսյակի ՅՆԱ՝ 2%:

1.2 Լեհաստանի փորձ³⁹⁵. Լեհաստանի օրինակում կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի (SVAR) միջոցով փորձ է իրականացվում հայտնաբերելու ֆինանսական ու մակրոտնտեսական ցնցումները, ինչպես նաև ցույց է տրվում դրամավարկային քաղաքականության՝ ֆինանսական համակարգի միջոցով իրական հատվածի վրա ազդեցությունը:

Ուսումնասիրության ժամանակահատված է 1998-2016թթ.-ը, տվյալները՝ եռամսյակային: Փոփոխականները դասակարգված են 3 խմբերի՝ ստանդարտ դրամավարկային քաղաքականության փոփոխական, բանկային փոփոխական, կապիտալի շուկայի փոփոխական:

Ստորև ներկայացվում են ինքնուրույն ուսումնասիրության փոփոխականների՝

1. Ստանդարտ դրամավարկային քաղաքականություն

- WIBOR (Վարշավայի միջբանկային վարկավորման տոկոսադրույք)
- SIP (վաճառված արտադրանք)
- REER (երկրի արժույթի կշռված միջին՝ հարաբերած այլ հիմնական տնտեսական ցուցանիշներին)

2. Բանկային փոփոխական

- NPI (չափաորոշող մասնուձեռնող հաստատությունների ընդհանուր վարկերին)

3. Կապիտալի շուկայի փոփոխական

- WIG (Վարշավայի ֆոնդային բորսայի ինդեքս)

5 փոփոխականների միջև, Ներառյալ նույն փոփոխականը իր նախորդ լագի հետ, իրականացվել է ռեգրեսիա:

Լեհաստանի օրինակով արդյունքները ցույց են տալիս՝

- առանձնակի ուշադրություն են գրավել 2008-2009թթ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածն ընդգրկող կախվածությունները՝ տարբերվելով դրան նախորդող և հաջորդող ժամանակահատվածներից,
- ստանդարտ դրամավարկային քաղաքականություն փոփոխականներից WIBOR (Վարշավայի միջբանկային վարկավորման տոկոսադրույք)-ի տատանումը բացասաբար է ազդում Կապիտալի շուկայի փոփոխականի վրա,
- WIG (Վարշավայի ֆոնդային բորսայի ինդեքս)-ի վրա՝ արժևորելով լեհական զրոտին, ինչպես նաև բարձրացրել է Բանկային փոփոխական NPL (չաչխատող վարկեր՝ հարաբերած ընդհանուր վարկերին)-ը, որն էլ բացասաբար է ազդել SIP (վաճառված արտադրանք)-ի վրա,
- ֆինանսական ցնցումները զգալիորեն ազդում են իրական ու բանկային հատվածի վրա:

³⁹⁵ **Ulrichs M.**, Identification of financial and macroeconomic shocks in a VAR model of the Polish economy. A stability analysis, 2018:

1.3 Մակեդոնիայի փորձ³⁹⁶. Վեկտորական ավտոռեգրեսիոն մոդելի օգնությամբ կառուցվում է ֆինանսատնտեսական ճգնաժամերն ահազանգող կամ կանխատեսող իդեքս: Ուսումնասիրության ժամանակահատված է 2005-2015թթ.-ը, տվյալները՝ եռամսյակային: Փոփոխականները դասակարգված են 2 խմբերի՝ բանկային և ոչ բանկային: Խմբերն էլ իրենց հերթին դասակարգված են ըստ ռիսկային ենթախմբերի: Ստորև ներկայացնում ենք խմբերը՝ ըստ ռիսկային ենթախմբերի և դրանցում ներառված փոփոխականների՝

➤ **Բանկային ինդիկատորներ**

1. Վարկային ռիսկ

- 1.1 Վարկեր տնային տնտեսություններին հարաբերած ՅՆԱ
- 1.2 Վստուեռ ոչ ֆինանսական կազմակերպություններին հարաբերած ՅՆԱ

2. Իրացվելիության ռիսկ

- 2.1 Վարկեր հարաբերած ավանդներ
- 2.2 Վստուեռ հաստատուած ոչ ֆինանսական կազմակերպություններին ավանդներ

3. Արտարժույթային ռիսկ

- 3.1 Արտարժույթով ներգրավված ավանդներ հարաբերած ընդհանուր սուսմունեռնի

4. Տոկոսադրույքի ռիսկ

- 4.1 Մակեդոնական դենարով տնային տնտեսություններին տրամադրված երկարաժամկետ վարկեր
- 4.2 Մակեդոնական դենարով ոչ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված երկարաժամկետ վարկեր
- 4.3 Դենարով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքային սպրեդ

➤ **Ոչ բանկային փոփոխականներ**

- 4.4 Մակեդոնիայի անշարժ գույքի ինդեքս
- 4.5 Մակեդոնիայի ֆոնդային բորսայի ինդեքս (MBI 10)
- 4.6 Ընթացիկ հաշիվներում մնացորդ հարաբերած ՅՆԱ

Օգտագործվել է ինդեքսի կառուցման 8 մեթոդ, մասնավորապես՝ Portfolio method, Modified portfolio method with FEVD, Modified portfolio method with dynamic variances, Modified portfolio method with signals, Modified portfolio method with simulations, Principal Components method, Value at Risk method, Average Financial Stability Index: Վերոնշյալ 8 մեթոդների օգտագործման նպատակն է ունենալ ֆինանսական համակարգի վիճակի վերաբերյալ համակողմանի պատկեր և նվազեցնել ֆինանսական կայունության թերի բացահայտման սխալանքը: 8 ցուցանիշներից 6-ը պարզ արտահայտում են ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիները: Ինդեքսի մեջ նշանակալի տեսակարար կշիռ ունեն վարկային և ավանդային գործունեությամբ պայմանավորված փոփոխականները, ինչը խոսում է այն մասին, որ Մակեդոնիայի ֆինանսական համակարգը խոշոր հաշվով բացատրվում է բանկային գործունեությամբ: Ինդեքսի մեջ Իրենց տեսակարար կշռով առանձնանում են նաև Մակեդոնիայի ֆոնդային բորսայի ինդեքսը և Մակեդոնիայի անշարժ գույքի ինդեքսը:

2. Ներկառուցված մեթոդական մոտեցում ՀՀ-ի օրինակով

Մեր կարծիքով տնտեսության վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունները գնահատելու նպատակով միայն ԱՄՅ յոթ ցուցանիշների դիտարկումը բավարար չէ, քանի որ արտաքին և իրական հատվածի ֆինանսական վիճակը հաշվի չի

³⁹⁶ Petreski A., Mucheva E., Aggregate indices for financial stability as early warning indicators for monetary measures in the Republic of Macedonia, 2016:

առնվում գնահատման ժամանակ: Հետևաբար համակողմանի գործունային վերլուծություն իրականացնելու նպատակով հիմք ենք ընդունում հետևյալ 16 ցուցանիշները:

1. Ֆինանսական հատված. ԱՄՀ կողմից առաջարկված և ՀՀ ԿԲ կողմից հաշվառված ֆինանսական և առևտրային խառնուրդի ծախսերի ցուցանիշները³⁹⁷:

- 1.1 . Նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- 1.2 . Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- 1.3 . Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին,
- 1.4 . Շահութաբերությունն ըստ ակտիվների,
- 1.5 . Շահութաբերությունն ըստ կապիտալի,
- 1.6 . Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին,
- 1.7 . Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին:

2. Իրական հատված³⁹⁸

- 2.1 . ՀՆԱ-ի եռամսյակային իրական աճի տեմպ,
- 2.2 . գործազրկության մակարդակ,
- 2.3 . վարկեր/ՀՆԱ,
- 2.4 . դրամ-դրվար փոխարժեք (ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեքի եռամսյակային փոփոխության ցուցանիշի գործակիցը):

3. Պետական հատված³⁹⁹

- 3.1 . պետական պարտք/ՀՆԱ,
- 3.2 . բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ
- 3.3 . Սուստոռոսում գների ինդեքս:

4. Արտաքին հատված⁴⁰⁰

- 4.1 . արտերկրից եկող տրանսֆերտների ծավալ (աճի ինդեքսը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ),
- 4.2 . արտաքին առևտրաշրջանառություն (աճի ինդեքսը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ):

Հայաստանի տնտեսության վրա ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունների գնահատման մեր մեթոդական մոտեցման համաձայն դիտարկված թվով 16 ցուցանիշները ենթարկվել են էմպիրիկ հարթեցման հետևյալ բանաձևով՝

$$I_{it}^n = \frac{I_{it} - \text{Min}(I_i)}{\text{Max}(I_i) - \text{Min}(I_i)}$$

Էմպիրիկ հարթեցման արդյունքում ստացվում են 0-ից 1 միջակայքի գործակիցներ, որոնք բնութագրում են տվյալ ցուցանիշի ազդեցության քանակական չափը տվյալ եռամսյակում: Գործընթացի հաջորդ փուլում ստացված գործակիցները միջինացվում են, ընդ որում, վերցված թվով տասնհինգ ինդիկատորները ֆինանսական կայունության ինդեքսի մեջ ներառվում են հավասար կշիռներով:

ՀՆԱ-ի եռամսյակային իրական աճը բնութագրում է տվյալ եռամսյակում ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ: Վարկեր/ՀՆԱ, ինչպես նաև

³⁹⁷ Արժույթի միջազգային հիմնադրամ, Armenia, Rep. of: Encouraged FSIs for Deposit Takers, 2007-2019, տե՛ս <http://data.imf.org/regular.aspx?key=61404590>:

³⁹⁸ ՀՀ վիճակագրական կոմիտե, Վիճակագրական տվյալներ, 2007-2019թթ., տե՛ս <https://www.armstat.am/am/>:

³⁹⁹ Տե՛ս նույն տեղում:

⁴⁰⁰ Տե՛ս նույն տեղում:

պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների հաշվարկման ժամանակ ՀՆԱ-ի շարքերը հարթեցվել են սեզոնայնության ազդեցությունը չեզոքացնելու նպատակով: Արտերկրից եկող տրանսֆերտների ծավալի և արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշներում ևս վերցված են աճի ինդեքսները՝ տվյալ եռամսյակը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ:


3. Գործոնային վերլուծություն

Գործոնային վերլուծությունն իրականացվել է R ծրագրային փաթեթի⁴⁰¹ միջոցով՝ օգտագործելով կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելը (SVAR): Ժամանակային շարքի տեսքով փոփոխական են հանդիսացել վերոնշյալ 16 մակրոտնտեսական ցուցանիշները՝ արտահանված 2007-2019թթ.-ի համար եռամսյակային պարբերականությամբ: Ցուցանիշները դասակարգել ենք 2 խմբի՝ տնտեսական փոփոխականներ և ֆինանսական փոփոխականներ: Բացառել ենք նույն խմբում դասակարգված այն փոփոխականները, որոնց միջև ուժեղ կորելյացիա է եղել, և մյուս խմբում դասակարգված փոփոխականների հետ կապը նույնն է եղել (2 բացառում՝ շահութաբերությունն ըստ կապիտալի, նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին): Աշխատանքում ակնկալվող ազդեցության չափ ենք համարում 50% և ավել ազդեցությամբ միջանկյալ կապերը, իսկ որպես ուղղություն առաձևակի ուշադրություն ենք դարձնում ֆինանսական համակարգի ազդեցությունը տնտեսության վրա՝ ցուցիչների միջոցով:

3.1 Ֆինանսական ցուցիչների ազդեցությունը տնտեսական ցուցիչների վրա

R ծրագրային փաթեթի միջոցով կառուցել ենք փոփոխականների կորելյացիոն մատրից, որից անջատել ենք մեզ համար ակնկալվող չափի շրջանակներում թվով 33 միջանկյալ կապերը. տե՛ս ստորև.

Գծապատկեր 1



Հաջորդիվ կառուցել ենք SVAR մոդելը՝ փոփոխականների հետևյալ համակցությամբ. տնտեսական թվով 7 (y1-y7) ցուցիչները դիտարկել ենք որպես կախյալ փոփոխականներ, որոնցից յուրաքանչյուրը բացատրել ենք ֆինանսական համակարգը բնութագրող թվով 5 ցուցիչների (x1-x5) ազդեցություններով, որտեղ՝

- y1-ը ՀՆԱ-ի եռամսյակային իրական աճի տեմպն է,
- y2-ը գործազրկության մակարդակը,

⁴⁰¹ Hanck C., Arnold M., Gerber A., Schmelzer M., Introduction to Econometrics with R, պարագրաֆ 16.1, 2020.

- y3-ը վարկեր/ՅՆԱ,
- y4-ը պետական պարտք/ՅՆԱ,
- y5-ը արտերկրից եկող տրանսֆերտների ծավալ (աճի ինդեքսը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ),
- y6-ը արտաքին առևտրաշրջանառություն (աճի ինդեքսը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ),
- y7-ը սպառողական գների ինդեքսը,
- x1-ը չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին,
- x2-ը շահութաբերությունն ըստ ակտիվների,
- x3-ը բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին,
- x4-ը նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- x5-ը բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին,

Վերոնշյալ ուժեղ կորելացվածության հանգամանքով բացառված փոփոխականներից բացի, կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելում չեն ներկայացվել Բյուջեի դեֆիցիտ/ՅՆԱ և Դրամ/դոլար փոփոխականները՝ տնտեսության վրա ունեցած ազդեցության էականության չափանիշով կատարված դատողության շրջանակներում:

Այսպիսով՝ գործոնային վերլուծության միջոցով հասկանալու համար ֆինանսական համակարգի ցուցիչների ազդեցությունը տնտեսության ամփոփ ցուցիչների վրա գնահատումն իրականացնում ենք SVAR մոդելի միջոցով՝ հավասարման կախյալ փոփոխական վերցնելով տնտեսական թվով 7 ցուցիչները առանձին, իսկ բացատրող փոփոխականներ՝ նույն տնտեսական ցուցիչի և ֆինանսական թվով 5 ցուցիչների (միասին վերցված) նախորդ լագերը:

Ցուցիչների փոխազդեցությունները ներկայացված են ստորև.

ՅՆԱ-ի եռամսյակային իրական աճի տեմպ ցուցիչի գնահատման արդյունքներ՝

ՅՆԱ-ի եռամսյակային իրական աճի տեմպը հաշվի է առնում գների աճի ազդեցությունը, այսինքն՝ չեզոքացնում է միայն գնաճի «շնորհիվ» ունեցած աճը: Հատկանշական է նաև այն փաստը, որ ՅՆԱ-ում չեն ներառվում չգրանցված գործարքները՝ սովորաբար շուկայում կատարված աշխատանքները, այնտեղ վաճառված ապրանքներն ու ծառայությունները: 2020թ.-ի 1-ին եռամսյակը համադրելով նախորդ նույն ժամանակաշրջանին, տեսնում ենք ՅՆԱ-ի 2%-անոց աճ, ինչը հիմնականում պայմանավորված է տեղեկատվության և կապի 10%, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման 13%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման 8%, տնային տնտեսությունների սեփական սպառման համար գործունեություն 3% աճով և շինարարության, փոխադրումներ և պահեստային տնտեսություն ոլորտի 10-ական տոկոս նվազմամբ:

Դրանց հետ մեկտեղ ազդեցություն են ունեցել պետական կապիտալ ծախսերի՝ նախատեսվածից ցածր կատարողականը, երկու խոշոր հանքավայրերում արտադրության հետ կապված դժվարությունները: Գործոնային վերլուծության արդյունքներով ցուցանիշի վրա իրենց անմիջական ազդեցությամբ հատկանշական են չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին (x1) և Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներին (x5) գործակիցները:

Գործադրվող մակարդակի գնահատման արդյունքներ

2018 թ.-ի երկրորդ եռամսյակում տնտեսապես ակտիվ բնակչությամբ Հայաստանը վերջին տասնամյակում գրանցեց ամենաբարձր ցուցանիշը՝ 64%: Գործադրվող մակարդակն իր բացարձակ արժեքով հարաբերած ակտիվ բնակչության թվաքանակին 2019թ.-ի համար նվազել է 7%-ով՝ կազմելով 18.9%, իսկ աղքատության մակարդակը 2018թ.-ի տվյալներով կազմել է 23.5%: Նախորդ տարվա նկատմամբ նվազելով 8.6%-ով: Համաձայն գործունային վերլուծության արդյունքների՝ չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին գործակիցն ունի անմիջական ազդեցություն գործադրվող մակարդակի վրա, մասնավորապես չաշխատող վարկերի բացասական իմպուլսի (նվազման) ֆոնի հետ նվազում է գործադրվողությունը: Դիտարժան է նաև Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվների ազդեցությունը (x5) գործադրվող մակարդակի վրա, ըստ գծապատկերի բարձր իրացվելի ակտիվների աճը բացասաբար է ազդում գործադրվողության վրա՝ նվազեցնելով այն:

Վարկեր/ՀՆԱ ցուցիչի գնահատման արդյունքներ

2019թ.-ը համադրելով 2018թ.-ի հետ՝ Վարկ/ՀՆԱ ցուցանիշը աճել է 7%-ով և կազմել 52%: Վերջին 20 տարիների ընթացքում 2019թ.-ին, ցուցանիշը հասել է իր պատմական մաքսիմումին: Այն բացատրվում է ֆինանսական միջնորդության խորացմամբ, մասնավորապես սպառողական ու հիպոթեքային վարկերի աճով: Պատմական մինիմումը գրանցվել է 2003թ.-ին՝ 6.6%: Համաձայն գործունային վերլուծության՝ չաշխատող վարկերի շոկ չի նկատվում, ինչը խոսում է այն մասին, որ ֆինանսական միջնորդությունը մեծացնելու ֆոնին չաշխատող վարկերի տեսակարար կշիռը եղել է կառավարելի մակարդակում:

Պետական պարտք/ՀՆԱ ցուցիչի գնահատման արդյունքներ

ՀՀ պետական արտաքին պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ կազմում է 44.6%՝ վերջին 5 տարիների համար ցուցաբերելով միջինում 4% կայուն աճ: Պետական պարտքի ավելացումը, համաձայն գործունային վերլուծության, հիմնականում ազդեցություն է ունեցել բանկային համակարգում բարձր իրացվելի ակտիվների (x5) տեսակարար կշիռի վրա, ինչպես նաև շահութաբերություն ըստ ակտիվների (x2) ցուցանիշի վրա: Հատկանշական է չաշխատող վարկերի (x1) տեսակարար կշիռի ավելացման արդյունքում պետական պարտք/ՀՆԱ գործակիցի էական աճը, ինչը կարող է բացատրվել կենտրոնական բանկի կողմից բանկերի ֆինանսական միջնորդությունը ավելացնելու նպատակով ներգրավված վարկային միջոցներով, ինչին նաև նպաստում է վերոնշյալ Վարկ/ՀՆԱ ցուցանիշի վերջին տարիների 7%-անոց աճը:

Արտերկրից եկող տրանսֆերտների ծավալ ցուցիչի գնահատման արդյունքներ

Մասնավոր տրանսֆերտները կարևոր դերակատարություն ունեն ՀՀ-ի տնտեսության համար ևս: ՀՀ-ի տնտեսությունը մասնավոր տրանսֆերտներից ամենամեծ կախվածություն ունեցող երկրների ցանկում Համաշխարհային բանկի 2019թ.-ի տվյալներով զբաղեցնում է 13-րդ հորիզոնականը⁴⁰²: Մասնավոր տրանսֆերտները կազմում են Հայաստանի ՀՆԱ-ի 11.2%-ը: Տրանսֆերտների գերակշիռ մասը ՌԴ-ից և ԱՄՆ-ից են, որոնք ՀՀ-ի քաղաքացիներին սպասարկվում են ՀՀ-ի առևտրային բանկերի միջոցով: Համաձայն գործունային վերլուծության՝ արտերկրից ստացվող տրանսֆերտների ծավալը ունի դրական իմպուլս, իսկ ժամանակային

⁴⁰² Համաշխարհային բանկ, Personal remittances, received (% of GDP) – Armenia, 2019:

տեսանկյունից անմիջական փոխազդեցություն շահութաբերությունն ըստ ակտիվների (x2) ցուցիչի հետ, որը բացատրվում է առևտրային բանկերի՝ տրանսֆերտներից գոյացած կոմիսիոն եկամուտների ավելացումով:

Արտաքին առևտրաշրջանառություն ցուցիչի գնահատման արդյունքներ

Համաձայն ՀՀ-ի արտաքին և փոխադարձ առևտրի ցուցանիշների՝ 2020թ. ապրիլի 2019թ. ապրիլի նկատմամբ արտահանման գծով կազմել է 70%, ներմուծման գծով՝ 73%, իսկ 2020թ.-ի առաջին 4 ամիսների համար առևտրաշրջանառությունը անկում է ապրել: Անկումը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսային համավարակով՝ լոբդաունի և օդային ճանապարհների փակ լինելու հանգամանքներով: Արտաքին առևտրաշրջանառության վրա ունեցած ազդեցությամբ առանձնանում են բարձր իրացվելի ակտիվները (x3, x4), ինչը կարող է բացատրվել բանկային համակարգից իրական հատված ուղղված կարճաժամկետ ֆինանսական միջնորդության ավելացմամբ:

Սպառողական զների ինդեքսի գնահատման արդյունքներ

Սպառողական զների ինդեքսը (ՍԳԻ) համարվում է ՀՆԱ դեֆլյատոր: Այն 2020թ.-ի ապրիլի 2019թ.-ի դեկտեմբերի համադրությամբ կազմել է 102.6, 2019թ.-ի ապրիլի համադրությամբ կազմել է 101.4: Ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների՝ բացասական տատանումներ են նկատվում արդյունաբերողների արտադրանքի զների ինդեքսում և գյուղատնտեսության արտադրության միջոցների զնման զների ինդեքսում: Գործոնային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին (x1) և շահութաբերությունն ըստ ակտիվների (x2) ցուցանիշի շուրջ ՍԳԻ վրա ունեն անմիջական և բացասական ազդեցություն, որը առաջին դեպքում վերականգնվում է 5 եռամսյակ, իսկ երկրորդի դեպքում՝ 8 եռամսյակ անց: Չաշխատող վարկերի ավելացումը նվազեցնում է ապրանքների ու ծառայությունների նկատմամբ սպառումը/ստացումը՝ կրճատելով դրանց նկատմամբ պահանջարկը, որն էլ ունենում է ՍԳԻ վրա բացասական ազդեցություն: Շահութաբերությունն ըստ ակտիվների գերակշիռ մասը բանկային համակարգում վերագրելի է տրամադրված վարկերից տոկոսային եկամուտներին, որոնց բացասական ազդեցությունը կորելացված է հենց չաշխատող վարկերի հետ:

3.2 Ֆինանսական համակարգի ցուցիչների միջև փոխազդեցություններ.

Ֆինանսական համակարգի ցուցիչների փոխազդեցությունը գնահատելու նպատակով կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի (SVAR) միջոցով կառուցել ենք փոփոխականների հետևյալ համակցությունը. ֆինանսական համակարգը բնութագրող թվով 5 ցուցիչներից (x1-x5) յուրաքանչյուրը բացատրել ենք նույն և մյուս՝ թվով 4 ֆինանսական ցուցիչների միջոցով, որտեղ

- x1-ը չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին,
- x2-ը շահութաբերությունն ըստ ակտիվների,
- x3-ը բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին,
- x4-ը նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- x5-ը բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին,

Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին ցուցիչի գնահատման արդյունքներ

Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին ցուցանիչը նպատակ ունի բացահայտելու վարկային պորտֆելի ակտիվների որակի և ռիսկի հետ կապված խնդիրները: Վարկը դասակարգվում է չաշխատող, երբ վարկի մայր գումարները և/կամ տոկոսագործարները դառնում են 90 և ավել օր կետանցված, կամ տվյալ տնտեսվարողը ճանաչվում է սևանկ: Վարկերն այս դասակարգումից հանվում են մարման, վերականգնման կամ դուրսգրման արդյունքում: Ցուցանիչի վրա իրենց անմիջական ազդեցությամբ հատկանշական են Շահութաբերությունն ըստ ակտիվների (x2) և Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներին (x5) գործակիցները, որոնք բացասաբար են ազդում գործակցի վրա՝ նվազեցնելով այն: Չաշխատող վարկերի նվազեցումը հիմնականում պայմանավորվում է ավելի մեղմ դրամավարկային քաղաքականության իրականացմամբ՝ շնորհիվ վարկային արձակուրդների, պայմանների վերանայման ու վերակառուցման, ինչպես նաև ԱՄՆ-ից և ՌԴ-ից ստացվող տրանսֆերտների ավելացման:

Շահութաբերությունն ըստ ակտիվների գույքի գնահատման արդյունքներ

Շահութաբերությունն ըստ ակտիվների ցուցանիչը սահմանվում է որպես տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիչ: Այն ցույց է տալիս ակտիվների մեկ միավորին ընկնող շահույթի մեծությունը: Չուտ շահույթը վերցվում է հաշվարկված նախքան հարկերը՝ երկրների հարկային քաղաքականության ազդեցություններից զերծ պահելու և համադրելիությունը բարձրացնելու նպատակով: Ցուցանիչի վրա ըստ ժամանակագրության ազդում են Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր (x1) և Բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ ցուցանիչները: Չաշխատող վարկերի տեսակարար կշռի նվազումը գործակցի վրա ազդեցություն է ունենում 2 եռամսյակների ընթացքում՝ վարկերի մարման, վերականգնման կամ դուրսգրման շնորհիվ, իսկ բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշռի ավելացումն իր հերթին ազդում է գործակցի վրա բանկային ցպահանջ ավանդներից ու արժեթղթերից ստացվող տոկոսային եկամուտների տեսքով:

Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը գպահանջ պարտավորություններին գույքի գնահատման արդյունքներ

Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններին ցուցանիչը ցույց է տալիս, թե ինչքանով են բանկերը իրացվելի իրենց կարճաժամկետ պարտքային պարտավորությունները կատարելու համար: Վերոնշյալ գծապատկերներից պարզ երևում է Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր (x1) և Շահութաբերությունն ըստ ակտիվների (x2) գործակիցների ազդեցությունը ցուցանիչի վրա: Չաշխատող վարկերի տեսակարար կշռի ավելացումը բերում է Բարձր իրացվելի ակտիվների նվազման՝ այդ նույն վարկերից մայր գումարների և/կամ տոկոսագումարների ծավալի նվազման չափով: Ինչ վերաբերում է Շահութաբերությունն ըստ ակտիվների գործակցի ազդեցությանը, ապա այն կարող է բացատրվել ակտիվների մեկ միավորին ընկնող շահույթի ավելացմամբ, ինչն էլ իր հերթին կավելացնի ազատ դրամական միջոցները և կբարելավի իրացվելիությունը:

Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին գույքի գնահատման արդյունքներ

Նորմատիվային ընդհանուր կապիտալը գումարային այն մեծությունն է, որը սահմանվում է կարգավորողի կողմից, որին պետք է բավարարեն բանկերը: Կարելի է հանդիպել կապիտալի համարժեքության ցուցանիչ անվամբ ևս: Բավարար կապիտալացվածությունը իրացվելիության կարևոր ցուցիչ է: Այն միտված է նաև

հաճախորդների շահերի պաշտպանությանը, որպեսզի ապահովվի համակարգի անվտանգ և արդյունավետ շարունակականությունը: Ցուցանիշի վրա կտրուկ ազդեցությամբ առաձևանում է Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր (x1) գործակիցը՝ կապիտալում չաշխատող վարկերի կորստից պահուստավորման գումարի չափով:

Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունն ընդհանուր ակտիվներին ցուցիչի գնահատման արդյունքներ

Բարձր իրացվելի ակտիվներ են համարվում դրամական միջոցները, բանկային ցպահանջ ավանդները, մինչև 3 տարի ՌՌ-ի կամ համայնքների կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերը: Որքան քիչ ժամանակ է պահանջվում տվյալ ակտիվները դրամական միջոցների վերածելու համար, այնքան բարձր է դրանց իրացվելիությունը: Բարձր իրացվելի ակտիվները հարաբերած ընդհանուր ակտիվներ գործակիցը շահագրգիռ կողմերի համար կարևորվում է բանկի վճարունակությունը գնահատելու տեսանկյունից, որը կատարվում է ընթացիկ ակտիվների իրացվելիության բնութագրության հիման վրա: Ցուցանիշի վարքագծի վրա ազդող փոփոխականները նույնն են, ինչ Բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններին գործակցի համար, այն է Չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր (x1) և Շահութաբերությունն ըստ ակտիվների (x2) գործակիցները:

Եզրակացություն

Համաձայն մեր կողմից ՌՌ-ի օրինակով ներկառուցված մեթոդական մոտեցման և կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի (SVAR) միջոցով իրականացված գործոնային վերլուծության արդյունքների՝ ֆինանսական ցուցանիշները հատկանշական են գործազրկության և սպառողական գների ինդեքսի վրա ունեցած ազդեցություններով:

Առաջին կապը ցույց է տալիս ֆինանսական ցուցիչներից չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին ցուցիչի անմիջական ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա, որը բացատրվում է չաշխատող վարկերի բացասական իմպուլսին (նվազմանը) զուգահեռ գործազրկության նվազող դինամիկայով: Ավելին՝ գործազրկության մակարդակն իր բացարձակ արժեքով հարաբերած ակտիվ բնակչության թվաքանակին 2019թ.-ի համար նվազել է 7%-ով՝ կազմելով 18.9%, որին նախորդել է 2018թ.-ի տվյալներով 23.5% աղքատության մակարդակը, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել էր 8.6%: Կարևոր ենք համարում նշել նաև ֆինանսական միջնորդությունը մեծացնելու ֆունկցիոնալ չաշխատող վարկերի տեսակարար կշռի կառավարելի մակարդակում մնալու հանգամանքը:

Երկրորդ կապը ցույց է տալիս ֆինանսական ցուցիչներից երկուսի՝ չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին և շահութաբերությունն ըստ ակտիվների ցուցիչների անմիջական ու բացասական ազդեցությունները սպառողական գների ինդեքսի վրա, որը վերականգնվում է համապատասխանաբար միայն 5 և 8 եռամսյակ անց: Մեր համոզմամբ՝ չաշխատող վարկերի աճը նվազեցնում է ապրանքների ու ծառայությունների նկատմամբ սպառումը/ստացումը՝ կրճատելով դրանց նկատմամբ պահանջարկը, որն էլ ունենում է ՍԳԻ վրա բացասական ազդեցություն: Շահութաբերությունն ըստ ակտիվների գերակշիռ մասը պայմանավորված է բանկերի կողմից տրամադրված վարկերից ստացվող տոկոսային եկամուտներով, որոնց բացասական ազդեցությունը կորելացված է հենց չաշխատող վարկերի հետ:

Մեր ուսումնասիրության շրջանակներում և՛ տնտեսական, և՛ ֆինանսական ցուցիչների վրա ունեցած էական ազդեցությամբ ֆինանսական ցուցիչներից հատկանշական է եղել չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին ցուցիչը:

THE FACTOR ANALYSIS OF THE INFLUENCE OF THE FINANCIAL SYSTEM INDICATORS ON THE SUMMARIZED ECONOMIC INDICATORS

VAHAGN TEPOYAN

*Yerevan State University, Faculty of Economics and Management,
Finance and Accounting Chair, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of this article is to build such an optimal system, consisting of the financial system indicators, which will give the best practice to understand and assess the impact on the summarized indicators of the economy, the interconnections, and will be representative enough. In the resulting system our task is to assess the impact of 7 financial indicators, widely used by the International Monetary Fund and the Central Bank of Armenia, on the indicators of 3 main sectors of the economy - the real sector, the public sector and the external sector, measuring the impact in quantitative and time terms.

In the course of the study, both the international and the local experience have been studied. A methodological approach consisting of 16 macroeconomic indicators has been developed, the factor analysis of which has been performed using a structural vector autoregression model (SVAR).

As a result of the study, it has been concluded that the financial indicators, particularly the ratio of Non-performing loans to total loans and the Profitability of assets, are characterized by their impacts on Unemployment rate and the index of Consumer Prices, respectively.

Key words: Factor analysis, Vector autoregression model, correlation, crisis, real sector, quantitative assessment, transfers, Consumer price index, trade, currency.

ФАКТОРНЫЙ АНАЛИЗ ВЛИЯНИЯ ПОКАЗАТЕЛЕЙ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ НА СВОДНЫЕ ЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ

ВААГН ТЕПОЯН

*аспирант кафедры финансов и бухгалтерского учета
факультет экономики и менеджмента
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является построение оптимальной системы, состоящей из таких показателей финансовой системы, которая позволит лучше понять и оценить влияние на сводные показатели экономики, их взаимосвязанность и при этом будет максимально репрезентативной.

В ходе исследования мы изучили международный и локальный опыт. Нами разработан методический подход, состоящий из 16 макроэкономических показателей, факторный анализ которых проводился с использованием структурной модели векторной авторегрессии (SVAR). В полученной системе наша задача – оценить влияние 7 финансовых показателей, широко используемых Международным валютным фондом и

- Հարցական նախադասություններում ետադաս դիրքում որպես հավելում գործածվող գլխավորապես հաստատում արտահայտող բառ-կապակցություններ-*nicht wahr?, oder?, Verstehen Sie?*
- Գնահատում, կարծիք արտահայտող կապակցություններ-*Am lustigsten finde ich..., ich denke, dass..., ich glaube, dass....*
- Տարաբնույթ արձագանք արտացոլող արտահայտություններ- *Ja, genau, das stimmt nicht, վերաբերականներ, ձայնարկություններ-Na, Klar, Boah*
- Մատնանշում արտահայտող բառեր (Deixis)⁴⁵⁸- *hier, heute, höchstens, die, der, das, die Frau da drüben.*⁴⁵⁹

⁴⁵³ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, S.15

⁴⁵⁴ Նույն տեղում, էջ 27:

⁴⁵⁵ **Schatz H.**, Fernstudienangebot Germanistik, Deutsch als Fremdsprache: Fertigkeit Sprechen, Goethe-Institut, München, 2006, S. 56.

⁴⁵⁶ **Aguado K.**(.), Kognitive Konstituenten mündlicher Produktion in der Fremdsprache: Aufmerksamkeit, Monitoring und Automatisierung.“ In: *Fremdsprachen Lehren und Lernen (FLuL)*, 32: 2003, S.11-26, S. 21.

⁴⁵⁷ **Bausch, Karl-Richard** (Vorsitz), Rahmenplan „Deutsch als Fremdsprache“ für das Auslandsschulwesen, Köln, den 7. September 2009.

⁴⁵⁸ Իմոն առանձնացնում է տեղի, ժամանակի, սաստկացնող իմաստ (Intensifikatoren) արտահայտող այսպիսի ցուցական բառեր: hier, heute, gestern (extrem, absolut, total, ehrlich, ganz

Ասվածի լույսի ներքո հարկ ենք համարում ընդգծել գոյականին փոխարինող *der, die, das* հարաբերական դերանունների բազմադեպ կիրառությունը բանավոր հաղորդակցությունում: Կարծում ենք՝ վերջիններս ևս խոսքի տևտեման հետևանք են, երբ նախորդ մտքում հիշատակվել է տվյալ գոյականը: *Ich nehme die* hier*⁴⁶⁰.

Չնչունաբանություն

Չալի բնորոշմամբ խոսելիս կարող ենք խուսափել բառերից և քերականական կառույցներից, որոնց չենք տիրապետում, բայց արտասանությունից խուսափել չենք կարող⁴⁶¹:

Իրադրային երկխոսություններում, որոնցում պարզ, անկեղծ հաղորդակցումն է գերակայում, նշանակալից է հուզականությունը՝ դրսևորվելով համապատասխան հնչերանգային ու հարալեզվական միջոցներով: Առօրյա-խոսակցական երկխոսություններին ներունակ են դադարները (*Sprechpausen*), ձայնի բարձագման (*Tonhöhe*) փոփոխությունները, խոսելու միջին արագությունը (*Sprechgeschwindigkeit*): Թերևս հենց հնչերանգային միջոցներն են նպաստում, որ խոսակիցը հասկանա դադարներով, ոչ ավարտուն խոսքը: Գաղտնիք չէ, որ հնչերանգը պայմանավորված է խոսողի հաղորդակցական նպատակադրումներով, ասույթի կառուցվածքային հատկանիշներով, բառային-քերականական միջոցների գործածմամբ: Ըստ որում, բարձր հնչերանգը բացի հարցական նախադասությունից (վերջինս քննարկվեց վերևում), պայմանավորված է նաև նոր տեղեկույթով՝ արտահայտվելով տարբեր զգացական նշույթներով և հաղորդելով համապատասխան հուզարտահայտչականություն:

*L: Na***, das ist doch 'prima!' ↑*⁴⁶²

Doch եղանակավորող մասնիկը նպաստում է ձայնի բարձրագմանը՝ միաժամանակ արտահայտելով հիացմունք: Չարկ է մատնանշել նաև *Na* ձայնարկությունից հետո խոսելու դադարը: Փաստենք, որ այսպիսի նախադասություններում հնչերանգի բարձրագմանը նպաստում է բազմապիսի եղանակավորող նույթների կիրառումը:

Բարձր հնչերանգի և հուզարտահայտչականության որոշիչ դերի մասին են վկայում նաև ստորոգյալի առաջին դիրքով արտահայտված կառույցները: *L: Oh Mann**, war 'das haesslich!' ↑*⁴⁶³

Նման կառույցներում մերթ շեշտվում են ենթակաները, մերթ մակբայները:

Ասույթի տարբերակման, իմաստային նշանակության շեշտադրման տեսակետից ուշագրավ են հնչերանգային դադարներով հարուստ ձախակողմյան և աջակողմյան կառույցներով, կոչականով, ձայնարկությունով արտահայտված նախադասությունները:

*Opa: Das erste Mal 1999 hier in Deutschland, ** da hat es dich noch gar nicht gegeben.*

*M: Ich möchte hier bleiben, * wegen meiner Ausnahme*

*L: Vor ein paar Wochen hattest du in Englisch eine Fünf, ** richtig? ↑*

K: Na, 'Günther, ** was ist denn los mit dir? ↑*⁴⁶⁴

klar...), **Imo, W.**, Ad-hoc Produktion oder Konstruktion Verfestigungstendenzen bei Inkrement-Strukturen im gesprochenen Deutsch. In A. Lasch & Ziem, A. (Hrsg.), Konstruktionsgrammatik III. Aktuelle Fragen und Lösungsansätze Tübingen: Stauffenburg, 2012, S. 239–254.

⁴⁵⁹ Օրինակները՝ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, **Hilpert S., Niebisch D.** u.a., Schritte Plus Neu: 3+4 Niveau A2, Hueber, (1) 2017.

⁴⁶⁰ **Hilpert S., Niebisch D.** u.a., Schritte Plus Neu: 3+4 Niveau A2, Hueber, (1) 2017, S.26

⁴⁶¹ **Hall, Ch., Natunen M., Fuchs B., Freihoff R.**, Deutsche Aussprachelehre: Ein Hand- und Übungsbuch für Sprechern des Finnischen, Finnlectura, Helsinki, 1995, S.14

⁴⁶² **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, S.28

⁴⁶³ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, S.30.

Ընդգծենք, որ ընդլայնումների դեպքում խոսելու դադարի տևողությունը փոփոխական է՝ արտահայտված երկար կամ կարճ դադարներով:

Վերոգրյալի համաձայն՝ կարելի է արձանագրել, որ խոսքի տարանջատման, բառի առանցքային իմաստը ընդգծելու համար էական դեր ունեցող մեղեդայնությունը, բառի շեշտադրության ճշգրտությունը օժտված են իմաստաբանական-շարահյուսական և խոսքի եղանակավորման ներուժով:

Այսպիսով՝ ամփոփելով բանավոր հաղորդակցման լեզվական գործոնների ուսումնասիրությունը՝ կարող ենք ընդգծել գերմաներեն երկխոսությունների ինքնատիպ շարահյուսական կառուցվածքը՝ պայմանավորված խոսքի վերարտադրման գործում վճռորոշ դեր ունեցող հոգեբանական գործոններով: Անշուշտ, կարճ ժամանակում հաղորդման կառուցման, փոխադրման և իրականացման փուլերի հաղթահարումը փոխկապակցված է նաև ինտերակտիվ ու մշակութային ասպեկտների հետ: Ներկայացված գերմաներեն բանավոր հաղորդակցության հոգելեզվաբանական բնութագրիչների հաշվառումը էական դեր ունի բանավոր խոսքի ուսուցման և ուսումնառության արդյունավետության բարձրացման գործում: Հատկապես օտար լեզվով կենդանի շփման այժմեական մոտեցման գերակայությունը ենթադրում է հաշվի առնել օտարալեզու սահուն և ճշգրիտ, ինքնաբեր գրույց վարելու համար անհրաժեշտ գործիքակազմը, ինչը էականորեն տարբերվում է գրավոր խոսքի բնութագրական առանձնահատկություններից:

Գերմաներեն երկխոսությունների հոգելեզվաբանական հայեցակերպի այսպիսի ուսումնասիրությունը ենթադրում է վերը նկարագրված բնորոշիչների համապարփակ ընդգրկում բնական բանավոր խոսքի զարգացմանը նպատակաուղղված նոր մոտեցումներով ուսուցման, գնահատման մեթոդիկայի մշակման գործում:

Պայմանական հնչյունական նշաններ⁴⁶⁵

*-կարճ ընդմիջում

**-երկար ընդմիջում

↑- բարձրացող հնչերանգ

'- շեշտադրում

= հնչյունների համակցում, սղում

THE PSYCHOLINGUISTIC CHARACTERISTICS OF GERMAN DIALOGUES

LUSINE SOGHOMONYAN

Brusov State University,

Chair of Pedagogy and Language Teaching, Ph.D. Student,

Yerevan, Republic of Armenia

The aim of the current article is to study the psycho-linguistic peculiarities of German dialogues in communicative situations (based on audio materials of German textbooks *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

⁴⁶⁴ Hilpert S., Niebisch D. u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber,(1) 2017, S.32.

⁴⁶⁵ Պայմանական նշաններն ընտրվել են Ֆիեռլերի՝ բանավոր խոսքի վերլուծությունների համար առաջադրված նշաններից, Fiehler R., Die Vielfalt der Besonderheiten gesprochener Sprache - und zwei Beispiele, wie sie für den DaF-Unterricht geordnet werden kann: Gesprächspartikeln und Formulierungsverfahren, Erschienen in: Imo, Wolfgang/Moraldo, Sandro M. (Hrsg.): Interaktionale Sprache und ihre Didaktisierung im DaF-Unterricht. Tübingen: Stauffenburg, 2015. S. 23-43.

The objectives are as follows: to study the theoretical foundations of German spoken language from the linguistic point of view, to discuss the rules and conditions that provide an authentic conversational speech, to reveal the psycholinguistic features of German dialogues based on their structural-syntactic analysis.

The study was carried out with the use of the following methods: abstraction, comparison, analysis, deduction.

The article analyzes the dialogues as purposeful, spontaneous actions corresponding to the real situation of communication.

Within the framework of communicative-linguistic competence and the psychological factors the analysis of the dialogues, makes it possible to distinguish structural-syntactic structures with various functions, differentiated in written and oral speech.

As a result of the study the linguistic structures with various communicative goals are revealed and coordinated, expressed in lexical-grammatical and phonetic aspects with semantic-syntactic potential.

Keywords: *oral communication, spontaneous speech, linguistic knowledge, psychological factors, syntactic structures.*

ПСИХОЛИНГВИСТИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ДИАЛОГОВ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ

ЛУСИНЕ СОГОМОНЯН

*аспирант кафедры педагогики и методики
преподавания языков ГУ им. В. Брюсова,
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение психолингвистических особенностей немецких диалогов в коммуникативных ситуациях (на аудиоматериалах учебников немецкого языка Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2).

В задачи исследования входит: изучение теоретических основ немецкой устной речи с лингвистической точки зрения, обсуждение правил и условий, обеспечивающих разговорную аутентичную речь, выявление психолингвистических особенностей немецких диалогов на основе структурно-синтаксического анализа диалогов.

Исследование проводилось с помощью следующих методов: абстракция, сравнение, анализ, дедукция.

В статье анализируются диалоги как целенаправленные спонтанные действия, соответствующие реальной ситуации общения.

Анализ диалогов в рамках коммуникативно-лингвистической компетенции с учетом психологических факторов позволяет четко различать структурно-синтаксические структуры с различными функциями, разграниченные в письменной и устной речи.

В результате исследования выявлены и скоординированы лингвистические структуры, отражающие различные коммуникативные цели, выраженные в лексико-грамматическом и фонетическом аспектах с семантико-синтаксическим потенциалом.

Ключевые слова: *устная коммуникация, спонтанная речь, языковые знания, психологические факторы, синтаксические структуры.*



ԵՐԻՇԵ ԶԱՐԵՆՑԸ ԵՎ «ՍՏԱՆՂԱՐՈՏ» ՀԱՆՂԵՍԻ ՄԻԱՎ ՀԱՄԱՐԸ*

ՀՏԴ 821.19.0

ԱՆՈՒՇ ԹԱՍԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ,
Չարենցի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
anush.tasalyan@gmail.com

Հոդվածի նպատակն է վերանայել «Ստանդարտ» ամսագրի տեղն ու դերը հայ գրական մամուլի պատմության մեջ:

Մեր խնդիրն է կարևորել «Ստանդարտ» ամսագրի եզակիությունը, որովհետև ընդամենը 16 թերթից կազմված «Ստանդարտ»-ը ժամանակին որդեգրեց թույլ հոմանիշը: Սակայն այդպես չէ, որովհետև մինչև «Ստանդարտ»-ը Եղիշե Չարենցը մամուլում աշխատելու բավական փորձ ուներ: Եվ «Ստանդարտ»-ն իր տեսակի մեջ եզակի ամսագիր էր: Բոլոր քայլերը հաշվարկված էին: Նախապես պլանավորված էր և՛ առաջին, և՛ երկրորդ համարներում վետեղվելիք նյութը: Այն ոչ միայն գրականություն, այլև նկարչություն, ճարտարապետություն, կինո և թատրոն լուսաբանող յուրօրինակ շտեմարան պիտի դառնար, որովհետև գրվում էր ոչ թե հեղափոխության մասին (ինչպես վարվում էր ժամանակի հայ և ռուս մամուլը), այլ հենց հեղափոխության համար:

Հետազոտության ընթացքում առավելապես կիրառել ենք վերլուծական ու համադրական մեթոդները: Կատարել ենք նաև կառուցվածքային վերլուծություն՝ առանձին անդրադառնալով յուրաքանչյուր բաժնի:

Ի վերջո, հանգել ենք այն եզրակացության, որ ամսագրի ոչնչացումը բովանդակությանը չէր վերաբերում, այլև համարձակությանը՝ քննադատելու ժամանակի մամուլն ու իրականությունն ընդհանրապես: Եվ պատահական չէ, որ ամսագիրը դարձավ նույն իրականության, քաղաքական իրադարձությունների պոի:

Հիմնաբառեր՝ «Ստանդարտ» ամսագիր, հեղափոխություն, գրական մամուլ, գրականություն, կինո, ճարտարապետություն, թատրոն:

1924 թվականի մայիսին Մոսկվայում հրատարակվում է «Ստանդարտ» ամսագրի առաջին համարը, որի պատասխանատու խմբագիրը Եղիշե Չարենցն էր: Ս. Աղաբաբյանը գրում է. «Երեքի» դեկլարացիայի այդ հիմնական բացն է, ահա, որ գալիս է լրացնելու «Ստանդարտ»-ը: Գրականությանը վերաբերող նրա առաջադրանքները ոչ թե ժխտումն են կամ փոփոխությունը «Երեք»-ի դեկլարացիայի, այլև վերջինիս զարգացումը, կոնկրետացումը, նրա իդեոլոգիական և ձևական դետալիզացիան»⁴⁶⁶:

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020թ., գրախոսվել՝ 15.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

⁴⁶⁶ Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, Երևան, 1973 , հ. 1, էջ 330:

Գրականագիտության մեջ «Ստանդարտ»-ը որդեգրեց թույլ հոմանիշը: Սակայն այդպես չէ, որովհետև մինչև «Ստանդարտ»-ը Եղիշե Չարենցը մամուլում աշխատելու բավական փորձ ուներ: Այդ աշխատանքը սկսվել էր «Երեք»-ի «Բուլյետենի» հրատարակմամբ, որը «Խորհրդային Հայաստան»-ի ծավալից փոքր, չորս էջանոց մի թերթ էր՝ սկզբից մինչև վերջ լցված բանաստեղծություններով, ընդ որում՝ Չարենցից, Վշտունուց և Աբովից՝ երկուական: Առաջին համարի լույս տեսնելուց հետո «Երեք»-ը կազմակերպեց առաջին «Շեփորահանդեսը» (նրանք սովորություն ունեին իրենց հրապարակային ելույթները կոչել «Շեփորահանդես»)՝⁴⁶⁷:

Վահրամ Ալազանն իր հուշերում գրում է, որ «Բուլյետենի» առաջին համարը տպագրվել էր մի խումբ կամավոր աշխատակիցների արտաժամյա աշխատանքով: «Շեփորահանդեսից» հետո նույն կերպ հրատարակվեցին երկրորդ ու երրորդ համարները, որից հետո «Երեք»-ը անհասկանալի պատճառներով քայքայվեց («Երեք»-ի առաջին իսկ ելույթի օրից սկսվում են միջանձնային տարածայնություններ Չարենցի ու Վշտունու միջև, ինչը Աբովը համարում է «ոչ սկզբունքային»): 1922 թվականի օգոստոսի վերջին Չարենցն ու Աբովը մեկնում են Մոսկվա, որտեղ էլ վերջնականապես տրոհվում է նրանց միությունը⁴⁶⁸): Այնպես Չաքարյանն այդ մասին գրում է. «Եվ հունիսի 14-ից հուլիս-օգոստոս ընթացքով Վշտունին իրեն «ապահովագրում» է «տեսական» ելույթներից՝ ասպարեզը թողնելով Աբովին ու Չարենցին: Ընդ որում՝ Աբովը հանդես է գալիս միայն բանավոր, Չարենցը՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր ելույթներով. պարզ տրամաբանությամբ՝ Չարենցի համար գրականության այդ օրը մտահոգություն էր, երկուսի համար՝ խորամանկ խաղ...»⁴⁶⁹:

«Դեկլարացիայից» դեռ մի տարի էլ չանցած՝ 1923 թվականի փետրվարին, Եղիշե Չարենցը և ճարտարապետ Կարո Հալաբյանը Մոսկվայում նախաձեռնում են հրատարակել «Ավանգարդ» բնորոշ անունով հանդեսը՝ նվիրված ժամանակակից գրականությանն ու արվեստին: Փետրվարի 4-ին (կիրակի) «Խորհրդային Հայաստան» թերթը ծանուցում է. «Նոր հանդես. Յեղիշե Չարենցի և Կարո Հալաբյանի խմբագրությամբ ամսիս վերջին լույս կտեսնի «Ավանգարդ» հանդեսը, նվիրված ժամանակակից գրականությանը և արվեստին (թատրոն, յերաժշտություն, նկարչություն, քանդակ, ճարտար, սինեմա և այլն):

Խմբագրության հասցեն՝ Նախկին «Ֆրանսիա» հիւրանոց, N 4»⁴⁷⁰:

Ծանուցումից հետո, ավա՛ղ, հանդեսի տպագրությունը չիրականացավ: Նույն՝ 1923 թվականին Թիֆլիսում լույս տեսնող «Մարտակոչ» թերթում տպագրվում է Եղիշե Չարենցի «Ֆուտուրիզմի շուրջ» հոդվածը՝ Լ. Մ-ի (նույն ինքը՝ Սուրեն Երզնկյան) «Ֆուտուրիզմը որպես գրական ռեակցիա» հոդվածում «սպրոդված մի քանի փաստացի անճշտությունների» մասին: «Ավանգարդ»-ի հետ կապված՝ հիշեցնում է նաև, որ ինքը հանդեսի նախաձեռնողները մասնակցել է ոչ թե խմբակային պարտավորությամբ, այլ պարզ համակրանքով: Բացատրում է նաև գործը զուլի չգալու հանգամանքները: «Հարկադրված եմ ասել,- գրում է Չարենցը,- որ ես ոչ մի անգամ գրական խմբակ չեմ ունեցել Հայխումյանի հետ: Հալաբյանի - ճիշտ է՝ մենք միասին մտադիր էինք հրատարակել ֆուտուրո-կոնստրուկտիվիստական ժուրնալ «Ավանգարդ» անունով, բայց գործը զուլի չեկավ միջոցներ ու համախոհ աշխատակիցներ չունենալու պատճառով»⁴⁷¹:

Նույնպիսի մի հանդես՝ նվիրված գրականությանն ու արվեստին (թատրոն, նկարչություն, քանդակ, ճարտարապետություն և այլն), հաջողվեց հրատարակել

⁴⁶⁷ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1961, էջ 241:

⁴⁶⁸ Տե՛ս **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, Երևան, 1967, հ. 6, էջ 615:

⁴⁶⁹ **Չաքարյան Ա.**, Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Երևան, 1997, էջ

911-912:

⁴⁷⁰ «Խորհրդային Հայաստան», 1923, փետրվարի 4, թիվ 25:

⁴⁷¹ «Մարտակոչ», Թիֆլիս, 1923, հունիսի 28, թիվ 103:

Մոսկվայում: Այս անգամ Նախաձեռնությանը «Երեք»-ից միայն Չարենցն էր մասնակցում՝ Կարո Զալաբյանի ու Միքայել Մազմանյանի հետ: «Արվեստի առանձին ճյուղերի վերաբերյալ որոշ տեսակետներ ունեինք և հասունացել էր ամսագիր լույս ընծայելու անհրաժեշտությունը,- հիշում է Միքայել Մազմանյանը:- Անունը առաջարկեցինք դեռ «Ստանդարտ»: Չարենցը երկմտում էր այդ անվան նպատակահարմարության նկատմամբ: Նայեց բառարաններում նրա բուն նշանակության մասին. ստանդարտ բառը երկու նշանակություն ուներ, մեկը՝ դրոշ, մյուսը՝ օրինակելի նմուշ»⁴⁷²: Հանդեսի անվան վերաբերյալ Չարենցի երկմտությունը պատահական չէր: Նախաձեռնողներից միայն Չարենցն էր մինչ այդ տպագիր մամուլում աշխատելու որոշակի փորձաշրջան անցել:

«Առաջին հոդվածը, որի մեջ շարադրել էինք մեր գրական-գեղարվեստական «հավատամքը»,- շարունակում է հիշել Մ. Մազմանյանը,- ուներ «Ստանդարտի կուրսը» վերնագիրը: Գրականության վերաբերող մասը գրել էր Եղիշե Չարենցը, իսկ նկարչության և ճարտարապետության մասը՝ Զալաբյանն ու ես»⁴⁷³:

Ամսագրի խմբագիրները և հատկապես Եղիշե Չարենցը «Ստանդարտ»-ի ստեղծումը կարևորում էին այնքանով, որքանով հայ իրականության մեջ եղած պարբերականները, ինչպես համոզված էին նրանք, կամ «վիճեցրեսային» էին կամ «պրոլետենյևիստական»: Չէին խուսափում նաև անուններ տալուց. վիճեցրեսայինների շարքում ներկայացված էին «Նորք», «Պայթար», «Վերելք» պարբերականները, իսկ պրոլետենյևիստականների շարքում՝ «Մուրճ»-ը և «Դարբնոց»-ը: Այդ պարբերականները, իրոք, չէին կարող համապարփակ տեղեկույթ տալ ժամանակի ընդհանուր մշակութային իրականության մասին, որովհետև դրանցից յուրաքանչյուրը այդ իրականությունը ներկայացնում էր կանխակալ ու միակողմանի մոտեցումով:

«Ստանդարտ»-ը իր տեսակի մեջ եզակի ամսագիր էր: Բոլոր քայլերը հաշվարկված էին: Նախապես պլանավորված էր և՛ առաջին, և՛ երկրորդ համարներում զետեղվող նյութը: Այն ոչ միայն գրականության, այլև նկարչության ու ճարտարապետության շտեմարան էր: «Երեք»-ի ղեկարացիայից ընդամենը երկու տարի հետո եկած «Ստանդարտ»-ը լրացնում, զարգացնում էր առաջինի թերի կողմերը: «Ստանդարտի գրական ծրագրի մասին» վերնագրի տակ «տողերիս հեղինակը» (խոսքը Ե. Չարենցի մասին է) մի տեսակ «արդարացնում է» «Երեք»-ի ղեկարացիան.

«Եվ ահա թե ինչու:

«Երեքի» ղեկարացիան առաջին փորձն էր ձևակերպելու մեր հետ-հոկտեմբերյան բանաստեղծության անելիքները, և որպես այդպիսին, որպես փորձ՝ զուրկ չէր որոշ նշանակությունից: Նա այն ժամանակ տեղին ու հարկավոր էր ամենից առաջ որպես ժխտում հնի, որպես գրական-հասարակական մի ակտ, որ կազմակերպված ձևով եզրափակում էր մեր պոեզիայի «տերյանական» շրջանը և հիմք էր դնում Նոր շրջանի»⁴⁷⁴:

«Թոքախտավոր» գրականության ժխտումից բացի, որն ի դեպ «Երեք»-ի գաղափարն էր, այս ամսագիրը Նորարար էր. *Նկարչության մեջ՝ պլակատ, կարիկատուրա, շարժ*, այսինքն՝ *տեխնիկայի կատարելագործում*, ճարտարապետության մեջ դեմ էր ամեն տեսակի ռեստավրացիայի, որովհետև *պետությունը պետք է ընթանա ժամանակակից ինժեներիայի հետ կողք կողքի*: Կամերային թատրոնի փոխարեն *ագիտ-թատրոն*՝ կազմված հենց բանվորներից, *հոգեբանության փոխարեն՝ արյունկիպ*: *Ֆիզկուլտուրա և կինո*: Գրականության բաժինը ներառում էր «Ստանդարտի գրական կուրսը», որ ինքնին հասկանալի է, ինչպես նաև «Գրքեր և պարբերականներ» բաժինը: Այստեղ անդրադարձ կա ոչ միայն հայալեզու, այլև ռուսական պարբերականներին, մասնավորապես «Լեֆին».

⁴⁷² Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 68:

⁴⁷³ Նույն տեղում:


⁴⁷⁴ «Ստանդարտ», 1924, Մոսկվա, էջ 3:

Նախատեսվում էր վերջինիս անդրադառնալ Նաև հաջորդ համարում: ««Լեֆի» մասին մեր հիմնական տեսակետն այն է, որ եթե «Լեֆը» զտեր իր շարքերը ամեն տեսակի «զառումսիկ»-ներից, ներկայիս ամենաընդունելի և ամենաառաջավոր հոսանքը կդառնար: Այնպես, ինչպես որ Նա կա՝ երկդիմի է, ոչ ուղղագիծ,- և սրանումն է կայանում «Լեֆի» ամենամեծ թերությունը»⁴⁷⁵: Եղում են Նաև «զառումսիկների» անունները. «Վասիլի Կամենսկին, Պաստերնակը և Կրտսեմ Վեսյոլին առհասարակ պետք է տեղ չունենային «Լեֆում»⁴⁷⁶:

«Վերապահությամբ» հավանության արժանացավ «Октябрь» ամսագիրը. «Մենք միանգամայն համաձայն ենք այս պլատֆորմի առաջին մասի հետ, բայց երկրորդ մասն ընդունում ենք շատ մեծ վերապահությամբ: Մենք, ինչպես բերելով Լասալի խոսքերը՝ ասում եմ ընկ. Տրոցկին այլ կապակցությամբ – թողնում ենք, որ ով ցանկություն ունի գրի հեղափոխության «մասին» մեզ ինդիդ դնելով գրել հեղափոխության համար»⁴⁷⁷:

Մեր կարծիքով՝ ամենահամարձակը «Նկար-Քանդակ-ճարտարապետություն» բաժինն է, որն անդրադարձել է ժորժ Գրոսսի հակաբուրժուական, հեղափոխական աշխատանքներին՝ «Լուսաբացին», «Նուկեյի կենցաղը», «Պարոն կապիտալը», «Մի սոցիալիստի կյանքից», «Սպիտակ գեներալ», «Վրանգելը «գործից» հետո»: Եվ ամսագրի կուլմինացիոն կետ հանդիսացող ժորժ Գրոսսի համարձակ աշխատանքների լուսաբանումը ևս արգելք հանդիսացավ, որովհետև Նա պատկերում էր իմպերիալիստական պատերազմ, հեղափոխություն, քաղաքական ցնցումներ՝ անողորքաբար մերկացնելով քաղաքական գործիչների, քաղաքական երևույթներ, որոնք մտածելու տեղիք են տալիս: 1924 թվականին Մոսկվայի Պետհրատի բաժանմունքում տպագրված Գրոսսի նկարչական աշխատանքների (Յ.Ս.Խ.Յ. ՊԵՏՅՐԱՏ N 203-Մոսկվա, Կարո Յալաբյանի տեքստով) առաջաբանում ասվում է. «Յայ գրականությունը պատկերող արվեստի վերաբերյալ չափազանց աղքատ է եղել մինև այժմ: Ոչ միայն Եվրոպայի և Ռուսաստանի, այլև հայ պատկերող արվեստագետների գործերը տակավին հրատարակված չեն, մինչդեռ նման գրականության պահանջը զգալի է դարձել»⁴⁷⁸:

Նկար 1



475 Լույն տեղում, էջ 7:
476 Լույն տեղում:
477 Լույն տեղում:
478 Գրոսսի նկարչական աշխատանքները, Յ.Ս.Խ.Յ. ՊԵՏՅՐԱՏ N 203-Մոսկվա, 1924, էջ 6:
202

Անդրադառնանք մի կարևոր հանգամանքի ևս. ամսագրի շապիկին Լենինի ամբողջական լուսանկարն է՝ կանգնած դիմամտ մեքենայի վրա՝ իբրև խորհրդային իշխանության խորհրդանիշ: Իոսիֆ Բրոդսկին իր «Անվանափոխված քաղաքի ուղեցույց» էսսեում համեմատական կատարելով Պիտերի և Լենինգրադի միջև, անդրադառնում է Լենինի այս նկարին (տե՛ս նկար 2). «Առնվազն այս առումով այն խորհրդանշում է նոր աշխարհը: Հին աշխարհը սովորաբար ներկայանում էր հեծյալներով⁴⁷⁹»: Եվ ինչպես ժամանակին ճիշտ ըմբռնել է Հարություն Սուրխաթյանը, «Չարենցը առաջինն է, որ գիտակցել ու զգացել է պրոլետարական հեղափոխության նշանակությունը, և դուրս գալով մանր-բուրժուական խիսունջից, ազատվելով տերյանական մոտիվներից (և ոչ ձևերից), իհարկե, ոչ միանգամից (որովհետև Ֆիզիկական պարզ տեղափոխություն չէր, այլև հոգեկան պրոցես), անցել է պայթարող դասակարգի կողմը»⁴⁸⁰: Այսինքն՝ *ամսագիրը նորարարություն էր սկսած շապիկից*, որի վրա Կարլ Մարքսի նշանավոր տողերն են. «Հնարավոր է արդյոք Աբիլլեսը՝ վառողի ու արծիծի հետ միասին կամ, ընդհանրապես, «Իլիականը»՝ տպագրական մամուլի ու մեքենայի կողքին: Եվ մի՞թե պարբերական մամուլի լուրերի հանդես գալով՝ անխուսափելիորեն չեն ոչնչանում ավանդությունները, երգերը և մուսաները, իսկ դրանով և՛ Եպիբական պոեզիայի անհրաժեշտ նախատվալները», որոնք վերցված են նրա «Քաղաքատնտեսության քննադատության ներածությունը» աշխատությունից:

Ամսագիրն ուշացումով լույս տեսավ: Պատճառը Ռուբեն Սիմոնովի «Նոր թատրոնի և Մոսկվայի հայ դրամ. ստուդիայի մասին» ուշացած հոդվածն էր (որը տեղ գտավ «Թատրոն - կինո» բաժնում): Այնպես Չաբարյանը նշում է. «Չարենցը ամենից ավելի շահագրգռված է եղել Սիմոնովի հոդվածի տպագրությամբ: Այնքան որ Վախթանգովի թատրոնում և Ստուդիայի աշխատանքներով ծանրաբեռնված Սիմոնովը ներկայացրել է ուշացումով, այդ պատճառով էլ ձգձգվել է Տt լույս տեսնելը»⁴⁸¹: Այդ ժամանակ Լենինը վախճանվել էր: *Հնարավոր է՝ այս հանգամանքը ևս կարող էր քաղաքական խոչընդոտ հանդիսանալ ստալինյան իրականության մեջ:*

Նկար 2



⁴⁷⁹ Բրոդսկի Ի., Անվանափոխված քաղաքի ուղեցույց, Երևան, 2016, էջ 111:

⁴⁸⁰ Սուրխաթյան Հ., Գրականության հարցեր, Երևան, 1970, էջ 174:

⁴⁸¹ Չաբարյան Ա., Եղիշե Չարենց. Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 2, Երևան, 2003, էջ

«Ահա մոտավորապես այն գաղափարները, որոնք արժարժվում էին «Ստանդարտ»-ի առաջին համարի էջերում: Երկրորդ համարը նվիրված էր լինելու բացառապես գործնականին, սակայն պատահեց անսպասելին: «Չարենցը «Ստանդարտ»-ի մի օրինակը տվել էր Ալեքսանդր Մյասնիկյանին, որ այդ օրերին գտնվում էր Մոսկվայում: Մյասնիկյանը կարդացել էր ու մի լավ քննադատել մեր ամսագիրը իր անընդունելի գաղափարների համար և խորհուրդ էր տվել ոչնչացնել բոլոր օրինակները: Չարենցը տխուր վերադարձավ ու հայտնեց մեր անելիքների մասին: Հենց նույն երեկոյան, հուլիսի 1-ին, վառեցինք մեր հանրակացարանի խոհանոցի մեծ պլիտան ու կրակին տվինք այնքան սիրով գլուխ բերած մեր «Ստանդարտը»: Մեկական օրինակ պահեցինք մեզ մոտ հիշատակի համար, որոնցից ոչ մեկը չի մնացել ցարդ: Մի հատիկ օրինակ, իմ օրինակը (Չարենցի և Հալաբյանի ընծայականով) պահվում է Հայաստանի Գրականության ու արվեստի թանգարանում: Ահա թե ինչպիսի վախճան ունեցավ մեր «Ստանդարտը»»⁴⁸²:

Հավելենք, որ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում այսօր պահպանվում է ամսագրի երկու օրինակ՝ մեկը՝ վերոնշյալ ընծայագրով, որ պահպանվում է Չարենցի ֆոնդում, իսկ երկրորդը՝ գրադարանում: Երկրորդ օրինակի ձեռքբերման աղբյուրներն անհայտ են:

YEGHISHE CHARENTS AND THE ONLY ISSUE OF «STANDARD» MAGAZINE

ANUSH TASAIYAN

*Institute of Literature after M. Abeghyan, Applicant,
Yeghishe Charents' house-museum, Chief fundraiser,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to review the place and role of "Standard" magazine in Armenian literature.

Our task is to use the uniqueness of "Standard" magazine, because "Standard", which is consisted of only 16 newspapers, once adopted the synonym "weak". But it is not true, because Yeghishe Charents had enough experience to work in the press before the "Standard". And "Standard" was a unique magazine of its kind. All steps were calculated. The material in both issues -N1 and N2 was planned in advance. It was called to become not only literature, but also a unique database covering painting, architecture, cinema and theater, because it was written not about the revolution (as the Armenian-Russian press of that time did), but for the revolution itself.

During the research mostly analytical-comparative methods were used. A structural analysis, addressing to each section separately was also performed.

In the end, the conclusion was drawn that the destruction of the magazine was not about content, but about the courage to criticize the press of the time and the reality in general. And it is not coincidence that he became a victim of the same reality, political events.

Keywords: "Standard" review, revolution, literary press, literature, cinema, architecture, theatre.

⁴⁸² Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Հայպետհրատ Երևան, 1961թ., էջ 69:

**ЕГИШЕ ЧАРЕНЦ И ЕДИНСТВЕННЫЙ НОМЕР
ЖУРНАЛА «СТАНДАРТ»****АНУШ ТАСАЛЯН**

*соискатель Института литературы им. М. Абеяна,
главный хранитель фондов дома-музея Егише Чаренца,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является рассмотреть место и роль журнала «Стандарт» в армянской литературе.

Наша задача – отметить уникальность журнала «Стандарт», потому что состоявший всего из 16 страниц журнал в свое время был признан довольно слабым. Однако такое мнение несправедливо, поскольку до «Стандарта» Егише Чаренц имел достаточно опыта работы в прессе. А «Стандарт» в своем роде был уникальным журналом. Все действия по изданию журнала были рассчитаны, материал для первого и второго выпусков был определен заранее. Он должен был стать не только литературным изданием, но и уникальным хранилищем фактов о живописи, архитектуре и кино, потому что он писал не о революции (как это делалось в армянский и русской прессе того времени), а ради революции.

В ходе исследования мы использовали преимущественно аналитико-сравнительные методы, а также выполнили структурный анализ, обращаясь к каждому разделу по отдельности.

В итоге исследования мы пришли к выводу о том, что закрытие журнала было связано не с его содержанием, а с тем, что он имел смелость критиковать прессу того времени и тогдашнюю действительность. И не случайно журнал стал жертвой этой действительности и политических событий того времени.

Ключевые слова: *журнал «Стандарт», революция, литературная пресса, литература, кино, архитектура, театр.*

**ԳՆԱՑՔԻ ՈՒ ԵՐԿԱԹՈՒՐՈՒ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ
«ԱՊՈՒՇՆԵՐԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ***

ՀՏԴ 82.09

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
aramkhachatryan93@mail.ru*

Հոդվածի նպատակը Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպում առանցքային նշանակություն ունեցող գնացքների ու երկաթուղիների մոտիվի համակողմանի ուսումնասիրությունն է: Սարիբեկյանի՝ մինչ օրս հրատարակված բոլոր գրքերում գնացքների ու երկաթուղիների թեման անցնում է մի գործից մյուսը՝ ստեղծելով տպավորություն, որ գրողը երբեք չի հրաժարվելու այս մոտիվից:

Առաջադրված խնդիրը այս վեպում վերոնշյալ մոտիվի համակողմանի քննությունն է՝ թե՛ բովանդակային և թե՛ կառուցվաքային առումով: Վերլուծությունը ըստ անհրաժեշտության կատարվել է հեղինակի նախորդ գործերի համատեքստում: Որոշ դեպքերում շրջանակը ընդլայնվում է՝ ներառելով հայ գրականության ու համաշխարհային գրականության՝ այս մոտիվի հիմամբ կառուցված պատումները:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և դեդուկցիա:

Վեպը հրատարակվել է 2015 թվականին, և դեռևս դրա վերաբերյալ չկա համապարփակ ուսումնասիրություն, ինչն էլ պայմանավորում է հոդվածի նորություն ու արդիականությունը:

Ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգմանը, որ գնացքի ու երկաթուղու մոտիվն այս վեպում դրսևորվում է երկու նշանակությամբ: Մի պարագայում այն հարաբերվում է ժամանակի, ժամանակի զգացողության ու կյանքի շրջափուլի հետ, մյուս դեպքում՝ դառնում պատերազմի, մահվան, վախի ու անորոշության խորհրդանիշ: Մոտիվի ֆունկցիոնալ նշանակության փոփոխությունը երկու դեպքում էլ անդրադառնում է պատումի կառուցման և կերպարների հոգեբանական վարզացման վրա: Համաշխարհային գրականության մեջ լայնորեն կիրառվող այս մոտիվը Սարիբեկյանի վեպում կիրառված է լավագույնս:

Հիմնաբառեր՝ վեպ, գնացք, երկաթուղի, հայ գրականություն, մոտիվ, պատերազմ, խորհրդանիշ, ժամանակ:

Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» վեպում⁴⁸³ առանձնակի նշանակություն ունեն գնացքն ու երկաթգիծը: Գնացքի ու երկաթգծի հարաբերությունն ու այլաբանական իմաստը վեպում այնքան զգալի են, որ Սարիբեկյանն անգամ վեպը բնորոշել է որպես «երկաթուղային վեպ»: Սակայն վեպի տեսության ու պատմության մեջ

** Հոդվածը ներկայացվել է 11.09.2020թ., գրախոսվել՝ 19.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:*

483 Սարիբեկյան Հ., Ապուշների ուղևորությունը, Երևան, «Անտարես» հրատ., 2015: Վեպից բոլոր քաղվածքները կարվեն նույն հրատարակությունից, և էջերը կնշվեն տեքստում:

«երկաթուղային վեպ» ժանր գոյություն չունի, և ինչպես Վալերի Փիլյանն է նշում այս վեպի առնչությամբ, «երկաթուղայինը ժանրակազմիչ յուրահատկություն չէ»⁴⁸⁴:

Սարիբեկյանի ստեղծագործական համակարգում գնացքների ու երկաթուղիների թեման անցնում է մի գործից մյուսը՝ ստեղծելով տպավորություն, որ գրողը երբեք չի ազատվելու այս թեմայից: Հարցազրույցներից մեկում նա նշում է. «Անբացատրելի հետաքրքրություն ունեմ երկաթուղիների ու գնացքների հանդեպ և անհաղթահարելի ցանկություն անընդհատ երկաթուղային պատմություններ ստեղծել: Իմ շատ ստեղծագործություններում գնացքներ ու երկաթուղիներ կան, ինձ համար կա գրականություն գնացքների և գրականություն մնացած այլ բաների մասին: Ինձ համար գնացքների մասին ստեղծագործություններն առանձնանում են այն աստիճան, որ ժանրի իրավասություն ունեն»⁴⁸⁵:

1883 թվականի հոկտեմբերի 6-ին հռչակավոր «Արևելյան ճեպընթացը» կատարում է իր առաջին՝ Փարիզ-Կոստանդնուպոլիս ուղևորությունը՝ սկիզբ դնելով գնացքների ու երկաթուղիների վերաբերյալ գրականությանը⁴⁸⁶:

Հետանկախության շրջանի հայ գրականության մեջ որպես գնացքով սկսվող ու ավարտվող վեպ կարելի է նշել Գուրգեն Խանջյանի «Նստիր Ա գնացքը» վեպը: Հայ ընթերցողներին առավելապես ծանոթ «երկաթուղային վեպերի» շարքում կարելի է առանձնացնել նաև Վենեդիկտ Երոֆեևի «Մոսկվա-Պետոուշկի» վիպակը, որից էլ հեղինակը վերցրել է վեպի բնաբաններից մեկը⁴⁸⁷:

Բազմաթիվ են այն զեղարվեստական գործերը, որոնցում գնացքն ու երկաթուղին ունեն կարևորագույն ֆունկցիոնալ նշանակություն: Գնացքն ու երկաթուղին որպես վախի ու մահվան, ժամանակի ու անորոշության խորհրդանիշ, որպես միջոց՝ ճանապարհային երկար զրույցների համար, ամենատարբեր սիմվոլներով հագեցած՝ մտել են գրականություն հազարավոր էջերով:

Ժամանակն ու տարածությունը կարճող գնացքը դառնում է նորի խորհրդանիշ, որը և՛ հմայք է պատճառում, և՛ վախ է առաջացնում: Որպես լավագույն օրինակ՝ կարելի է նշել Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպը. Չարենցը գնացքի նկարագրությամբ է սկսում նոր քաղաքի պատկերումը: Գնացքը դառնում է խորհրդանիշ՝ հնից դեպի նորի անցման. «Ամենամեծ նորությունը, որ Նաիրյան չէ և Նույնիսկ անընտել, անհասկանալի է թվացել սկզբում տեղացիների աչքին, երկաթուղագիծն է՝ ձգված ռուսների տիրապետության օրով՝ բսան տարի առաջ: Քաղաքի բնակչության կեսից ավելին դեռ մինչև հիմա էլ հիշում է անմոռանալի այն օրը, երբ անհայտ հեռուներից մինչև այդ քաղաքը ձգված երկաթե գծերի վրայով առաջին անգամ մոտեցել է գնացքը նորակառույց կայարանին: Եղել է խնդուն խրախճանք, զարմանալի զարմանք: Եղել են

⁴⁸⁴ Փիլյան Վ., «Հրաչյա Սարիբեկյանի «Ապուշների ուղևորությունը» երկը, <http://www.grakanter.am/1222-2/>:

⁴⁸⁵ «Պատերազմի արևուրդը «Ապուշների ուղևորության» մեջ», <https://mediamax.am/am/news/BookHouse/20028/>:

⁴⁸⁶ Յույց տալու համար, թե «Արևելյան ճեպընթացը» ինչ մեծ արձագանք է գտել զեղարվեստական գրականության մեջ, կարելի է թվարկել համաշխարհային ճանաչում ձեռք բերած մի քանի գրքեր՝ Ագաթա Քրիստիի «Սպանություն Արևելյան ճեպընթացում», Գրեհեմ Գրինի «Ստամբուլի ճեպընթաց», Սիդնի Շելդոնի «Եթե կգա վաղը», Յան Ֆլեմինգի «Սիրով Ռուսաստանից», Վերոնիկա Յենրիի «Գիշերը Արևելյան ճեպընթացում»:

⁴⁸⁷ «Բայց, այբր, ինչո՞ւ՝ պատուհանի ետևում էսքան մութ, ո՞վ կբացատրի ինձ: Ինչո՞ւ է պատուհանից դուրս խավարը էսքան խիտ, եթե գնացքը դուրս է եկել առավոտը և կտրել է ընդամենը հարյուր կիլոմետր: Ինչո՞ւ»: **Ерофеев В.**, Москва — Петушки, Санкт-Петербург, 2019, էջ 41 (թարգմանությունը՝ Սարիբեկյանի):

մարդիկ, որ զարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել, առնվել է լեզուները զարմանքից ու հիացմունքից»⁴⁸⁸:

Գնացքները գեղարվեստական գործերում ֆունկցիոնալ նշանակությամբ հաճախ հարաբերվում են նաև պատերազմին: Պատերազմական իրավիճակներում ցամաքային տարածքներում ամենաարագ ու անվտանգ բեռնափոխադրման միջոցը եղել է գնացքը: Մարդիկ պատերազմի դաշտ են մեկնել գնացքներով, և կայարաններում խմբվածները ռազմաճակատ ուղևորվող գնացքը միշտ էլ ասոցացրել են պատերազմի, անորոշության ու մահվան հետ: «Չտեսության հովիտ» պատմվածքում Վանո Սիրադեղյանը այսպես է ներկայացնում դեպի անորոշություն ուղևորվող մարդկային ճակատագիրը. «Կյանքում մի անգամ իջնում են նման կայարաններում և նորից գնացք նստելով՝ գնում ծովում են չորս միլիարդ անդամ գանգվածին»⁴⁸⁹:

Յարգագրույցներից մեկում անդրադառնալով վեպում գնացք-պատերազմ հարաբերմանը՝ Սարիբեկյանը նշել է. «Գնացքը դարձել է պատերազմի խորհրդանիշ և, իրոք, ի՞նչ է պատերազմը, եթե ոչ չվացուցակներից դուրս, չնախատեսված գնացք, որի ուղևորները չեն հասկանում, թե ուր են տանում իրենց»⁴⁹⁰: Իսկ վեպի հերոսներից մեկն ասում է. «Պատերազմն էլ է չսպասված գնացք» (էջ 50):

Այս տեսանկյունից հետաքրքիր է վեպի առաջին գլխի բնաբանը, որի ազդեցությունը թե՛ Սարիբեկյանի հարցազրույցում, թե՛ գրքի համապատասխան հատվածներում զգալի է: Ստեֆան Գրաբինսկու «Թափառող գնացքը» (1919 թ.) պատմվածքից քաղված հատվածը վեպի կոնտեքստում ընկալվում է որպես առանց արտոնության գիծ դուրս եկած գնացքի միջոցով պատերազմի այլաբանություն. «Պետական երկաթուղագծերում արդեն որոշ ժամանակ է, ինչ հայտնվել է մի գնացք, որ չվացուցակներում ընդհանրապես բացակայում է, զրանցված չէ ոչ մի փաստաթղթով, չի հիշատակվում երթևեկող կազմում, մի խոսքով օտարական առանց արտոնության և գիծ դուրս գալու որևէ թույլատվության: Չի հաջողվել նույնիսկ պարզել, թե ինչ կատեգորիայի է պատկանում գնացքը և որ դեպոյից է դուրս եկել: Զանի որ կարճ ակնթարթներին, երբ տեսել են այն, կողմնորոշվել ընդհանրապես հնարավոր չի եղել» (էջ 3): Ռեյսերի վրա դրված ահռելի գնացքը, որ այստեղ պատերազմի բացարձակ խորհրդանիշն է, չի հանդուրժում և ոչ մի կարմիր լույս: Մարդկային կյանքի արժեքն ու հումանիստական «կարմիր լույսերը» ի գործ են կանգնեցնելու պատերազմը:

Վեպում կայարանին մոտեցող բեռնատար գնացքը իր ահռելի չափերով մահվան ծանր շունչ է հաղորդում շրջապատին: Գնացքն այս պարագայում ևս ներկայացվում է որպես մահվան ու պատերազմի խորհրդանիշ. «Այ քեզ ահռելի գնացք, այ քեզ գնացքի բարձրություն, այ քեզ վագոններ: Հողն է դողում, ապակիներն են դողողոլում: Գնացքը մարդատար չէ, ձևերն ընդհանրապես ժխտում են մարդկայինը: Մի չար հանճարի մտահաղացում է: Չրահագնացքի դիմացը խաղալիք է: Վագոնների սև, ծուրտ կապարը թաքցնում է չարագուշակ ու ծանր մի պարունակություն: Գնացքը շատ է դանդաղ սահում, ասես նրա համար, որ ռեյսերը դիմանան իր ծանրությանը: Շոգեբարչ լիներ, հրաբուխ էր պետք հնոցի համար: Սահում է ահեղ վագոնաշարը: Բոլորը քարացել են՝ ասես թիկունքի անտեսանելի ուժը հրում է իրենց այդ վիթխարի հրեշի մամլիչ-անիվների տակ» (էջ 48): Վագոնների «չարագուշակ ու ծանր» պարունակությունը, ամենայն հավանականությամբ, սահման տեղափոխվող զինամթերքն է: Սարիբեկյանը մռայլ գնացքի ու վագոնների պարունակության մեջ է կարծես խտացրել պատերազմի ամբողջ արհավիրքն ու դառնությունը:

⁴⁸⁸ **Չարենց Ե.**, Երկերի ժողովածու, հատոր 5, Երևան, 1966, էջ 30:

⁴⁸⁹ <http://andin.am/2015/12/23/>:

⁴⁹⁰ «Պատերազմի արսուրդը «Ապուլների ուղևորության» մեջ»,

<https://mediamax.am/am/news/BookHouse/20028/>:

Մեջբերված հատվածում «մի չար հանճարի մտահաղացում» արտահայտությունը, որը կրկնում է նաև հեղինակը իր նույն հարցազրույցում («Ուղղակի սոսկում եմ, թե ոնց են բազմապատկվում ու կատարելագործվում մարդուն ժխտող անհոգի երևույթներն ու մեխանիզմները: Չենք, ինչպես Սվիֆթն էր ասում՝ «չար հանճարների այդ մտահաղացումը»: Միթե սարսափելի չէ, որ մարդ ոչնչացնելու միջոցը օրեցօր ավելի ու ավելի եսթետիկ ու գրավիչ տեսք է ստանում, ինչը՝ են սպանելու գործիքը մանուկների համար որպես խաղալիք արտադրում»), պատկանում է անգլիացի երգիծաբան Ջոնաթան Սվիֆթին: Սվիֆթը իր «Գուլիվերի ճանապարհորդությունները» վեպում գրում է. «...և այնքան ընտելանալ դրանց, որ անտարբեր լինեմ արյան ու ավերի տեսարաններին, որ ես նկարագրեցի իբրև մի սովորական հետևանք այդ կործանարար մեքենաների, որոնց առաջին գյուտարարը, նրա ասելով, պետք է որ չար հանճար լինի և թշնամի ամբողջ մարդկության»⁴⁹¹:

Պատերազմում մարդ սպանելը դառնում է միզապարկը դատարկելու պես մի բան («Միզում, վերջացնում ու թեթևացած շունչ է քաշում: Մարդ սպանելը միզապարկ դատարկելուն հենց դրանով է նման՝ երկուսից հետո էլ շունչ ես քաշում» (էջ 43): Եվ երկաթուղու վրա վառվող կարմիր սեմաֆորը, որ պիտի կասեցներ գնացքի ընթացքը, նույնն է թե՛ պատերազմը, ի գորու չէ:

Վեպի վերջում Սարիբեկյանը ուղղակիորեն տարբերություն չի դնում պատերազմի ու գնացքի միջև: Հերոսներից մեկի՝ Միթևանու առնչությամբ նա գրում է. «Ոմանք ասում էին, թե իր ձեռքը նա պատերազմում է կորցրել, ոմանք՝ գնացքի տակ է մնացել, ոմանք էլ՝ թե հաստոցն է թռցրել: Ասենք ինչ տարբերություն՝ անողոք, պողպատե ատամներով փայտանյութ խժռող հաստոցի ու պատերազմի միջև: Հաստոցի, որ մարդկային ձեռքի ու փայտի միջև խտրություն չի դնում. «Ինչ տարբերություն պատերազմի ու գնացքի միջև» (էջ 154), կամ մի այլ պարագայում՝ «Ինչ տարբերություն ատամի հիվանդության և խաղալիք գնացքի ճշող ծանրության միջև» (էջ 157):

Այս պարագայում երկաթուղին նույնպես փոխում է իր ֆունկցիոնալ նշանակությունը՝ դառնալով դժոխքի ճանապարհ («Դժոխք տանող երկաթուղին է» (էջ 48):

Վեպում գնացքը նաև փոխում է իր ֆունկցիոնալ նշանակությունը՝ հարաբերվելով ժամանակի, ժամանակի զգացողության ու կյանքի շրջափուլի հետ: Ե՛վ «Գուշակություններ հայելիներով» ժողովածուում, և՛ «Երկվորյակների արևը», և՛ «Ապուշների ուղևորությունը» վեպերում այլօժեին ներհյուսված այս մոտիվը անպայմանորեն առկա է: Երեքի դեպքում էլ գնացքը, երկաթգիծը, ժամանակը, միախառնված երազներին ու ենթագիտակցությանը, ստանում են գեղարվեստական կարևոր նշանակություն:

Ժամանակի մեջ ապրող և ժամանակի զգացողություն ունեցող մարդու համար ժամանակը ինչ-որ մի կետից չի սկսվել և չի վերջանալու ինչ-որ կետում, այնպես, ինչպես գնացքում գտնվող մարդու զգացողության մեջ գնացքի ընթացքը չունի սահմանափակում և չի սկսվում ինչ-որ մի կետից՝ հաջորդ կետում ավարտվելու համար: Գնացքի ընթացքը, հորիզոններ կլանող երկաթուղային գիծը ընկալվում են որպես անսահմանի մաս: Շարժմանը զուգահեռ՝ գնացքի ներսում ժամանակը կանգնում է, շարժվում է աշխարհը, և ժամանակը ներգործում է գնացքից դուրս, բայց ոչ երբեք գնացքի ներսում: Երկաթուղային գծի յուրաքանչյուր կայարան, որտեղ կանգ է առնում գնացքը, ուղևորներին է վերադարձվում ժամանակը, և նրանցից յուրաքանչյուրին տրվում է սեփական ընտրության հնարավորություն՝ շարունակել՝, թե՛ ոչ:

⁴⁹¹ Սվիֆթ Զ., Գուլիվերի ճանապարհորդությունները, Երևան, «Անտարես» հրատ., 2013, էջ 164:

Վեպում երազի և իրականության սահմանները միախառնված են: Սա և՛ վերադարձ է դեպի անցյալ, և՛ հիշողության թարմացում է, և՛ ներկայի մեջ մնալու յուրօրինակ ցանկություն, որը ոչ բոլոր դեպքերում է հաջողվում:

Գնացքի արագությունը ժամանակը կարճում է, և երազի ու իրականության սահմանագծին անցյալը դառնում է շոշափելի: Թվում է, թե ժամանակի հետ գնացքն էլ է ետ մղվում: Կտրտված իրականության մեջ գնացքի շարժմանը զուգահեռ հայտնվում են կտրտված պատկերներ, ու առաջանում է անհանգստության զգացողություն («Խճաբար: Խոտերի մեջ կորած զուգահեռ երկաթուղու վրա անջատ ու մեկուսի ժանգոտ վագոն-ցիստեռն: Սյուներ: Գնացքը ետ է դառնում: Գնացքը ետ է դառնում») (էջ 43):

Թե՛ «Գուլշակություններ հայելիներով» պատմվածքում և թե՛ «Ապուլների ուղևորությունը» վեպում անհանգստությանը զուգահեռ շոշափելի դարձած անցյալից հայտնվում է հոր կերպարը. «Գնացքը ճանապարհն էր կարճում: Անհանգիստ էի, քիչ հետո անհանգստությունը որոշակիացավ որպես հիշողություն հորս մասին, ասես հիշողությունը ձգողականություն ուներ, և գնացքն այդ ուղրտ էր մտել: Արդեն դժվարանում էի հիշել հորս դեմքը. տեսողությունս հեռանում էր այդ դեմքից: Լռությունը, որում հայրս էր ընկղմված, առանց իրեն էլ նույնն էր մնալու. լռությունից պակասելու էր մեկը»⁴⁹²:

«Ապուլների ուղևորությունը» վեպում գնացքի առաջ կանգնած Թելմանի մոտ վերադարձը դեպի մանկություն կրկին ուղեկցվում է հոր ներկայությամբ (էջ 42): Իսկ «Գուլշակություններ հայելիներով» վեպի հերոսի համար հոր մահվանը զուգահեռ մանկությունը վերջանում է ու փակված մնում փոքրիկ գնացքի մեջ: Երազի ու իրականության սահմանագծին կայարանի մեծ գնացքը աստիճանաբար փոքրանում է, փակում որբ մնացած հերոսի մանկության վերջին էջը. «Հայրս վագում էր գնացքի կողքից: Շնչասպառ էր լինում: Գուլիս դուրս հանեցի պատուհանից, հարցրեցի՝ ինչու է վագում: Կռահեցի, որ ուզում է ասել՝ գնացք նստած չկա. ուզում է նստել: Ասացի, որ գնացքը կանգնած է: Շարունակում էր վագել: Հարցրեցի՝ ինչու է վագում: Կռահեցի, որ ուզում է պատասխանել՝ հասնել է ուզում: Բերեցի վերջին փաստարկը՝ գնացքը խաղալիք է: Կանգնեց, այտերին արցունքի կաթիլներ տեսա: Կայարանում անշարժ կանգնած էր փոքրիկ, խաղալիք մի գնացք»⁴⁹³: Շոշափելի դարձած անցյալից հերոսին կմսան հոր արցունքներն ու խաղալիք գնացքը, իսկ Թելմանի համար մանկության երազի ավարտը վերջին անգամ կզուգորդվի խաղալիք գնացքի ու հոր ոտքերի հետ, որոնք հարվածում էին իրեն (էջ 42-43):

Վեպի վերջնամասում հոգեկան հիվանդներից մեկը հիշում է իր երազներից մեկը. «...իրենց բակում գետնին, փոքրիկ, շատ փոքրիկ երկաթե ռելսեր կային, և դրանցով մի փոքրիկ ու սև շոգեբարձ է սուրում՝ ուղիղ իր ոտքերի տակով: Նա կռացավ, որ բարձրացնի այդ շոգեբարձը, բայց չկարողացավ նույնիսկ տեղից պոկել, այնքան էր ծանր, հագիվ կարողացավ մի քանի ակնթարթ կանխել դրա ընթացքը. փոքրիկ շոգեբարձը կայծեր էր թռցնում ռելսերից և դրանց կպած՝ չէր թողնում բարձրացնեն իրեն, ու պոկվեց, սլացավ, պարզապես անհնար էր, Ժորիկը վեր թռավ՝ սարսափած փոքրիկ գնացքի ծանրությունից» (էջ 153):

Խաղալիք գնացքի ու իրական գնացքի մոտիվ հայտնվում է նաև «Երկվորյակների արևը» վեպում: Երազի և իրականության սահմանագծին գնացքի փոխակերպումը խաղալիք գնացքի և հակառակը վեպում արտահայտվում է երկվորյակ եղբայրների միջոցով՝ ունենալով անհանգստության ու կորցրած ժամանակի գործառույթ («Երկաթգծերի արանքում պառկելն ապահովություն էր ներշնչում արդեն, երբ գնացքը

⁴⁹² Սարիբեկյան Հ., Գուլշակություններ հայելիներով, Երևան, «Չանգակ-97» հրատ., 2003, էջ 24:

⁴⁹³ Նույն տեղում, էջ 25:

հեռացել էր այնքան, որ խաղալիք էր դարձել»⁴⁹⁴ կամ «Գետնին փոքրիկ, խաղալիք գնացք տեսավ, ուզում էր վերցնել հրաշք խաղալիքը: Բռնեց, հագիվ կատեցրեց ընթացքն ու չկարողացավ բարձրացնել տեղից. երագում զգաց, որ խաղալիք գնացքն իսկական գնացքի զանգված ունի»⁴⁹⁵): Խաղալիքի միջոցով կորցրած ժամանակի վերադարձը արտահայտվում է նաև Սարիբեկյանի «Յոգեհանգստի ձյունը» պատմվածքում. «Մայրս բերել էր իմ սիրած խաղալիք մեքենան, քոջս տիկնիկը, անցյալը վերադարձվում էր մեզ»⁴⁹⁶:

Իրականի ու երևակայականի միջև սահմաններ գոյություն չունեն: Սահմանների նույնացումը վեպում հանգեցնում է նրան, որ հերոսները միաժամանակ կարող են լինել և՛ գնացքում, և՛ ադրբեջանական հոգեբուժարանում. «Քիչ առաջ հիվանդանոցում էր, հիմա՝ գնացքում» (էջ 92):

Վեպում գրեթե ամեն ինչ առնչվում է գնացքի հետ, այդ թվում հիշողությունը. «Մամեղովը գնացք է նստել: Յիշողության գնացքը: Եվ ինչ հաճախ են անցյալում թունելները» (էջ 55), նույնիսկ՝ կարի մեքենան. «Մեր տանը գերմանական Zinger մակնիշի կարի մեծ մեքենա կար... Մեքենան նաև թև-պտուտակ ուներ՝ իսկը հին շոքեքարշի անիվ» (էջ 76):

Այսպիսով՝ եթե մի դեպքում գնացքն ու երկաթուղին հարաբերվում են պատերազմին և դառնում պատերազմի խորհրդանիշ՝ ցույց տալով պատերազմի ողջ աբսուրդը, անհեթեթությունն ու վախը, ապա մյուս դեպքում՝ ժամանակային շրջափոխին, որտեղ ժամանակը նեղանում է գնացքի խցիկի չափ:

FUNCTIONAL SIGNIFICANCE OF THE TRAIN AND RAILWAY IN THE NOVEL «JOURNEY OF IDIOTS» BY HRACHYA SARIBEKYAN

ARAM KHACHATRYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Department of Armenian Literature, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is a comprehensive study of the motive of trains and railways, which are of key importance in Hrachya Saribekyan's novel "The Journey of Idiots". In all of Saribekyan's books published to date, the theme of trains and railways passes from one work to another, giving the impression that the writer will never give up this motive.

The task consists in a comprehensive study, both in content and in structure, of the above motive. The analysis, when necessary, was carried out in the context of the author's previous work. In some cases, the context expands to include works from Armenian and world literature based on this motive.

The research was carried out by the following methods: comparison, analysis, synthesis and deduction.

The novel was published in 2015, and at the moment there has been no comprehensive research on it, which determines the novelty and relevance of the article. As a result of our

⁴⁹⁴ Սարիբեկյան Զ., Երվորյակների արևը, Երևան, «Անտարես» հրատ., 2012, էջ 24:

⁴⁹⁵ Նույն տեղում, էջ 25:

⁴⁹⁶ Կայարան (գրական տարեգիրք), Երևան, 2013, էջ 59:

research, we came to the conclusion that the motive of the train and the railway in this novel is expressed in two meanings. In one case, it is associated with time, a sense of time and the life cycle, in another it becomes a symbol of war, death, fear and uncertainty. In both cases, the change in the functional meaning of the motive affects both the structure of the novel and the psychological development of its characters. This motive, widely used in world literature, appears in the best form in Saribekyan's novel.

Key words: Roman, train, railway, Armenian literature, motive, war, symbol, time.

ФУНКЦИОНАЛЬНОЕ ЗНАЧЕНИЕ ПОЕЗДА И ЖЕЛЕЗНОЙ ДОРОГИ В РОМАНЕ «ПУТЕШЕСТВИЕ ИДИОТОВ» ГРАЧЬИ САРИБЕКЯНА

АРАМ ХАЧАТРЯН

*соискатель кафедры новейшей армянской литературы
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является комплексное исследование мотива поездов и железных дорог, которые имеют ключевое значение в романе Грачьи Сарибекяна «Путешествие идиотов». Во всех изданных к настоящему времени книгах Сарибекяна тема поездов и железных дорог переходит из одного произведения в другое, создавая ощущение, что писатель никогда не откажется от этого мотива.

Задача нашей работы состоит во всестороннем исследовании как содержания, так и структур данного мотива. Анализ, по мере необходимости, производился в контексте более ранних произведений автора. В некоторых случаях контекст расширяется и включает произведения из армянской и мировой литературы, в которых этот мотив станет постоянным в его творчестве.

Исследование было осуществлено следующими методами: сравнение, анализ, синтез и дедукция.

Роман был опубликован в 2015 году, и на сегодняшний день по нему еще не производилось всеобъемлющего исследования, что и определяет новизну и актуальность статьи. В результате исследования мы пришли к выводу, что мотив поезда и железной дороги в этом романе выражает два значения. В одном случае он связан со временем, чувством времени и жизненным циклом, в другом он становится символом войны, смерти, страха и неопределенности. В обоих случаях изменение функционального значения мотива сказывается и на структуре романа, и на психологическом развитии его героев. Этот мотив, широко используемый в мировой литературе, в романе Сарибекяна находит свою наилучшую реализацию.

Ключевые слова: роман, поезд, железная дорога, армянская литература, мотив, война, символ, время.

ՀՏԴ 82.09

ՇՈՒՇԱՆ ԽԱԶԱՏՐՅԱԸ

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի դասախոս, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հեռակա սապիրանտ (2013-2017թթ.)
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
shush.khachatryan@gmail.com

Հոդվածում անդրադարձել ենք հայ իրականության մեջ դեռևս չուսումնասիրված դրամատուրգիայի ձևավորման ու զարգացման հիմնական առանձնահատկություններին: Մեր խնդիրն է ուսումնասիրել և վերլուծել դրամատուրգիայի ձևավորման նախադրյալները, ինչպես նաև 1920-1940-ականներին դրա հիմնական թեմատիկ առանձնահատկությունները: Հոդվածի նպատակն է ներկայացնել 1920-1940-ականների դրամատուրգիայի վիճակը և ցույց տալ դրա զարգացման գործում Մուխթար Աուեղովի ունեցած դերն ու նշանակությունը: Հոդվածում առանձին քննության առարկա է դարձել Մուխթար Աուեղովի «Ենլիկ և Զեբեք» պիեսի ստեղծման պատմությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն դապախական դրամատուրգիայի առաջնեկն է: Աշխատանքում օգտագործվել են ինչպես խորհրդային, այնպես էլ ժամանակակից դապախ և ռուս ուսումնասիրողների աշխատանքները:

Հոդվածում կիրառել ենք պատմահամեմատական մեթոդը:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ դապախ դրամատուրգիայի ակունքներում կանգնած Մ. Աուեղովը եղել է գրականության այդ ժանրի առանցքային դեմքերից մեկը:

Վստահ ենք, որ Մ. Աուեղովի՝ որպես ստեղծագործողի ու գրականագետի աշխատանքների հետագա ուսումնասիրությունը իր ուրույն տեղը կարող է ունենալ դապախագիտության ուսումնասիրությունների բնագավառում:

Հիմնաբառեր՝ դապախ, դապախ գրականություն, դրամատուրգիա, դապախական դրամատուրգիա, Մուխթար Աուեղով, գրականագիտություն, տեսական հարցերի քննություն, հայ-դապախական գրական կապեր:

Ղապախական դրամատուրգիայի ճնունը. զարգացման նախադրյալները: 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը կարելի է համարել դապախ գրականության համար ամենակարևոր շրջանը. սա զարգացման այն շրջանն էր, որի հետ է կապվում գրավոր գրականության և արձակի ձևավորումն ու զարգացումը, զարգացման մի շրջան, որն աչքի էր ընկնում նախկինում հավաքված բանավոր գրականության հսկա պաշարի ուսումնասիրմամբ ու մշակումներով, գրական նոր ուղղությունների, ժանրերի, թեմատիկաների մշակմամբ ու զարգացմամբ, նոր կերպարների ստեղծմամբ: Ինչպես հայտնի է, դապախ գրականությունը երկար ժամանակ զարգացել է ժողովրդական բանահյուսության շրջանակներում՝ սերնդեսերունդ փոխանցվելով բանավոր ճանապարհով: Այս գրականության ամենամեծ առանձնահատկությունը ժրջառուների և

* Հոդվածը ներկայացվել է 11.09.2020թ., գրախոսվել՝ 03.10.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

ակինների⁴⁹⁷ արվեստն էր: Մասնագիտական գրականության մեջ նույնիսկ 15-18-րդ դդ. համարվում է ժրճաունների պոեզիայի ժամանակաշրջան⁴⁹⁸: Իսկ գրականությունն իր այսօրվա տեսքով ձևավորվել է 19-րդ դարի կեսերից սկսած միայն: Ինչպես արդարացիորեն նշում է ղազախ գրականագետ Մուխամեդժան Կարատանը՝ «Ղազախ գրականությունը խորհրդային միությունում ամենաերիտասարդներից մեկն է»⁴⁹⁹:

Քանի որ պատմական իրադարձություններն ուղղակիորեն և անուղղակիորեն իրենց ազդեցությունն են ունենում գրականության զարգացման օրինաչափությունների վրա, հետևաբար, 20-րդ դարասկզբին ղազախ ժողովրդի կյանքի պատմական փոփոխություններն⁵⁰⁰ էապես փոխում են նաև այդ շրջանի ղազախ գրականության խնդիրներն ու բովանդակությունը: Գրականության նախկին շրջանին բնորոշ չափածոն և՛ թեմատիկայով, և՛ կերպարներով, և՛ լեզվով ի վիճակի չէր ամբողջությամբ հարմարվել նոր հասարակական-քաղաքական իրավիճակին և սկսել էր աստիճանաբար դիրքերը զիջել արձակին: Արձակի ժանրերն ավելի ճկուն էին, ինչը հնարավորություն էր տալիս ստեղծագործողներին զեղարվեստականորեն արծարծելու այնպիսի թեմաներ, որոնք չափածո խոսքով հնարավոր չէր, կամ արծարծելու դեպքում ստեղծագործությունը էապես տուժում էր:

Այսպիսի պայմաններում զեղարվեստական գրականության զարգացմանը զուգահեռ 1920-ականներին ձևավորվում էր գրական նոր ժանրը՝ դրամատուրգիան: Այն զարգացման հատկապես բեղմնավոր շրջան է ապրում 1930-ականներին: Մեկը մյուսի հետևից ասպարեզ են գալիս նոր դրամատուրգներ, գրվում են նոր պիեսներ, աշխուժանում է նոր ձևավորվող ղազախական թատերական կյանքը: Ղազախական թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման արագ տեմպերն ունեին մի քանի պատճառներ: Նախ՝ 20-րդ դարասկզբին ղազախ ստեղծագործողները զեղարվեստական փնտրտուքների մեջ էին. գրականության զարգացման ժամանակակից փուլի օրինաչափություններին համընթաց՝ նրանք փնտրում էին գաղափարական ասելիքն ընթերցողին հասցնելու նոր ճանապարհներ, որոնցից մեկն էլ դրամատուրգիան էր: Այստեղ ևս, ինչպես արձակում առհասարակ, որպես լավագույն օրինակ էր ծառայում ռուս գրականությունը: Հետևելով ռուս գրականության ավանդույթներին, ինչպես նաև հարաբերվելով խորհրդային մյուս հանրապետությունների ու ժողովուրդների գրականության առանձին նմուշներին՝ ղազախ ստեղծագործողները փորձում էին ստեղծել, յուրացնել այլ՝ մինչ այդ իրենց գրականությանն անհայտ ժանրեր ու թեմատիկաներ: Ավելին՝ դրամատուրգիայի զարգացումն իր հետ բերում էր թատերական կյանքի աշխուժացում, նոր խաղացանկերի կազմում: Նշենք, որ ղազախական թատրոնի ձևավորման վրա մեծ ազդեցություն էին թողնում ռուսական քաղաքային թատրոնները, որոնք արդեն 19-րդ դարի կեսից գործում էին երկրի տարածքում: Նմանատիպ թատրոններ գործում էին մասնավորապես Ուրալսկ

⁴⁹⁷ Ավինները չափածո ստեղծագործությունների (բանաստեղծություն, ժրճ, դաստան, պոեմ) բանավոր կատարողներն են, որոնք իրենց կատարումները ուղեկցում են երաժշտական գործիքի՝ դոմբրայի կամ կոբզի հետ: Ժրճաունները ևս ժողովրդական պոեզիայի կատարողներ են, որոնք ունենին նաև այս կամ այն թեմային վերաբերող հանպատրաստից փոքրիկ երգեր՝ ժրճեր, հորինելու ձիրք:

⁴⁹⁸ **Օбдігазылы Б.**, Қазақ әдебиеті: Энциклопедиялық анықтамалық, Алматы, «Аруна», 2010, էջ 576

⁴⁹⁹ **Каратаев М.** Казахская литература. Сборник статей, Москва, Госкитиздат, 1960, С. 164

⁵⁰⁰ 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին ղազախ ժողովուրդն ապրում էր պատմական իրադարձություններ. քայքայվում էին նախկին ֆեոդալական կարգերը, որոնց փոխարինելու էին գալիս նոր հասարակական հարաբերություններ, տափաստանում աստիճանաբար տարածվում էր հեղափոխական այլքը: 1919թ.-ին Ղազախստանում հաստատվում են խորհրդային կարգերը՝ բերելով նոր հասարակական հարաբերություններ ու մշակույթ:

(1860թ.-ից), Օրենբուրգ (1869թ.-ից) քաղաքներում, ինչպես նաև երկրին մշակութային կապերով ամուր կապված Օմսկ քաղաքում (1865թ.-ից), որտեղ խաղացանկը ներառում էր ինչպես ռուս, այնպես էլ եվրոպական դրամատուրգների ստեղծագործություններ:⁵⁰¹ Բնականաբար, դրամատուրգիայի ձևավորվմանը զուգահեռ հասունանում էր նաև դազախական պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծման պահը: Առավելապես ռուսական թատրոնի ազդեցությամբ 1925թ.-ին այն ժամանակվա Ղազախական ԻԽՍՀ մայրաքաղաք Զըզըլ-Օրդայում հիմնվում է առաջին դազախական թատրոնը, սակայն թատրոնի պաշտոնական բացումը լինում է մեկ տարի անց՝ 1926թ.-ին, ժամանակակից դրամատուրգ, գրականագետ, հասարակական գործիչ Կեմենզերով Կոչմուհամմեդի (1896-1937) «Алтын сакина» («Ոսկե օղակ») պիեսով⁵⁰²:

Դրամատուրգիայի, հետևաբար նաև թատերական արվեստի զարգացմանը մեծապես նպաստում էին նաև դազախ ժողովրդի բանահյուսության առանձնահատկությունները: Կարելի է փաստել, որ ժողովրդական բանահյուսությունը, որը գրավոր գրականության սկզբնաղբյուրներից էր, պարարտ հող էր ստեղծել նաև դրամատուրգիայի արագ զարգացման համար: Խոսքը մասնավորապես ժողովրդի շրջանում տարածված ժողովրդական խաղիկների, ժառ-ժառերի՝ երկու սիրեցյալների սիրային երգերի, հարսանեկան խաղիկ-երգերի՝ բետաշարի, սընսուի, ինչպես նաև հանպատրաստից երգվող, կոնկրետ դեպքին վերաբերող փոքրիկ բանաստեղծությունների՝ այսուրաների մասին է: Պատահական չէ, որ ժողովրդական բանահյուսության առանձին նմուշների և մասնավորապես այսուրսի, բետ-աշարի, խաղ-երգերի, սընսուի և նմանօրինակ երգերի դերը բարձր է գնահատել դրամատուրգիայի ակունքներում կանգնած Մուխթար Աուեզովը (1897-1961): Հոգվածներից մեկում նա նշում է, որ այս խաղիկներն այնքան հղկված են, որ «դրանք այսօր բեմ բարձրացնելու համար որևէ բան ավելացնելու կարիք անգամ չկա»:⁵⁰³ Մեկ այլ՝ 1926թ.-ին գրած «Жалпы театр өнері мен казак театры» («Թատերական կյանքն ու դազախական թատրոնը») հոդվածում Աուեզովը նշում է. «Եթե վերցնենք մեր ժողովրդի օրինակը, ապա պետք է ասել, որ այն (դրամատուրգիան՝ Շ.Խ.) սնվում է ժողովրդական ավանդույթներից, սովորույթներից, երգացանկից, ժրռերից: Իսկապես, թատերական կյանքի ձևավորման համար պարարտ հող և դրական պայմաններ է ստեղծել ժողովրդական բանահյուսությունը»:⁵⁰⁴ Ավելին՝ Մուխթար Աուեզովը հետագայում իր պիեսներում մեծապես օգտագործում է ժողովրդական բանահյուսության այս տարրերը՝ մասնավորապես կերպարների մենախոսությունների, երկխոսությունների ժամանակ:

1920-ականների վերջին և հատկապես 1930-ականներին դրամատուրգիայի զարգացման ներքին օրինաչափություններից ոչ պակաս կարևոր ազդակ էր պետական քաղաքականությունը ներքին՝ մասնավորապես մշակույթի հարցերում: Մշակույթի, գրականության զարգացման հարցերի քննարկումն ու պետական վերահսկողությունը դրանց «հավուր պատշաճի» կատարման նկատմամբ վերահսկողությունը ընդունված երևույթ էր այդ ժամանակների համար: Հայտնի է, որ 1920-ականներից սկսած՝ դրամատուրգիան և, առհասարակ, թատերական կյանքի զարգացումը եղել է նաև ստեղծական իշխանությունների ուշադրության կենտրոնում, ինչի մասին փաստում են արխիվային կյութերը: Այսպես՝ 1920թ.-ի հոկտեմբերի 4-12-ը Օրենբուրգում տեղի ունեցած Ղազախստանի ԽՍՀ սովետների ժողովում, ինչպես նաև 1925թ.-ի ապրիլին

⁵⁰¹ **Кундакбайұлы Б.**, Театр туралы толғаныстар, Алматы, «Өнер», 2006, С. 11-12.

⁵⁰² Նշենք նաև, որ մինչև թատրոնի պաշտոնական բացումը՝ 1925թ.-ի հունվարի 13-ը, դազախական պրոֆեսիոնալ թատրոնի բեմում առաջին բեմադրությունը, որը խաղացվել էր, Մ. Աուեզովի «Ենիկ և Զեբեք» պիեսի հատվածներից մեկն էր:

⁵⁰³ **Әуезов М.**, Шығармалар, 11-том, Алматы, Жазушы, 1969, 53-бет

⁵⁰⁴ **Қазақ әдебиеттану ғылымының тарихы/ Жауапшы редактор А.С.Ісімакова**, 2-томдық, 1-том, Алматы, ҚазАқпарат, 2008, С. 161.

Զրգրվորդայում անցկացվող *Ղապախական* սովետների 5-րդ նստաշրջանում, ի թիվս այլ հարցերի, քննարկվում էր նաև դրամատուրգիայի և թատերական կյանքի զարգացման հարցը⁵⁰⁵: Կամ, օրինակ, 1936թ.-ին խորհրդային գրողների միության նախագահների ժողովին, ի թիվս այլ մշակութային հարցերի, քննարկվում էր նաև *կոլխուպա-սովետական* թատրոնների համար խաղացանկի ստեղծումը: Ավելին՝ ժողովի ընթացքում մասնակից ստեղծագործողներից շատերը (Մ. Աուեզով, Ս. Մայլին, Գ. Մուսրեպով և այլք) պետության պատվերով պարտավորվում էին «մինչև 1936թ. մայիսի 1-ը գրել և քննարկման ներկայացնել մեկական պիես այս (կոլխուգի՝ Շ.Խ.) թեմատիկայով»⁵⁰⁶:

Այսպիսով՝ 1920-ականներին դեռևս նոր ձևավորվող դազախական դրամատուրգիան բռնել էր արագ զարգացման ուղին: Դրա զարգացման համար կային մի քանի նախադրյալներ. մեկը ռուս գրականության ազդեցությունն էր, երբ վերջինիս օրինակով դազախ ստեղծագործողները կարողանում են արագ ըմբռնել նոր ժանրի հիմնական ուղղությունները: Բացի այդ, դազախ ժողովրդի բանահյուսության առանձին նմուշները (ժողովրդական խաղիկները, երգերը և այլն) էապես նպաստում են ժանրի զարգացմանը: Յեղիակները ժողովրդի շրջանում տարածված երգերը, խաղիկները մշակում, օգտագործում են ստեղծագործություններում և բեմ են բարձրացնում՝ դրանով ապահովելով այս կամ այն պիեսի հաջողությունը: Բացի այդ, խորհրդային իշխանություններն իրենց ուշադրության կենտրոնում էին պահում դազախ ժողովրդի մշակութային քաղաքականության հարցը և մեծապես կարևորում էին դրամատուրգիան:

Դրամատուրգիայի հիմնական թեմաները: Ինչպես առհասարակ արձակի դեպքում, 1920-30-ականներին դրամատուրգիայում ևս արծարծվող թեմաները տարբեր էին՝ բարոյականությունից մինչև մարդկային արատների ծաղրանք, ժողովրդի հերոսական պայքարից մինչև ժամանակակից կյանք: Այս մասին կարևոր ենք համարում նաև Մ. Աուեզովի դիտարկումը: 1954թ.-ին Ղազախ գրողների 5-րդ նստաշրջանին խոսելով վերջին տարիներին գրված պիեսների թեմատիկ առանձնահատկությունների մասին՝ նա նշում է. «Այդ շրջանի պիեսները թեմատիկ առումով եթե դասակարգենք, ապա կունենանք երեք հիմնական խումբ: Առաջին խումբը վերաբերում է այն ստեղծագործություններին, որոնք կապված են ազգային էպոսների, ֆոլկլորի և անհատների հետ, ինչպես, օրինակ, «Կոզի-Կորպեշ և Բայան-Սուլու», «Ալդար-Ջյոսե», «Ալթընսարին», «Չոբան Կելիխանով» ողբերգությունը, «Մայրա», «Ժամարտի գորգը» պիեսները: Երկրորդ խումբը պիեսներն են, որոնք նվիրված են պատմությանն ու հեղափոխությանը, օրինակ այն պիեսները, որոնք գրված են Ամանգելի Իմանովի գլխավորած ապստամբության թեմայով: Օրինակ՝ «Ամանգելի», «Տափաստանային հրացուլք»: Երրորդը խորհրդային թեմայով գրված պիեսներն են»:⁵⁰⁷

Աուեզովյան այս դասակարգման հետ դժվար է չհամաձայնվելը: Լավագույնս հասկանալով դրամատուրգիայի առանձնահատկությունները՝ Մ. Աուեզովը հրաշալի հասկանում էր գրականության այդ ժանրի զարգացման տրամաբանությունն ու տեսական հարցերի քննարկման ժամանակ հանդես էր գալիս որպես փորձառու գրականագետ: Նրա այդ դասակարգման հիմքում ստեղծագործությունների ընդհանուր թեմատիկ բաժանումն է, որին հավատարիմ կմնանք նաև մենք: Բայց այդ շրջանում դրամատուրգիայում հանդիպում են նաև այլ թեմաներով գրված ստեղծագործություններ, որոնք աուեզովյան դասակարգումից դուրս են մնացել. դրանց ընդհանուր գծերով կանդրադառնանք ստորև:

⁵⁰⁵ Նույն տեղում, էջ 159:

⁵⁰⁶ Неизвестное в наследии М. Ауэзова/ Отв. ред. С. Абдулло, Библиотека Олжаса, 2013, С. 62-63.

⁵⁰⁷ **Әуезов М.**, Шығармаларының елу томдық толық жинағы 32-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 30-31.

Արտագրվելով ժամանակի տրամադրությունները, քննարկելով հասարակությանը մտահոգող տարատեսակի հարցեր՝ դրամատուրգիան թեմատիկ առումով հանդես է գալիս երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական փոփոխությունների հետ ներդաշնակ կապի մեջ: Այսպես՝ 1920-ականներին՝ հետհեղափոխական շրջանում, երբ դազախ ժողովուրդը վերագնահատում էր իր անցյալը, պատմական ուղին, տարածված էր պատմական թեման. դրամատուրգները հաճախ էին անդրադառնում պատմական այս կամ այն իրադարձությանը, այս կամ այն պատմական անձին: Օրինակ՝ Ս. Մուկանովի «Պայթարի օրերին», Մ. Ախինժանովի «Իսատայ-Մախամբետ» պիեսների թեման 19-րդ դարի երկրորդ կեսին Բուկեկյան հորդայի դազախների ապստամբությունն էր: Նույն թեմայով է գրված նաև Ժ. Այմաուլտովի «Կանաայան և Շերբանուն», Բ. Մայիլի «Մեր յիզիթները» պիեսները: Ժամանակակից հայտնի գրաքննադատ, թատերագետ Բ. Կուանդակբայուլդի դիտարկմամբ՝ արդեն 1940-1950-ականներին պատմական թեմատիկայում առանձին մաս են կազմում ստեղծագործությունները, որոնք վերաբերում են բացառապես կոնկրետ պատմական անձերին՝ ներառելով կենսագրական ստույգ տվյալներ: Այսպիսի «պատմա-կենսագրական» թեմայով ստեղծագործություն է, օրինակ, Մ. Աուեզովի և Լ. Սորոյովի՝ Աբայ Կուանբակի կյանքի վերջին դրվագը պատկերող «Աբայ» ողբերգությունը, Գ. Մուսրեպովի «Ական Սերին և Ակտոկտընը» ողբերգությունը՝ նվիրված 19-րդ դարի հայտնի ակին Ական Սերե Կորամասուլդին, Ս. Մուկանովի «Չոկան Վելիխանով», Մ. Ակինժանովի «Իբրահիմ Ալթընսարին», Ի. Ջանսուգուրովի և Կ. Մուկաշևի «Տափաստանի երգը», 2. Ակիշևի «Ժայաու Մուսա», Շ. Յուսեյինովի «Ղանի Մուրատբան» պիեսները և այլն:⁵⁰⁸

1930-ականներին, երբ երկիրը թևակոխում է սոցիալիզմի կառուցման բուռն շրջան, ստեղծագործողները որպես թեմա են ընտրում կոլխոզային կյանքը՝ նկարագրելով այն դրական գույներով, գովերգելով ազնիվ աշխատանքն ու լուսավորությունը: Այս թեմայով առավել հայտնի են Մ. Աուեզովի, Գ. Մուսրեպովի, Ս. Սեյֆուլինի և այլոց ստեղծագործությունները:

Հայրենական մեծ պատերազմն իր հերթին բերում է թեմաների նոր շրթա՝ պատերազմի, ռազմաճակատի թեման՝ հայրենասիրական շեշտադրումներով: Ինչպես արձակի այլ ժանրերում⁵⁰⁹, դրամատուրգիայում ևս հետպատերազմյան շրջանում տարածված էր մարդկային բարոյականությանը վերաբերող թեման՝ մարդկային թերությունների ու թուլությունների, կենցաղային հարցերի ու սոցիալական դժվարությունների շեշտադրումներով (օրինակ՝ Ա. Աբիշևի «Նախանձ», «Ո՞վ է իմ հայրը», Ն. Անովի և Յ. Շտեյնի «Սրտի կամոք», Շ. Յուսեյինովի «Իրտիշի ափին» պիեսները): Այս պիեսների կերպարները ապրում են հետպատերազմական երկրում, որտեղ բարոյականության ընկալումները, մարդկային վեհ բարոյական կերպարը ենթարկվել էին փոփոխության. ամուսնուն կորցրած միայնակ կանայք, պատերազմ գնացած և այլևս չվերադարձած հորը փնտրող զավակներ, պատերազմի հետևանքով որդեկորույս մայրեր, կերակրող հորը կորցրած 7 օրվա հոգսը հազիվ հոգացող ընտանիքներ...

Յեղիակների կողմից պիեսների թեմաների ընտրությունը պայմանավորված էր ոչ միայն երկրի արտաքին, այլ նաև ներքին հարցերում պետական քաղաքականության հետ: Այսպես՝ շնորհիվ եղբայրական գրականության, որն ակտիվորեն քարոզվում էր հատկապես հետպատերազմյան տարիներին, դազախ դրամատուրգիան հարստանում է նոր թեմաներով:

Հետպատերազմյան շրջանում ոչ միայն Ղազախական ԽՍՀ-ում, այլ նաև մյուս խորհրդային հանրապետություններում գրողները ջանում են ցուցադրել հայրենիքի

⁵⁰⁸ Кундакбайұлы Б., Театр туралы толғаныстар, Алматы, Өнер, 2006, С. 37.

⁵⁰⁹ Այս մասին մանրամասն տե՛ս **Ахметов З.** Современное развитие и традиции казахской литературы, Алма-Ата, Наука, 1987, С. 220.

համար պայթարող, հայրենասեր մարդկանց կյանքը, որոնք աշխատում են կոլխոզներում և նվիրված են ազնիվ աշխատանքին: Կարելի է փաստել, որ հատկապես հետպատերազմյան շրջանում վերը թվարկված թեմաներից ամենաշատ արծարծվող թեման ժամանակակից կյանքն է: Այս ստեղծագործություններում հեղինակները ներկայացնում են ժամանակակից մարդուն, կոլխոզի առօրյան, կյանքը, ապրումները: Հատկապես հետպատերազմյան շրջանում դրամատուրգներն անդրադառնում են նաև խորհրդային միջավայրում ապրող մտավորականության թեմային: Ընդ որում, հեղինակները ներկայացնում էին փայլուն կրթություն ստացած, ազգային հոգսերով ապրող անհատներին, որոնք նվիրվել են կոմունիզմի կառուցմանը որպես մտավորականության ներկայացուցիչներ (օրինակ՝ Մ. Իմանժանովի «Իմ սեր», Ա. Աբիշևի «Հոր դատը», Շ. Հունեյինովի «Շատախոսը», «Երեկ և այսօր» պիեսները)⁵¹⁰: 1940-ականների կեսերից դազախ գրականության մեջ թվով բավական քիչ, սակայն հայտնվում են նաև պիեսներ՝ գրված այսպես կոչված միջազգային թեմայով: Օրինակ՝ Ռ. Ռայիմկուլովի և Կ. Իսաբաևի «Ատելության ուժը» պիեսի գործողությունները զարգանում են հետպատերազմյան շրջանի Գերմանիայում և պատմում են խորհրդային Միության գերիների կրած անմարդկային չարչարանքների մասին:

Մուխթար Աուեզովի ներդրումը դազախական դրամատուրգիայի պարզացման գործում: Ղազախ դրամատուրգիայի ձևավորման ու զարգացման գործում անզերազանցելի է Մուխթար Աուեզովի դերը: Ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ այսօր դազախ գրականագետները դազախական դրամատուրգիայի առաջին ծնունդը համարում էին նրա «Եսլիկ և Զեբեթ» պիեսը՝ գրված 1917թ.-ին:⁵¹¹ Այս պիեսը հետագայում՝ 1925թ.-ի հունվարի 13-ին, բեմադրվում է արդեն պրոֆեսիոնալ, կազմավորված թատրոնում՝ մինչև դրա պաշտոնական բացման արարողությունը (1926թ.):⁵¹²

Ավելին՝ հենց այս պիեսով է սկսվում Մուխթար Աուեզովի ստեղծագործական կյանքը, հետևաբար այն սկզբունքային կարևորություն ունի ոչ միայն հեղինակի, այլ նաև առհասարակ դազախական դրամատուրգիայի համար: «Եսլիկ և Զեբեթ» պիեսի սյուժեի հիմքում 18-րդ դարի 80-ականներին Աուեզովի ծննդավայրում Շընղըստաու կոչվող տարածքում, դազախների շրջանում երկու թշնամի թոբըկթը և նայման ցեղերի երիտասարդների ողբերգական սիրո պատմությունն է:

Ինչպես արդեն նշեցինք, պիեսն առաջին անգամ բեմադրվում է 1917թ.-ին հեղինակի մասնակցությամբ մեծագույն դազախ լուսավորիչ Աբայ Կունանբաևի (1845-1904) թոռնուհիներից մեկի հարսանիքի ժամանակ: Հարսանիքին մասնակցում էր նաև Աբայ Կունանբաևի կինը՝ Այգեմիրը: Այս մասին հայտնի գրականագետ Ե. Լիզունովան գրում է. «Այս ժամանակ արդեն դազախական տափաստանում ստեղծվել էին երիտասարդական ակումբներ: Աուեզովի երիտասարդները մասնակցում էին ակումբային կյանքին: Եվ պատահական չէ, որ ռուսական դպրոցում կրթություն ստացած Մուխթարը որոշում է յուրօրինակ նվեր անել ամուսնացողներին: Յոթ օրվա ընթացքում նա գրում է մի պիես, որի հիմքում ժողովրդական պատմությունն էր երկու սիրահարների՝ Եսլիկի և Զեբեթի մասին: Բայց աղջիկները հրաժարվում են խաղալ Եսլիկի կերպարը, և սիրահար աղջկա կերպարը ստիպված է լինում մարմնավորել յիգիթ Աիմեդը: Մասնակցող երիտասարդները գրել-կարդալ չգիտեին, որ իրենց դերերն անգիր անեին, և հեղինակը դառնում է նաև հուշարար: Թաքնվելով բեմի մի հատվածում՝ նա հուշում էր «դերասաններին»: Բայց երիտասարդ աղջիկները, նկատելով թաքնված հուշարարին, սկսում են նրա խոսքերը փոփոխելով՝ շեղել բեմի վրա գտնվող երիտասարդներին:

⁵¹⁰ Նույն տեղում, էջ 309:

⁵¹¹ **Ахметов З., Лизунова Е.** Художественное Мастерство М. Ауэзова, Классические исследование: мономонник, 18 том, Алматы, Эдебиет Элеми, 2013, С. 385.

⁵¹² **Қабдол З.,** Әуэзов туралы, Алматы, Санат, 1997, С. 235.

Արդյունքում «դերասանները» դիմում են իմպրովիզի՝ հորինելով համապատասխան այտուները:⁵¹³ Այս անսովոր դեպքն այնքան մեծ իրարանցում էր առաջացրել ժամանակին, որ դրա մասին գրվել էր նաև «Сарыарка» թերթում⁵¹⁴: Իր կյանքի ընթացքում հեղինակը մի քանի անգամ փոփոխության է ենթարկում պիեսը՝ այն հասցնելով կատարելության:⁵¹⁵

Մ. Աուեզովը հեղինակել է ավելի քան երեք տասնյակ ողբերգություններ, կատակերգություններ, ազգային դրամաներ, կինոդրամաներ, լիբրետո օպերայի և բալետի համար, այդ թվում՝ կինոդրամա («Ռայխան», 1935թ., «Համառ ցեղը» 1947թ., «Աբայ» 1944թ., «Կնոջ ուղին», 1952), օպերային լիբրետո («Աբայ» 1943, «Հինգ ընկեր», «Տուլեգեն Տոխտարով», 1947, վերջին խմբ. 1952-1960), բանաստեղծություններով զրված պիես («Բեկետ» 1939թ.), լիբրետո («Ական Չահրա», 1935թ.): Որոշ ստեղծագործություններ էլ գրում է համահեղինակությամբ, ինչպես, օրինակ, Ա. Թափբաևի հետ գրում է «Սպիտակ կեչի» (1938թ.), Ս. Սորբուկի հետ՝ «Աբայ» (1939թ.), Ա. Աբիշեվի հետ՝ «Պատվո գվարդիա» (1942թ.), Գ. Մուսրեպովի հետ՝ «Մերկացված սուրը» (1945թ.) պիեսները:

Կանգած լինելով դրամատուրգիայի ակունքներում՝ Մ. Աուեզովը բազմիցս անդրադարձել է նաև դրամատուրգիայի զարգացման տեսական հարցերի քննարկմանը, հեղինակել է մի շարք հոդվածներ՝ կապված դրա զարգացման հետագա ուղու հետ, հանդես է եկել զեկույցներով ոչ միայն դրամատուրգիայի, այլ նաև թատրոնի ու կինոյի վերաբերյալ մասնավորապես «Қызыл сұңқалар» (1922), «Жалпы өнері мен қазақ театры» (1926), «Қазақстан мемлекет театры» (1928), «Казахская драматургия» (1933), «Жаксы драматургия- сапалы әдебиет белгісі» (1934), «Қазақстан көркем өнері» (1935), «Қазақ сахнасындағы аударма пьесалар» (1937), «Дінді әшкерелейтін пьеса» (1938)⁵¹⁶, «Литература и кино» (1944), «Драматургияның заңы туралы кейбір ойлар» (1953թ.) հոդվածներում, ինչպես նաև «Қазақстан мемлекеттік театрының және жылдығы және алдағы міндеттері» (1932թ.), «Драматургияның бүгінгі жайы мен алдағы міндеттері» (1934թ.), «Реалистік драма жолында» (1954թ.) զեկույցներում նա անդրադառնում է դրամատուրգիայի տեսական հարցերին, դրա հետագա զարգացման պատմական նախադրյալներին, ինչպես նաև ժամանակակից վիճակին, կերպարներին վերաբերող հարցերին: Աուեզովը մեծապես կարևորում էր դրամատուրգիայի դերը ժամանակակից գրականության մեջ, և դա է պատճառը, որ դրամատուրգիայի տեսական հարցերի քննությամբ նա զբաղվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Անդրադառնալով դրամատուրգիայի ժամանակակից վիճակին՝ «Реалистік драма жолында» հոդվածում հեղինակը նշում է. «Դրամատուրգիան խորհրդային գրականության ամենահիմնական և կարևորագույն ոլորտներից մեկն է: Դրա հոգևոր հիմքը, հիմնաքարը խորհրդային հայրենասիրությունն է, բարձր գաղափարախոսությունը և կյանքի ճշմարտությունը»⁵¹⁷: «Դրամատուրգիան գրականության ամենադժվար, ամենապատասխանատու և դրանով հանդերձ ամենահաջող յուրացվող, ամենամասսայական ժանրն է: Դրա համար է, որ հենց այստեղ դազախ գրականությունն ունի ամենամեծ

⁵¹³ Лизунова Е., Дюсенбаев И. Мухтар Ауэзов к 60-летию, КазГосИзд Худ. Лит., Алма-Ата, 1952, С. 9.

⁵¹⁴ Өуезов М. /Энциклопедия/ Бас ред. Қасқабасов С., Алматы, Атамұра, 2011, С. 251.

⁵¹⁵ Մ. Աուեզովի մշակմամբ «Ենիկ և Քերեք» պիեսը մինչև այսօր դազախական թատրոնների խողացանկի անբաժանելի մասն է կազմում:

⁵¹⁶ Өуезов М., Шығармаларының елу томдық толық жинағы, 13-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 386.

⁵¹⁷ Өуезов, М., Шығармаларының елу томдық толық жинағы, 32-том, Алматы, Дәуір, Жібек-Жолы, 2004, С. 27-63.

թերացումները»⁵¹⁸: Իսկ որո՞նք էին դրամատուրգիայի ղեկավարությունները ըստ Նրա. «Գրական մյուս ժանրերի հետ համեմատելիս դրամատուրգիայի առանձնահատկությունն այն է, որ այն պատկերում է բացառապես մարդուն: Իսկ եթե այդպես է, ուրեմն պիեսի կերպարները պետք է լինեն դիպուկ: Յուրաքանչյուր պիես պետք է հնարավորության սահմաններում տա մեկ-երկու կերպար, որը կտպավորվի հանդիսատեսի հիշողության մեջ»⁵¹⁹: Այսինքն՝ Նա առաջ էր քաշում կերպարին բազմակողմանիորեն, տարբեր իրավիճակներում պատկերելու անհրաժեշտությունը: Մյուս կողմից Նա բարձրացնում էր սյուժեում կոնֆլիկտի սկզբունքային կարևորության հարցը: Ավելին՝ խոսելով պիեսների գաղափարական ասելիքի մասին՝ Նա կոնֆլիկտը դիտարկում էր գաղափարական ասելիքի հետ ներդաշնակ կապի մեջ: «Դրամայի գաղափարական ասելիքը կերպարի պայթարն է ինքն իր դեմ», - նշում է Նա: «Драматургияны бугинги жайы мен алдагы міндеттери» հոդվածում Աուեզովը նշում է, որ ժամանակակից դրամատուրգիայի քաղաքական ենթաշերտերը թաքնված են ստեղծագործության թեմայի, գաղափարական ասելիքի, կերպարների ու սյուժեի մեջ:

Դրամատուրգիայի զարգացման գործում Աուեզովի ներդրումը մեծ է Նաև որպես թարգմանչի, ընդ որում, բացի խորհրդային և եվրոպական գրականության առանձին հեղինակների աշխատանքները դազախերեն թարգմանելուց (օրինակ՝ Ն. Գոգոլի «Ռեվիզորը», Վ. Շեքսպիրի «Օթելլոն» և «Անսանձ կնոջ սանձահարումը», Ա. Կրոնի «Նավատորմի սպան», Ա. Աֆինոգենովի «Վախ», Ն. Պոգոդինի «Արիստոկրատները» ստեղծագործությունները), Նա ռուսերեն է թարգմանել Նաև իր և դազախ այլ ստեղծագործողների մի քանի պիեսները (օրինակ՝ Ի. Ժանսուգուրովի «Պողպատե ուղին», իր պիեսներից՝ «Ելիկ և Քեբեք», «Պայթար», «Պատվո գվարդիա» ստեղծագործությունները):

Ամփոփում: Կարելի է վստահաբար փաստել, որ 20-րդ դարակիզը դազախ գրականության համար Նոր շրջափուլի սկիզբ էր: Գրականությունը հարստանում էր Նոր թեմաներով, Նոր ժանրերով ու կերպարներով: Ղազախական դրամատուրգիայի ծնունդն ազդարարվում է 1917թ.-ին Մուխթար Աուեզովի «Ելիկ-Քեբեք» պիեսով, որը դառնում է Նոր կազմավորված դազախական պրոֆեսիոնալ թատրոնի խաղացանկի առաջին ներկայացումը: Ղազախ դրամատուրգիայում անգերազանցելի է Մուխթար Աուեզովի դերն ու վաստակը: Նա հեղինակել է մոտ երեք տասնյակ պիեսներ, ինչպես Նաև զբաղվել դրամատուրգիայի տեսական հարցերի քննությամբ: Շնորհիվ Նաև Նրա աշխատանքների՝ Նոր ձևավորվող դրամատուրգիան շատ արագ կարողանում է իր տեղը հաստատել գրականության մեջ և զարգացման կարճ ժամանակահատվածում ընդգրկել թեմատիկ լայն շրջանակներ: Հանդես գալով երկրի քաղաքական ու սոցիալական հարցերի հետ ներդաշնակ կապի մեջ՝ դրամատուրգիան արտացոլում էր ժամանակի տրամադրությունները. այսպես՝ 1920-ականներին՝ հետհեղափոխական շրջանում, տարածված էր պատմական թեման, 1930-ականներին, երբ երկիրը լծվել էր կոմունիզմի կառուցմանը, պիեսերի հիմնական կերպարները կոլխոզներում ազնիվ աշխատանքով ապրող մարդիկ էին, Նրանց կյանքն ու ձգտումները, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի Նախօրյակին գերակշռում էին հայրենասիրական թեմաներով գրված պիեսները:

Վստահ ենք, որ դազախական դրամատուրգիային վերաբերող հարցերի հետագա բազմակողմանի քննությունը ևս մեկ ճանապարհ է՝ հասկանալու դազախ գրականության զարգացման օրինաչափությունները, վեր հանելու դրա առանձնահատկություններն ու յուրօրինակությունները: Նմանատիպ ուսումնասիրությունները

⁵¹⁸ Նույն տեղում, էջ 30:

⁵¹⁹ Նույն տեղում:

MUKHTAR AUEZOV AND KAZAKH DRAMATURGY IN THE 1920-1940S

SHUSHAN KHACHATRYAN

*PAA RA, Chair of Political Governance and Public Policy, lecturer,
Faculty of Oriental Studies, YSU, Post-Graduate Student (2013-2017),
Yerevan, Republic of Armenia*

In the article we have touched upon the main features of the development of Kazakh dramaturgy which have not been studied in the Armenian reality yet. In particular, the task of the article is to study and analyze the existing preconditions for the development of dramaturgy, as well as to examine and present its main thematic features of the 1920-1940s. The aim of the article is to present the state of dramaturgy in the 1920-1940s and to show the role and significance of Mukhtar Auezov in its development. Therefore, in the article the story of the creation of Mukhtar Auezov's "Yenlik and Kebek" play was particularly studied considering the fact that it is the first play of the Kazakh dramaturgy. Works of both Soviet and modern Kazakh and Russian specialists were used in the article. The work has been carried out using the historical-comparative method widely used in literature study.

As a result of the research, we can conclude that M. Auezov, who is standing at the roots of Kazakh dramaturgy, was one of the most influential writers of this genre of literature. He not only wrote thirty plays, but also discussed theoretical issues, presented his vision for the further development of dramaturgy thus predetermining the further path of the latter.

We are sure that the further study of the works of M. Auezov as a writer and literary critic can have a special place in the field of Kazakh studies.

Keywords: *literature, Kazakh, Kazakh literature, dramaturgy, Kazakh dramaturgy, Mukhtar Auezov, literature study, study of theoretical issues, Armenian-Kazakh literary relations.*

МУХТАР АУЭЗОВ И КАЗАХСКАЯ ДРАМАТУРГИЯ В 1920-40-ЫХ ГОДАХ

ШУШАН ХАЧАТРЯН

*преподаватель кафедры политического управления и
публичной политики Академии государственного управления РА,
аспирант (2013-2017) факультета востоковедения
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Эта статья – первый опыт изучения основных особенностей становления и развития казахской драматургии на армянском языке. В частности, в работе ставится задача изучить и проанализировать предпосылки становления казахской драматургии, а также рассмотреть и показать ее тематические особенности в период с 1920 по 1940 годы. Цель работы – продемонстрировать состояние драматургии в данный период времени, а также определить

роль Мухтара Ауэзова в ее развитии. Исходя из этого, была отдельно рассмотрена история создания пьесы «Енлик-Кебек» М. Ауэзова, так как она считается первой пьесой в казахской литературе. В статье использовались научные труды как советских, так и современных казахских и российских исследователей. В ходе исследовательской работы был применен историко-сравнительный метод. В результате был сделан вывод, что М. Ауэзов, стоявший у истоков казахской драматургии, был одним из самых выдающихся писателей этого жанра. Он – автор более 30 пьес, кроме того, он также занимался исследованием теоретических вопросов развития драматургии. Мы уверены, что проведение дальнейшего изучения его работ станет еще одним скромным вкладом в развитие армянского казаховедения.

Ключевые слова: *литература, казахский, казахская литература, драматургия, казахская драматургия, Мухтар Ауэзов, литературоведение, исследование теоретических вопросов, армяно-казахские литературные связи.*

ՀՏԴ 82.09

ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱՎ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
siranush.parsadanyan.2014@mail.ru

Հոդվածի նպատակն է հովհաննես Վանանդեցու «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» պոեմում համեմատության մեջ վեր հանել հեղինակի կատարած հավելումները և ցույց տալ, թե ինչ գեղարվեստական մշակման է ենթարկվել պատմական նյութը:

Մեր խնդիրն է պոեմի պատմագրական սկզբնաղբյուրներն ուսումնասիրելուց պատ ցույց տալ, որ, ի տարբերություն հին շրջանի ստեղծագործությունների, պոեմում կարևորվում է կերպարների հոգեբանական դրաման՝ ըստ նոր շրջանի գրականությանը բնորոշ հատկանիշների: Անդրադարձ է կատարվել նաև այն հանգամանքին, որ թեև Վանանդեցին պոեմի նյութ է դարձրել հեթանոսական շրջանի դեպքերը, այնուամենայնիվ, որպես քրիստոնյա հեղինակ, անդադար չէշտում է հայ ժողովրդի նախնիների՝ միաստվածության հավատի հետևորդ լինելը:

Հետապոտության ընթացքում առավելապես կիրառվել են վերլուծական ու համեմատական մեթոդները: Կատարվել է նաև կառուցվածքային վերլուծություն՝ գրքի յուրաքանչյուր բաժնի առանձին անդրադարձով:

Ի վերջո, հանգել ենք այն եզրակացությանը, որ ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, ազգաճանաչությունն է, հետևաբար նաև նախնիների ուղով ընթանալը, և դա է պատճառը, որ ստեղծագործության մեջ վերհանված են պատմական կերպարների ֆիզիկական ու հոգևոր առավելությունները:

Հիմնաբառեր՝ Հովհ. Վանանդեցի, տեսարան, պոեմ, գեղարվեստական, կերպար, պատմագիր, Մովսես Խորենացի, պատմական դեպքեր, չափաժո:

Ներածություն

Հովհ. Միրզայան Վանանդեցու (1772-1841 թթ.) դերը հայ գրականության մեջ անգնահատելի է: Նա իրավամբ համարվում է հայ պոեզիայի հայրենասիրական, պատմաբաղաբական ուղղության սկզբնավորողը⁵²⁰: Լինելով ժամանակի խոհեմ հոգևորականներից մեկը՝ շուրջ երեք տասնամյակ աստվածաբանություն ու հայկաբանություն է դասավանդել Չմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում:

Հովհ. Վանանդեցու գլխավոր ստեղծագործությունները երեք մեծածավալ պոեմներն են՝ «Արփիական Հայաստանի» (Կ. Պոլիս, 1836 թ.), «Ոսկի դար Հայաստանի» (Չմյուռնիա, 1841 թ.), «Տեսարան հանդիսացն Հայկայ, Արամայ և Արայի» (Չմյուռնիա, 1856 թ.):

* Հոդվածը ներկայացվել է 30.07.2020թ., գրախոսվել՝ 16.08.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

⁵²⁰ Տե՛ս Հայոց գրականության պատմություն, հ. 3, Երևան, 2015 թ., էջ 72:

«Տեսարան հանդիսացն Յայկայ, Արամայ և Արայի» պոեմը գրվել է ավելի վաղ, սակայն լույս է տեսել 1856 թ.-ին: Պոեմում ներկայացված են հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը, անցյալի փառքը, հերոսները: Երկուսը մեր նախնիների քաջությունն ու առաքինությունն է: Վանանդեցին հայկական կլասիցիզմի պատմահայեցողության հետևողությամբ իր իդեալը փնտրում էր հայ ժողովրդի հերոսական անցյալի մեջ: Նա ստեղծագործության կյուրթ է դարձնում հայոց հերոսական անցյալը՝ վկայակոչելով մեր պատմության լավագույն էջերի առասպելական դյուցազուններին: Ամեն դեպքում, Վանանդեցու նպատակը մեր պատմության հին շրջանի դեպքերը սոսկ չափածոյի վերածելը չի եղել: Նա փորձել է գրել հերոսական պատմություն՝ ժամանակակիցների շրջանում հետաքրքրություն ու ոգևորություն առաջացնելով նախնիների սիրանքների ու քաջագործությունների հանդեպ:

Հատկանշական է, որ «Տեսարանում» շեշտը առավելապես դրված է հայրենասիրության ու կրոնասիրության վրա:

Անդրադառնալով պոեմի վերնագրին՝ ակնհայտ է դառնում, որ հեղինակը հետևել է պատմահայր Մովսես Խորենացու խոսքերին: Վանանդեցին, սակայն, ավելի առարկայականություն է հաղորդել ստեղծագործությանը՝ պահպանելով ժառանգականության սկզբունքը: Հայկը և Արամը մեր ժողովրդի էպոսիմներն են համարվում, իսկ Արայի շուրջ հյուսված գրույցները և Նրա մասին պատմվող ավանդությունները տարբեր դարերում լայն ժողովրդականություն են ունեցել՝ որպես մեռնող և հարություն առնող աստվածության խորհրդանիշ:

Պատմական դեպքերի գեղարվեստական արտացոլումը պոեմում

Վանանդեցին շարադրանքը սկսել է մեր ժողովրդի նախահայր Հայկի ծնունդից, անդրադարձել ջրհեղեղին, աշտարակաշինությանը, Հայկի ապստամբությանը, ապա մեծ ոգևորությամբ պատկերել պատերազմի ու Հայկի հաղթության տեսարանը, Հայկի միապետությունը, աշխարհաշինությունն ու մահը, այնուհետև ոչ պակաս խանդավառությամբ ներկայացրել Արամի, ապա Արայի միապետության, Շամիրամի ու Արայի հակամարտության, վերջինիս մահվան՝ պատմությունից հայտնի դրվագները: Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որում հեղինակը խտացրել է բուն ասելիքը:

Ըստ Մ. Աբեղյանի՝ Հովհաննես Վանանդեցու ստեղծագործություններով սկսվում է հայոց քաղաքական անցյալի բանաստեղծությունը, ինչը նշանակալի երևույթ էր մեր գրականության մեջ. «Դարեր շարունակ քաղաքական կյանքը մերժված է եղել երգի արժանանալուց. քերթողները միակերպ միայն վարդ ու սոխակ, պարտեզ ու գարուն են երգել և կամ եկեղեցի ու սրբեր, կրոնական խնդիրներ»⁵²¹: Իսկ անհ Վանանդեցին ստեղծագործության կյուրթ է դարձնում հայոց հերոսական անցյալը՝ վկայակոչելով մեր պատմության լավագույն էջերի առասպելական դյուցազուններին:

Ստեղծագործության համար պատմական հիմնական սկզբնաղբյուր է ծառայել Խորենացու «Պատմութիւն հայոց» երկը: Հեղինակը հայ ժողովրդի ծագումնաբանությանը վերաբերող որոշ հաստատումներում զգալիորեն օգտվել է Նաև Աստվածաշնչից (հատկապես աշտարակաշինությանը վերաբերող դրվագներում):

Հայկի առասպելը գտնում ենք Նաև Սեբեոսի պատմության առաջին մասում, սակայն դժվար թե Վանանդեցին ծանոթ լիներ այս երկին, քանի որ վերջինս առաջին անգամ հրատարակվել է 1851 թ.-ին:

Հայկի առասպելը Խորենացին կապում է Աստվածաշնչից հայտնի աշտարակաշինության հետ: Թեթևակի անդրադառնալով աշտարակաշինությանը՝

⁵²¹ Աբեղյան Մ., Երկեր, հ. Դ, Երևան, 1970 թ., էջ 601:

պատմահայրը գրում է. «Յորոց մի էր և Յապետոսթեանն Յայկ, անուանի և քաջ Նախարար, կորովածիզ և հաստաղեղն»⁵²²:

Պոեմում Վանանդեցին աշտարակաշինությունը մի առանձին գլխում է ընդգրկում, որում մանրամասնում է Աստվածաշնչից հայտնի դեպքերը (Ճնևորց 7:1-24), և թե ինչպես «Աստված այլալեզու ծայնի ազգ ազգ տարատրոհեալ», ինչի հետևանքով Նրանց մեջ աղմուկ ու շփոթություն է ընկնում: Պատմահոր հավաստմամբ՝ վայելչակազմ, թիկնավետ, հաստաբազուկ, գանգուր մազերով ու վառվռուն աչքերով մեր Նախնին, չկամենալով հնազանդվել Բելին, Բաբելոնում Արամանյակ որդու ծնվելուց հետո չվում է դեպի հյուսիսային կողմերում գտնվող Արարադի երկիրը, որը Յայաստանի կենտրոնում տեղակայված Արարատյան Նահանգը չէ, այլ Վանա լճի հարավային մասում սփռված բնակավայր է:

Մեր ժողովրդի անվանադիր Նախնին Վանանդեցու բառերով և հորենացու հետևությամբ՝

*Ի ցրուելոց Յայկըն միայն ի Յայս եկեալ,
Սակաւ իւրովք և որք ի յինքն եղեն յարեալ.
Գայ գրտանէ ըվ-Յայաստան խուռըն լըցեալ,
Որ ի բընիկ անդըր լեյուհ յըստակ կացեալ*⁵²³:

Տիտանյան Բելը, ըստ հորենացու, Նեբրովթն է: Մ. Աբեղյանը, սակայն, ճշմարիտ չի համարում այս պնդումը, ինչպես Նաև կասկածամտորեն է վերաբերում հայոց ազգի ծագումը աշտարակաշինության հետ կապելու գրույցներին⁵²⁴:

Վանանդեցին պոեմում կիրառում է Բելի անվանման երկու տարբերակներն էլ՝ հետևելով հորենացուն: Այսպես՝ «Ընդ որս և ոմանք որք ի Նեբրովթայ գործոց զըզուէին, /Յարեցան ի Նա գալ յաստուածաւանդ բընակն առաջին»: «Գիտասջի՛ր՝ ասե, անպարտ ախոյեան մեծըդ դիւցազանց, /Չի դիմեալ գայ Բել արդ ի թո վերայ բազմութեամբ քաջաց»:

Հորենացուց սկսած՝ դարեր շարունակ հայ ժողովրդի հիմնադիր Նախնին ներկայացվել է որպես քաջազանգուր, քաջաբազուկ, այր հաստաբազուկ: Հովհաննես Վանանդեցին ավելի է խտացրել այս հատկանիշները Յայկի կերպարում: Այս ստեղծագործության մեջ ևս Յայկի արտաքին հատկանիշները հավասարազոր են Նրա ֆիզիկական ուժին:

Պոեմում հեղինակը Յայկ Նահապետի կերպարային նկարագրությունը տալիս վկայակոչում է պատմահորը, ինչպես Նաև Մար-Աբաս Կատիսային.

*Կամի՛ս գիտել ըվհանգամանս շըբեղ Անձին,
Մարիբասայ յո՛ւր ըստ Զաղդեայ մատենագրին.*

Յորմէ և մեր Զերթողահայր հորենացին,

Ճըշտէ փոքու ի պատմութեանն անդ մատենին (Էջ 9):

Հեղինակը, վերցնելով պատմության ատաղձը, հարստացրել է այն իր բանաստեղծական երևակայությամբ՝ ստեղծելով դարաշրջանի համար մի ինքնատիպ երկ, որի գլխավոր Նպատակը հիմնականում պատանիների ու երիտասարդների մեջ հայրենասիրություն սերմանելն է, ինչը պարզ է դառնում առաջին իսկ տողերն ընթերցելուն պես.

*Որոց վեհակնեայ քաջութեանցն արծան
Այս քերթած կացցէ մանկանց յանդիման.
Խընդամիտ հոգևով յախորժ ընթերցման,
Անձանց բարութեան մըթերել զօճան (Էջ 3):*

⁵²² Մովսես հորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1981 թ., էջ 38:

⁵²³ Վանանդեցի Յ., Տեսարան հանդիսացն Յայկայ, Արամայ և Արայի, Չմիւռնիա, 1856 թ., էջ 38 (այսուհետ տվյալ գրքից մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում):

⁵²⁴ Տե՛ս Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966 թ., էջ 41:

«Որոց ասելով»՝ բանաստեղծը նկատի ունի իր ստեղծագործության երեք գլխավոր կերպարներին:

Մեջբերված չափածո հատվածում տարակարծությունների տեղիք կարող է տալ «մանուկ» բառը, որը գրաբարում մի քանի նշանակությամբ է գործածվել: Կարելի է ենթադրել, որ այստեղ բառը կիրառված է առավելապես «պատանի, երիտասարդ» իմաստներով: Եվ նաև դժվար թե Յովհ. Վանանդեցին նման բարդ գրաբարով շարադրված ստեղծագործությունը ընծայագրեր մանուկներին:

Ի տարբերություն «Արփիական Յայաստանի» պոեմի, որը Ազաթանգեղոսի պատմության չափածո վերաշարադրանքն է, «Տեսարանում» բառացի մեջբերումները իսպառ բացակայում են: Թերևս պատճառները մեկն էլ այն է, որ Ազաթանգեղոս պատմիչը դեպքերը մանրամասնորեն է նկարագրում, իսկ ահա Խորենացին հակիրճ ու սեղմ է արձանագրում փաստերը: Յեղիսակը «Տեսարանում» իրեն ավելի անկաշկանդ է զգացել դեպքերի պատկերման մեջ: Իհարկե, այս հանգամանքը վկայում է հեղինակի ստեղծագործական ունակությունների և պատմական չոր ու ցամաք փաստերը գեղարվեստականորեն ներկայացնելու ձիրքի մասին:

Երբ Բելը իր հավատարիմ մարդկանցից մի քանիսին ուղարկում է Յայկի մոտ, որպեսզի վերջինս հնազանդվի, Յայկը պատգամավորներին կտրուկ պատասխան է տալիս: Յայկի պատասխանը պոեմում ուղղակի կերպով առկա է: Եվ Բելի դեսպանները կորագլուխ ետ են դառնում դեպի Բաբելոն:

Պոեմի ամենաազդեցիկ հատվածներից մեկը Յայկի՝ Բելին երեթեւյան նետով գետին տապալելու տեսարանն է.

*Ընդ լայնայիճ մրտեալ յաղեղն այրն ուժընդակ,
Չերեթթևեանն հարկանէ նետ ի նըպատակ (Էջ 49):*

Լայնայիճ աղեղ կարող էին բանեցնել միայն ամենաուժեղները:

Ահա թե ինչպես է նկարագրում Վանանդեցին Բելի՝ Յայկի նետից գետին ընկնելու դրվագը.

Ըչիպարտ իւր փըջէ ւոզին դիւաբընակ (Էջ 49):

Այս հատվածում այնքան դիպուկ է «դիւաբնակ» բառի կիրառությունը: Յեղիսակը միշտ էլ տեղին, իրավիճակին համապատասխան բառեր է կարողանում գտնել: Այսինքն՝ լինելով չար ուժերի հետևորդ՝ Բելը ինքնըստինքյան այդ հատկանիշի կրողը պետք է լիներ:

Յայկի հրամանով Բելի դիակը զմռսում են և թաղում մի բարձրավանդակ տեղում՝ «զօրացն ակն յանդիման»:

Քանի որ երկը հիմնականում ունի դաստիարակչական գործառույթ, հեղինակը հորդորում է փառասիրությանը կույ չզնալ և լինել չափավոր.

*Ա՛յս հատուցումն եղև Բելայ յանդըզուլթեան,
Ա՛յս վարձ գործոց նորա չափեալ վայելչական (Էջ 49):*

Այն բլուրը, որտեղ Բելը նետահարվել էր, ստացավ «Գերեզմանք» անվանումը. «Գերեզմանք եղ նըմա կոչումըն յոզնական»: Յ. Էփրիկյանի հավաստմամբ՝ այդ բլուրը գտնվում է Վասպուրականի Երվանդունիք գավառի Յայոց ձորի մեջ⁵²⁵: Գերեզմանք տեղանվանը անդրադարձ է կատարել նաև Գարեգին Սրվանձտյանը⁵²⁶:

Ուշագրավ է Յայկի մահվան տեսարանը: Խորենացին մի քանի բառով է պատմում վերջինիս մահվան մասին. «Սա կեցեալ ամս՝ ծնանի զԱրամանեակ ի Բաբելոնի, որպես վերագոյն ասացաք: Յետ որոյ կեցեալ և այլ ևս ամս ոչ սակաւս՝ մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազգն Արամանեակայ որդւոյ իւրում»⁵²⁷: Այս մի քանի բառը հիմք ընդունելով՝

⁵²⁵ Տե՛ս Էփրիկյան Յ., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903 թ., էջ 514-515:

⁵²⁶ Տե՛ս Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978 թ., էջ 49-51:

⁵²⁷ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 46:

բանաստեղծը «Մահ Չայկայ դիւցազին» գլխում մանրամասնորեն ընթերցողին է ներկայացնում Չայկա Նահապետի կյանքի վերջին ժամերը: Չայկը, «ի պարարտ ծերութիւն բարեաց ազգըն խաղաղեալ», սերունդների առաջ իր պարտքն ու առաքելությունը կատարած՝ վերջին խոսքով դիմում է իր ժառանգներին: Նա կոչ է անում աստվածավախ լինել, Աստծուն սիրել ամբողջ սրտով, հիշել Նախնիների կատարած գործերը, բարի գործեր կատարելով՝ միշտ միաբան ու համերաշխ լինել:

Ճիշտ է, հայերը քրիստոնեությունը՝ որպէս պետական կրոն, ընդունեցին 301 թ.-ին, սակայն Վանանդեցին, որպէս քրիստոնյա հեղինակ, պոետում անդադար չշեղում է մեր Նախնիների, այսինքն՝ Նոյի հաբեթյան ճյուղի շարունակողների միաստվածության հավատի հետևորդ լինելը: Ասվածի լավագույն օրինակը կարելի է տեսնել Չայկա Նահապետի խոսքում: Վերջինս Բելի նկատմամբ տարած հաղթանակը ևս կապում է աստվածային Նախախնամության ու բարեգթության հետ.

*Ծանեայ աներկբայ վԱրարիչըն մեր մեր միշտ խոստովանեալ,
Սուրբ իւր հրամանացն եղէ հրպատակ ի նոյն խրախուսեալ.
Առ ոտըն հարի ըպպաշտօն Բելայ դիմագրաւ կանգնեալ,
Եւ վրսկիվբըն սուտ պաշտմանն ի տապալ արկի կործանեալ (Էջ 60):*

Այս առիթով արժէ հիշատակել Ղևոնդ Ալիշանի տեսակետը. «Եթէ արդարեւ Չայկա Յաբեթի թոռն էր՝ հաւանական էր իր աստուածապաշտութիւնն, ինչպէս հաւանական և ստոյգ այլ է՝ որ ինչուան քակի մի ցեղ Նահապետաց սերունդ և ինչուան Աբրահամու ատեն, տեղ տեղ ուղիղ աստուածապաշտութիւն կար, և վկայեն Ս. Գիրք»⁵²⁸: Այսինքն՝ Ղ. Ալիշանը ճշմարիտ է համարում Նոյից սերված թորգոմյան ճյուղի քրիստոնյա լինելը: Իսկ թէ այդ հավատքը մինչև երբ են պահել մեր Նախնիները, վերջինս համարում է դժվարին կամ «անկարելի ստուգելի»⁵²⁹:

Պոետում Չայկա Նահապետի որդի Արամանյակի անունը փոխարինված է Արմենակ տարբերակով: Չայկը, իրեն հետևորդ հռչակելով վերջինիս, հորդորում է նրան «պահել արուօթամբ զայս ժառանգութիւն յանուն Չայկական, յաղթող հանդիսիւ կալ բըռնացելոցն հըզօր ախոյեան»:

Չեղինակը տպավորիչ տողերով է ներկայացնում Չայկա Նահապետի մահվան դրվագը.

*Կափացումն աչաց և վախճան շընչոյն յայն տեսարանին,
Անշարժ ըպհասակն առնէին նոճեայ հըզօր Չըսկային.
Անպարտըն բազկաց սաստիկ ուժգնութիւն 'ի հարուած նետին,
Շարժել թուլանայր ըպսօսի կողերս վարսազեղ մարմնին (Էջ 64):*

Թվում է՝ այդ անպարտելին ու ամենաուժեղը չպետք է հայտնվեր մահվան մահճում:

Պոետում ուրվագծվում է Չայկա Նահապետի կնոջ՝ Չարմանդուխտի կերպարը: Վերջինիս մասին խորենացու պատմության մեջ հիշատակություններ չկան: Չր. Աճառյանը իր «Չայոց անձնանունների բառարանում» խոսելով Չարմանդուխտ հատկանվան ծագման ու նշանակության մասին, չի հիշատակում Չայկա Նահապետի կնոջը Չարմանդուխտ անունով: Ս. Չամչյանը ևս ոչ մի հիշատակություն չի արել: Այս կերպարը, ըստ ամենայնի, հեղինակի ստեղծագործական երևակայության արդյունքն է:

Չովի. Վանանդեցին իրեն բնորոշ զգացմունքայնությամբ նկարագրում է Չարմանդուխտի ողբի տեսարանը.

*Աւա՛ղ իմ կենաց, վա՛յ ինձ առանց քո պայծառ արևին.
Պու սիւն ոսկեղէն, դու յսկանց պարիսպ մերոյ աշխարհին,
Պու ընկեր սիրոյս՝ պիա՛րդ վիս լքեալ թողեր առանձին (Էջ 64):*

⁵²⁸ Ղ. Ալիշան, Գին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895 թ., էջ 24-25:
⁵²⁹ Տե՛ս նոյն տեղում:

Հայկի կորուստը անասելի սուգ էր. «անդ էր աղաղակ լալոյ և կոծոյ սաստիկ որոտման»: Նույնիսկ բնությունն էր սգում հսկայի մահը: Այստեղ բանաստեղծը դիմում է անձնավորման գեղարվեստական մեթոդին՝ նկարագրելով բնության անհանգիստ վիճակը. «Դըղըրդէր երկիր գոռային անծաւթ ի գոչ վայական»: Համատարած սուգ էր տիրում հայոց մեջ:

Վանանդեցին, երբեմն ձեռքի տակ չունենալով պատմական լիարժեք տեղեկություններ, մանրամասները լրացնում է ստեղծագործական երևակայության միջոցով: Սակայն որոշ մանրամասների երբեմն չի էլ անդրադառնում թերևս չցանկանալով հեռանալ ստեղծագործության հիմնական կյուբից: Ասվածի լավագույն հավաստումն այն է, որ բանաստեղծը, իր ստեղծագործության մեջ անդրադարձ կատարելով Հայկ նահապետի թոռներին ու ծոռներին և նրանց բաժին ընկած աշխարհագրական տարածքներին, ամենևին չի հիշատակում նրանցից որոշներին, հատկապես Շարային, Գառնիկին, Սիսակին, Յուլակին և ուրիշներին: Մանրամասնորեն խոսում է սակայն Հայկի հոռու և Մանավազ որդիների, վերջինիս որդու՝ Բազի և նրանց բաժին հասած գավառների ու նահանգների մասին: Շատ չմանրամասնելով՝ նշենք միայն, որ Վանանդեցին պոեմում պարզապես կրկնում է հորենացուն՝ մեկ անգամ ևս հավաստելով, որ Մանավազը ժառանգել է Հարթ նահանգը, հոռոխոռունիները Հայկի հոռու որդու շառավիղներն են, Բզնուկյաց ծովը նմանօրինակ անվանում է ստացել ի պատիվ Հայկի թոռ Բազի և այլն:

Արամին նվիրված հատվածը պոեմում ամենաթիչ ընգգրկումն ունի: Դա չի խոչընդոտում սակայն նկատելու Հովհաննես Վանանդեցու հիացմունքը պատմական այդ անձնավորության նկատմամբ ևս:

Մեր երկրորդ անվանադիր Էպոնիմ նախնու՝ Արամի մասին պոեմում առաջին հերթին նշվում է, որ նա ընդարձակել է հայրենիքի սահմանները՝ բազում ճակատամարտեր շահելով: Այնուհետև անդրադարձ է կատարվում Արամի և Կյուբար Մադեսի միջև տեղի ունեցած պատերազմին (վերջինիս պատմահայր հորենացին բնորոշում է որպես «այր հպարտ և պատերազմասեր»⁵³⁰), ապա նաև՝ Արամի և Տիտանյան Պայապիս Քառայանի միջև ծագած հակամարտությանը:

Մահվան մահճում, Արամը իրեն հետևորդ հռչակելով որդուն՝ Արային, փորձում է վերջինիս օգտակար լինել իր խորհուրդներով.

*Գործ՝ որ արդ քեզ յանձըն լինի իշխանական,
Գիտեա՛, քի տուրք է երկնաւոր առատութեան:*

Մի՛ տիրեսցեն ի թո վերայ կիրք անձնական.

Չապգին բարին մի՛ փոխարկեր ընդ մասնական (Էջ 82):

Արամի մահվան կապակցությամբ ևս սուգ է տիրում ողջ երկրում, «անդ կոծ սաստիկ յեղերականս սրգազգեստեալ», «յարտասուաց հեղս գետահետեալ»:

Արային վերաբերող հատվածում շեշտը առավելապես դրված է Արայի ու Շամիրամի հակամարտության վրա: Բանաստեղծը ստեղծագործության մեջ Շամիրամին բնութագրում է «զհճաող գազան», «անդունդ վավաշման», «լիրք շողոմաբան» արտահայտություններով, այսինքն՝ պոեմում Շամիրամը ներկայացված է այնպիսին, ինչպիսին և հայտնի է առասպելից ու ժողովրդական զրույցներից: Շամիրամը, որպես վավաշտության տիպար, պոեմում ևս իր մարմնական ցանկություններին հագուրդ տալու համար պատրաստ է ոչնչի առաջ կանգ չառնելու: Երբ նրա ուղարկած պատգամավորները արդեն երկրորդ անգամ մերժման լուր են բերում (Արան անդրդվելի էր), դիցուհու ողջ ներաշխարհը տակնուվրա է լինում՝ ցնցվելով երկու հակադիր զգացումներից՝ սիրուց ու բարկությունից.

⁵³⁰ Տե՛ս **Սովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 54:

*Մեր և բարկությունն ի կրոնի յարեան,
Մին վառէր ըզսիրտն ի գորով խանդան,
Իսկ միւսն ի վրէժ ընդ իւր անարգան* (Էջ 103):

Նկատելի է, որ Հովհաննես Վանանդեցին տեղյակ է եղել Շամիրամի մասին լեգենդներին, նաև այն մասին, որ վերջինս ասորական դիցուհի Դերկետոյի դուստրն է:

*Ծնունդն աս վեհից մարդկային բնութեան,
Արիւն Դերկետայ դից մեր նախնական* (Էջ 93):

Շամիրամին կերպարային առումով հակադրվում է Նուարդը: Պոեմում կերպարների այդ ներքին հակադրությունը չի վրիպում ընթերցողի աչքից: Խորենացու երկում վերջինս հիշատակվում է Արայի մահից հետո միայն, մինչդեռ Վանանդեցու պոեմի՝ Արային նվիրված հատվածում նրա կերպարը ուրվագծվում է կարմիր թելի պես: Հատկանշական է սակայն, որ Նուարդի կերպարը պոեմում կրավորական դեր ունի: Նա հանդես չի գալիս որպես գործող անձ, այլ Արայի վերաբերմունքի մեջ է արտահայտվում:

Պատերազմն անխուսափելի էր, իսկ Արայի կորուստը՝ հիրավի մեծ ցավ, «բոթ գուժեր անդէն Արային մահուան», և այդ ցավը առկա է պոեմում, «ողբայ Հայաստան գԱրայն իւր չըթնաղ պատկեր լուսակիր»: Ողջ երկրի ողբին միախառնված է Նուարդի կոծը, «ողբասցէ՛ Նուարդ դըշխոյն վատաբաղդ ողբ յաւերժական»:

Արայի մահը սգում էր նաև Շամիրամը.

Լընոյր Շամիրամ ոգւով դառնութեան.

Գոչէր կառանչէր ՚ի սուգ անդարման (Էջ 105):

Դերկետոյի դուստրը փորձում է Արային հարալեզների միջոցով վերակենդանացնել, սակայն ապարդյուն:

Հարկ է նշել, որ Մովսես Խորենացին, որպես քրիստոնյա պատմիչ, չէր կարող հավատ ընծայել հարալեզների շնորհիվ Արայի վերակենդանանալու առասպելին: Նույնը նաև կարող ենք ասել Վանանդեցու պարագայում. չէ՞ որ նա ևս, իբրև հոգևորական, որպես ճշմարտություն չէր ընդունի մի բան, որը կհակասեր քրիստոնեական գաղափարաբանությանը: Եվ ահա.

Չի ո՛չ Յարալեպ, ո՛չ դիւթ ինչ պօրեալ,

Ի կորանս ըզճակն ածեն կաթոտեալ (Էջ 107):

Արայի մահից հետո պոեմում կռիվը նոր թափ է ստանում դյուցազնի որդու՝ Կարդոսի գլխավորությամբ: Ստեղծագործության մեջ խոսվում է միայն Արայի Կարդոս որդու մասին: Արայան Արայի մասին պոեմում չի հիշատակվում, կամ թերևս նա նույնացված է Կարդոսի կերպարի հետ: Պատմահոր թողած այս տեղեկության մասին պոեմում ոչ մի հիշատակություն չկա. «Այլ անդէն իսկ ի կենդանութեան իւրում Շամիրամ զծնեալն ի Նուարդայ ի սիրելի կնոջէն Արայի, որ էր երկոտասան ամաց մնացեալ ի մահուանն Արայի, վասն առաջին իւրոց խանդաղատանացն որ առ Արայն գեղեցիկ կոչէ զանուն նորա Արայ և կարգէ զնա ի վերակացութիւն աշխարհիս, մտերմութեամբ հաւատացեալ ի նա. զորմէ և մեռանել ասեն ընդ Շամիրամայ ի պատերազմին»⁵³¹:

Ստեղծագործության վերջին գլուխը վերնագրված է «Յորդոր նմանիլ նախնեաց», որի խորագիրը հենց հուշում է բովանդակության ընդհանուր բնութագիրը: Սա մի ազդեցիկ հատված է, որում երևան է գալիս մանկավարժ ու քահանա Հովհաննես Վանանդեցին, որի կարևորագույն նպատակն է հայրենասիրական ու քրիստոնեական ոգով կրթել, դաստիարակել նոր սերնդին: Այս հատվածը իցե թե ստեղծագործության ամենահաջողված գլուխն է, քանի որ հենց այստեղ է հեղինակը ամփոփում բուն ասելիքը:

Անգեն աչքով էլ նկատելի է, որ երկը ամբողջովին ողողված է քրիստոնեական շնչով, չնայած ըստ եուրեան նրանում ներկայացված են հեթանոսական շրջանի դյուցազունները: Հեղինակը անդրադառնում է Քրիստոսի Թադեոս և Բարդուղիմեոս

⁵³¹ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 74-76:

առաքյալներին, «որք ի հունձ Փըրկչին յերկրի մեր կարգեալ նախարդին մըշակ», հին բնորոշմամբ՝ «առաջին լուսավորչացն մերոց», հայ եկեղեցու Արիստակես, Վրթանես, Հունիկ, Ներսես, Սահակ երախտավորներին «ես այլ շառաւիղք սըրբոյն Գրիգորի բարեաց բերունակ»: Ահա բանաստեղծը խոսք է բացում Սուրբ երրորդության մասին.

*Սէր Հայր, սէր Որդի, սէր և Սուրբ Հոգի՝ սէր ըզմայլական,
Սուրբ երրորդութիւն սէր և սիրելի գեր քան պատենայն* (Էջ 130):

Խոսելով գրերի գյուտի մասին՝ հեղինակը շեշտում է հայոց մեջ կրթության պակասությունը՝ այդ կերպ կարևորելով ուսման ու գիտելիքի դերը և կոչ անելով ջանք չխնայել հնարավորինս լրացնելու ու կատարելագործելու ուսումը: Իհարկե, այս գործընթացում Վանանդեցին կարևորագույն դեր է վերապահում ծնողներին՝ հորդորելով անապաման ուսման տալ իրենց զավակներին.

*Ծընո՛ղք մարմնատուրք, թէև չէք ծանօթ գըրածան շնորհին,
Մի՛ անգըրագէտ թողուք ըզմանկունսն ի թարմ հասակին* (Էջ 132):

Ուսման նկատմամբ ձգտումը պետք է երեխաների մեջ ներարկել դեռ վաղ տարիքից:

Պոեմում այս կոչը հնչում է բազմիցս.

*Ըդդեգեր կայցիր ի դրունս ուսման,
Հոգւոյդ ճեմարան գըրոցն եղիցի ծաղկեալ բուրաստան* (Էջ 146):

Հովհաննես Վանանդեցին, կարևորելով օտար լեզուների իմացությունը, այնուամենայնիվ, առաջնայինը համարում է մայրենի լեզուն.

*Չանա՛ նախագոյն յուսումըն լեզուի քո հայրենական,
Ապա յայլ լեզուաց վարժումն գայցես ըստ վայելութեան* (Էջ 134):

Հովհ. Վանանդեցին այս երկի միջոցով նաև փորձել է խրատներ հասցեագրել մանուկներին: Նա կարևորում է նաև արհեստների դերը:

Հեղինակը այս դիդակտիկական հատվածում հիշատակում է հայ երևելի գործիչներին՝ վերջիններիս մասին խոսելով բացարձակ ակնածանքով: «Տեսարանը», անշուշտ, ճիշտ չէ դիդակտիկական պոեմ անվանել, սակայն պոեմն ունի դիդակտիկ տարրեր: Դիդակտիկ պոեզիան հայկական կլասիցիզմի շրջանակներում գտավ իր արտահայտությունները (Էդվարդ Հյուրմյուզյանի «Առձեռն բանաստեղծութիւնը», Մկրտիչ Ավգերյանի «Դիմառնութիւն չորից վերջնոցը», Խրիմյան Հայրիկի հրավիրակները և այլն): «Դիդակտիկ պոեզիան հայկական կլասիցիզմի տեսության մեջ կոչվում էր «վարդապետական քերթողություն», և ըստ ամենայնի հիմնավորվում էին նրա իրավունքները, բնութագրվում սահմաններն ու նպատակները»⁵³²:

Հայ ազգի արժանի հետնորդը պետք է կառչած մնա իր արմատներին: Ահա Վանանդեցու պատգամը.

*Չանա՛կ ես քաջաց, մի՛ շիջցի ի քեզ ոգին նախահարց,
Չարմ ես վեհականց յարեա՛ց ի նոսա յօրանալ ի վարձ* (Էջ 145):

Հեղինակը իր սիրելի ընթերցողներին հորդորում է նաև ցանկացած գործի մեջ լինել արդար ու ազնիվ:

Ի տարբերություն «Արփիական Հայաստանի» պոեմի՝ այս ստեղծագործության մեջ հեղինակը այուժետային ակնհայտ փոփոխությունների չի դիմել, միայն հավելումներ է կատարել, որոնք հիմնականում մահվան մահճում գտնվող ոյուցազունների վերջին խոսքերն են ամփոփում, սգո տեսարաններ են, և կամ հերոսների պատասխանն են թշնամու պատգամաբերներին: Այուժետային տեղաշարժերը, ըստ Էության, բացակայում են:

532 **Զորաշյան Է.**, «Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1968 թ., համար 1 (40), էջ 54:
230

Այս ստեղծագործությունը ևս հարուստ է Վանանդեցու ոճին այնքան հատուկ գեղարվեստական պատկերավորման միջոցներով, հատկապես չափազանցություններով: Ահա հայ ժողովրդի նախնի Արամի և Նյուբարի կռվի տեսարանը.

*Երկու լերինք անդ ընդ միմեանս բաղխեն ուժգին,
Հիմնակործանս դողորոշելով ըստինս երկրին,
ժայռք անմատոյցք մանրր փռշրեալ՝ ի հարուածին,
Ըզվայրն պայն լընուն բեկորք ապառաժին (Էջ 73):*

Ահա չափազանցության մի ցայտուն օրինակ ևս.

*Դէպք դիականց խիտ խիտ անկեալ անդր ի գետին,
Մայթ մարդկեղէն գործեն յետեղ ասպարիպին (Էջ 78):*

Նաև համեմատություններ ենք գտնում կրկին Արամին նվիրված հատվածում Նյուբարի հոգեվիճակը պատկերելիս.

Որպէս ճընճողուկ ի բապէէ ընդ ծերպ վիմին.

Սառչի արին՝ լըբանի սիրտն առ երկիւղին (Էջ 74):

Չգացմունքային տարրը միշտ առկա է Վանանդեցու երկերում: Այստեղ ևս շեշտը դրված է զգացմունքայնության վրա:

Նկատելի է, որ այս ստեղծագործությունը հեղինակային նորակազմությունների առկայությամբ բավական զիջում է «Արփիական Հայաստանի» պոեմին:

Ձեռագրերի ստեղծման գործում կարևոր դերակատարություն ունեին պատվիրատու-ստացողները: Հովհաննես Վանանդեցու գրչին պատկանող ձեռագրերը արժևորվում են նաև իրենց ստացողներով: Նրա գրած և ընթրօրինակած ձեռագրերի ստացողներ են եղել իր ժամանակի նշանավոր դեմքերը: «Տեսարանի» ստացողն է Գրիգոր Կոստանոյանը⁵³³: Նա Հովհ. Վանանդեցու աշակերտն է եղել և Չմյուռնիայի հայ գաղթօջախի նշանավոր դեմքերից մեկը: Նրա կինը Հռիփսիմե Կոստանոյանն էր: Հենց վերջինիս ջանքերով է վերականգնվել Չմյուռնիայի 1896 թ. օրիորդաց այրված վարժարանը՝ նրա անունով վերանվանվելով Հռիփսիմյան: Նրանց որդին Գալուստ Կոստանոյանն էր, որ Չմյուռնիայում հայտնի հասարակական գործիչ ու հրապարակախոս էր:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ կարող ենք եզրակացնել, որ Հովհաննես Միրզայան Վանանդեցին կլասիցիզմի հետևողությամբ իր իդեալը փնտրում էր Հին Հայաստանի անցյալի հերոսների մեջ: Ազգի վերաշինության գլխավոր ճանապարհը, ըստ հեղինակի, նախնիների ուղիով ընթանալն է, և թերևս դա է պատճառը, որ նրա հիմնական ստեղծագործություններում վերհանված են մեր նախնիների ֆիզիկական ու հոգևոր առավելությունները:

Երկի առաջնային ու հիմնական նպատակն այն է եղել, որ երիտասարդները ծանոթ լինեն ժողովրդի պատմությանը, ճանաչեն իրենց նախնիներին և իմանալով նրանց կատարած գործերի մասին՝ բարի օրինակ վերցնեն և հպարտ լինեն նրանց ժառանգները լինելու համար:

⁵³³ Տե՛ս Ասատրյան Ա., «Հովհան Միրզայան Վանանդեցու ձեռագրական ժառանգությունը», «Էջվածին» հանդես, 2018 թ., փետրվար, էջ 113:

**FICTIONAL ILLUSTRATION OF HISTORICAL EVENTS IN
«HAYK, ARAM AND ARA'S SCENE» POEM BY
HOVHANNES MIRZAYAN VANANDETSI**

SIRANUSH PARSADANYAN

*Institute of literature after M. Abeghian of NAS of RA, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The aim of the article is to compare the additions made by the author in the poem “Hayk's, Aram's and Ara's scene” of Hovhannes Vanandetsi and to show the artistic elaboration of the historical material.

Our task is to show, in addition by studying the historical sources of the poem, that unlike the works of the old period, the psychological drama of the figures is important, according to the features characteristic of the literature of the new period. Reference was also made to the fact that Vanandetsi made the events of the pagan period the subject of the poem, nevertheless, as a Christian author, he constantly emphasizes the fact that the ancestors of the Armenian people were the followers of monotheism.

The article intertwines literary and textual work. Analytical-comparative methods were mostly used during the research. A structural analysis was also performed, referring to each section of the book separately.

Eventually, we come to the conclusion that according to the author the main way to rebuild a nation is getting know the nation, and therefore to follow in the footsteps of the ancestors. That's why the work reveals the physical and spiritual advantages of historical figures.

Key words: *Hovhannes Vanandetsi, scene, poem, fictional, hero, historian, Movses Khorenatsi, historical events, poem.*

**ХУДОЖЕСТВЕННОЕ ОЛИЦЕТВОРЕНИЕ ИСТОРИЧЕСКИХ СОБЫТИЙ
В ПОЭМЕ «ЗНАМЕНИТЫЕ ДЕЯНИЯ АЙКА, АРАМА И АРА»
ОВАННЕСА МИРЗЯНА ВАНАНДЕЦИ**

СИРАНУШ ПАРСАДАНЯН

*аспирант Института литературы имени М. Абегамяна РА НАН,
г. Ереван, Республика Армения*

Целью статьи является установить, какие дополнения внес автор, Ованнес Ванандеци, в поэму «Знаменитые деяния Айка, Арама и Ара» и сравнить их с оригинальным текстом, а также показать какую художественную обработку претерпел исторический материал.

Нашей задачей, помимо изучения исторических первоисточников поэмы, является показать что, в отличие от произведений литературы древнего периода, в поэме важное место отводится изображению душевной драмы персонажей, что характерно для литературы нового времени. В статье нашел отражение также тот факт, что, несмотря на то, что темой поэмы Ванандеци являются события эпохи язычества, автор, будучи христианином, неоднократно подчеркивает, что предки армянского народа являлись приверженцами монотеистической веры.

В ходе исследования применялись преимущественно аналитико-сравнительные методы. Был также проведен структурный анализ со ссылкой на каждый по-отдельности раздел книги.

Подводя итоги исследования, мы приходим к выводу о том, что главным условием возрождения нации, по мнению автора, является ее самопознание, а значит, и пример предков; именно поэтому в работе раскрываются физическая красота и нравственные достоинства исторических персонажей.

Ключевые слова: *Ованнес Ванандеци, поэма, художественное, герой, историограф, Мовсес Хоренаци, исторические события, поэтический.*



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՎՄԱՆ՝
ՈՐՐԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ
(1960-ԱՎԱՆ ԹԹ. ԼԻՔԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)***

ՀՏԴ 94(479.25):070:159.9

ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակից,
Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտ,
բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gayaneavakyan@gmail.com*

Հոդվածի նպատակն է հիմնավորել, որ Լիբանանի հայ մամուլում Հայոց ցեղասպանության տրավմայի միջոցով ձևակերպվում է Սփյուռքում ապրող հայի ինքնությունը, զույգ տալ, որ հակընդդեմ զաղափարախոսությամբ թերթերն ունեն ընդհանուր դիրքորոշում՝ ցեղասպանությունը և տրավմայի հաղթահարումը հայությանը միավորող գործոն են: Մեր խնդիրն է պարզել ցեղասպանության տրավման, որպես ազգային ինքնության հիմնախնդիր, ինչպիսի փոխակերպում է անցնում 1960-ականների մամուլի էջերում՝ զոհի հոգեբանական կաղապարի թոթափումից պահանջատիրության ձևակերպում: Փորձել ենք հասկանալ՝ ինչ շեշտադրմամբ են թերթերը դիտարկում ոճրագործության մասին անհատական ու կոլեկտիվ հիշողությունը հայկական ինքնության համատեքստում: Վերհանել ենք հիմնախնդրի նկատմամբ թերթերից ամեն մեկի դիրքորոշումը, ինչպես նաև պահանջատիրության ձևակերպման ձևաչափային տարբերությունները:

Հետապոստության իրականացման ընթացքում կիրառվել են լրագրության ուսումնասիրության արդի մեթոդներ, համեմատական վերլուծություն, պատմաբնական, համադրման մեթոդներ, բովանդակային վերլուծություն, ընդհանրացում:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ 1960-ական թթ.-ի Լիբանանի հայ մամուլը, անդրադառնալով Հայոց ցեղասպանության հարուցած տրավմային, բանաձևում է Սփյուռքի հայության ինքնությունը, նաև ուրվագծում զոհի հոգեբանությունը պահանջատիրոջ կեցվածքով հաղթահարելու ուղին: Հիմնավորել ենք, որ ընդհանուր նպատակի իրագործումը ամեն թերթ տարբեր ձևաչափով ու ժամանակային ցուցիչով է պատկերացնում: Թերթերի առաջադրած պահանջատիրության եղանակներում անմիաբանություն է դրսևորվում:

Հիմնաբառեր՝ Հայոց ցեղասպանություն, տրավմա, հիշողություն, պահանջատիրություն, զոհի հոգեբանություն, ինքնություն, Սփյուռք, մամուլ, Լիբանան:

** Հոդվածը ներկայացվել է 20.07.2020թ., գրախոսվել՝ 28.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:*

Ներածություն

Հայոց ցեղասպանության թեման 1960-ական թվականներին Լիբանանի հայ մամուլում արծածվում է որպես հավաքական հիշողություն պատմական իրադարձության մասին: Մյուս կողմից ցեղասպանության տրավման այն առանցքն է կամ հիմնաքարերից է, որի շուրջ փաստարկվում է աշխարհի տարբեր անկյուններում հայտնված հայի ինքնությունը: Թերթերում ցեղասպանության պատումը վկայում է, որ այդ ոճրագործությունն ազգային ինքնության հիմնախնդիր է: Ըստ էության, Հայոց ցեղասպանության տրավման, անկախ իր բացասական համատեքստից, թերթերի էջերում դառնում է ինքնության ձևակերպման բաղադրիչ Սփյուռքում ապրող հայի համար:

Ցեղասպանության տրավման որպես հայկական ինքնության հիմնախնդիր դիտարկելիս թերթերը հատկապես ի՞նչն են շեշտադրում, արդյոք երևույթի ընկալումը չի՞ փոխվել տասնամյակների ծիրում, և ինքնության այդ համընդհանուր հիմնախնդրի նկատմամբ ի՞նչ կեցվածք է առաջադրում մամուլը: Այս հարցադրումների օգնությամբ կարելի է տեսնել՝ որքանով էին 1960-ականներին թերթերի հրապարակումները նպաստում ցեղասպանության զոհի հոգեվիճակից պահանջատիրոջ կարգավիճակի անցնելու կեցվածքի արմատավորմանը:

Նախքան այս հարցերին անդրադառնալը պետք է նշել, որ «տրավման» ընդունված ձևակերպում է հիշողության հարցերին նվիրված ուսումնասիրություններում, միաժամանակ խնդրահարույց հասկացություն է. *«Տրավման պատասխան է ոչ այնքան իրադարձությանը, որքան իրադարձությանը տրվող իմաստին»*⁵³⁴:

Առհասարակ, հետտրավմատիկ սթրեսին սերունդների արձագանքը տարբեր է լինում. տարբերակվում են խուսափելու և ճնշման, վրդովմունքի և զայրույթի, վրեժխնդրության և հատուցման, հաշտեցման և ներման, հրաժարման և հուսահատության, նաև բացատրման և ռացիոնալացման ձևեր⁵³⁵: Արձագանքի տարատեսակությունները (լռություն, խուսափում, վրեժխնդրություն, ռացիոնալ պահանջատիրություն) կարելի է տեսնել նաև Հայոց ցեղասպանությունը վերապրածների և հաջորդող սերունդների պարագայում⁵³⁶:

Հայոց ցեղասպանության մասին հիշողությունն ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ բնույթ ունի: 1960-ականներին Լիբանանի հայ համայնքի ավագ սերնդի համար դա սեփական փորձով ձեռք բերված հիշողություն է, երիտասարդ սերնդի համար՝ կոլեկտիվ հիշողություն, որը ձևավորվել է ավագների պատմածի, մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, գրականության շնորհիվ:

Հետազոտողի դիպուկ բնութագրմամբ՝ կոլեկտիվ հիշողությունը հասարակության բազմաթիվ անդամների անձնական հիշողությունների զուտ հանրագումարը չէ. *«Այդպիսով այն ներառում է բազմաթիվ տարբեր անձնական անցյալների ինտեգրումը մեկ ընդհանրական անցյալի մեջ, որը մի որոշակի հանրույթի անդամներ կիսում են կոլեկտիվ*

⁵³⁴ **Մարության Հ.**, Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, 2006թ., էջ 74:

⁵³⁵ **Տե՛ս Miller E. Donald; Lorna Touryan Miller**, Survivors: An Oral History of the Armenian Genocide, The USA, University of California Press, 1999, pp.158-160.

⁵³⁶ Ցեղասպանությանը հայերի արձագանքի և դրդապատճառների մասին տե՛ս **Սահակյան Հ.**, Հայոց ցեղասպանության հիշողությունը սոցիալ-պատմական առանցքային իրադարձությունների համատեքստում, «Ցեղասպանությունը հասարակագիտական վերլուծությունների կիզակետում», հոդվածների ժողովածու, խմբ. Մկրտիչյան Ա., Երևան, ԵՊՀ հրատ., 2015թ. էջ 41-47, **Մելքոնյան Ա.**, Հայոց ցեղասպանությունը վերապրածների տրավմայի նկարագրման փորձ, Արևելագիտության հարցեր, VIII, խմբ. Գ. Մելիքյան, Երևան, 10.12.2014, էջ 237-241, **Գարագաշեան Մ.**, Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը, Հոգեբանական վերլուծություն, Երևան, 2006թ., էջ 52-53, 58-70:

ձևով»: Ընդ որում, «կոլեկտիվ հիշողությունն ակտիվ անցյալն է, որը ձևավորում է մեր ինքնությունները»⁵³⁷: Ուստի պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության մասին հիշողությունը դիտարկում ենք որպես հայկական ինքնության բաղադրիչ:

1960-ականների լիբանանահայ մամուլի հրապարակումները վկայում են, որ ցեղասպանության մասին հիշողությունը տրավմատիկ բնույթ ունի հայերի համար: Ուսումնասիրվող «Ազգակ», «Արարատ», «Չարթոնք» ու «Նայիրի» պարբերականները, մշտապես արծարծելով ոճրագործության թեման, հայության կոլեկտիվ հիշողության փոխանցողներն են դարձել:

Մամուլն արտացոլել է 1960-ականների իրականությունը, երբ հիմնախնդրի ձևակերպումը զգայական, ողբերգականից փոխվել է առավելապես դեպի պահանջատիրական, գործնական քայլերի կամ առնվազն դրանց պահանջի ձևակերպման:

Հրապարակումներն ընթերցելիս կարելի է նկատել, որ որոշակիորեն փոխվել է անցյալի հանդեպ մոտեցումը: Չոհի հոգեբանության մեջ մնալու փոխարեն հայ համայնքներում անցում է կատարվել դեպի պահանջատիրություն: Աշխարհի ժողովուրդներին ոճրագործության մասին հայտնելով՝ նրանց ապրումնակցումը զգալու հոգեբանական պահանջի կողքին գործնական պահանջատիրություն է առաջացել՝ միջազգային ճանաչում, դատապարտում, հատուցում (հողերի, ունեցվածքի վերադարձ): Լիբանանի հայ մամուլը շրջանառել է հղացքը, որ համայնքի անդամների ինքնության ակունքներում ցեղասպանության տրավման է, բայց արդեն պահանջատիրության տեսլականով: Ըստ եության, պահանջատիրությունը դառնում է շարժիչ ուժ Սփյուռքում ապրող հայի համար, ինքնությանը հավատարիմ ապրելու ուրվագծված ուղի: Ինչպես բնորոշում է Կ. Դալլաթյանը, «Հայ դատի հետապնդման գործը բազմաթիվ մարդկանց, որոնք կարծես վաղուց ուժացել էին, վերադարձրեց իրենց ազգային արմատներին, դարձավ Սփյուռքի ազգային գոյապահպանության և ազգային կեցության խթանիչ ու երաշխիք՝ միաժամանակ»⁵³⁸:

Այս փոփոխությունը նախադրյալներ է ունեցել: Լռությունը խզվել է դեռ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Հայկական հարցի լուծման պահանջով ակտիվ գործունեություն են ծավալել Սփյուռքի տարբեր համայնքներում ստեղծված ազգային խորհուրդները⁵³⁹: Նպաստել է նաև «ցեղասպանություն» հասկացության շրջանառումը Ռաֆայել Լեմկինի կողմից և 1948թ.-ի դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունումը⁵⁴⁰: Ավելի ուշ՝ 1968թ.-ի Նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվել է նաև «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» կոնվենցիան⁵⁴¹: Իսկ Կիպրոսի հարցում Թուրքիայի ծավալած

⁵³⁷ Սարուբյան Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ, Երևան, 2006թ., էջ 19, էջ 24:

⁵³⁸ Դալլաթյան Կ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 2004թ., էջ 150-151:

⁵³⁹ Տե՛ս Մելքոնյան Զ., Սփյուռքահայությունը և հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», № 2, 2010, Երևան, էջ 41-51:

⁵⁴⁰ Տե՛ս Պողոսյան Ն., Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանության թեման, 08.11.2017, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամի պաշտոնական կայք. <http://www.genocide-museum.am/arm/08.11.2017-Lemkin.php> 31.05.2020թ.:

⁵⁴¹ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75845> 07 Ոճ 2020 թ. հունիսի 7-ին: Սարգսյան Ն., Ցեղասպանությունը և միջազգային իրավունքը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», №10-11, էջ 59:

գործընթացների հետևանքով լարվել են թուրք-ամերիկյան հարաբերությունները⁵⁴²: Մեծ ազդակ են դարձել Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի ժամանակ հողերի վերադարձի պահանջով երևանյան ցույցերը, այնուհետև Խորհրդային Հայաստանում զոհերի հիշատակին, ինչպես նաև Սարդարապատի հերոսամարտին նվիրված հուշահամալիրների կառուցումը:

2ոհից պահանջատեր կարգավիճակի փոփոխության լուսաբանումը Լիբանանի հայ մամուլում

1960-ական թվականներին թերթերում գերակշռում է Հայոց ցեղասպանության թեմային պահանջատիրական ոգով անդրադարձը: Ընդ որում, հոդվածագիրները հստակ գործողություններ են առաջարկում շեշտը դնելով ՄԱԿ-ի բանաձևով առաջնորդվելու, միջազգային հանրությանը ներգրավելու, օտարալեզու հրապարակումներով թրթրական քարոզչությանը հակադրելու, կողոպտված ունեցվածքը հետ պահանջելու նախաձեռնությունների վրա և զուգակցելով Իսրայելին Գերմանիայի հատուցման օրինակով⁵⁴³:

Ընդհանուր այդ փոփոխությունը, այդուհանդերձ, ունի իր բազմերանգությունը: Պահանջատիրությունը թերթերից յուրաքանչյուրը յուրովի է պատկերացնում և ժամանակային տարբեր ցուցիչներով: Կուսակցական մամուլն առաջնորդվում է՝ գաղափարախոսական կողմնորոշիչներից ելնելով: Այսինքն՝ պահանջի ձևաչափն ու տեմպը տարբեր են:

Մասնավորապես ցեղասպանության խնդրի շուրջ փոխակերպման համատեքստում կարևոր գործոն է հողը: Եթե «Ազդակ»-ը պահանջը ձևակերպում է այսպես՝ «Հողերի վերադարձ իրական տիրոջը՝ հային, և ազատ, անկախ, միացյալ Հայաստանի ձևավորում», ապա «Արարատ»-ը, «Չարթոնք»-ը, մասամբ նաև «Նայիրի»-ին՝ «Հողերի միացում Խորհրդային Հայաստանին»:

Այսպիսով՝ թեև Հայոց ցեղասպանության հարուցած տրավմայի նկատմամբ թերթերի և նրանց կուսակցությունների ու համակիրների դիրքորոշումները տարբեր են, սակայն ինքնության մեկնաբանման ելակետը նույնն է. *«Ցեղասպանությունից ապատված հայ ենք, ցեղասպանությունը կերտում է մեր ինքնությունը»*: Տարբեր են ընդհանուր նպատակին համեմելու պատկերացումները. *«Մեր ապավենը Խորհրդային Հայաստանն է- Խորհրդային Հայաստանը չէ»*:

Պահանջատիրությունը «Չարթոնք»-ում

«Չարթոնք»-ի ուղեգծում Հայոց ցեղասպանության պահանջատիրության ճիգերի մեջ կարևոր գործոն է վերագրվում Խորհրդային Միությանը: Թերթը հարցը դիտարկում է աշխարհաբաղաբալական իրողությունների համատեքստում՝ ԱՄՆ, Թուրքիա, Չինաստան, Ֆրանսիա և այլ երկրների հետ ԽՍՀՄ հարաբերություններն ու շահագրգռությունները,

⁵⁴² Տե՛ս **Մելքոնյան Զ.**, Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1960-ական թթ. երկրորդ կեսին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ». XXXI, խմբ. խորհուրդ՝ Ռ. Ա. Սաֆրաստյան և ուրիշ., Երևան, «Գիտություն» հրատ., 2018, էջ 108-113:

⁵⁴³ Տե՛ս **Անդրեասեան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, Չարթոնք, Բեյրութ, 1967թ., սեպտեմբերի 8, 9, 10, 12, թիվ 287, 288, 289 և 290, «Ցեղասպանութեան հարցը», Ազդակ, Բեյրութ, 1967թ., հունվարի 25, թիվ 273, **Թաշեան Բ.**, Վեցերորդ յօդուածը, Ազդակ, Բեյրութ, 1968թ., փետրվարի 15, թիվ 290, **Խաթանասեան Ե.**, Ի՞նչեր կրնանք ընել, Ազդակ, Բեյրութ, 1968թ., մարտի 20, թիվ 14, «Այցելութեան մը առթիւ», Արարատ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 13, թիվ 80, **Ճառուկեան Ա.**, Յարգալիր խօսք ի պատասխան հայ կաթողիկէ պատրիարք ամենապատիւ Ի. Պաթանեանի ճառին ապրիլ 24ի առիթով, Նայիրի, Բեյրութ, 1965թ., մայիսի 16, թիվ 1:

ԽՍՀՄ-ից Թուրքիայի վախճ, ինչպես նաև փոքր ազգերի և մեծ տերությունների ուղեգծերի ներդաշնակությունը հաշվի առնելով⁵⁴⁴:

«Չարթոնք»-ի վերլուծականներում կարելի է նկատել, որ ԽՍՀՄ գործոնի կարևորումը ոչ թե անվերապահ հավատի դրսևորում է, այլ որոշ իրողությունների տրամաբանական համադրում⁵⁴⁵:

Ընդ որում, «Չարթոնք»-ում ցեղասպանության տրավմայի հաղթահարումը պահանջատիրության միջոցով հստակ ուղեգիծ ունի՝ միայն արևմտահայ հողային իրավունքների հատուցում և մեկ թիրախ՝ Թուրքիա⁵⁴⁶: Այսպես թերթը հակադրվում է «Ազդակ»-ի և ՀՅԴ ուղեգծին, որի հետ շարունակական բանավեճի մեջ է:

«Չարթոնք»-ը հակադրվում է ՀՅԴ-ի՝ «միացյալ, անկախ Հայաստանի» երազին՝ ընկալելով իբրև Հայաստանի անջատում ԽՍՀՄ-ից և միացում Թուրքիայից «*նվեր առնված*» հայկական մարզերին⁵⁴⁷:

«Չարթոնք»-ում նկատելի է ցեղասպանության տրավմայի հաղթահարում նաև պետականություն ունեցող հայրենիքի մի մասի հզորացմամբ և այնտեղ հայության՝ գործելու և առաջադիմելու հնարավորությամբ: Թերթում ինքնության կարևոր բաղկացուցիչ կազմող հարցը դիտարկելիս լացն ու ողբը փոխարինվում են ապահով ներկայով, լուսավոր ապագայի տեսիլքով և դրան հասնելու ջանասիրությամբ. «*Ահա թե ինչո՞ւ Ապրիլեան Եղեռնի մեր սուգին կը միախառնուի ու կը տիրապետե նաեւ Մահը յաղթահարած եւ Կեանքը վերջնականօրէն նուաճած ըլլալու հպարտութիւնը*»⁵⁴⁸:

Ըստ էության, «Չարթոնք»-ում հողի պատկերացումը տեղավորվում էր տվյալ ժամանակում Խորհրդային Հայաստանի պետական տարածքում, իսկ հողի հանդեպ իրավունքը՝ երկրի իշխանության ձեռքերում:

Պահանջատիրությունը «Արարատ»-ում

«Արարատ»-ում ցեղասպանության տրավմայի փոխակերպումը փոխկապակցվում է հզոր ԽՍՀՄ-ի մաս կազմելու և մեծ տերության օգնությամբ, ինչպես նաև ժողովուրդների բարեկամությամբ հարցը լուծելու գաղափարի հետ: Թերթը զոհի կարգավիճակի հաղթահարումը տեսնում է Խորհրդային Հայաստանի գոյության, զարգացման, պետական քաղաքականությամբ առաջնորդվելու, ապագա ամբողջական Հայաստանը ներկա հանրապետության հիմքով ձևավորելու և Սփյուռքի հայերի հայրենադարձության մեջ⁵⁴⁹: Հայերի մեծ երազի իրագործման գլխավոր արգելք է դիտարկվում «*միջազգային յետադիմութիւնը եւ կայսերապաշտութիւնը*» կամ «*կայսերապաշտ Արեւմուտքը*»⁵⁵⁰: Ավելին՝ Հայ դատի լուծումը կապվում է աշխարհի

⁵⁴⁴ Տե՛ս Անդրեասեան Ա., Հայկական դատին Նոր հանգրուանը, Չարթոնք, Բեյրութ, 1967թ., օգոստոսի 29, սեպտեմբերի 1, 2 և 3, թիվ 278 և 281, 282, 283:

⁵⁴⁵ Թերթում Մոսկվայի դիրքորոշման գնահատականը տե՛ս Անդրեասեան Ա., Հայկական դատին Նոր հանգրուանը, Չարթոնք, Բեյրութ, 1967թ., սեպտեմբերի 2 և 5, թիվ 282 և 284:

⁵⁴⁶ Տե՛ս Անդրեասեան Ա., Հայկական դատին Նոր հանգրուանը, Չարթոնք, Բեյրութ, 1967թ., օգոստոսի 26, թիվ 276:

⁵⁴⁷ Տե՛ս Արմեն Ե., Ակնարկ՝ դեպքերու ոգիին վրայ, Չարթոնք, Բեյրութ, 1967թ., սեպտեմբերի 21, 22, 23, թիվ 298, 299 և 300:

⁵⁴⁸ «Ռամկավար ազատական կուսակցութեան ներկայացուցիչ Մերթ Զ.Սեդրակեանի խօսքը», Չարթոնք, Բեյրութ, 1965թ., ապրիլի 28, թիվ 175:

⁵⁴⁹ Տե՛ս Խմբ., Լաւագոյն հաւատարմութիւնը, Արարատ, Բեյրութ, 1967թ., ապրիլի 22, թիվ 138, Խմբ., ապրիլ 24-ը եւ մեր ժամանակակից ազգային առաջադրանքները, Արարատ, Բեյրութ, 1960թ., ապրիլի 24, թիվ 139:

⁵⁵⁰ Տե՛ս «Ընկ. Յ. Կուժուսիի ելոյթը Ռատիո Արմենիա-յէն», Արարատ, Բեյրութ, 1967թ., ապրիլի 26, թիվ 140, Խմբ., Հնչակեան կուսակցութեան 80ամեակին 80 երիտասարդներ մտան կազմակերպութեան շարքերը, Արարատ, Բեյրութ, 1967թ., մայիսի 27, թիվ 166, Խմբ., Հնչակեան ազգ. քաղաքականութիւնը անշեղ կը մնայ, Արարատ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 12, թիվ 79:

առաջադիմական, խաղաղասիրական ու ընկերավարական ուժերի հաղթանակի հետ⁵⁵¹, այդ թվում՝ Թուրքիայում ընկերային բարեշրջման հետ⁵⁵², ինչը Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության քաղաքական ուղեգծի ու համոզմունքի արտացոլումն է:

Թերթում նկատելի է նաև հեղափոխական պայքարի չմարող ոգի, քանի որ ինքնության մեջ ցեղասպանության տրավման հաղթահարելու «Արարատ»-ի ընտրած ուղին հափշտակված իրավունքների վերականգնման համար պայքարն է: Ընդ որում, այդ պայքարը հայ ժողովրդի իրավունքների վերականգնումից վերաճում է ճնշված այլ ազգերի իրավունքների վերականգնման համար պայքարի՝ մինչև համայնավարության, սոցիալական արդարության վերջնական հաղթանակը: Մտահոգության կենտրոնում են, օրինակ, արաբական երկրների, Յունաստանի, Կիպրոսի, Վիետնամի ժողովուրդները⁵⁵³: Ըստ էության, թերթում հայկական ինքնությանը սոցիալիզմի տարրեր են հաղորդվում:

«Չարթոնք»-ի նման «Արարատ»-ը ևս հակադրվում է «միացյալ, անկախ «Հայաստան» բանաձևին, փոխարենը, որպես ազգային տեսլական, առաջարկում է «միացյալ, ամբողջական և ընկերավարական Հայաստանը⁵⁵⁴»:

Հատկանշական է, որ «Արարատ»-ի էջերում ընդգծվում է պնդումը, որ «Հայկական դատ» ընդհանուր իմաստով գոյություն չունի. կա միայն Արևմտահայ դատ, քանի որ 1920թ.-ին Հայաստանի արևելյան մասի դատը լուծվել է Խորհրդային Հայաստանի կազմավորմամբ⁵⁵⁵:

Պահանջատիրությունը «Ազդակ»-ում

Ցեղասպանության տրավմայի հանդեպ պահանջատիրական կեցվածքն «Ազդակ»-ն արտահայտում է հողային հարցի լուծման և միացյալ, ազատ, անկախ Հայաստանի կերտման սկզբունքով՝ Սևրի դաշնագրի համաձայն: Թերթում հողի պատկերացումը դուրս է գալիս Խորհրդային Հայաստանի՝ այդ ժամանակվա վարչական սահմաններից: Հայկական այդ պետության գոյությամբ պետականության վերականգնման հարցը և Հայ դատը լուծված չի համարում. ազգը պետք է ունենա սեփական անկախ պետականություն, ազատ հայրենիք: Հատկանշական է, որ ցեղասպանության տրավման պահանջատիրությամբ հաղթահարելու «Ազդակ»-ի բանաձևում ընդգծվում են Հայաստանի ազգային ու քաղաքական ազատությունը, անկախությունն ու ինքնիշխանությունը⁵⁵⁶: «Ազդակ»-ն առավելապես առաջ է տանում Հայ դատը ՄԱԿ-ի ատյանում քննարկելու գաղափարը⁵⁵⁷ և բացառում է հողերի

⁵⁵¹ Տե՛ս «Ընկեր ժիրայր Նայիրիի ճառեն հատուած մը», Արարատ, Բեյրութ, 1967թ., մայիսի 5, թիվ 147:

⁵⁵² Տե՛ս **Խմբագրական**, Յնչակեան ազգ. քաղաքականութիւնը անշեղ կը մնայ, Արարատ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 11, թիվ 78:

⁵⁵³ Տե՛ս **Խմբագրական**, Արաբ ժողովուրդին հետ... ոչ թէ խօսքով, այլ գործով ու պայքարով, Արարատ, Բեյրութ, 1967թ., հունիսի 3, թիվ 172, **Խմբագրական**, Մամուլը՝ իր առաքելութեանը բարձրութեան վրայ, Արարատ, Բեյրութ, 1967թ., հուլիսի 18, թիվ 210, «Ընկեր ժիրայր Նայիրիի ճառեն հատուած մը», Արարատ, Բեյրութ, 1967թ., մայիսի 5, թիվ 147:

⁵⁵⁴ Տե՛ս **Խմբագրական**, Յնչակեանութիւնը բացճակատ պատմութեան առջեւ, Արարատ, Բեյրութ, 1967թ., հունիսի 15, թիվ 182, «Յնչակեան կուսակցութեան 80ամեակին 80 երիտասարդներ մտան կազմակերպութեան շարքերը», Արարատ, Բեյրութ, 1967թ., մայիսի 27, թիվ 166:

⁵⁵⁵ Տե՛ս **Ժամկոչեան Յ.**, Տեսակետներ Հայ դատի հետապնդման շուրջ, Արարատ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 18, թիվ 84:

⁵⁵⁶ Տե՛ս **Ատրուշանեան**, Հայութեան պահանջը «ՄԱԿ»-էն եւ մեծ ու փոքր պետութիւններէն, Ազդակ, Բեյրութ, 1968թ., ապրիլի 26, թիվ 44:

⁵⁵⁷ Տե՛ս **Փորթուզայեան Վ.**, Մարդկութեան դէմ ոճիրները անժամանցելի են, «Ազդակ», Բեյրութ, 1965թ., փետրվարի 17, թիվ 293 և ապրիլի 14, թիվ 35, **Հրանտ-Սամուել**, Անընդհատ եւ անվիատ, Ազդակ, Բեյրութ, 1968թ., մայիսի 20, թիվ 63:

միավորումը խորհրդային Հայաստանին: Ի տարբերություն մյուս թերթերի՝ ԽՍՀՄ-ին մեծ կշիռ չի վերագրում ցեղասպանության հարցում հայերի դիրքերից հանդես գալու առումով՝ ընթերցողներին պարբերաբար հրամցնելով Թուրքիայի հետ հարաբերությունների նրբերանգները⁵⁵⁸: Ավելին՝ պահանջում է հայկական ներքին գավառների (Լոռի, Նախիջևան, Ղարաբախ, Ախալքալաք) վերադարձ Հայաստանին⁵⁵⁹:

Թերթը խորհրդանշական կապ է ստեղծում 1915թ.-ի Հայոց ցեղասպանության, ապա 1918թ.-ի Սարդարապատի ազատամարտի, Հայաստանի Հանրապետության հռչակման և ապագայում Հայ դատի լուծման միջև: Այսինքն՝ թերթը ցեղասպանության տրավմայի հաղթահարման և վերջնարդյունքում Սևրի դաշնագրով միացյալ, ազատ, անկախ Հայաստանի կերտման ճանապարհին պահանջատիրական կեցվածքի ձևավորման ակունք ու առանցք է դարձնում 1918թ.-ի հերոսամարտերն ու հատկապես պետականությունը: Դա է գուցե պատճառը, որ զուգորդումները թերթում նոր լիցք են ստանում հրեյանական հիշատակումների ժամանակ՝ ընթերցողների համար պահանջատիրական ոգու ամրապնդման և քաղաքական ուղղորդման նպատակով⁵⁶⁰:

«Ազդակ»-ը Հայոց ցեղասպանության ճանաչումը և հայ դատի պահանջատիրությունը հետապնդելու առաքելությունը վստահում է նոր սերնդին: Հիմքում դնում է այն տրամաբանությունը, որ նոր սերունդն անկողմակալ մոտեցմամբ ուսումնասիրում ու ճանաչում է իր ազգի պատմությունը, հետևաբար կարող է ոչ թե զգայական մակարդակում, այլ փաստերով ներկայացնել Հայկական հարցն օտարներին⁵⁶¹:

Հաստատագրելով հայ ժողովրդի պահանջատիրության գործում փաստական նյութի կարևորությունը՝ պարբերականը փորձում է գույքագրել հայերին պատճառված նյութական վնասը՝ ուրվագծելու համար Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում Թուրքիայի առջև դրվելիք պահանջները⁵⁶²:

Պահանջատիրությունը «Նայիրի»-ում

«Նայիրի»-ին անմասն չի մնում Հայոց ցեղասպանության թեմայի արծարծումից: Այստեղ առավելապես տեղ են գտել զրական ստեղծագործությունները, դրանց գրախոսականները, պատմական նկարագրությունները, ականատեսների վկայությունները կամ դրդապատճառների վերլուծությունները⁵⁶³: Ցեղասպանության

⁵⁵⁸ Մանրամասները տե՛ս **Ավագյան Գ.**, Հայ դատի խնդիրները ՀՀԴ «Ազդակ» պարբերականում Հայոց ցեղասպանության 50-ամյակին ընդառաջ, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 1.4 (21), Երևան, 2017թ., էջ 337-338:

⁵⁵⁹ Տե՛ս «Յանուն արդարութեան», Ազդակ, 1968թ., օգոստոսի 26, թիվ 148:

⁵⁶⁰ Ցեղասպանության տրավման պահանջատիրությամբ հաղթահարելու «Ազդակի» բանաձևում պատմական առանցքային թվականների սիմվոլիկան հատկապես արտահայտված է 1968թ., բացառիկում («Ազդակ բացառիկ. Յիսնամեակ Հայաստանի Հանրապետութեան», Բեյրութ, 1968թ., թիվ 70):

⁵⁶¹ Տե՛ս **Արմեն Ազատի**, Հայ դատը եւ հայ երիտասարդութիւնը, Ազդակ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 3, թիվ 281, **Երոպացի**, Բայց, ո՞ր ազգը, մարտի 31, թիվ 23, **Քաջարեւոց Հ.**, Փաստագիրք եղեռնին հայոց, Ազդակ, Բեյրութ, 1965թ., փետրվարի 12, թիվ 289, **Խմբագրական**, Ուղիղ ճամբու վրայ, Ազդակ, Բեյրութ, 1968թ., փետրվարի 28, թիվ 303:

⁵⁶² Տե՛ս **Տասնապետեան Հ.**, ճարտարապետական եղեռնը, Ազդակ, Բեյրութ, 1965թ., ապրիլի 26, թիվ 43, **Ղազարեան Գ. Հայկազն**, Թուրք պատասխանատուները, Ազդակ, Բեյրութ, 1965թ., ապրիլի 26, թիվ 43, «Թուրքիոյ հայկական Նահանգները», Ազդակ, Բեյրութ, փետրվարի 1, թիվ 279, **Ղազարեան Գ. Հայկազն**, «Թրքական ցեղասպանութիւնը եկեղեցական ճակատի վրայ», Ազդակ, Բեյրութ, հունվարի 25, թիվ 273:

⁵⁶³ Տե՛ս **Բինոն Ռ.**, Հայերու քնաջնջումը, Նայիրի, Բեյրութ, 1961թ., օգոստոսի 6, 13, 20, 27, թիվ 14, 15, 16, 17, «Իզմիրի աղետը», «Կարսի անկումը», «Տեր Չօրեն մինչև Երեւան» և այլ

մասին հանդիպում են ինչպես լուծման տարբերակների քննարկումներ, այնպես էլ հուզական մտորումներ: Օրինակ՝ տրավմայի հաղթահարումը հյուսվում է քրիստոնեական հավատի, սիրո և ներողամտության սկզբունքներով, իսկ հատուցման իրավունքն Աստծուն է վերապահվում⁵⁶⁴:

Ի տարբերություն կուսակցական մամուլի՝ «Նայիրի»-ում Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ քաղաքական լուծման քարտեզագրումների փոխարեն գերակշռում են մտավորականության և հատկապես Սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործմանը վերաբերող հրապարակումները: Կարելի է ասել՝ թերթը մտածողության դաշտում հարցի հղովումն է դիտարկում, ոչ թե հողային պահանջատիրության կերպերի մեջ խորանում:

Կարևորվում է Հայոց ցեղասպանության մասին ամենատարբեր ծանրակշիռ հրատարակություններով ամբողջ աշխարհին իրազեկելը⁵⁶⁵: «Նայիրի»-ի էջերում մտավոր ներուժը համակարգված օգտագործելու գաղափարը քննիցս արտահայտվում է Նաև հստակ ուղեգծերի մատնանշմամբ: Այդպիսին է Հայկական հարցերի ուսումնասիրման և հրատարակչական կենտրոն ձևավորելու, համախմբված հետազոտություններ կատարելու և օտար լսարանին ժամանակակից եղանակներով հաղորդակից դարձնելու առաջարկը⁵⁶⁶:

«Նայիրի»-ն ևս առաջ է տանում ցեղասպանության տրավման պահանջատիրությամբ հաղթահարելու ուղեգիծը: Ավելին՝ ուղիղ կապ է տեսնում հայության կորցրած իրավունքների վերականգնման և Սփյուռքի գոյության միջև. *«Այրիլեան Եղեռնի հետեանքով հայ ժողովուրդէն խլուած իրաւունքներու դատը կը հանդիսանայ Սփիւռքի եւ կամ համայն հայ ժողովուրդի գլխաւորագոյն նպատակակէտը եւ գոյատեւման հիմնական ապրակը»*⁵⁶⁷: Հետևաբար թերթն առաջարկում է հայերի իրավունքների դատը համահայկական ժառանգության ու գաղափարախոսության վերածել: Ապատիկ վիճակը համարում է Սփյուռքի հայության ինքնության անմիջական սպառնալիք:

Ուշադրության են արժանի Հայոց ցեղասպանության տրավմայի հոգեբանական վերլուծությունները: Թերթի որոշ հրապարակումներում կարելի է նկատել այն ենթատեքստը, որ ցեղասպանության տրավման սերունդների ենթագիտակցության մեջ խորը դաջվածք է առաջացրել՝ ձևավորելով *կոտորվողի, վահկոտի, մուրացիկի և որբի* կերպարները: Եվ դրան նպաստել է հենց հայ և օտար մամուլը՝ ողբալի պատմություններով:

Թերթը փորձում է բացահայտել Նաև տրավմայի հոգեբանական պատճառի ու հաղթահարման ծածկագիրը՝ համեմատելով *հայի և թուրքի լույունգները*⁵⁶⁸:

«Նայիրի»-ն հակված է ցեղասպանության տրավմայի հաղթահարումը տեսնել խորհրդային Հայաստանի բարգավաճման և Սփյուռքի հայության համար իրական հայրենիքի դարպասների բացման եղանակով: Ոճիրին հակադրվում են 50 տարիների

հրապարակումներ, «Նայիրի բացառիկ», Բեյրութ, 1968թ., թիվ 45-50, **Սիրունի Յ. Ճ.**, Եղեռնը եւ իր խոստովանութիւնը, Նայիրի, Բեյրութ, 1967թ., ապրիլի 30, թիվ 49:

⁵⁶⁴ Տե՛ս **Յակոբեան ժ.**, Թուրք առ անհաւատս հայ քրիստոնեայ ազգին, Նայիրի, Բեյրութ, 1963թ., հոկտեմբերի 27, թիվ 23:

⁵⁶⁵ Տե՛ս **Թիւթիւնճեան Խ.**, «Հայկական ջարդերը», Նայիրի, Բեյրութ, 1961թ., օգոստոսի 6, թիվ 14:

⁵⁶⁶ Տե՛ս **Սեւակ Մ. Կ.**, Որոնումներ Սփիւռքի ապագային շուրջ, Նայիրի, Բեյրութ, 1967թ., մայիսի 7, թիվ 50:

⁵⁶⁷ **Սեւակ Մ. Կ.**, Որոնումներ Սփիւռքի ապագային շուրջ, Նայիրի, Բեյրութ, 1967թ., ապրիլի 30, թիվ 49:

⁵⁶⁸ **Նեմեսիս**, Մենք եւ թուրքերը, Նայիրի, Բեյրութ, 1967թ., նոյեմբերի 12, նոյեմբերի 19, դեկտեմբերի 3, թիվ 23, թիվ 24, թիվ 26:

ձեռքբերումները խորհրդային Չայաստանում և հայրենիքի հետ Սփյուռքի կապի սերտացումը: Շաբաթաթերթը, արձանագրելով խորհրդային Չայաստանի ղեկավարության մոտեցման փոփոխությունը՝ բարձրաձայնելու ցեղասպանության մասին, վստահ է, որ *«Չայաստանի Համայնավար իշխանությունը տերն է ազգային մտահոգություններուն եւ ոտնահարուած իրաւունքներուն»*⁵⁶⁹:

Շաբաթաթերթը երբեմն անկեղծ «գրուցում է» ընթերցողների հետ՝ պախարակելով Սփյուռքում Հայոց ցեղասպանության ճանաչման և Հայ դատի հետապնդման հարցում անգործությունը, անմիաբանությունը և կուսակցություններից կախվածությունը: «Նաիրի»-ն, դե յուրե չլինելով որևէ կուսակցության խոսափող, իր էջերում արտացոլում է ազգային կարևորագույն հարցի լուծումը կուսակցական զգվեռոցների հարթակի վերածելու Սփյուռքյան երևույթը⁵⁷⁰:

Եզրակացություն

Լիբանանի հայ մամուլի՝ 1960-ական թվականների հրապարակումներն ուսումնասիրելիս ընդհանուր պատկեր է ստեղծվում, որ Հայոց ցեղասպանության տրավման Սփյուռքում հայության որոշակի միասնականությունն է ապահովում: Եվ այդ միասնականությունը, ցավի արտահայտումը միազիծ տանում են բոլոր թերթերը: Մինչդեռ վերաիմաստավորման, տրավմայի հետևանքները պահանջատիրության փոխակերպելու փորձերում, երբ թերթերը հոլովում են ազգային դատի լուծման թևջուկը, խոսում են միմյանց անհասկանալի ու մերժելի լեզվով: Հետապնդման եղանակների մեջ անմիաբանությունն է դրոշմված: Ընդ որում, կուսակցական թերթերից յուրաքանչյուրը չի խուսափում միասնականության գաղափարի ֆետիշացումից, սակայն շտապում է մեղադրել հակառակորդին:

Այդուհանդերձ, որքան էլ ձևաչափային տարբերություններ կային թերթերի պահանջատիրական պատկերացումներում, բոլորի խորքային եուլթյունը նույնն է՝ տրավմայի հաղթահարում: Այդ ճանապարհին բավական հստակ քաղաքական պահանջատիրություն է դրսևորվում՝ հափշտակված հողի, գույքի վերադարձ, հատուցում, որի հիման վրա՝ աշխարհասփյուռ հայության միավորում: Մի դեպքում՝ ազատ, անկախ պետության, մյուս դեպքում՝ արդեն գոյություն ունեցող պետության կազմում:

Այս մոտեցումները ըստ եուլթյան, Սփյուռքում հայերի ինքնության կողմնորոշիչներն ու բնական շարժն են ապահովում, ինքնության դրսևորում և ինքնության ճգնաժամի հաղթահարման ուղի են: 1960-ական թվականների թերթերի օրինակով կարելի է եզրակացնել, որ Սփյուռքում ապրող հայը իրեն նույնացնում է այն խմբի հետ, որը կիսում է ցեղասպանության տրավման և այն հաղթահարելու պահանջատիրական սկզբունքը: Պարզապես ենթաինքնության նուրբ արտահայտում է դառնում պահանջատիրության ուղիներից մեկի կամ մյուսի ընտրությունը:

Հատկանշական է, որ ցեղասպանության տրավմայի հաղթահարումը զուգորդվում է ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման, այլև հատուցման պահանջով և Հայ դատի վերջնական լուծման ակնկալիքով: Եվ դրանք սերտաճած են արտահայտվում հրապարակումներում: Ցեղասպանությունը չի դիտարկվում առանձին, անջատ երևույթ, այլ հայոց պահանջատիրության տրամաբանական, անբաժան օղակ: Չոհի հոգեբանության հաղթահարումը ոչ թե միայն Հայոց ցեղասպանության ճանաչմամբ, այլ նաև հայ ժողովրդի պատմական իրավունքների վերականգնմամբ է ներկայացվում: Եվ հաղթահարման այդ ողջ ընթացքը կամ տրավմայի հանդեպ բռնած դիրքն ու

⁵⁶⁹ Թիւրքիւնճեան Խ., Ամեն ինչ սեւ չէ..., Նայիրի, Բեյրութ, 1966թ., ապրիլի 24, թիվ 50:

⁵⁷⁰ Տե՛ս Սրապեան Ա., Յիսնամեակեն ի՛նչ մ՛նաց, Նայիրի, Բեյրութ, 1966թ., հունիսի 5, թիվ

THE TRAUMA OF ARMENIAN GENOCIDE AS AN ISSUE OF ARMENIAN NATIONAL IDENTITY (ON THE EXAMPLE OF ARMENIAN PRESS OF LEBANON IN THE 1960S)

GAYANE AVAGYAN

*The State Revenue Committee of the RA,
Information and Public Relations Division, Employee;
Ph.D. Student, Yerevan State University, Faculty of Journalism,
Yerevan, Republic of Armenia*

The goal of the article is to substantiate that the Lebanese Armenian press defines the identity of the Armenian living in Diaspora through the trauma of Armenian Genocide. To pose that newspapers with opposite ideologies have a common position- genocide and trauma overcoming are unifying factors for Armenians.

Our objective is to clarify what transformation underwent the Genocide trauma on the pages of the press in the 1960s from getting rid of the mold of a victim mentality to the formulation of the right of demand. We have tried to understand what is emphasized by newspapers when they consider the individual and collective memory about massacres in the context of Armenian identity. We have revealed the position proposed by each newspaper to the fundamental issue and to the different formats in formulating the right of demand.

In the course of the study modern research methods of journalism, comparative analysis, historical and comparative methods, content analysis and generalization was applied.

As a result of the study we concluded that, while referring to the trauma caused by the Genocide, the Armenian press in Lebanon in the 1960s, formulated the identity of Armenians living in Diaspora, also outlined how to overcome the victim mentality through the right of demand.

We have established that each newspaper sees the fulfillment of the general goal in a different format and time scale. There is no unanimity between newspapers on how they see the right of demand.

Key words: *Armenian Genocide, trauma, memory, right of demand, victim mentality, identity, Diaspora, press, Lebanon.*

ТРАВМА ГЕНОЦИДА АРМЯН – КАК ФУНДАМЕНТАЛЬНЫЙ ВОПРОС НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ (НА ПРИМЕРЕ АРМЯНСКОЙ ПРЕССЫ ЛИВАНА 1960-ых ГОДОВ)

ГАЯНЕ АВАГЯН

*сотрудница отдела информации и связи с общественностью
Комитета государственных доходов РА,
аспирантка факультета журналистики
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - доказать, что в армянской прессе Ливана национальное самосознание армянина, живущего в Диаспоре, формируется через травму Геноцида; показать, что газеты, проводящие другую, противоположную идеологию, имеют общую позицию, которая заключается в том, что геноцид и преодоление травмы являются для армян объединяющими факторами.

Нашей задачей является выяснить, какую трансформацию прошла на страницах прессы травма геноцида как проблема национальной идентичности: от избавления от психологии жертвы до возможности формулирования требований. Мы пытались понять, как именно газеты акцентируют индивидуальную и коллективную память о трагических событиях в контексте армянской идентичности, а также выявили позицию каждой газеты по основному вопросу и рассмотрели различные форматы формулирования требования возмещения.

В ходе исследования мы применяли современные исследовательские методы журналистики, сравнительный анализ, методы исторического изучения и сопоставления, анализ содержания, обобщение.

В результате исследования мы пришли к выводу, что в статьях о травме, вызванной Геноцидом армян, армянская пресса Ливана 1960-ых годов формулирует идентичность армян Диаспоры, а также определяет путь преодоления психологии жертвы через требование возмещения. Мы установили, что каждая газета по-своему представляет формат и временные вехи реализации общей цели, но между ними нет согласия относительно способов требования возмещения.

Ключевые слова: *Геноцид армян, травма, память, требование возмещения, психология жертвы, идентичность, Диаспора, пресса, Ливан.*

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՍԲՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՍԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՑԱԿՑԻ
ՍԱՀՅԱՆԱԶԱՆՑՄԱՆ ԴԱՐԱԳԱՅՈՒՄ*

ՀՏԴ 343.237

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵԴՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի 1-ին կուրսի մագիստրանտ,
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն
gevorg.barseghyan@ysuamail.am*

Սույն աշխատանքում համապարփակ կերպով ներկայացված են հանցակցի սահմանազանցման (էքսցեսի) հասկացությունը, դրա տեսակները, յուրաքանչյուր հանցակցի կողմից սահմանազանցում թույլ տալու հնարավորությունը: Անցկացված են համեմատականներ ՀՀ գործող քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի միջև: Աշխատանքում հիշատակված են նաև ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի՝ հանցակցությանը վերաբերող որոշ դրույթներ: Աշխատանքում վերլուծված են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ հանցակցի սահմանազանցման առնչվող նախադեպային որոշումները և հետաքրքրություն ներկայացնող դատական գործեր:

Սույն աշխատանքի նպատակն է սահմանազանցման ընդհանուր հասկացության, սահմանազանցմամբ ուղեկցվող հանցագործությունների որակման և պատասխանատվության կանոնների մշակումը, քրեական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների ներկայացումը:

Դրված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- վերլուծել հանցակցության հասկացությունը, էությունը և հատկանիշները՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի՝ համեմատականներ անցկացնելով ՀԽՍՀ 1961 թվականի օրենսգրքի և ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի միջև,
- վերլուծել սահմանազանցման հասկացությունը, տեսակները և հատկանիշները,
- տալ քրեահրավական գնահատականներ հանցակիցների սահմանազանցման առանձին դրսևորումներին,
- դիտարկել սահմանազանցմամբ ուղեկցվող հանցանքների քրեահրավական գնահատականների խնդիրները:

Սույն աշխատանքի մեթոդոլոգիական բազան են կազմում դիալեկտիկական ու պատմական մեթոդները: Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր և հատուկ մեթոդների

* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020թ., գրախոսվել՝ 27.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

օգտագործմամբ, ինչպիսիք են՝ դոգմատիկ, իրավահամեմատական, իրավական մոդելավորման և տրամաբանական վերլուծության մեթոդները:

Հիմնվելով ՀՀ օրենսդրության և դատական պրակտիկայի վերլուծության վրա՝ աշխատանքում դիտարկվել են սահմանազանցմամբ կատարված հանցագործությունների որակման որոշ խնդիրներ, և առաջարկված են դրանց հնարավոր օրենսդրական լուծումները:

Հիմնաբառեր՝ հանցակից, համակատարող, սահմանազանցում, միջնորդավորված կատարում, անչափահաս, հոգեկան հիվանդությամբ տառապող անձ:

Քրեական իրավունքի տեսության մեջ ամենաբարդ ինստիտուտներից մեկն է համարվում հանցակցությունը, որի տարաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ: Նշված հիմնախնդիրների շարքում կարևորվում է հանցակցի սահմանազանցման հարցը:

Տեսական գրականության մեջ սահմանազանցումը կամ դիտարկվում է հանցակցության ընդհանուր կոնտեքստում, կամ էլ ուշադրություն է դարձվում կատարողի սահմանազանցմանը: Այլ հանցակիցների (կազմակերպչի, դրոզի, օժանդակողի) սահմանազանցման վերաբերյալ գիտական հետազոտություններ գրեթե չկան, իսկ եղածներն էլ չեն բովանդակում համալիր հետազոտություն:

Խմբի կողմից իրականացվող հանցագործություններում ընդհանուր դիտավորությունից շեղման դեպքերը հաճախ են հանդիպում: 2008-2019թթ.-ին ՀՀ-ի դատարանների առջև 39 անգամ տարբեր գործերով բարձրացված է եղել հանցակցի (հիմնականում՝ կատարողի) սահմանազանցման հարցը: Նշված գործերից 22-ում դատարանը հաստատել է հանցակցի սահմանազանցման առկայությունը, ընդ որում՝ դրանցից 17-ում արձանագրվել է քանակական սահմանազանցում, իսկ 5-ում՝ որակական: Մնացած գործերով դատարանը սահմանազանցում չի արձանագրել:

Սահմանազանցումը, ինչպես և հանցակցության ինստիտուտի հետ կապված ցանկացած երևույթ, բավականին բարդ է: Խնդրահարույց են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են, օրինակ, միջնորդավորված կատարման դեպքում սահմանազանցմանը, սահմանազանցման դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրի քրեական պատասխանատվության շրջանակի հստակեցմանը և այլն: Առավել խնդրահարույց է այն, որ ՀՀ գործող քրեական օրենսդրությունը, թեև տվել է սահմանազանցման հասկացությունը, սակայն չի հստակեցրել սահմանազանցման դեպքում հանցակիցների արարքների որակման առանձնահատկությունները: Թեև ներկայացված հարցին պատասխան է փորձում տալ քրեական իրավունքի դոկտրինան, սակայն այն իրավակիրառողի համար պարտադիր նշանակություն չունի: Ներկայացված խնդիրները վկայում են ընտրված թեմայի կարևորության ու արդիականության մասին:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի⁵⁷¹ (այսուհետ՝ Օրենսգրք) 37-րդ հոդվածի համաձայն՝ «հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը»:

Երկու և ավելի անձանց մասնակցությունը հանցակցության քանակական հատկանիշն է, առանց որի հանցակցությունն անհնար է: Ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցակիցներից յուրաքանչյուրը պետք է հասած լինի քրեական պատասխանատվության ենթակա լինելու տարիքի և լինի մեղսունակ⁵⁷²:

⁵⁷¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, ընդունել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2003 թվականի ապրիլի 18-ին: Ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին: ՀՕ-528-Ն, ՀՀԳՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

⁵⁷² Օրենսգրքում առկա է որոշակի անորոշություն: Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է. «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: Այս հոդվածը

Վերը շարադրվածի հաշվառմամբ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծի⁵⁷³ (այսուհետ՝ Նախագիծ) 46-րդ հոդվածը ամրագրում է.

«1. Հանցակցություն է համարվում քրեական պատասխանատվության ենթակա երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:

2. Հանցակցությունը բացակայում է հանցագործության միջնորդավորված կատարման դեպքում, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել է անզգուշությամբ:

3. Համակատարումը բացակայում է այն դեպքում, երբ հանցանք կատարողը օգտագործում է այնպիսի անձի, որը օրենքի ուժով ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար՝ որպես կատարող»:

Կազմակերպիչները, դրդիչները, օժանդակողները այն հանցանքներում, որտեղ օբյեկտիվ կողմը իրականացրել են անմեղսունակները կամ քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի չհասածները, ճանաչվում են կատարողներ: Ասվածը բխում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասից, որով սահմանվում է հետևյալը. «կատարող է համարվում այն անձը, ով անմիջականորեն կատարել է հանցանքը կամ դրա կատարմանն անմիջականորեն մասնակցել է այլ անձանց (համակատարողների) հետ համատեղ, ինչպես նաև հանցանքը կատարել է այլ այնպիսի անձանց օգտագործելու միջոցով, ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ հանցանքը կատարել են անզգուշությամբ»:

Սակայն միևնույն հանցագործությանը երկու և ավելի անձանց մասնակցությունը ինքնին չի վկայում հանցակցության մասին այն իմաստով, որով այն նկարագրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում: Հնարավոր են դեպքեր, երբ մի քանի անձի գործողությունները, իրենց ամբողջությամբ հասցնելով հանցավոր հետևանքի, հանցակցություն չառաջացնեն: Պրոֆեսոր Գալիկբարովը նշում է հետևյալ օրինակը. Ա-ն գողություն կատարելու նպատակով ջարդում է պահեստի դուռը, բայց նկատելով մոտեցող Բ-ին, փախչում է հանցանքի վայրից, իսկ Բ-ն, օգտվելով առիթից, որ պահեստի դուռը ջարդված է, կատարում է գողություն: Այս դեպքում չի կարելի Ա-ին և Բ-ին համարել հանցակիցներ⁵⁷⁴:

Հանցակցության հատկանիշների վերաբերյալ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել Ա.Մայթևոսյանի և Ռ.Հարությունյանի գործով որոշման մեջ: Համաձայն այդ որոշման՝

« (...) հանցակցությանը բնորոշ է 3 հատկանիշ.

հանցակիցներին քրեական պատասխանատվության ենթարկելու առումով խնդրահարույց է հանցակցության դեպքում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը հանցագործության օբյեկտիվ կողմը չեն իրականացնում, այսինքն՝ նրանց արարքում բացակայում է հանցակազմի օբյեկտիվ կողմը: Իսկ Օրենսգրքի 3-րդ հոդվածը պահանջում է հանցակազմի բոլոր հատկանիշների առկայություն: Այս առումով լիովին ընդունելի է Նախագծի 15-րդ հոդվածի իրավակարգավորումը, համձայն որի՝ քրեական պատասխանատվության հիմքը ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցանք կատարելն է կամ դրանց հանցակցելը: Օրենսգրքի 3-րդ հոդվածը խնդրահարույց է նաև չավարտված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու պարագայում, քանի որ այս դեպքում էլ բացակայում է հանցակազմի որևէ հատկանիշ. ձևական հանցակազմերի դեպքում օբյեկտիվ կողմ չի կատարվել, նյութական հանցակազմերի դեպքում, օրինակ, հետևանքը չի առաջացել: Ըստ այս կարգավորման՝ նկարագրված դեպքերում քրեական պատասխանատվության հարց չի կարող առաջանալ, ուստի անիմաստ է խոսել նաև հանցակիցների քրեական պատասխանատվության մասին նշված կամ նմանատիպ դեպքերում, ինչը սակայն հնարավոր է և տեսության մեջ ստացել է չհաջողված հանցակցություն անվանումը:

⁵⁷³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախագիծ, որը հասանելի է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ www.e-draft.am՝ հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/2115/about> (15.03.2020):

⁵⁷⁴ Տե՛ս Галикбаров Р.Р. Совершение преступления группой лиц, Омск, 1980, С. 58:

1. հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից

2. գործողությունների համատեղությունը

3. հանցակցության դիտավորյալ բնույթը:

Հանցակցության առաջին օբյեկտիվ հատկանիշը՝ հանցագործության կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից, արտահայտվում է այն բանում, որ հանցակցության համար անհրաժեշտ է հանցագործության սուբյեկտի բոլոր հատկանիշներով օժտված ոչ պակաս երկու անձի առկայությունը:

Հանցակցության մյուս օբյեկտիվ հատկանիշը՝ հանցակիցների գործունեության համատեղությունը, նշանակում է, որ հանցագործության մասնակիցներից յուրաքանչյուրի գործողությունները փոխադարձ լրացնում են միմյանց և ուղղված են միասնական արդյունքի:

Հանցակցության վերջին հատկանիշը գործունեության դիտավորյալ բնույթն է: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածը, որը տալիս է հանցակցության հասկացությունը, կոնկրետ մատնանշում է անձանց դիտավորյալ մասնակցությունը դիտավորյալ հանցագործության կատարմանը⁵⁷⁵»:

Արարքների համատեղության հասկացությունը կազմված է մի քանի տարրից: Առաջին՝ հանցանքը կատարվում է մի քանի անձի միավորված ջանքերով: Հանցակիցներից յուրաքանչյուրը կատարում է հանցանքի իր բաժինը և դրանով իսկ այս կամ այն չափով նպաստում է մյուս հանցակիցների մտադրությունների իրականացմանը: Հանցակցության այս հատկանիշը, որը սովորաբար անվանվում է օբյեկտիվ հատկանիշ, ավելի ճիշտ կլիներ թերևս կոչել օբյեկտիվ-սուբյեկտիվ, քանզի այն ունի նաև հոգեբանական բովանդակություն:

Հանցակիցների արարքների համատեղությունը արտահայտվում է նրանում, որ, յուրաքանչյուր հանցակցի արարքը կոնկրետ հանգամանքներում անհրաժեշտ պայման է մյուս հանցակիցների արարքների կատարման համար: Հանցակիցների արարքները պետք է լինեն փոխկապակցված և փոխպայմանավորված: Յուրաքանչյուր հանցակցի արարք պետք է ուղղված լինի մյուս հանցակիցների հետ ընդհանուր արդյունքին:

Հանցավոր հետևանքը պետք է պատճառական կապի մեջ լինի հանցակիցներից յուրաքանչյուրի արարքների հետ: Ժամանակին պրոֆեսոր Շարգորոսկին հարցադրում է արել՝ ինչու՞, օրինակ, հանցանքի օբյեկտիվ կողմը չիրականացնող դրոշի գործողությունները պետք է պատճառական կապի մեջ գտնվեն կատարողի վարքագծի արդյունքում առաջացրած հետևանքի հետ⁵⁷⁶: Այս հարցին պատասխանել է պրոֆեսոր Իվանովը՝ ակադեմիական թիավարման օրինակի վրա դիտարկելով նավակի մեջ գտնվող թիավարների ու ղեկավարի (ղեկակալի) արարքները: Եթե թիավարները իրենց մկանային ջանքերի միջոցով նավակը մոտեցնում են վերջնագծին, ապա ղեկակալը նման վարքագիծ չի դրսևորում: Նրա ներդրումը միջնորդավորված է, բայց և կարևոր. հակառակ դեպքում նավակում նրա գտնվելը անիմաստ կլիներ⁵⁷⁷:

Քրեական իրավունքի տեսության մեջ կան տեսակետներ, որոնք ժխտում են հանցակիցների արարքների և կատարված հանցագործության միջև պատճառական կապի հաստատման անհրաժեշտությունը: Այսպիսի մոտեցման կարելի է հանդիպել, օրինակ,

⁵⁷⁵ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 25.07.2008թ. թիվ ՎԲ-48/08 որոշումը՝ ըստ Ալիկ Ռուդիկի Մաթևոսյանի և Ռաֆիկ Արայիկի Հարությունյանի վերաբերյալ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի դատավճռի դեմ ՀՀ զինվորական դատախազի վճռաբեկ բողոքի, 28-րդ կետ, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905401226, (15.03.2020):

⁵⁷⁶ Տե՛ս **Шаргородский М.Д.** Некоторые вопросы общего учения о соучастии // Правоведение. 1960. №1:

⁵⁷⁷ Տե՛ս **Иванов Н.Г.** Понятие и формы соучастия в советском уголовном праве, Саратов, 1991, С. 57:

այրո՞քտոր Բիկովի մոտ⁵⁷⁸: Վերը նշված տեսակետները (Շարգորդակու, Բիկովի) հավանության չեն արժանացել քրեական իրավունքի մասնագետների մեծամասնության կողմից, քանզի դրանք ստեղծում են այն անձանց շրջանը անհարկի լայնացնելու հնարավորություն, որոնք ենթակա են քրեական պատասխանատվության^{579, 580, 581}:

Բացի այդ, պատճառական կապը հնարավորություն է ընձեռում սահմանազատելու հանցակցությունը հանցագործությանը առնչակցությունից, օրինակ՝ նախապես չխոստացված պարտակումից: Հանցակցությունը հնարավոր է միայն մինչև հանցագործության ավարտը, այսինքն՝ մինչև համապատասխան օբյեկտի նկատմամբ ոտնձգության փաստացի դադարեցման պահը:

Հանցակցության դեպքում վնասը վրա է հասնում համատեղ գործող անձանց արարքների ամբողջության արդյունքում: Այս ամենի ուժով հանցավոր հետևանքը չի կարող բաժանվել առանձին մասերի՝ կախված հանցակիցների քանակից: Այն ընդհանուր է և անբաժանելի հենց պատճառման համատեղության ուժով, ինչը միևնույն ժամանակ չի նշանակում ընդհանուր հանցավոր արդյունքին հասնելու գործում «ներդրման» հավասարություն: Այս ամենով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 39-րդ հոդվածի 7-րդ մասում ամրագրված է հետևյալ իրավակարգավորումը. «Հանցակիցներին պատասխանատվության ենթարկելիս հաշվի են առնվում հանցագործությանը նրանցից յուրաքանչյուրի մասնակցության բնույթը և աստիճանը»:

Հնարավոր են սակայն դեպքեր, երբ հանցանքը կատարվի մի քանի անձի կողմից, և առկա լինեն օբյեկտիվ կողմից համատեղությունը բնութագրող վերոնշյալ պայմանները, բայց հանցակցությունը, այնուամենայնիվ, բացակայի: Հանցակցության համար անհրաժեշտ է համաձայնություն գոնե երկու անձի միջև: Այսպես, եթե խմբում կան կատարող, դրդիչ և օժանդակող, ապա նրանց հանցակիցներ ճանաչելու համար բավարար է, որ դրդիչն իմանա կատարողի արարքների մասին, իսկ օժանդակողի արարքներին դրդիչը կարող է անտեղյակ լինել: Համաձայնությունը կարող է ձեռք բերվել բանավոր կամ գրավոր կերպով, կամ էլ կոնկրետ գործողությունների միջոցով: Համաձայնությունը կարող է արտահայտվել անձի՝ այլ անձանց հանցավոր արարքների ակնհայտ մասնակցությամբ:

Այնտեղ, ուր բացակայում է գիտակցումը առ այն, որ անձը գործում է այլոց հետ համատեղ ընդհանուր հանցավոր նպատակին հասնելու համար, բացակայում է հանցակցությունը: Այս հանգամանքին անդրադարձել է նաև Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանը կոնկրետ գործեր քննելիս: Այսպես, Բ-ն և Մ-ն վիճում էին զարեջրատան մոտ: Չայրանալով Մ-ի վրա՝ Բ-ն գնաց տուն, վերցրեց երկու հատ դանակ և վերադարձավ: Մ-ն, տեսնելով Բ-ի մոտ եղած դանակները, դիմեց փախուստի: Բ-ն սկսեց հետապնդել նրան: Այդ ժամանակ փողոցով քայլում էր Տ-ն՝ ուղևորվելով զարեջրատուն: Երբ Մ-ն անցնում էր Տ-ի կողքով, վերջինս ոտքը առաջ մեկնեց, որի հետևանքով Մ-ն ընկավ: Օգտվելով առիթից՝ Բ-ն մոտեցավ ընկած Մ-ին, դանակի մի քանի հարված հասցրեց: Ստացված մարմնական վնասվածքներից Մ-ն մահացավ: Տ-ն դատապարտվել էր սպանությանն օժանդակելու համար:

Գերագույն դատարանը, քննելով այս գործը, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. օժանդակությունը՝ որպես հանցակցության ձևերից մեկը, ենթադրում է այն անձի տեղեկացվածությունը կատարվող հանցանքի մասին, որը մեղադրվում է օժանդակության

⁵⁷⁸ Տե՛ս Быков В.М. Уголовная ответственность за организацию преступного сообщества (преступной организации) // Российский следователь, 2000, № 6, С. 45:

⁵⁷⁹ Տե՛ս Успенский А.В. Проблема обоснованности причинной связи при соучастии в совершении преступления // Вестник Моск. ун-та, Сер. 11, Право, 1998, № 5, С. 34:

